

ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆ

**ՎԱՍՎԱՐԱԿԱՐԱՆ
(սոցիալ-փնտեսական)
ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

*Դասագիրք բուհերի աշխարհագրական
և դնդեսագիրական
մասնագիրությունների համար*

Հաստատված է ԵՊՀ երատարակչական խմբի կողմից որպես բուհական դասագիրք

L. H. VALESSIAN. Հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության ներածություն. —Եր. «Լույս», 1999, —228էջ, 5նկ:

Աշխարհագրական գիտությունների համակարգը և ական բարեփոխումների ժամանակաշրջան է ապրում: Վերախմատավորվում և նորովի են լուսարանվում նրա շատ հասկացություններ, վերանայվում են մերժարանական ու տեսական հիմնադրույթները:

Այս ամենն իր արտացոյտմ է զանե դասագրություն և տնտեսագիտություն ուսումնափրոդների համար:

Այս կարող է օգտակար լինել նաև մենեջերական, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, գիտության փիլիսոփայության ու պատմության, սոցիոլոգիայի հարցերով հետաքրքրով ընթերցող լայն շրջանների համար:

Л. А. ВАЛЕСЯН. Введение в общественную (социально-экономическую) географию. — Еր. «Луис», 1999, —228 стр, 5 рис.

Географическая наука переживает период существенных преобразований. Происходит переоценка и переосмысливание многих его фундаментальных установок, пересматриваются методологические и теоретические подходы.

В данном исследовании с новых позиций рассматриваются фундаментальные научные категории, принципиальные подходы и понятия, внутренние процессы и актуальные задачи общественной географии.

Работа написана как вузовский учебник для географических и экономических специальностей. Она может быть полезной также для социологов, менеджеров, философов, политологов, широкого круга читателей.

L. H. VALESSIAN. Introduction in human geography, - Yerevan, "Lujs", 1999, 228 p.

Geography Science endures a period of significant transformations. Deideologization of all geography ahd, especially, human (social) geography takes place. Overestimation and overcomprehension of the methodological and theoretical directives occur.

In the current research fundamental scientifical categories, principal approaches and concepts, inner processes and actual problems of human geography are considered from new positions.

This book is intended for Geography and Economy students. Besides, it can be useful for sociologists, managers, philisophers, specialists in sphere of politology and international relations, broad circle of readers.

1805000000 (21)
Կ 702 (01) 1999

ISBN 5-545-01400-4

© L. Վալեսյան 1999

© «Լույս» երատարակչություն 1999

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհագրությունը գիտությունների մի բարդ համակարգ է՝ բաղկացած բազմաթիվ ճյուղերից, ենթանյուղերից և ուղղություններից:

Աշխարհագրական բարձրագույն կրթության բովանդակությունը, արտացոլելով աշխարհագրական գիտության կառուցվածքի առանձնահատկությունները, իր մեջ ներառում է բազականին մեծ թվով հիմնական և օժանդակ հանրակրթական ու մասնագիտական դասընթացներ:

Մասնագիտական դասընթացները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ բնական-աշխարհագրական, հասարակական-աշխարհագրական և տեղագրական-քարտեզագրական: Դրանք, լրացնելով միմյանց, բազմակողմանի գիտելիքներ են հաղորդում երկրագնդի աշխարհագրական թաղանթում և դրա յուրաքանչյուր ոլորտում ընթացող բնական ու հասարակական երևույթների, դրանց փոխախվածության և հետապոտման մեթոդների ու եղանակների մասին:

Սկզբունքորեն տարբեր են մարդկանց գիտելիքների երկու տեսակներ՝ սովորական (առօրեական, կենսաղային) և գիտական:

Առօրեական, կենցաղային գիտելիքները մեզնից յուրաքանչյուրի պատկերացումն են շրջապատող առարկաների, երևույթների, մարդկային հարաբերությունների, ընդհանրապես կյանքի մասին: Այդ գիտելիքները չենք են բերվում անհատի կենսափորցով և ամբողջական համակարգ չեն կազմում:

Սկզբունքորեն այլ են **գիտական գիտելիքները**, որոնց ամբողջությունը հենց գիտությունն է: **Գիտուրյունը մարդու հոգևոր սրբեղծագործական հետազոտական գործունեության բնագավառ է**, որն ուղղված է ընության, հասարակության և մտածողության մասին նոր գիտելիքների հայթայթմանը:

Գիտությունն աշխարհը նկարագրում և բացատրում է օգտվելով գիտական գիտելիքների հատուկ տեսակներից՝ **գիտական գիտուրյուն, հիպոթեզ (վարկած), սկզբունք, օրենք, օրինաչափություն** և այլն:

Գիտական գիտելիքի կարևոր առանձնահատկությունը համա-

Կարգայնությունն է, երբ փաստական գիտելիքները կարգավորված են որոշակի տեսական սկզբունքներով: Գիտությունը չի սահմանափակվում փաստի բացահայտումով, այլ ընդհանրացնում և տեսականորեն իմաստավորում է այն: Գիտությունը պատասխանում է ոչ միայն «ի՞նչը» և «ինչպէ՞ս», այլև «ինչո՞ւ» հարցերին:

Գիտական գիտելիքների ամբողջությունը կազմում է գիտության համակարգը, որտեղ պայմանականորեն առանցնացնում են երեք ենթահամակարգ՝ **բնական գիտությունների, հասարակական գիտությունների և գեիմանիկական գիտությունների:**

Ընդունված է տարբերել նաև **հիմնարար** և **կիրառական** գիտությունները: Հիմնարար գիտությունները վրադիմում են նյութական աշխարհի պարզացման օրենքների ու օրինաչափությունների բացահայտումով: Կիրառական գիտությունները մշակում են բացահայտված օրենքների ու օրինաչափությունների կիրառության ուղիներն ու միջոցները:

Գիտությունը գիտելիքների արդարության, կարգավորման ու պահպանման պարմականորեն պայմանավորված եղանակ է: Գիտական գիտելիքների հանրագումարը կազմում է **աշխարհի գիտական պատկերը**:

Աշխարհը ճանաչելը և բացատրելը, նրա գիտական պատկերը կերտելը գիտության (գիտությունների ողջ համակարգի) **գերմագրակն է**:

Ամեն մի գիտություն յուրովի է մոտենում այդ գերնպատակին, լուծելով խնդիրների իրեն պատկանող շրջանակը:

«Հասարակական աշխարհագրության ներածություն» դասընթաց նպատակ ունի բացահայտելու հասարակական աշխարհագրության տեղն ու դերը գերնպատակին հասնելու պրոցեսում և պարզելու կոնկրետ խնդիրները և դրանց լուծման մեթոդներն ու եղանակները:

Հասարակական աշխարհագրությունը¹ աշխարհագրական գիտությունների բարդ համակարգի այն ենթահամակարգն է, որն **ուսումնակարում է մարդկային հասարակությունը, երկրագնդի աշխարհագրական բաղանքի մարդուորդը (սոցիոլորդը):**

1 Հասարակական աշխարհագրության հոմանիշներն են՝ Արևմուգրում «սոցիալական աշխարհագրությունը», «մարդու աշխարհագրությունը» (HUMAN Geography), «անդրապաշխարհագրությունը», Ուսասարանու և նոր ամեկանացած որոշ երկրներում՝ մինչև վերջին «դմբանական և սոցիալական (սոցիալ-գնացեական), իսկ այժմ «դմբանական, սոցիալական և բաղարական աշխարհագրությունը»:

Հայարակական աշխարհագրությունը համակարգի մյուս գիտությունների հետ մեկտեղ կոչված է բավարարելու կյանքի արմատական պահանջները, մասնավորապես՝ *բացահայտելու և հեղազուրելու հասարակուրյան դարաժամանակային կազմակերպման օրենքներն ու օրինաչափուրյունները*:

Աշխարհագրական գիտությունների համակարգը կամ համառոտ՝ աշխարհագրությունը այն հիմնարար գիտություններից է, որոնք համատեղ ուժեղով կերտում են **աշխարհի համագիտական պարկերը**: Այդ առումով այն **աշխարհի գիտական իմացուրյան անհրաժեշտ ոլորդներից մեկն է, որն առանձնանում է համաշակուրյաին, աշխարհայացքային, գիտամանաշողական և կիրառական մնած ներուժով, սեփական հարկանիշներով ու առանձնահաղողությամբ**: Ոչ մի տարածաշրջանի, գյուղի ու քաղաքի, մարզի ու պետության բազում տարաբնույթ խնդիրների, ի թիվս դրանց՝ անընդհատ ահագնացող միջազգային, համամարդկային ու համամոլորակային և ոչ մի հիմնախնդրի լուծում հնարավոր չեն առանց այն մասնագիտական հետազոտությունների, որոնք կատարում են աշխարհագետները: Այդ հիմնախնդիրների լուծումը հնարավոր չեն առանց **աշխարհագրական մոլեցման ու աշխարհագրական մոլոցուրյան**:

Աշխարհագրական մոլոցումն ու աշխարհագրական մոլոցուրյունը ոչ միայն մասնագետ-աշխարհագետների, այլև ժամանակի հետ համարայլ ընթացող ամեն մի պետական գործիք, մասնավոր ջեռներեցի, մենաշնորհի, ամեն մի կուլտուրական մարդու արդյունավետ գործունեության նախապայմանն է:

Աշխարհագրությունը լինելով հնագույն գիտություններից, մինչև 19-րդ դարի կեսերը հանդես է եկել որպես մեկ համասեռ ամբողջություն: Այնուհետև զարգացման պրոցեսում այն տարարածանվել է տարբեր մեծության ու նշանակության բաղադրիչների՝ մասնավոր գիտությունների, գիտական նյութերի, ենթաճյուղերի և ուղղությունների, որոնց թիվն այսօր հաշվում է տասնյակներով ու հարյուրներով: **Աշխարհագրությունը մեկ համասեռ միասնական գիտուրյունից դարձել է գիտուրյունների համակարգ՝ բաղկացած մի քանի ենթահամակարգերից**:

Այս աշխատությունը նվիրված է այդ ենթահամակարգերից մեկին՝ հասարակական աշխարհագրությանը: Այն նախատեսված է այն անշանչ համար, որոնք ցանկանում են մասնագիտանալ աշխարհագրության

մեջ և իրենց աշխատանքային գործունեությունը կապել գիտական ու գործնական աշխատանքի այն ոլորտների հետ, որոնք առնչվում են գիտության այդ ճյուղին:

Աշխատությունը կարող է ծառայել որպես բուհական դասագիրք, որը ուսանողներին տալու է նախնական գիտելիքների այն նվազագույնը, որն անհրաժեշտ է համալսարանական կրթության բակալավրական ու մագիստրոսական աստիճանների համար: Այն կօգնի ուսանողներին կողմանորոշվելու մեծաթիվ մասնագիտացումների ու գործունեության ոլորտների լաբիրինթոսում, կատարելու ճիշտ ընտրություն և նախապատրաստվելու գիտության մասնագիտացված ճյուղերի խորացված ուսումնասիրությանը:

Դասագիրքը կարող է օգտակար լինել նաև տնտեսագիտական, քաղաքագիտական, մենեջերական, միջազգային հարաբերությունների և մի քանի այլ մասնագիտությունների մեջ խորացողների համար:

Հասարակական աշխարհագրությունը, ինչպես և յանկացած այլ գիտություն, զարգանում է ոչ թե մեկուսի, այլ սերտորեն փոխկապակցված հարակից գիտությունների հետ: Լինելով աշխարհագրական գիտությունների համակարգում, այն առաջին հերթին համագործակցում է համակարգի մյուս քաղադրիչների հետ, նրանց հետ միասնաբար լուծելով գիտատեսական ու գործնական բազմաթիվ հարցեր:

Մյուս՝ ոչ աշխարհագրական գիտություններից այն առավել սերտ առնչություն ունի **հասարակական գիպուրյունների** հետ, որոնք զբաղվում են հասարակական կյանքի տարրեր ուղղությունների ուսումնասիրությամբ: Նրանց շարքում են առաջին հերթին **քննկենագիպուրյունը՝ իր բազմաթիվ ճյուղերով** ու ենթաճյուղերով, **ժողովրդագրությունը, պատմությունը, առցոլոցիան, քաղաքագիպուրյունը, մշակութարանությունը:**

Գիտության այս ճյուղերին հասարակական աշխարհագրության հետ միավորում է առաջին հերթին այն, որ դրանց բոլորի համար ընդհանուր է հետապոտության օբյեկտը՝ **մարդկային հասարակությունը**: Այդ գիտությունները միմյանցից փոխանուում են ոչ միայն եւակետային դրույթներ ու փաստական տվյալներ, այլև գիտական տեսություններ, հետապոտության մեթոդներ ու մոտեցումներ: Արդյունքում տեղի է ունենալ բոլոր հասարակական գիտությունների փոխհամագործակցություն և փոխհարստացում:

Հասարակական աշխարհագրությունը, ինչպես և աշխարհա-

գրական գիտությունների համակարգի բոլոր մյուս բաղադրիչները սերտորեն կապված են **մարեմագիկայի** հետ: Այդ կապը հնարավորություն է տալիս առաջին հերթին հարստացնելու աշխարհագրության գիտական հետազոտությունների մեթոդիկան և դրա շնորհիվ բարչրացնելու գիտական եկարգակապությունների ապահովելի կությունը և ճշգրտությունը:

Հատուկ ուշադրության է արժանի հասարակական աշխարհագրության (և ամբողջ աշխարհագրության) կապը փիլիսոփայության հետ:

Φήικαιοφαյπιθγινόρ երկար ժամանակ ընկալվել է որպես գիտություն բնության, հասարակության և մարդկային մտածողության ամենաընդհանուր օրենքների մասին։ Այժմ տարածում է ստանում այն տեսակետը, որ փիլիսոփայուրյունը համընդհանուր ուսմունք է իմացության և մարդու ու աշխարհի հարաբերությունների սկզբունքների մասին։ Դա աշխարհայացք է, աշխարհայացքի դիսական մակարդակը որտեղ համակարգված են ամբողջությամբ վերցրած աշխարհի, դրանում մարդու դերի, մարդու և աշխարհի, մարդկանց հարաբերությունների, մտածողության մասին ամենաընդհանուր դրույթներն ու տեսությունները։ **Փիլիսոփայուրյան բացահայտած օրենքները, կապեզորիաներն ու սկզբունքները ունեն համընդհանուր բնույթ և վերաբերում են թե՝ բնուրյանը, հասարակությանն ու մարդուն և թե՝ մարդկային մտածողությանը։**

Փիլիսոփայական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները բացառիկ նշանակություն ունեն աշխարհագրության համար, քանի որ վերջինս իր առանցքային խնդիրներից է համարում ընության ու հասարակության զարգացման և հատկապես դրանց փոխհարաբերությունների հետապոտությունը՝ այսինքն այն, ինչ առանցքային է նաև փիլիսոփայության համար:

Այսպես, ուրեմն, այս դասընթացն ընդհանուր չետք պատասխան է տալու հետևյալ հարցերին։

ա) ո՞րն է հասարակական աշխարհագրության տեղը գիտություն-ների համակարգում,

բ) ի՞նչ են ուսումնասիրում հասարակական աշխարհագրությունը և նրա գլխավոր քաղադրամասերը: Որո՞նք են դրանց ուսումնասիրության օբյեկտը և առարկան,

գ) ի՞նչ միջոցներով ու մեթոդներով են ուսումնասիրում (ինչպիսի՞ն է հետազոտության մեթոդիկան),

դ) ինչպիսի՞ ելակետային դրույթների վրա են հենվում և ի՞նչ ընդհանուր նպատակ են հետապնդում (այսինքն՝ ինչպիսի՞ն է մեթոդաբանությունը):

Հետագայում՝ ուսումնառության բոլոր տարիներին և մասնագիտական գործունեության ամբողջ ժամանակաշրջանում, այդ ընդհանուր պատկերացումները լինելու են շեր մշտական ուղեկիցները, որոնք, սակայն, մշտապես պետք է խորացվեն, թարմացվեն ու կոնկրետացվեն: Դրանք են որոշելու այն գլխավոր ճանապարհը, որն, ի վերջո, կհասցնի շեզ բաղադրի նպատակին:

Դեռևս երկու հազար տարի առաջ հոռմեացի հայտնի փիլիսոփա Լուկիոս Սենեկան իր աշակերտ Լուսիլիոսին գրում եր. «Զայլելով ճանապարհով, դու կհասնես նպատակիդ, մինչդեռ խարիսափումը վերջ չունի»: Ըստ ահա, այս աշխատությունը կօգնի շեզ խուսափել խարիսափումից, ընտրել շեր մասնագիրական նպակակը և ճշտորեն որոշել դրան հասնելու ճանապարհը:

ՎԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՅՈՒԳՄԱՆ ՇԱՄԱՐ

1. Ի՞նչ է գիրական գիրելիքը: Ի՞նչո՞վ է այն բարբերպատճ առկորդական, առօրեական գիրելիքից:
2. Ի՞նչ է գիրուրյունը:
3. Որո՞նք են գիրական գիրելիքների գլխավոր բնակականը:
4. Ո՞րն է իհմանքար և կիրառական գիրելիքների բարբերուրյունը:
5. Հասարակական աշխարհագրուրյան ի՞նչ հոմանիշներ գիրեք:
6. Ո՞րն է «Հասարակական աշխարհագրուրյան ներածուրյուն» դասընթացի նպականը: Ի՞նչ հարցեք է այն պատրասխաններու:
7. Որո՞նք են հասարակական աշխարհագրուրյան հարակից գիրուրյունները, որոնց հետ ան սերպորեն համագործակցում է:
8. Ո՞րն է փիլիսոփայուրյան և մարեմադիկայի նշանակուրյունը աշխարհագրուրյան համար:

ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՎԸ

1.1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՎԱՆ ԴԵՐԸ: ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Qիտությունը հասարակական կյանքի առանցնահատուկ ոլորտ է, որը գոյություն ունի և զարգանում է դրանում մասնագիտացող անշանչ՝ գիտնականների գործունեության շնորհիվ և կենտրոնացված է հատուկ հիմնարկներում հետազոտական կենտրոններում, բուհերի ամբիոններում, գիտական լաբորատորիաներում:

Ներկայում գիտությամբ զբաղվողների թիվը աշխարհում միլիոնների է հասնում:

Դեռևս հարյուրամյակներ առաջ անգլիացի հայտնի փիլիսոփա, նոր ժամանակի մատերիալիզմի և փորձարարական գիտության հիմնադիր Ֆրենսիս Բեկոն (1561-1626թ.) գիտությամբ զբաղվող մարդկանց քածանում էր 3 տիպի, նմանեցնելով նրանց մքջունի, մեղքի և սարդի:

«**Մրցյունք**» (տվյալ դեպքում գիտությամբ զբաղվողը) բոլոր տեսակի փաստերը առանց հատուկ ընտրության կուտակում է իր մոտավոր «մրցնանոցում»: Այդպիսիք կարող են լինել ոչ միայն սեփական փորձով ստացված փաստերն ու տվյալները, այլև ուրիշների հետազոտության արդյունքները և գաղափարները:

«**Մեղուն**» հատուկ ընտրություն է կատարում «փաստերի» մեջ, վերցնում է միայն «նեկտարը» և վերափոխում «մեղրի», որը գիտնականի համար սեփական հետևություններն են, հասկացություններն ու գաղափարները:

«**Սարդը**» այլևս նոր, արտաքին նյութի (նոր փաստերի ու տվյալների) կարիք չունի, որովհետև առանց դրա էլ նա կարողանում է հյուսել իր սեփական սարդոստամը, այսինքն՝ մշակել նոր տեսակետներ, հայեցակարգեր, տեսություններ:

Ներկայում յուրաքանչյուր ոք, ով չգտում է լրջորեն զբաղվել

գիտության հիմունքները յուրացնելով (օրինակ՝ սկսնակ ուսանողը) կամ գիտական հետազոտություն է կատարում, պետք է անցնի «մրջյունին», «մեղվին» ու «սարդին» հատուկ աշխատանքի փուլերը:

Մտավոր աշխատանքի բարձունքներին հասնում է նա, ում հաջողվում է անցնել բոլոր այդ փուլերը և տիրապետել թե՝ «մրջյունի», թե՝ «մեղվի» և թե՝ «սարդի» հատկանիշներին:

Աշխատանքի՝ «մրջյունին», «մեղվին» ու «սարդին» հատուկ տեսակները անհատի կողմից յուրացվում են ոչ հավասար չափով: Տարբեր մարդկանց մոտ, որպես կանոն, տիրապետում են դրանցից մեկը կամ մյուսը: Դրանից կախված էլ որոշվում է տվյալ **անհապի մրածելակերպը մրավոր կարողությունները, մըքի հասունության ու գիրականության ասդիմանը:**

Գիտական մտածողության այդ տեսակներն ու փուլերը ինչքան ել տարբերվեն իրենց կրնկրեալ նպատակներով ու հնարավորություններով, միավորվում են աշխարհը ճանաչելու և բացատրելու գերնպատակի շորք:

Վիրիարի է գիրության դերը արդի հասարակական կյանքում: Գիտությունն այժմ խորապես ներթափանցել է հասարակության ինչպես արտադրական, այնպես էլ քաղաքական, վարչական, ռազմական ոլորտները և մեծապես ավդում է դրանց զարգացման տեմպերի և ուղղության վրա:

Գիրության զարգացման մակարդակը դիրվում է որպես հասարակության զարգացման կարևոր չափանիշ:

Գիտությունը, որպես գործունեության առանձնահատուկ բնագավառ, ծագել է մարդկային հասարակության գոյության շատ վաղ ժամանակներում աշխատանքի հասարակական բաժանման շնորհիվ: Աշխատանքի հասարակական բաժանման որոշակի փուլում մասնագիտությունների բաժանում տեղի է ունեցել նաև գիտության ներսում: Առանձին անհատներ, ի վիճակի չլինելով միանգամից ընդգրկել գիտական գիտելիքների ամբողջությունը, սկսել են զբաղվել դրանց մի մասով միայն, իրենց շրջապատող նյութական աշխարհի լոկ մի կողմով, այդտեղ ընթացող առանձին երևույթներով: **Միասնական գիրությունը պրոկել է մասների:** Ձևավորվել են միասնական գիտության մասնագիտացված ճյուղեր ու ենթաճյուղեր, թեև գիտությունը չի կորցրել իր ամբողջականությունը: Գիտության ամբողջականության գաղափարը այսօր էլ նույնքան անվիճելի ու անսասան է, ինչքան եղել է ծագման ամենավաղ շրջանում:

Ներկա ժամանակաշրջանի խոշորագույն գիտնականներից քվանտային տեսության հիմնադիր Մ. Պլանկը 60-ական թվականների վերջերին այդ մասին գրել է. «Գիտությունն իր ներքին կառուցվածքով մեկ միասնական ամբողջություն է: Դրա տարաքանակում առանձին մասերի պայմանավորված է ոչ այնքան իրերի բնույթով, ինչքան մարդկային ճանաչողական ընդունակությունների սահմանափակությամբ: **Իրականում անընդհապ շղթա գոյություն ունի ֆիզիկայից ու քիմիայից կենսաբանության ու մարդաբանության միջոցով՝ մինչև սոցիալական գիտությունները, մի շորա, որը ոչ մի գործ չի կարող կպրվել եթե դա չարպի կամացական չելով, հապուկ նպագրակով»:**

Այսպես թե այնպես, անտիկ աշխարհում արդեն միասնական գիտության տրոհումը և դրա առանձին մասնագիտական բաղադրիչների չեավորումը կատարված փաստ էր: Եվ այդ ժամանակ էլ ծագել է գիտությունները դասակարգելու անհրաժեշտություն:

Գիտությունների դասակարգման առաջին փորձը պատկանում է հույն խոշորագույն մտածող **Արիստուկիլին** (Զ.ա. 4-րդ դարի սկիզբ):

Ամեն մի դասակարգման գլխավոր ելակերպային հարցը՝ դասակարգման սկզբունքը ընդունությունն է:

Արիստոտելի դասակարգման մեջ սահմանային չելով առկա էին հետագա դասակարգումների հիմնական սկզբունքները, մասնավորապես գիտելիքների բաժանումը սատ ուսումնասիրության օբյեկտների: Արիստոտելը օբյեկտային սկզբունքով գիտությունը բաժանում է երեք գրւխավոր բնագավառների՝ **բնության (ֆիզիկա), հասարակության (էրիկա)** և **մտածողության (բրամբանություն)** է:

Սիցին դարերում լայն տարածում ստացան մարդկային իմացության սուբյեկտիվ սկզբունքով կատարված դասակարգումները: Հաշվի էին առնվում ոչ թե ուսումնասիրության օբյեկտը, այլ սուբյեկտի՝ մարդկային մտքի հատկանիշները, այն է՝ **հիշողությունը, երևակայությունը և բանականությունը**:

Հիշողությանը համապատասխանում էր պատմությունը, երևակայությանը՝ պոեսիան, բանաստեղծական արվեստը, բանականությանը՝ փիլիսոփայությունը:

Ավելի ուշ կատարված գիտությունների դասակարգումից հիշարժան է ֆրանսիական հանրագիտակաների առաջարկած դասակարգումը, որի համապատասխան էլ ֆրանսիական հանրագիտարանում առաջին

անգամ համակարգված տեղեկություններ զետեղվեցին այն ժամանակ հայունի գիտությունների ու դրանց ճյուղերի մասին:

Սակայն գիտական իմացությունը շարունակում էր զարգանալ: Մարդկային միտքն ավելի խորը էր թափանցում շրջապատող աշխարհի իմացության մեջ, միաժամանակ ընդլայնվում էր նրա գործունեության ոլորտը: Իսկ դա անխուսափելիորեն պետք է բերեր և բերում էր գիտության նոր ճյուղերի առաջացմանը: Գիտությունը վերաճում էր չափազանց բարդ, բազմաստիճան ու բազմաբաղդրիչ համակարգի, որի կազմում ավելի ակնհայտորեն էին առաջանում, այսպես կոչված, մասնավոր գիտությունները, ինչպես նաև դրանց ճյուղերը, ենթաճյուղերը, ինքնուրույն գիտական ուղղությունները:

Այդ պրոցեսին կուգընթաց մեկը մյուսի ետևից ծնվում էին գիտությունների նոր դասակարգումներ: Բայց շուտով պարզվում էր, որ դրանք նույնպես չեն կարողանում նիշտ արտացոլել գիտությունների համակարգի ներքին կառուցվածքը և դրա բաղադրիչների ներքին կապերն ու առնչությունները:

20-րդ դարում ձևավորվեց գիտական իմացության մի առանձնահատուկ ուղղություն, որն ստացավ **գիտարանուրյուն** (науковедение) անունը:

Գիտարանուրյունը բնորոշվում է որպես գիտուրյուն գիտուրյան մասին: Այն վրադրում է գիտական իմացության կառուցվածքի և կարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրությամբ, ինչպես նաև գիտությունների դասակարգումով:

Գիտությունների տեսականորեն հիմնավորված **դասակարգումը** ոչ միայն գիտահմայական, այլև գործնական նշանակություն ունեցող խնդիր է, որն իր արդիականությունը երթեր չի կորցնում:

Դասակարգման գիտահմացական նշանակությունն այն է, որ կանոնակարգվում է մասնավոր գիտուրյունների, դրանց ճյուղերի ու ենթաճյուղերի գեղղ գիտուրյունների անընդհատ բարդացող համակարգում, դրանց կապերն ու առնչուրյունները միմյանց ու հարակից գիտուրյունների հետ:

Գիտությունների դասակարգման **գործնական նշանակությունը մեծ է:** Այն նպաստում է ոչ միայն գիտության, այլև ժամանակակից կօրթության ճիշտ ու արդյունավետ կազմակերպմանն ու կառավարմանը: Այն նշանակած է նաև գրադարանային գործի գիտական կազմակերպման

հիմքում և հնարավոր է դարյնում աննկարագրելի արագությամբ անող գիտական ինֆորմացիայի համակարգումը, փոխանակումը և հաղորդումը ընթերցողին:

Գիտությունների դասակարգման ժամանակակից համակարգի իմացությունը անհրաժեշտ է յուրաքանչյուրին, ով իրեն նախապատրաստում է գիտահետազոտական, գիտագործնական ու գիտամանկավարժական գործունեության¹:

Դասակարգումն ընդհանրապես գիրական իմացության մերող է և լայնորեն կիրառվում է ընական ու հասարակական տարրեր երևույթների հետապոտության ժամանակ: Ձեր ուսումնառության տարիներին դուք բազմաթիվ դիսցիպիլինների գծով բազմից հանդիպելու եք տարաբնույթ դասակարգումների, որովհետև դասակարգման միջոցով է, որ կատարվում է ամբողջական օբյեկտի կամ հասկացության բաժանումը մասերի ու ենթակարգային դասերի:

Ամեն մի դասակարգման, հետևապես և գիտությունների դասակարգման համար, ինչպես արդեն ասվեց, գլխավորը դասակարգման սկզբունքն է, այսինքն՝ այն հատկանիշի (հատկանիշների) որոշումը, որը հիմք է ընդունվում ամբողջի մասերն իրարից տարրերելու և բաժանելու համար:

Ներկայումս լայն տարածում ունի գիտությունների դասակարգման օրյեկտային սկզբունքը: Դա նշանակում է, որ դասակարգումը կատարվում է ըստ հետապոտության օրյեկտների ու առարկաների²:

Որպես այդպիսի օբյեկտներ ու առարկաներ հանդես են գալիս՝ անկենդան ընությունը, կենդանի ընությունը, տարրեր ընական երևույթները, մարդկային հասարակությունը, դրանց բաղադրիչները, դրանցում կատարվող երևույթները, մարդու՝ ինքը, մարդկային մտածողությունը, մարդկային գործունեության ու մտածողության տարրեր ընագավառները:

19-րդ դարում մատերիալիստական աշխարհայացքին հետևող

¹ Աշխարհի շատր երկրներում, այդ թվում և մեզանում մշակել ու ներդրվել են հարուկ պաշտոնական փաստարդեր՝ գիտությունների դասակարգչներ, որոնց համապատասխան պաշտպանվում են ադնանախոսություններ, շնորհվում են գիտական ասլրիմաններ, ինչպես նաև որոշվում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտությունները, ուղղություններն ու մասնագիտացումները:

² «Համար «առարկայի» փոխարժեն օգտագործվում է «օրյեկտ նեղ իմաստով» տերմինը:

գիտնականները առաջ քաշեցին այն տեսակետը, որ որպես հետազոտության առանցին օբյեկտներ, հետևապես և գիտությունների դասակարգման հիմք պետք է դիտել **մարդկանի շարժման չեղը**: Դրանցով հայտնի են՝ մեխանիկական շարժումը, ֆիզիկական շարժումը, քիմիական շարժումը, կենսաբանական շարժումը, հասարակական շարժումը և մարդու մտածողությունը: Ըստ այդմ էլ միասնական գիտության գլխավոր բաղադրամասեր են՝ դիտվում մեխանիկան, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, հասարակագիտությունը, տրամաբանությունը:

Ընդունված է այն տեսակետը, որ մեկ օբյեկտը, օրինակ, Երկիր մոլորակը, բուսականությունը, բնակչությունը, նյութական արտադրությունը կամ մարդու կարող է հետազոտվել տարբեր գիտությունների կողմից: Երկիր մոլորակը հետազոտության օբյեկտ է Երկրի մասին գիտությունների խմբի համար, որը հայտնի է նաև **երկրագիտություն** անունով: Բնակչությունը հետազոտության օբյեկտ է ժողովրդագրության, ազգագրության, բնակչության աշխարհագրության, պատմության համար: Պետությունը հետազոտության օբյեկտ է քաղաքագիտության, իրավագիտության, պատմության, երկրագրության՝ (страноведение), քաղաքական աշխարհագրության և գիտության մի քանի այլ ճյուղերի համար:

Հարց է ծագում. այդ դեպքում ինչո՞ւ են իրարից տարբերվում նույն օբյեկտը հետազոտող գիտությունները:

Գիտությունների օբյեկտային դասակարգումը ելնում է այն դրութիւնը, որ հետազոտության միասնական օբյեկտով միավորված գիտություններն իրարից տարբերվում են **հետազողության առարկայություն**: Հետազոտության առարկա է դիտվում **նոյն օրյեկտի առանձին մասը, կոդմը կամ հայկանիշը**: Օրինակ, ժողովրդագրության համար հետազոտության առարկա է ծառայում ազգաբնակչության վերաբետադրությունը, ազգագրության համար՝ ազգաբնակչության եթենիկական խմբերի ու ազգերի ծագումը և առանձնահատկությունները, իսկ բնակչության աշխարհագրության համար՝ ազգաբնակչության չենավորման ու զարգացման տարածական առանձնահատկությունները:

Ուրեմն, **հետազողության օրյեկտը կարող է ընդհանուր լինել մի քանի գիտությունների համար, միաշենու հետազողության առարկան հապուկ է միայն մեկ գիտությանը, իսկ այդ նոյն առարկայի այս կամ այն հայկանիշը կամ կոդմը՝ նոյն գիտության որևէ ճյուղին, ենթայուղին կամ ուղղությանը:**

Մեզանում ընդհանուր ճանաչում ունի ակադեմիկոս Ռ. Ս. Կեդրովի մշակած գիտությունների դասակարգումը: Գիտությունների միասնական համակարգը նա բաժանում է 4 խոշոր խմբերի՝

Փիլիսոփայական գիտություններ,
մաթեմատիկական գիտություններ,
բնական և տեխնիկական գիտություններ,
սոցիալական գիտություններ:

Խումքը միավորում է մասնավոր գիտությունները, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաժանվում է ճյուղերի, ենթաճյուղերի ու գիտական ուղղությունների: Արդյունքում մտացվում է բավականին բարդ մի սխեմա, որի հիմքում դրված են տարբեր սկզբունքներ ու մոտեցումներ, որի պատճառով էլ շատ հետապոտողների կողմից այդ սխեման լուրջ ըննադատության է ենթարկվում:

Գիտությունների դասակարգման լայն ճանաչում ունեցող սկզբունքը է նաև **մերոդարձական սկզբունքը**: Սա, ի տարրերություն օբյեկտային սկզբունքի, գլխավոր համարում է ոչ թե այն, թե ո՞րն է ուսումնասիրության օբյեկտը, այլ այն, թե ի՞նչ ելակետային դրույթների վրա է կառուցվում ուսումնասիրությունը, գիտաճանաչողական գործունեությունը ի՞նչ նպատակ է այն հետապնդում և որո՞նք են նպատակին հասնելու միջոցներն ու եղանակները (մեթոդները):

Գերմանացի աշխարհագետ Ալֆրեդ Հետները (1859-1941թթ.), Խմանուիլ Կանտի (1724-1804թթ.) փիլիսոփայական հայացքները կիրառելով աշխարհագրության նկատմամբ, տվեց նոր դասակարգում, որի հիմքում ընկած է այդ մեթոդաբանական սկզբունքը: Այդ դասակարգումը հայտնի դարձավ **Կանտ-Հետներյան դասակարգում** անունով¹:

Կանտ-Հետներյան դասակարգման համացայն գիտությունները բաժանվում են 3 խմբի՝ **խորհուղական** (ժամանակագրական), **խորհրդական** (տարածական) և **սփառեմակրի** (համակարգային): Ցուրաքանչյուր խմբի մեջ մտնում են այն գիտությունները, որոնց համար ընդ-

1 «Կորները այդ դասակարգումը կվեկ է իր «Die geographie. Ihre geschichte, ihr wessen und ihre metodes» աշխարհության մեջ: Sh'a ուսուերձ բարգմանությունը՝ Ալեքսանդր Գետեր. Գеография. Ее история, сущность, методы, Ленинград-Москва, 1930ր.

հանուր է գիրական ճանաչողության մերոդարձանությունը, ընդհանուր մոլոցում:

Խրոնոգիական են համարվում այն գիտությունները, որոնք առանձնահատուկ ուշադրություն են դարձնում երևույթների փոփոխություններին ժամանակի մեջ (հուն. խրոնոս-ժամանակ): Այդպիսիք են բոլոր այն գիտությունները, որոնք գործ ունեն երևույթների՝ լինեն դրանք բնական թե հասարակական, ժամանակագրական փոփոխությունների հետ: Այդ գիտություններն ընդունված է անվանել նաև **պատմագրական կամ պարբերացնող (պերիոդիզացնող)** գիտություններ:

Խորողոգիական են համարվում այն գիտությունները, որոնց համար գիտավորը երևույթների անպիսի փոփոխությունների ուսումնասիրությունն է, որոնք կատարվում են տարածության մեջ: Դրանք հայտնի են նաև **բարձարարանական, բեղագրական (բուպողրաֆիական), շրջանացնող գիրություններ** անունով: Այդպիսիք են՝ աշխարհագրական գիտությունները, աստիաբաշխությունը:

Միաբնմագիկ են համարվում այն գիտությունները, որոնք ուսումնասիրում են երևույթների ներքին կառուցվածքը, ներքին օրինաշափությունները: Դրանք հայտնի են նաև որպես **առարկայական, դասակարգող, էուրյունը բացահայտող գիրություններ**: Այդպիսիք են, օրինակ, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը:

Երկար ժամանակ մի շարք երկրներում, հատկապես ԽՍՀՄ-ում, արմատավորված էր այն գաղափարը, որ գիտությունների Կամտ-Հետներյան դասակարգումը գիտական չէ, որովհետև, իբր թե, «մատերիան» անջատում է իր գոյության չենթից՝ տարածությունից ու ժամանակից: Գիտական ու ընդունելի էր համարվում միայն գիտությունների օբյեկտային դասակարգումը:

Այժմ գիտնականների ննշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ գիտությունների դասակարգման մեթոդաբանական և օբյեկտային սկզբունքները ոչ թե հակասում, այլ լրացնում են իրար: Երկու սկզբունքն ել գիտական են, բայց դրանցից յուրաքանչյուրը կիրառելի է դասակարգման, այլ կերպ ասած՝ միանական գիտության ներսում ենթակարգային դասերի առանձնայման տարբեր մակարդակների համար: Ենթադարձանական սկզբունքը կիրառելի է ավելի բարձր մակարդակների, իսկ օբյեկտայինը՝ ավելի ցածր մակարդակների համար:

Զայդ այդ, մեթոդաբանական սկզբունքի շնորհիվ ստեղծվում է դասակարգման մի մոդել, որը բավականին պարզ է, հասկանալի և կիրառման համար դյուրիին: Ականավոր աշխարհագետ Ռ. Ռոդոմանի գնահատմամբ¹ «Կանտ-Հետների մոդելը... «մատերիան» չի անջատում տարածությունից ու ժամանակից, այլ հակառակը, ինարավորություն է տալիս դրանք տրամաբանորեն միավորել, գիտակցաբար ընթանալով միևնույն գոյի տարբեր պրոֆիլներով» և հետազոտության նպատակով իրական աշխարհից կտրել, առանձնացնել սահմանափակ բլոկներ: Ավելին, այդ մոդելը չի արգելում աշխարհագետին վրաղվելու երևոյթի նաև ծագումնաբանությամբ ու ներքին կառույցածրով, ճիշտ այնպես, ինչպես բուսաբանին չի արգելում վրաղվել բույերի թե՛ եվոլյուցիոն զարգացումով և թե՛ տարածական տեղաբաշխումով:

ՎԱՐՑԵՐ ԻՆՉՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՎԱՐՄԱՐ

1. Ֆրենսիս Բեկոնը ստվորողի և գիտնականի աշխարհանքը ո՞ր միջադարի աշխարհանքի հետ է հանձնապում և ի՞նչ նպատակով:
2. Ե՞ր և ի՞նչո՞ւ է միասնական գիտուրյունը դրույվել մասերի: Արդյո՞ք դրանից գիտուրյունը կորցրել է իր ամբողջականությունը:
3. Ո՞վ է կարարել գիտուրյունների դասակարգման առաջին փորձը: Ի՞նչ ճյուղն է նա առանձացրել:
4. Ի՞նչ է գիտարանուրյունը, ինչո՞վ է այն զրադիւմ:
5. Ներկայումս գիտուրյունների դասակարգման ի՞նչ սկզբունքներ են կիրառվում:
6. Ո՞րն է գիտուրյունների դասակարգման օրյեկտային սկզբունքի էուրյունը:
7. Ի՞նչ դարրերուրյուն ենդազուրուրյան օրյեկտի (բառի լայն իմաստով) և ենդազուրուրյան առարկայի (կամ օրյեկտի՝ բառի նեղ իմաստով) միջև:
8. Ո՞րն է գիտուրյունների դասակարգման մերոդարանական սկզբունքի էուրյունը:
9. Ովքի՞ր են գիտուրյունների դասակարգման մերոդարանական սկզբունքի հեղինակները:
10. Ինչո՞ւ է րճնադապահում գիտուրյունների դասակարգման մերոդարանական սկզբունքը:
11. Ո՞րն է գիտուրյունների դասակարգման նշանակուրյունը:

1 Sh'un B. Rodoman, Уроки географии, «Вопросы философии» аմսագիր, 1990թ., հ. 4:

1.2. ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՑԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍՎԱՐԳՈՒՄԸՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Աշխարհագրությունը հնագույն գիտություններից է: Զ. ա. 8-7-րդ դարերում արդեն երկրի վրա տեղի ունեցող երևոյթների մասին մարդկանց սովորական-առօրեական, ինչպես նաև ճանապարհորդությունների ու արշավանքների շնորհիվ կուտակված գիտելիքները վերաբեր էին գիտական գիտելիքների, հանդես էին եկել առաջին տեսական ընդհանրացումները և երևոյթների պատճառական կապերի վերլուծությունը:

Այդ ժամանակ գիտությունը դեռևս տրոհված չէր: Եվ այն գիտնականները, որոնք զարգացնում էին աշխարհագրական գիտական պատկերացումները, միաժամանակ զբաղվում էին թե՝ փիլիսոփայությամբ, թե՝ աստղագիտությամբ, թե՝ մաթեմատիկայով: Այդ բոլորը միասին կազմում էին **բնափիլիսոփայությունը**, որը ծագել և զարգանում էր ի հակադրություն շրջակա աշխարհի մասին դիցաբանական, առասպելական պատկերացումների:

Պահանջվեց մի քանի հարյուրամյակ՝ Զ. ա. VII-I դարերը, որպեսզի աշխարհագրությունը բաժանվի բնափիլիսոփայությունից և յևավորվի որպես ինքնուրույն գիտական ուղղություն: Եվ այդ քանի համար մենք պարտական ենք առաջին հերթին հույն ականավոր մտածողներ՝ **Հերոդուսին** (Զ.ա. 5-րդ դար), **Էրակրոսինեսին** (Զ.ա. 3-2-րդ դդ.) և **Սպրառնին** (Զ.ա. 1-ին դար): Ավելի ուշ դա գնահատվեց որպես **աշխարհագրության առաջին ժնունդ**:

Հետագա դարերի ընթացքում աշխարհագրական գիտությունը, ինչպես և գիտության ամեն մի ճյուղ, ունեցել է իր անկման ու բուռն վերելիք ժամանակները: Աշխարհագրությունն իր «**երկրորդ ժնունդ**» ապրել է 15-16-րդ դարերում՝ կապված Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետ, որոնց շնորհիվ հիմնականում ավարտվում է երկրագնդի բոլոր՝ մինչ այդ անհայտ մասերի հայտնագործումը:

Աշխարհագրության «**երրորդ ժնունդը**» տեղի ունեցավ 19-20-րդ դարերում, երբ աշխարհագրությունն ակնառու հաջողությունների հասավ երկրագնդի աշխարհագրական թաղանթի և դրա բաղադրիչների

(քարոլորտ, ջրոլորտ, մթնոլորտ, կենսոլորտ, մարդոլորտ) պարզացման ու տարածքային կազմակերպման օրինաչափությունների հայտնագործման ընագավառում:

20-րդ դարի վերջն ընդունված է համարել աշխարհագրության «չոպորդ ծնունդի» սկիզբը, երբ սկսվում է աշխարհագրական թաղանթի և հատկապես մարդոլորտի հատկանիշների ու պարզացման օրինաչափությունների «վերահայտնագործումը» դրանց խորքային հետազոտության միջոցով:

Վերջերս առանցին գրքով հրատարակվեց ԱՄՆ գիտությունների ազգային ակադեմիայի «Աշխարհագրության վերահայտնագործման հանցնաժողովի» վեկույցը¹: Դա մի պաշտոնական փաստաթուղթ է՝ ստեղծված գիտության տարբեր ճյուղերի հեղինակավոր ներկայացուցիչների համատեղ ուժերով:

ԱՄՆ-ում և աշխարհի այլ երկրներում աշխարհագրության պարզացման փորձի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա հանցնաժողովը եկել է այն եվրակացության, որ առաջիկայում եական փոփոխություններ են սպասվում մի կողմից՝ աշխարհագրության և մյուս կողմից՝ գիտության մյուս ճյուղերի և ամբողջ հասարակության փոխազդեցությունների ու փոխարաբերությունների միջև: Սկսվել է «աշխարհագրության վերահայտնագործումը», որը հենվում է նոր իրողությունների, այն է՝ շրջակա միջավայրի արագ փոփոխությունների պատճառով հասարակության հարաճուն անհանգստության և համամոլորակային ու լոկալ (տեղային) մասշտարով հասարակական կյանքի կազմակերպումը կատարելագործելու անհրաժեշտության վրա: Փորձ է արված սահմանել մարդկության առջև ծառացած համամոլորակային հիմնախնդիրները, որոնց լուծումը առանց աշխարհագրության գործուն մասնակցության հնարավոր չէ:

Հանցնաժողովը միաժամանակ մշակել է բուն աշխարհագրական գիտության կատարելագործման, նրա տեսության ու մեթոդիկայի պարզացման, դրանք կյանքի նոր պահանջներին համապատասխանեցնելու ուղիները, որոնք հնարավորություն կտան վրայի կամաց կային հիմնախնդիրներով և առաջարկելու արդյունավետ լուծումներ:

Հանցնաժողովի կարծիքով արդի աշխարհագրությունը պետք է

1 *Sh'un Rediscovering geography. New Relevance for Science and Society, National academy Press, Washington, D.C. 1997.*

կրաղվի հետևյալ առավել սուր հարցերի պատասխանները գտնելով՝

• հասարակությունն ինչպես կարող է դիմակայել քնական միջավայրի արագացող քայլայմանը,

• ի՞նչ մեխանիզմներ են ազդում կիմիայի համամոլորակային փոփոխությունների վրա,

• որո՞նք են հարուստների և աղքատների միջև գոյացող հսկայական ճեղքվածքի պատճառներն ու հետևանքները,

• ինչպես են տեխնոլոգիաները փոխում տնտեսական և սոցիալական համակարգերը,

• ինչո՞ւ ինչ-որ երևույթներ (ֆենոմեններ) մի տարածքում տեղի են ունենում, մի այլ տարածքում՝ ոչ,

• ինչպես են մի մասշտաբի աշխարհագրական պրոցեսները ազդում այլ մասշտաբի պրոցեսների վրա:

Այսպիսով, աշխարհագրությունն իր ավելի քան 2500-ամյա պատմության ընթացքում հարափոխու կյանքի գարգացման համեմատ անընդհատ հարստացել է, կատարելագործվել, ճշգրտել իր նպատակները, հետազոտությունների ոլորտը, մեթոդաբանությունը:

Աշխարհագրական գիտելիքների, գաղափարների ու տեսությունների զարգացման հարուստ պատմությանը նվիրված ինքնուրույն դասընթացներ դուք կուսումնասիրեք բակալաւրիայի քարցը կուրսերում և մագիստրատուրայում:

Անցյալի տարբեր հետազոտողներ աշխարհագրությանը գիտությունների դասակարգման համակարգում տարբեր տեղեր են հատկացրել:

Այժմ նույնպես դրա տեղի մասին ամբողջ աշխարհում ընդունված միասնական կարծիք գոյություն չունի, հատկապես, եթե խոսքը վերաբերում է գիտությունների օբյեկտային դասակարգմանը:

Ռուսաստանում, Անգլիայում, Գերմանիայում և մի քանի այլ երկրներում աշխարհագրությունը ավանդաբար տեղադրվել է քնական գիտությունների խմբի մեջ: Այդ տեսակետը տիրապետող է եղել նախկին ԽՍՀՄ-ում նույնպես:

Արևմուտքի երկրների մեծ մասում աշխարհագրությունը դասվել է հասարակական գիտությունների շարքը, իսկ երրորդ խումբ պետություններում այն համարվել է քաղաքական գիտություն: Մոտեցումների այդ տարբերությունը հիմնականում պահպանվում է նաև այժմ:

Կան նաև այնպիսի դեպքեր, երբ, շընդունելով ամբողջական աշ-

խարհագրության գոյությունը, մասնավոր աշխարհագրական գիտությունները ցույց են տարբեր խմբերի մեջ, մասնավորապես ֆիզիկաշխարհագրական խումբը տեղադրում են բնական գիտությունների, սույնական տնտեսականը՝ հասարակական (սույնական) գիտությունների և քարտեզագրությունը՝ տեխնիկական գիտությունների խմբի մեջ:

Դրանով պայմանավորված էլ աշխարհագրական հետազոտությունները տարբեր երկրներում տարբեր ուղղվածություն ունեն՝ բնական, հասարակական (սույնական), քաղաքական և այլն: Այդ ուղղվածությունից էլ կախված են հետազոտությունների թեմատիկան, գլխավոր նպատակն ու խնդիրները և, վերջապես, աշխարհագրական բարչրագույն կորության բովանդակությունը և կառուցվածքը:

Նման վիճակը բացատրվում է նրանով, որ գիտությունների՝ օրյեկտային սկզբունքով կատարված դասակարգման համակարգում աշխարհագրությունը որպես մեկ ամբողջություն չի տեղակորվում գիտությունների մեջ արդեն հայտնի՝ բնական, հասարակական կամ տեխնիկական խմբերից որևէ մեկի սահմաններում: *Աշխարհագրությունը գրնորդում է այդ երեք խմբերի փոխադարձ շփման ու փոխափանցման հարցածում, և երրորդն կապված է բոլորի հետ և դրանց նկարմամբ հանդիս է գալիս որպես սահմանային գիրություն* (աշխարհագրության սահմանային վիճակը պատկերված է նկ. 1-ում, էջ 22):


Նվազագույն դա այն պատճառով, որ նրա հետազոտության օրյեկտը՝ երկրագնդի աշխարհագրական թաղանթը, բաղկացած է բնածին, մարդածին (հասարակական) և տեխնածին տարրերից՝ չեզ հայտնի ոլորտներից (քարոզություն, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, մարդոլորտ):

Աշխարհագրությունն իր բնական երևույթների (աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների) հետազոտության մասով կապմում է բնական գիտությունների, հասարակական (մարդածին) երևույթների (մարդու որտի) հետազոտության մասով՝ հասարակական գիտությունների, իսկ մարդու որտի տեխնածին տարրերի մասով՝ տեխնիկական գիտությունների բաղադրիչը: Աշխարհագրությունը տեխնիկական գիտությունների բնագավառ է ներթափանցում հատկապես քարտեզագրության միջոցով (տե՛ս նկ. 1):

Ինընստինքնան հասկանալի է, որ աշխարհագրության այդ երկակի վիճակը պայմանավորված է նրա հետազոտության օրյեկտի՝ երկրի աշխարհագրական թաղանթի կառուցվածքային հատկանիշներով:

Օրյեկտային սկզբունքի կիրառմամբ աշխարհագրական գիտությունների համակարգում առանցնանում են գիտության այնքան ճյուղեր ու ենթաճյուղեր, ինչքան հետազոտության օրյեկտ-առարկաներն են՝ աշխարհագրական թաղանթի բաղադրիչներն ու դրանց հատկանիշները:

Ինչ վերաբերում է մեթոդաբանական սկզբունքին, ապա աշխարհագրությունը միանշանակ և ամենուրեք ընդունվում է որպես խորությական (տարածական) գիտություն¹:



Նկ. 1. Աշխարհագրության գործը գիտությունների դասակարգման համակարգում

1 Լայն լուսածում ունեցող սահմանումներից մեկի համաձայն «աշխարհագրությունը գիտություն է լուսածության մասին» ընդհանրապես:

ԴԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Աշխարհագրությունը ե՞րբ, ո՞ւմ շնորհիվ և ո՞ր գիտությունից է անջապվել:
2. Աշխարհագրությանը բանի՝ «ծնունդ» է վերագրվում: Որո՞նք են դրանք:
3. Ներկայում ի՞նչ կարծիքներ գոյություն ունեն գիտությունների դասակարգման համակարգում աշխարհագրության դեղի մասին:
4. Ինչդ է օրյեկտային սկզբունքով կարտարված գիտությունների դասակարգման դեպքում աշխարհագրությունը ամբողջությամբ վերցրած չի դնդավորվում երեք հայտնի բնագավառներից և ոչ մեկում:
5. Ինչպե՞ս կարող եք իմանավորել աշխարհագրությամ՝ որպես սահմանային գիտության կարգավիճակը:

1.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆՁԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ: ԴՐԱ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԵՄՆԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պյապես ուրեմն, աշխարհագրական գիտությունների հետապուտության ընդհանուր օբյեկտ և առարկաներ են՝ Երկրագնդի աշխարհագրական թաղանթը, նրա ոլորտները, վերջիններիս տարբեր տիպի ու մեծության բաղադրիչները, դրանց փոխազդեցությունը, հատկանիշները:

Երկրագնդի աշխարհագրական թաղանթում՝ տիեզերքի մեջ հայտնի մասի հենց այդ հատվածում է, որ գոյություն ունի կյանք, այդտեղ է, որ ծագել և զարգանում է մարդկային հասարակությունը, ամենասերտ փոխգործողության մեջ գտնվելով իր շրջակա բնական միջավայրի հետ: Եվ այդտեղ է, որ նյութը հանդիպում է երեք ագրեգատային վիճակներով՝ **պինդ, հեղուկ և գազային**:

Աշխարհագրական թաղանթի երկարատև զարգացման արդյունքում ձևավորվել են դրա գիխավոր առանցնահատկությունները, որոնք դուք ուսումնասիրելու եք հատուկ դասընթացների միջոցով: Այժմ դրանց ծանոթանանք ամենաընդհանուր ձևով:

Արդի գիտությունը աշխարհագրական թաղանթի գլխավոր առաջնահատկություններ է համարում **կառուցվածքայնուրյունը, ամրողականուրյունը**, դրանում ընթացող **երևույթների ցիկլայնուրյունը, նյութի շրջապատճեղը**:

Աշխարհագրական թաղանթի կառուցվածքայնուրյունը: Ընդհանրապես կառուցվածքը ամեն մի համակարգի հատկանիշն է և ցույց է տալիս դրա ներքին կազմակերպվածության չեղը:

Ներքին կազմակերպվածուրյունը համակարգի թաղաղիչների միջև եղած կայուն փոխադարձ կապերի միասնուրյունն է:

Դուք գիտեք, որ աշխարհագրական թաղանթը թաղկայաց է կոմպոնենտներից՝ տարրերից (օդ, ջուր, լեռնապարներ, կենդանի նյութ, մարդին՝ իր արտադրական գործունեության արդյունքներով): Այդ տարրերը Երկրի մակերեսին հանդես են գալիս միասնաբար և գոյացնում են **դրածական գուգորդումներ՝ գարքեր մեծուրյան ու քարդուրյան գեռհամակարգեր:** Գեռհամակարգեր են, օրինակ, մայրցամաքներն ու օվկիանոսները, տարրեր մեծության ու քարտության տարածքային բնական համալիրները, տարածքային արտադրական համալիրները, լանդշաֆտները, տարաքնակեցման համակարգերը, տնտեսական շրջանները, բնական և սոցիալ-տնտեսական գոնաներն ու արեալները: Չստ որում, աշխարհագրական թաղանթին՝ ամբողջությամբ վերցրած, և դրա ոլորտներին հատուկ է **յարուսային կառուցվածքը**, որի դեպքում վերևսից ներքև ուղղությամբ նյութի խտությունը մեծանում է:

Աշխարհագրական թաղանթի բոլոր տարրերի միջև գոյություն ունեն կայուն փոխադարձ կապեր՝ ուղիղ և հակադարձ, ուղղակի ու միջնորդված և այլն, որոնց միասնությունը ստեղծում է աշխարհագրական թաղանթ կոչվող քարդ ու եզակի համակարգը:

Ընդունված է աշխարհագրական օբյեկտների կառուցվածքը՝ սկզբած աշխարհագրական ամբողջական թաղանթից մինչև դրա ամենափոքր քաղաքիչները, քննարկել երկու կտրվածքով՝ **կոմպռամենտային ու դրածքային:** Առաջին դեպքում մենք գործ ունենք օբյեկտի կոմպռնենտների՝ աշխարհագրական թաղանթի ոլորտների ու դրանց տարրերի կամ տնտեսության ճյուղերի հետ: Մինչդեռ երկրորդ դեպքում որպես կառուցվածքային միավորներ հանդես են գալիս տարածամասերը՝ ուղղակության գեռհամակարգերի տեսքով:

Աշխարհագրությունը շատ մեծ նշանակություն է տալիս հետազոտվող օբյեկտի կառուցվածքային առանցնահատկությանը, դրա միջոցով էլ՝ ներքին կազմակերպվածության չելին:

Աշխարհագրական թաղանթի հաջորդ հատկանիշը **ամբողջականությունն է**: Ամբողջականությունը դրսնորվում է, ըստ գիտական տերմինարանության, **կոնցինուալուրյան** (լատ. անընդհատելիություն) և **դիսկրետուրյան** (լատ. ընդհատելիություն) միջոցով, որոնք գտնվում են դիակենտիկական միասնության մեջ. առանց մեկի չի կարող լինել մյուսը: Նրանք լրացնում են միմյանց և ստեղծում ամբողջականություն:

Նթե աշխարհագրական թաղանթի անընդհատելիությունը նրա համատարած լինելն է Երկիր մոլորակի **40-45** կմ հաստության մակերեսային շերտում, ապա ընդհատելիությունը՝ դրա քաժանելիությունն է հարաբերականորեն ամբողջական մասերի՝ տարրեր որակի ու մեծության գեոհամակարգերի:

Ինչպես է ապահովվում աշխարհագրական թաղանթի **անընդհատելիությունը**, ինչո՞վ է դա պայմանավորված: Դա պայմանավորված է աշխարհագրական թաղանթի սահմաններում կատարվող բոլոր ընական երևույթների համար ընդհանրական հանդիսացող եներգետիկ հումքով՝ հիմնականում Արեգակի լուսային ու ջերմային եներգիայով, ինչպես նաև ենդոգեն պատճառներով՝ Երկրի ներքին ջերմությամբ ու գրավիտացիայով:

Ընդհապելիությունը (դժվար չէ նկատել) հենվում է նախորդ հատկանիշի՝ կառուցվածքայնության վրա: Այն նախատեսում է ներքին տարարածանում, կառուցվածքային միավորների անջատում, աշխարհագրական թաղանթի տարրերի ու դրանց տարածական գուգորդումների՝ գեոհամակարգերի առանցնացում:

Գեոհամակարգերի սահմանները առաջին հերթին **անօրոպետային** (**բարիերային**) սահմաններ են: Այդպիսիք են, օրինակ, պետությունների քաղաքական սահմանները, անմատչելի լեռնաշղթաները, ջրաժանները: Այդուհանդերձ, պետք է միշտ հիշել, որ նույնիսկ անջրագետային սահմանները ի վիճակի չեն խախտել աշխարհագրական թաղանթի ամբողջականությունը, նրա միասնականությունը:

Աշխարհագրական թաղանթի կոնտինուալության ու դիսկրետության դիակենտիկական միասնության վկայություն է նաև այն, որ **աշխարհագրական բաղանքի ոլորտները, ինչպես նաև ավելի փոքր բաղադ-**

Ի՞շները գլուխում են միմյանց հետ ամենասերդ փոխներգործության մեջ և փոխպայմանավորում են դրանցում կարարվող երևոյթները:

Կոնտինուալությունն ու դիսկրետությունը աշխարհագրական թաղանթի տարբեր ոլորտներում և տարբեր գեոհամակարգերում դրսենորվում են ոչ միատեսակ: Օրինակ, մթնոլորտի վերին շերտերում տիրապետող են համեմատարար համասեռ պայմանները, մինչդեռ երկրամերձ շերտերում ավելի հաճախակի են պայմանների տարբերությունները: Դաշտավայրերն իրենց բնական պայմաններով ավելի միատար են, բնական զոնաների անցումը մեկը մյուսին ավելի աննկատելի է: Դրան հակառակ, լեռնային մարզերում սովորական են պայմանների ոչ միայն տարբերությունները, այլև հակադրությունները:

Աշխարհագրական թաղանթի կոնտինուալության ու դիսկրետության տարբեր դրսորումները նկագելի են նաև մարդուորդի օրինակով: Նթե, օրինակ, համաշխարհային տնտեսության և միջազգային առևտորի բնագավառում ընդգծվում է անընդհատելիությունը, ապա աշխատանքի աշխարհագրական բաժանման և շրջանային մասնագիտացման ու շրջանայն բնագավառում ավելի ակնհայտ է դառնում ընդհատելիությունը:

Աշխարհագրական թաղանթի անընդհատելիության ու ընդհատելիության հատկանիշների տարբերություններն ավելի յայտուն դրսենորվում են ըստ պետությունների ու տարածաշրջանների (կախված սույհալ-տնտեսական զարգացման մակարդակից, քաղաքական կառույցածրից, բնակչության ու արտադրության տեղաբաշխումից և այլն):

Կարևոր առանցնահատկություն է աշխարհագրական թաղանթում ընթացող երևույթների **ցիկլայնությունը:** Երևույթների ցիկլայնությունը՝ ոիթմիկ փոփոխությունները, կարող են ամենատարբեր ժամանակային կտրվածք ունենալ՝ օրական, սեպտեմբերին, տարեկան, դարավոր և ավելի երկար: Վերջիններիս օրինակ են երկրաբանական ցիկլերը, որոնք զարգանում են տիեզերական ու երկրաբանական պատճառներով:

Բնական երևույթների ցիկլայնությունը, օրինակ՝ գիշեր-ցերեկ հերթափոխությունը, տարվա եղանակները, բույսերի ու կենդանիների աճը, զարգացումը և վերարտադրությունը, Երկրի մակերևույթի զների հերթափոխությունը (Երովիայի ցիկլը) և այլն, վաղուց են հայտնագործվել ու նկարագրվել գիտության կողմից:

Այժմ ապացուցվում է, որ ցիկլայնությունը բնորոշ է նաև հասա-

րակական երևույթների զարգացմանը: Օրինակ, տնտեսության մեջ պարբերաբար իրար հաջորդում են վերելքը և անկումը: Դրա փուլերն են՝ վերելքը, ճգնաժամը, լճացումը, աշխուժացումը: Տարբերում են երկար սկզբեր (20-25 տարի) և կարճ սկզբեր (5-10 տարի):

Ծիկլամություն նկատվում է նաև քաղաքների զարգացման մեջ:

Նշենք աշխարհագրական թաղանթի մեկ կարևոր հատկանիշ և՝ **Այսուհետև շրջապատույթը**, որի շնորհիվ ապահովվում է նույն երևույթների ու պրոցեսների քավմակի կրկնությունը: Նյութի շրջապատույթի որոշ տեսակներ մեխանիկական շարժման տեսք ունեն, օրինակ՝ մթնոլորտի շրջապատույթը կամ ծովային հոսանքները: Մյուսներն ուղեկցվում են նյութի ագրեգատային վիճակի փոփոխությամբ, օրինակ՝ ջրի շրջապատույթը: Երրորդ դեպքում տեղի է ունենում նյութի քիմիական վերափոխում: Այդպիսին է նյութի կենսաքանական շրջապատույթը: Եվ վերջապես, նյութի մարդածին (տեխնոգեն) շրջապատույթը, որը տեղի է ունենում բնական միջավայրի վրա մարդու արտադրական ներգործության և բնական ռեսուրսների մշակման ու վերամշակման հետևանքով:

Ինչպես տեսնում ենք, աշխարհագրական հետապոտության ընդհանուր օբյեկտը՝ աշխարհագրական թաղանթը, ունի շատ բարդ կառուցվածք, որտեղ տեղի են ունենում քավմապիսի ու քավմաքնույթ երևույթներ ու պրոցեսներ: Այն զարգանում է իր ուրույն օրենքներով ու օրինաչափություններով: Այս հանգամանքով էլ հենց պայմանավորվում է այն, որ արդի աշխարհագրությունը հանդես է գալիս որպես **գիրուրյունների համակարգ, հետազոտության դարրեր օրյեկտներ ու առարկաներ ունեցող, բայց առյան մերոդարձնությամբ միավորված գիրուրյունների, գիրական ճյուղերի, հնրանյուղերի ու ուղղությունների միամբողություն**:

Աշխարհագրական գիտությունների (ինչպես և յանկայած այլ գիտության) համակարգի կառուցվածքն ընդունված է պատկերել գրաֆիկորեն, քաղադրիչները տեղադրելով մեկ հարթության վրա, մեկը մյուսի կողքին: Բայց նման պատկերը շատ սխեմատիկ է ու պայմանական: Իրականում **գիրուրյան կառուցվածքը ժամանակին է**, հաճախ փոխափանող քաղադրիչների շատ բարդ դասավորությամբ: Այդուհանդերձ էջ 28-ի սխեման կարող է մեկ օգնել մոտավոր պատկերացում կազմելու աշխարհագրական գիտության կառուցվածքի մասին:

Սխեմայի կենտրոնում տեղադրված են աշխարհագրական գի-



Նկ 2. Աշխարհագրական գիտության կառուցվածքը (առաջին կարգի բաղադրիչները)

Սխեմայի արտաքին օղակը պատկերում է **բարդեզագրությունը**: Ընդունված է ասել, որ քարտեզը աշխարհագրության յուրահատուկ լեզուն է, նրա «ալֆան ու օմեգան» («սկիզբն ու վերջը»): Աշխարհագրական ամեն մի հետազոտություն սկսվում է քարտեզից և ավարտվում է քարտեզով: Դրանով իսկ հաստատվում է կոնկրետ տարածքի և ընդհանրապես տարածականության բացադրիկ նշանակությունը աշխարհագրության համար (հիշենք, որ աշխարհագրությունը խորոլոգիական գիտություն է): Դուք ամեն մի քարտեզ ոչ այլ ինչ է, քան երևույթների տարածականության գրաֆիկական մոդել: Տարածքին ու տարածականությանը այդպիսի նշանակություն տալն արդեն հատուկ գիտական **մոդելում է, մերոդարձություն**, որն ամենասերտ կապի մեջ է փիլիսոփայության հետ:

Ավելացնենք, որ քարտեզագրությունը, որը **հետազոտվող երևույթների գրաֆիկական մոդելավորումն է**, աշխարհագրական և ընդհանրապես տարածքային հետազոտությունների համար ծառայում է որպես **գլխավոր և ունիվերսալ մերոդ** (այդ մասին մանրամասն տե՛ս գլուխ 5-ում):

Աշխարհագրական գիտությունների դասակարգումը, հասկանալի է, վերը նկարագրված սխեմայով չի ավարտվում: Դա առաջին մոտեցումն է, դասակարգման առաջին աստիճանը, որտեղ առանցնացված են համակարգի չորս գլխավոր՝ առաջին կարգի բաղադրիչները՝ ենթահամակարգերը:

Մության երկու հիմնական բլոկները՝ իրենց ուրույն հետազոտության օբյեկտներով: Դրանք են՝ մեր երկրագնդի **բնուրյունը** (անկենդան ու կենդանի) և **մարդկային հասարակությունը**:

Այդ երկու բլոկները օղակված են **ընդհանուր (կամ գլեւական) աշխարհագրությամբ**, որն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթների տարածական փոփոխությունների համար:

Արդեն ասվել է, որ գիտության կարգապումը անխուսափելիորեն հանգեցնում է դրա տարարածանանը, դիֆերենցմանը, որի հետևանքով ծնվում են նոր գիտություններ:

Չայց նոր գիտություններ ծնվում են ոչ միայն տրոհման, դիֆերենցման արդյունքում: Այդպիսիք ծնվում են նաև արդեն ձևավորված գիտությունների միասնաշման, ինտեգրացման շնորհիվ: Այդ միջոցով ձևավորված գիտությունները **միջամկյալ գիտություններ** են:

Եվրակացությունն այն է, որ մարդկային իմացության և աշխարհի գիտական ճանաչողության անընդհատ շարունակվող խորացման պայմաններում նոր եական նվաճումներ կարելի են ստանալ ոչ այնքան գիտության մեկ առանցին նյուղի, ինչքան տարբեր նյուղերի սերտ համագործակցության, նրանց ներուժի միավորման միջոցով:

ԴԱՐՅԵՐԻ ԽՆՁԱՍՏՈՒԳՄԱՆ ՇԱՄԱՐ

1. **Որո՞նք են աշխարհագրական բաղանքի գլխավոր առանձնահարկությունները:**
2. **Ինչպե՞ս են դրանորվում աշխարհագրական բաղանքի կառուցվածքայնություններ և դրա հետ կապված՝ ներքին կազմակերպվածությունը:**
3. **Ի՞նչ կողմանից է քննարկվում աշխարհագրական օրյեկտների կառուցվածքը:**
4. **Ի՞նչ հագիանիշներով է դրանորվում աշխարհագրական բաղանքի ամբողջականությունը:**
5. **Ի՞նչ է աշխարհագրական բաղանքում ընթացող երևոյթների ցիկլայնությունը: Ո՞ր ոլորտներում և ինչպե՞ս է այն դրանորվում:**
6. **Ինչպե՞ս է հարելի է սիմեմայի ձևով պատրիերել աշխարհագրական գիտության կառուցվածքը:**
7. **Ի՞նչ է լրեղի ունենում գիտությունների դիֆերենցման և ինտեգրացման արդյունքում:**

1.4. ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ԿԱՂԸ ՌԱՄԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՏ

Պրկին դիմենք եզ 28-ի սխեմային: Աշխարհագրական գիտությունների համակարգի երկու բաղադրամասերը՝ քարտեզագրությունը և ընդհանուր (տեսական) աշխարհագրությունը, պարուրում են մյուս երկու բաղադրամասերը՝ հասարակական աշխարհագրությունը և բնական աշխարհագրությունը հավասարապես: Դրանով ընդգծվում է վերջին երկուսի համար ընդհանուր հարցերի առկայությունը, միաժամանակ կանխորոշվում են մի կողմից՝ քարտեզագրության ու տեսական աշխարհագրության և մյուս կողմից՝ դրանց բնական աշխարհագրության ու հասարակական աշխարհագրության հարաբերությունները: Այդ հարաբերությունները ինչ-որ չափով ենթակարգային (սուբօրդինացիոն) բնույթի են:

Այլ բնույթի են աշխարհագրության կոմպոնենտային բաղադրամասերի՝ բնական աշխարհագրության և հասարակական աշխարհագրության հարաբերությունները: Դրանք միանշանակ չեն և հատուկ բացատրության կարիք ունեն: Այդ հարաբերությունները ճիշտ ըմբռնելու համար պետք է դիմենք նրանց հետազոտության օբյեկտների, այն է՝ աշխարհագրական թաղանթի բնական ոլորտների (բնական միջավայրի) և մարդուրոտի, ավելի ճիշտ՝ մարդկային հասարակության միջև եղած հարաբերություններին: Դրանք չափավանց բարդ ու բազմազան հարաբերություններ են, որոնց հետազոտությամբ կրազում են և՝ փիլիսոփայությունը, և՝ բազմաթիվ կոնկրետ գիտություններ:

Զննարկվող հարցի տեսանկյունից հատուկ կարևորություն է ստանում այն փաստը, որ գնալով ավելի ու ավելի խորանում ու բազմաթիվ է դառնում բնության ու հասարակության փոխազդեցությունը: Ներկայում ինչպես հասարակական աշխարհագրական երևույթները չեն կարող դիտարկվել բնական պայմաններից անկախ, այնպես էլ բնաաշխարհագրական երևույթները անհնար է լիարժեք ուսումնասիրել առանց հաշվի առնելու մարդկանց արտադրական գործունեության ազդեցությունը:

Դեռևս տասնամյակներ առաջ համաշխարհային գիտության խոշորագույն ներկայացուցիչները եկել են այն եվրակացության, որ մարդկային հասարակությունը դարձել է «հպոր երկրաբանական ուժ» և եական

ազդեցություն է ունենում աշխարհագրական թաղանթի վրա: Առավել ևս դա ճիշտ է մեր օրերում, երբ գիտատեխնիկական առաջադիմության վիթխարի նվաճումների շնորհիվ այդ ուժը բազմապատկել է: Այսօր բազմաթիվ են աշխարհագրական թաղանթում ընթացող այն երևույթները, որոնք չեն կարող վերաբերել միայն ընությանը կամ միայն հասարակությանը: Դրանք այն միջանկյալ երևույթներն են, որոնք ծնվում են ընություն-հասարակություն փոխներգործության արդյունքում, ունեն համալիր բնույթ: **Այդ երևույթները կարող են ուսումնասիրվել և կառավարվել աշխարհագրական գիտությունների համակարգի ռոլոր բազայի բարրերի համարեղ ջանքերով:**

Այդ որույթը իմ մասնավորվում է նաև այն փաստով, որ վերջին ժամանակներս ավելի ու ավելի ակնհայտ է դառնում անհրաժեշտությունը այն բանի, որ բնաշխարհագետներն ավելի խորանան հասարակական աշխարհագրության օրինաչափությունների մեջ, իսկ հասարակական աշխարհագրության ներկայացուցիչները փորձեն ավելի լավ հասկանալ բնաշխարհագրական երևույթները և ճիշտ կողմնորոշվեն դրանցում, առավել ևս՝ դրանցից բխող տնտեսական-արտադրական հետևանքներում:

Անական աշխարհագրության ներջին կառուցվածքը համապատասխանում է իր հետազոտության օբյեկտի՝ աշխարհագրական թաղանթի և նրա բնական բաղադրիչների կառուցվածքին: Ըստ այսմ էլ առանց-նայվում են բնական (ֆիզիկական) աշխարհագրության մեջ մտնող մասնավոր գիտությունները, գիտության նյուիերը և ուղղությունները, որոնք ուսումնասիրվում են բնաշխարհագրական հատուկ դասընթացների միջոցով:

«Географический энциклопедический словарь»-ի վերջին՝ 1988թ. հրատարակությունը, որը խույնում է աշխարհագրության մասին առավել արդիական տեսակետները, բնական (ֆիզիկական) աշխարհագրությունը սահմանում է որպես «**բնական աշխարհագրական գիտություն, որը համալիր չեն ուսումնասիրում և երկրի աշխարհագրական բաղանքի բնական բաղադրիչը և դրա առանձին մասերը»:**

Անական աշխարհագրության առաջին կարգի բաղադրիչներն են՝ **բնդիանուր ֆիզիկական աշխարհագրություններ** (երբեմն օգտագործվում է նաև ընդհանուր երկրագիտություն անվանումը), **լանդշաֆտագիտություններ** և **հնեաշխարհագրություններ** (տե՛ս նկ. 3, էջ 32), որոնք իրենց հերթին տրոհվում են ավելի մանր մասերի:



Նկ. 3. Բնական (Ֆիզիկական) աշխարհագորյան կատացվածքը (առաջին կարգի բաղադրիչները)

Բաղանթի բաղադրիչները: Նրա գլխավոր խնդիրը համարվում է լանդշաֆտները՝ բնական և բնամարդածին բարդ գեոհամակարգերը որպես աշխարհագրական ծրագրավորման օբյեկտների ծրագրավորման մասմասական մասնակիցների մշակումը:

Հնեաշխարհագորյունը բնութագրվում է որպես գիտություն աշխարհագրական թաղանթի վարգային և բնության ու մարդու փոխազդական պատմության մասին: Գլխավոր խնդիրներն են՝ Երկրաբա-

1 Երկրագիտություն գերմինն օգտագործվում է նաև որպես «Երկրի մասին գիտությունների» (Հայու օ Յուլ, Geosciences) հոմանիշ:

Դոյլորյուն ունի նաև տիեզերական երկրագիտություն, որի դակ հասկացվում են Երկրի՝ աերոդինամիկական մերողներով և վիզուալ դիրարկումներով տիեզերից կատարվող հետազոտությունները: Տիեզերագիտացության և տիեզերական գերմինիկայի բուռն զարգացումը խթանում է տիեզերական երկրագիտության դրույթը ինքնուրույն ճյուղերի, օրինակ՝ տիեզերական երկրաբանության, օդերկրաբանության և այլն: Տիեզերական երկրագիտությունը, աշխարհագրական բաղանթի բնական բաղադրիչներից բացի, մեծ ուշադրություն է դարձնում սոցիալ-տնտեսական համակարգերի (բաղադրիչ գրանցության ցանցի, կողմուրական լանդշաֆտների), ինչպես նաև բնության վրա մարդու արդարական ազդեցության բացասական հետքանընթացի հետազոտություններին:

Ընդհանուր ֆիզիկական աշխարհագորյունը (Ընդհանուր երկրագիտությունը) ուսումնասիրում է աշխարհագրական թաղանթի ընդհանուր օրինաչափությունները, նրա տարածամանակային կազմակերպումը, տարածական դիմերենացումը, նյութի, եներգիայի ու ինֆորմացիայի շրջապատճեցությունը:

Լանդշաֆտագիտությունն ուսումնասիրում է լանդշաֆտները՝ բնական և բնամարդածին բարդ գեոհամակարգերը որպես աշխարհագրական

Նական դարաշրջանների ընթացքում տարբեր ոեգիոնների բնական պայմանների դինամիկայի հետազոտությունը բնական միջավայրի արդի վիճակը ճիշտ գնահատելու նպատակով նախկին վիճակների վերականգնումը հնեաշխարհագրական (լիտոլոգա-ֆայուլ, լանդշաֆտային, կիմայական և այլն) քարտեզների տեսքով, բնական պայմանների փոփոխությունների պատճառների բացահայտումը:

Անական աշխարհագրական գիտությունների բլոկի մեջ են մըտնում նաև, այսպես կոչված, ճյուղային (կոմպոնենտային) գիտությունները, որոնք ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի առանձին ոլորտները և դրանց բաղադրիչները (գեոմորֆոլոգիա, կիմայագիտություն, ջրաբանություն, հողերի աշխարհագրություն, կենսաաշխարհագրություն):

Դրանցից յուրաքանչյուրը տրոհվում է ավելի փոքր միավորների, որով և աշխարհագրական գիտությունների համակարգում ամբողջանում է բնական (ֆիզիկական) աշխարհագրական գիտությունների ենթահամակարգը: Այդ ամենին դուք ավելի հանգամանորեն կծանոթանաք բարյար կուրսերում:

Հասարակական աշխարհագրական գիտությունների ենթահամակարգը նույնպես ունի իր ուրույն կառուցվածքը, որի վերլուծությանը նվիրված է դասագրքի հաջորդ քաժինը:

Վերևում նշվեց, որ գիտության կարգացումը ուղեկցվում է ոչ միայն նրա տարաբաժանման՝ դիֆերենցման, այլև նրա արդեն առկա ճյուղերի ու ենթաճյուղերի միասնացման՝ ինտեգրացման երևությով: **Գիտությունների ինտեգրացումը աշխարհագրության ներսում առաջին հերթին դրանորվում է բնական և հասարակական բլոկների գիտությունների սերպ համագործակցության ու փոխափանցման չեզով:** Իսկ դրա օբյեկտիվ հիմքն այն է, որ գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ ավելի խորանում ու բազմաթիվ են դառնում բնություն-հասարակություն փոխազդեցությունները, ավելի է ուժեղանում մարդու ներգործությունը շրջակա բնական միջավայրի վրա:

Դա է պատճառը, որ 20-րդ դարի կեսերից սկսած աշխարհագրության մեջ ակտիվացան ինտեգրացման երևությները, և յանաբերվեց միջնուղային կոմպլեքսային գիտությունների մի ամբողջ դաս:

Միջնորդային կոմպլեքսային գիտություններ են՝ գեոէկոլոգիան (աշխարհագրական էկոլոգիան), բժշկական աշխարհագրությունը, ռազ-

մական աշխարհագրությունը, ոեկրեացիոն աշխարհագրությունը, ինչպես նաև աշխարհագրական ուսումսագիտություն՝ բնօգտագործման աշխարհագրության հետ միասին:

Միջնյուղային գիտություններ չեն նաև գիտությունների դասակարգման ավելի յածր մակարդակներում՝ հյուղերի ու ենթաճյուղերի միջև։ Այդպիսիք են, օրինակ, կլիմայական գեոմորֆոլոգիան (գեոմորֆոլոգիայի կազմում), ինժեներական կլիմայագիտությունը (կլիմայագիտության կազմում), լանդշաֆտների գեորգիան, լանդշաֆտների գեոֆիզիկան (լանդշաֆտագիտության կազմում):

Ծյուղային գիտությունների ինտեգրացման յուրահատուկ դրսնորում է համալիր **երկրագրությունը**, որը շատոք է շփոթել երկրագիտության հետ։ Երկրագրությունը քրաղվում է տարբեր մեծության տարածքների, առանձին երկրների (պետությունների, դրանց տարածամասերի կամ խմբերի) համալիր ուսումնասիրությամբ, որի ընթացքում **աշխարհագրական սինթեզի հիման վրա ընդհանրացվում են բնության, բնակչության, գնապեսության, մշակույթի, քաղաքական կառուցվածքի մասին դրվագները**։ Արդյունքում ստացվում է երկրի **աշխարհագրական հավաքական պատկերը**, որտեղ պարզ կերպով երևում են նրա առավել ենական առանձնահատկությունները և սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր հիմնախնդիրները¹:

Աշխարհագրական կրթության մի շարք արտասահմանյան կենտրոններում երկրագրությունը կարևոր տեղ է գրավում աշխարհագրական ավանդական մասնագիտությունների կողմին։ Պատրաստվում են կոնկրետ պետությունների, օրինակ՝ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Շինաստանի, ճա-

1 «Երկրագրության» հոմանիշներն են՝ ռուսերենում «Страноведение», իսկ գերմաներենում «Landeskunde» գերմաներեղը։ Անգլերենում և եվրոպական այլ լեզուներում դրա ճիշդը հումանիչը բացակայում է, սովորաբար օգտագործվում է «հետինալ աշխարհագրություն»։

«Երկրագրություն» անվանումը, եթե դա հասկանաճ բառացի այսինքն «երկրի նկարագրություն», ճիշդը չի արդահայլում այդ գիտության արդի ռովանդակությունը (ճիշդը այնպես ինչպես «աշխարհագրություն» անվանումը չի համապատասխանում գիտության այդ ճյուղի արդի ռովանդակությանը։ Իրավանում այն, ինչպես արդեն ասվել է, ոչ «նկարագրություն» է, այլ աշխարհագրության տարրեր ճյուղերի իմպենդացման հետևանքով գոյացած շատ բարդ համալիր գիտություն, որը մասնագետներից պահանջում է լայն միահերթղոն, բազմակողմանի գիտելիքների հարուստ պաշար և աշխարհագրական սինթեզի մեջ կարողություն (մանրամասն

պոնիայի, Ռուսաստանի, Թուրքիայի, կամ ամբողջ տարածաշրջանների, օրինակ՝ Եվրոպայի, Աֆրիկայի, և աշխարհական Ամերիկայի, Հարավարևելյան Ասիայի, Արաբական երկրների և այլնի աշխարհագետ մասնագետներ: Հասկանալի է, որ երկրագիր մասնագետից պահանջվում է, համար աշխարհագրությունից բացի, քաջատեղյակ լինել նաև երկրի պատմությանը, լեզվին, մշակույթին, բնակչության ավանդույթներին, քաղաքական ուժերի դասավորությանը, զինված ուժերին:

ԴԱՄՅԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ փոխարարելության մեջ են աշխարհագրական գիտությունների համակարգի երկու գլխավոր (առաջին կարգի) բաղադրագործները:
2. Ի՞նչ կապ գոյություն ունի բնական աշխարհագրության ներքին կառուցվածքի և նրա հետազոտության օրյեկտի կառուցվածքի միջև:
3. Ո՞րն է բնական (ֆիզիկական) աշխարհագրության արդիական սահմանումը: Ի՞նչ մասնիկ է այն բաղկացած:
4. Գիտությունների իմպեքտացումն ինչպես և որունդում աշխարհագրության ներսում:
5. Ինչպիսի՞ գիտություն է երկրագրությունը: Ինչո՞ւ գիտության անվանումը ճշշդվ չի արդահայտում նրա բովանդակությունը: Ինչո՞ւ է գործերի վեհագիրությունը:

գրեն հաջորդ բաժիններում:

«Երկրագրության» բովանդակության և անվան անհամապատասխանությունը բխում է հայերներ գիտական գերմինարանության անկարությունից, որը հնարավորություն չի փախս խուասիկ գիտության անվան և բովանդակության անհամապատասխանությունից: Աշխարհի շատ լնգուններում «Երկիր» և «աշխարհ» սեփական դերմինների կողքին լայնորեն օգտագործում են հունական «զե»-երկիր արմագույն կազմված բառերը, չի բարգմանվում մասնավորապես «զեոգրաֆիան» և «զե» արմագույն կազմված շատ բառեր: Այդպես է բոլոր եվրոպական լնգուններում, ուսերնում, արարեթնում, բուրժական լնգուններում, վրացեթնում: Հայերնում «զե» արմագույն կազմված բառերը բարգմանվում են: Օգրագործվում է, օրինակ, ոչ քեզ գեոգրաֆիա, այլ աշխարհագրություն, ոչ քեզ գեոլոգիա, այլ երկրարանություն և այլն:

«Երկրագիտություն», որը կարող էր արդահայտել «Страноведение» իմաստը, ուստեղն «Землеведение» և անգլերն «Geoscience»-ն է:

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱՎՆԵՐԸ: **ՄԱՐԴՈՒԵՎ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՆԴՐԱԴՐՁԼ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ**

2.1.1. ՄԱՏԻԿ ԺԱՄԱՊԱԿԱՇՐՋԱՆ

Լնդունված է այն տեսակետը, որ աշխարհագրական գիտությունների համակարգի հասարակական բաղադրիչը որպես ինքնուրույն ուղղություն՝ ենթահամակարգ, չնավորվել է 19-րդ դարում, երբ գիտությունների տարանցատումը՝ դիֆերենցումը, հասել էր զարգացման որոշակի մակարդակի: Բայց դրա՝ որպես ինքնուրույն ուղղության չնավորումն անցել է երկարատև ուղի, տևել է հազարամյակներ: Դա սկսվել է այն ժամանակներում, երբ նոր միամ գիտությունը ուրվագծվում էր որպես մարդկային գործունեության առանձին ոլորտ: Հետագայում այդ պրոցեսը շարունակվել ու խորացել է այն ժամանակ, երբ այդ ոլորտը տրոհվել է առաջին անգամ, երբ առանձնացվել է նաև աշխարհագրությունը: Այնուհետև մի կողմից հասարակական զարգացման և նրա կողմից ներկայացվող նոր պահանջների, մյուս կողմից աշխարհի գիտական ճանաչողության առաջընթացի շնորհիվ հանդես են եկել բոլն հասարակական աշխարհագրության չնավորման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմանները:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները խիստ ընդլայնեցին հայտնի աշխարհի սահմանները, միջազգային ոլորտի մեջ ներգրավվեցին նոր երկրներ ու ժողովուրդներ, միաժամանակ ծագեցին հասարակական կյանքի կազմակերպման նոր հիմնախնդիրներ, որոնք աշխարհագրությունը իր նախկին վիճակում լուծել չեր կարող: Աշխարհագրության ընդերքում պետք է չնավորվեին մասնագիտացված ուղղություններ, որոնք անխուսափելի են դարձնում աշխարհագրության տրոհումը մի շարք ճյուղերի: Դրանց միավորումից ել ավելի ուշ չնավորվեց

աշխարհագրական գիտությունների ներկա համակարգը՝ իր ենթահամակարգերով ու ավելի փոքր բաղադրիչներով:

Այդ երկարատև զարգացման արդյունքում, ի վերջո, ձևավորվեց և հարաբերական ինքնուրույնություն ձեռք բերեց նաև հասարակական աշխարհագրական գիտությունների ենթահամակարգը, որը մանրամասն կրննարկվի դասագրքի հաջորդ բաժնում:

Հայտնի է այն հնագույն ճշմարտությունը, որ **ամեն ինչ սկսվում է հետաքրքրասիրուրյունից**: Այդ ընական հատկությունից էլ դրդված՝ առաջին մարդը փորչել է ճանաչել իր շրջապատը, նրանում տեղի ունեցող ընական երևույթները: Բայց սկզբնական աշխարհաճանաշողության այդ ներքին մղումը ճշգրտվում և ուղղորդվում էր ապրելու, շրջապատին հարմարվելու և իր կյանքը կազմակերպելու բնական մղումով: Այդ պատճառով էլ շրջապատի մասին տվյալների կուտակումը և ընդհանրապես աշխարհաճանաշողությունը, իսկ դրանք արդեն ոչ այլ ինչ էին, քան աշխարհագրական գիտելիքների ու պատկերացումների սահմեր, եղել են ոչ թե ինքնանպատակ, այլ ունեցել են որոշակի ուղղվածություն՝ **մարդակենարուն դրանորուն, այսինքն՝ նպագրակամղված ևն եղել մարդու պահանջունաբների բավարարմանը**:

Ըստն այն է, որ նախնադարյան մարդը, կյանքի պահանջներից դրդված, պետք է առաջին հերթին հետաքրքրվեր և ճանաչեր այն վայրերը, որտեղ նա կրաղվում էր հավաքչությամբ ու որսորդությամբ, այն հարևան ցեղերին, որոնց հետ նա շփվում էր, իսկ ավելի ուշ նաև առևտուր էր անում:

Ընակավայրի, շրջապատի և հարևան տարածքների բնական պայմանների ու հարստությունների, հարևան երկրների ու ժողովուրդների մասին շատ թե քիչ համակարգված գիտելիքներ առաջին անգամ ձևավորվել են Արևելքի հնագույն քաղաքակրթության օջախներում՝ Զաքելոնում, Ասորեստանում, Եգիպտոսում, Փյունիկիայում, Ծինաստանում:

Հայտնի է, որ այստեղ է կատարվել գրեթի գյուտը, սկզբում սեպագիր ու հիերոգլիֆային, ապա և՝ այրութենի ձևով:

Բայց ուսպանական արշավանքների և ճանապարհորդությունների մասին գրավոր տեղեկություններից, մեզ հասել են նաև քարտեզներ ու հատակագծեր, օրինակ, Զաքելոնի՝ Միջագետքի այդ հոչակավոր քաղաք-պետության, որը գոյություն է ունեցել Ք.ա. 19-6-րդ դդ., Նեղոսի և Կարմիր ծովի միջև ընկած Ռևերեր շրջանի, այն ժամանակվա հայտնի աշխարհի և այլ քարտեզներ:

Մեզ են հասել Օհնաստանի և հարևան երկրների աշխարհագրական նկարագրությունները, քարտեզներն ու սխեմաները՝ ստեղծված մեր թվարկությունից 1000 տարի առաջ:

Երկրի բնության, ժողովուրդների, նրանց պրաղմոնքի ու սովորությների մասին տեղեկությունները խորացվեցին, համակարգվեցին և գիտական իմացության մակարդակի հասան Հին Հռոմաստանում և նրան հաջորդած Հին Հռոմում:

Հին Հռոմաստանի և Հին Հռոմի գոյության շուրջ մեկ հապարամյակը, որը տևեց Ք.ա. 6-րդ դարից մինչև Ք.հ. 5-րդ դարը և որը հայտնի է **անդիկ ժամանակաշրջան** անոնով, մարդկության պատմության համար բացառիկ ժամանակաշրջան է եղել: Վիթխարի առաջնթաց են ապրել հասարակական կյանքի, առանց բացառության, բոլոր ոլորտները: Մեծագույն նվաճումներ են արշանագրվել արվեստի, գրականության, գիտության բնագավառներում: Բացառություն չի կազմել նաև աշխարհագրությունը, որը, ինչպես արդեն գիտեք, առաջացել ու ձևավորվել է որպես գիտության ինքնուրույն ճյուղ հենց այդ ժամանակաշրջանում¹:

Մինչ այդ աշխարհագրական պատկերացումները դեռևս միասնական գիտության մեջ մեկ ամբողջություն էին կազմում: Ավելի ուշ աշխարհագրական տեղեկությունները և պատկերացումները, անտիկ աշխարհի խոչորագույն մտածողների կողմից համակարգվելով ու ընդհանրացվելով, դրեցին աշխարհագրության՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղի հիմքերը:

Հատկանշական է, որ աշխարհագրական փաստերն ու պատկերացումները, լայնորեն օգտագործվելով գիտական իմացության այլ բնագավառներում, նպաստել են նաև բնափիլիսոփայության, պատմության ու թժկության ձևավորմանը: Այդ ժամանակներում այլ կերպ լինել չեր կարող: Ամեն մի ականավոր մտածող ի կորու էր հավասար չափով զբաղվել գիտական իմացության տարբեր բնագավառներով և լուրջ ներդրում կատարել դրանց զարգացման գործում:

Ընափիլիսոփայության զարգացումը սովորաբար կապում են փիլիսոփայության միլեթյան (հոնական) դպրոցի ներկայացուցիչների հետ (Թալես Սիլեթացի, Անաքսիմանդրոս, Հեկատեոս Սիլեթացի և այլն, Ք.ա. 6-5-րդ դդ.):

¹ **Անդիկ աշխարհագրությանը նվիրված աշխագությունների շարքում առանձնանում է Լետտար Ա. Ե., Գеография в античное время. М., 1980, ինչպէս օգտակար գիրը:**

Միլերը, լինելով խոշոր նավահանգիստ, սերտ առևտրական կապեր ուներ Միջերկրական և սեծովյան Երկրների հետ: Վաճառականներն ու ծովագնացները այդ Երկրների մասին քազմապիսի տվյալներ էին բերում Միլեր, որոնք քննության էին Ենթարկվում և ընդհանրացվում տեղայի գիտնականների կողմից: Զայդի այդ, վերջիններս իրենք էին հաճախ ճանապարհորդում, հավաքում տվյալներ և կատարում սեփական դիտարկումներ: Նրանցից յուրաքանչյուրը, փիլիսոփայությունից քայի, իր սեփական ներդրումն է արել գիտական իմացության այս կամ այն կոնկրետ բնագավառում ևս: Օրինակ, Երկրաշափության բնագավառում անգնահատելի է համարվում Թալեսի ծառայությունը (Նրան են վերագրվում Երկրաշափական 6 արքիումները, տարվա օրերի թվի՝ 365 հաշվարկը, Արևի խավարման առաջին կանխատեսումը):

Անարսիմանդրոս եղել է մասշտարի օգտագործմամբ առաջին քարտեզի հեղինակը, Հունաստանին ծանոթացրել է Թարելոնում հայտնագործված արևի ժամացույցին (գնումոն) և դրա օգնությամբ կատարվող աստղաբաշխական ու գեղեցիկական դիտարկումներին: **Հեկադեռան** առաջինն է ի մի բերել հույներին հայտնի և դեռևս անհայտ Երկրների մասին տարաբնույթ տվյալներն ու տվել դրանց նկարագիրը: **Հեկատեռսի** աշխատության առաջին մասը նկիրված է Եվրոպային, Երկրորդը՝ Ասիային ու Լիբրիային (Աֆրիկային): Դրանց սահմանը նա անցկացրել է Դարդանելի Նեղուցով, Սև ծովով, Կովկասյան լեռներով և Կասպից ծովով, համարելով, որ վերջինս կազմում է իր նկարագրած Երկիրը բոլոր կողմերից ողողող միասնական օվկիանոսի մի հատվածը:

Հոնական (միլերյան) բնափիլիսոփայական դպրոցի համար բնորոշ էր այն, որ բնության առանձին փաստերի և այս կամ այն Երևույթի հիման վրա կատարվող տրամաբանական դատողությունների ու ընդհանրացումների միջոցով չնակերպավում էին իրական աշխարհի մասին վերացական փիլիսոփայական պատկերացումներ, որոնք հաճախ չեին համապատասխանում իրականությանը:

Ամերիկացի հայտնի աշխարհագետներ, «All possible words. A history geographical ideas»¹ գրքի հեղինակներ Պրեստոն Ջեյմսի և Ջեֆրի Մարտինի գնահատմամբ «Թալեսին և Անարսիմանդրոսին կարելի է համարել աշխարհագրության հետազոտության մեջ մաթեմատիկա-

1 Գրքի ոռութեանն թարգմանությունը լույս է բեսել 1988թ. (տե՛ս Ռ. Ջեյմս, Ջ. Մարտին, *Все возможные миры. История географических идей.* М., 1988).

կան մոտեցման հիմնադիրներ: Ինչ վերաբերվում է Հեկատեսին, ապա նրա մասին խոսում են որպես նկարագրական մեթոդի հիմնադրի» (ռուս. հրատարակություն, էջ 41):

Հին հուների աշխարհագրական պատկերացումների և պատմության միասնականությունը առավել ակնհայտ է դառնում պատմահայր Հերոդոտոսի (Զ.ա. 486-425 թթ.) աշխատությունում, որը համարվում է հին հունական գրականության գլուխգործոց: Հերոդոտոսին է վերագրվում այն միտքը, որ պատմությունը պետք է քննարկվի աշխարհագրականորեն, իսկ աշխարհագրությունը՝ պատմականորեն: Նա համարում էր, որ աշխարհագրությունը «Ճեղակերպ պատմություն է»:

Հերոդոտոսը բնության հատուկ հետազոտությամբ չի գրավվել, բայց շատ է նանապարհորդել, եղել է բազմաթիվ երկրներում և նկարագրել տեսածը, հավաքել հարուստ փաստական նյութ, օգտագործել իր նախորդների նկարագրությունները և կատարել տրամարանական եկրահանգումներ, որոնք մեծապես հարստացրել են իր ժամանակի աշխարհագրական պատկերացումները:

Հերոդոտոսի աշխատությունը, որը պայմանականորեն անվանվում է «Պատմություն» և բաղկացած է 9 հատորից, տալիս է իր ժամանակի հայտնի երկրների մեծ մասի բնության, բնակչության, սովորությունների, կրոնական հավատալիքների, կառավարման համակարգի, առևտորի մանրամասն նկարագրությունը: Պատահական չե, որ նրան համարում են առաջին երկրագիրներից և աշխարհագրական գիտության հիմնադիրներից մեկը:

Անտիկ աշխարհում աշխարհագրության և բժշկության միասնականության ցայտուն օրինակ է «բժշկության հոր»՝ Հիպոկրատի (Զ.ա. 460-377թթ.) «Օդի, ջրերի և տեղանքների մասին» աշխատությունը: Նրա արտահայտած գաղափարները, ըստ Յու. Գ. Սապոչկինի, դրեւ են բժշկական աշխարհագրության հիմքը¹: Աշխարհության մեջ առաջին անգամ բացահայտված է ժողովուրդների կենցաղի, առողջության և հոգեբանության կախածությունը շրջակա բնական միջավայրից:

Միասնական, չտրոհված գիտության կազմում աշխարհագրական պատկերացումներն իրենց բարյարակենտին են հասնում Հին Հունաստանի ականավոր մտածող Արիստոտելի (Զ.ա. 384-322թթ.) աշխատություններում: Լինելով անտիկ ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսո-

1 Ю. Г. Саушкин. История и методология географической науки. М., 1976, էջ 37:

փաներից, որն իր մատերիալիստական աշխարհայացքով հակադրվեց իր ուսուցչին՝ Պլատոնին, նա միաժամանակ, մեծապես նպաստել է ին հույսերի աշխարհագրական մտքի խորացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը: Նրա առանձնահատուկ հետաքրքրությունը դեպի աշխարհագրությունը իր արտահայտությունն է գտել «Մետեռողոգիա» աշխատության մեջ: Դա Օյկումենայի ինքնատիպ երկրագիտություն է, որտեղ ի մի են բերված այն ժամանակվա հայտնի տվյալները Երկրի բնակեցված տարածքի բնության ու բնակչության մասին: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում գետերի, ծովերի, օվկիանոսի, ջերմության քաշխման վրա աշխարհագրական լայնության ազդեցության առանձնահատկություններին: Ծատերի գնահատմամբ Արիստոտելը «ջրաբանության, օվկիանոսագիտության և օդերևութաբանության նախահայրն է»¹:

Գիտական իմացության, իհարկե նաև աշխարհագրական մտքի զարգացման գործում Արիստոտելի դերի գնահատականը շատ թերի կիենի, եթե չընդգծենք գիտական ճանաչողության մեթոդիկայի մեջ նրա ունեցած ավանդի մասին: **Նա առաջինն էր, որ սկսեց փնտրել այս կամ այն դեսուրյունը համարող փասդեր:**

Ըստ Զեյմսի ու Սարտինի, Արիստոտելը զարգացրեց այն միտքը, որ «տեսության կառուցման լավագույն ուղին փաստերի դիտարկումն է, իսկ տեսությունը ստուգելու լավագույն միջոցը՝ դրա համադրումն է դիտարկումների արդյունքների հետ: Եթե Պլատոնը կրահումով՝ ինտուիցիայով, հորինում էր տեսական մտակառուցվածքը և դատողություններ էր անում՝ գնալով ընդհանուրից դեպի մասնավորը, Արիստոտելն իր տեսաբանումների ընթացքում գնում էր մասնավորից դեպի ընդհանուրը: Այդ երկու մոդելումները կոչվում են համապատասխանաբար դեռուկցիա և ինդուկցիա»²:

Հենվելով ոչ թե վերացական դատողությունների, չեական տրամաբանության, այլ փաստերի վերլուծության, «փաստերի տրամաբանության» վրա, Արիստոտելը կարողացավ փաստերով հիմնավորել ու ապացույնել տարածում գտած մի շարք տեսակետներ ու վարկածներ: Դրանց թվում էր նաև Երկրի գնդաշենության մասին տեսակետը, որը մինչ այդ չէր հաստատվել գիտական փաստերով: Արիստոտելը այդ տեսակետը հաստատեց այնպիսի փաստերով, ինչպիսիք են, օրինակ, Լուսնի խա-

1 Ю. Г. Саундх. Իիշարակված աշխարհությունը, էջ 30:

2 П. Джеймс, Дж. Мартин,..., էջ 50:

Վարման ժամանակ նրա վրա ընկնող Երկրի կլոր ստվերը, երկնակամարում աստղերի՝ հորիզոնի նկատմամբ քարցրության մեծացումը դեպի հյուսիս:

Արիստոտելի ուշադրության կենտրոնում են եղել նաև **մարդկանց, իշխանության ու ժողովրդի փոխարարերությունները, որոնց բնարկմանը նա նվիրել է իր «Քաղաքականություն» աշխագությունը:**

Արիստոտելը մեծ նշանակություն էր տալիս իրական երևույթների, դրանց պատճառական կապերի ու զարգացման ընթացքի արտահայտման ու վերլուծման մաթեմատիկական մեթոդներին, բայց միաժամանակ դժգոհում էր, որ «քողորդ մտածում են, թե գիտությունը դա մաթեմատիկան է, թե որպեսզի բացարձակապես ամնե ինչ ըմբռնես, անհրաժեշտ է միայն, որ ուսումնասիրես մաթեմատիկան»¹:

Եպրափակելով շարադրանքը Արիստոտելի և նրա գիտական ավանդի մասին, ավելացնենք, որ նրանով աշարտվում է **հունական կաստիցիզմը, որից հետո սկսվում է միասնական գիտության գարաքաժանումը աստիճանաբար ուրվագծվում են գիտության ապագա մասնագիտացված ճյուղերն ու ուղղությունները:**

Արիստոտելի մեծաթիվ աշակերտների շարքում է եղել նաև **Ալեքսանդր Մակեդոնացին**, որն իր կորավարական գործունեության և մեծաթիվ արշավանքների ընթացքում լավագույն է կիրառել իր հանճարեղ ուսուցիչ հորդորները՝ կատարել դիտարկումներ, հավաքել փաստեր, իմաստավորել դրանք և կատարել եպրահանգումներ: Ալեքսանդր Մակեդոնացին իր հետ արշավանքների էր տանում հատուկ մասնագետների, որոնք նկարագրում էին նվաճված երկրները, շափում էին անսած ճանապարհ և որոշում նոր վայրերի աշխարհագրական լայնությունը: Նրանց շնորհիվ էր, որ, Ալեքսանդր Մակեդոնացոյն մահից և նրա վիթխարի կայսրության քայլայումից հետո, կայսրության տարբեր մասերի ու քավմալեկու ժողովուրդների մասին մեծ քանակությամբ նոր տվյալներ էին կուտակվել: Դրանք մեծապես հարստացնում էին հույնների աշխարհագրական գիտելիքները և ընդլայնում նրանց աշխարհագրական մտահորիկունը:

Այդ ժամանակաշրջանը հաջորդեց հունական **կլասիցիզմին** և պատմության մեջ մտավ **հելլենիզմ** անունով: Նրա գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ **իր մեջ միավորեց և անդիկ Հունաստանի գա-**

1 Ո. Ջեյմս, Ճ. Մարտին..., էջ 52:

ղափարները, և Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նվաճված ժողովուրդների մշակութային ավանդույթները: Իսկ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները ընդգրկում էին ոչ միայն ամբողջ Միջերկրականի ավազանը, այլև արևելքում հասնում էին մինչև Միջին Ասիա ու Հնդկաստան (Ինդոս գետը):

Հասունանում էր մի այնպիսի վիճակ, երբ անխուսափելի էր դառնում միասնական գիտության տրոհումը և նրա մասնագիտացված ճյուղերի, դրանց թվում և աշխարհագրության ցևավորումը:

Այդ ժամանակ էր, որ գիտական ասպարեզ իջավ **Երապուրեներ** (Զ.ա. մոտավորապես 276-194թթ.), որն ավելի ուշ հորջորջվեց «աշխարհագրության հայր»:

Երատոսթենեսը ստացել էր բազմակողմանի կրթություն, ուսումնասիրել էր մաթեմատիկա, փիլիսոփայություն, բնափիլիսոփայություն, բանասիրություն, հուետորական արվեստ: Ծովով ևա հրավիրվում է ղեկավարելու Ալեքսանդրիայի թանգարանը, որը միավորում էր գիտական և ուսումնական մի շարք կազմակերպություններ, դրանց թվում նաև՝ Ալեքսանդրիայի հոչակավոր գրադարանը, համալսարանը, աստղադիտարանը, անտումիական թատրոնը: Դա հունական գիտական աշխարհի ամենահեղինակավոր պաշտոնն էր:

Երապուրեներ հայտնի դարձավ որպես «աշխարհագրության հայր»՝ ոչ միայն այն պատճառով, որ համակարգեց ու զարգացրեց իր ժամանակի աշխարհագրական գաղափարներն ու պատկերացումները, այլև այն պատճառով, որ առաջինը այդ գիտությունը կոչեց աշխարհագրություն: Նրա մեծագույն ծառայությունը մեր գիտությանը այն էր, որ առաջինը մաթեմատիկորեն հաշվարկեց Երկրի շրջագիծը, օգտագործելով արևադարձի ժամանակ Երկու տարրեր կետերում՝ Աթենայում (Ասուան) և Ալեքսանդրիայում, հորիզոնի նկատմամբ Արևի բարձրության՝ իրարից անկախ դիտարկումները: Նա ստացավ Երկրի շրջագծի մի տվյալ՝ 39690կմ, որը շնչին չափով է տարրերվում ներկայիս ճշգրիտ տվյալից (դա, ինչպես գիտեք, 40077կմ է):

Երատոսթենեսի հայտնի աշխատությունը՝ «Աշխարհագրական գրառումները», որ նվիրված էր Օյկումենային, բնակեցված տարածքը բաժանում էր Եվրոպայի, Ասիայի, Լիբիայի (Աֆրիկայի) և հինգ գոնաների՝ մեկ շոգ, երկու բարեխառն և երկու ցուրտ: Ըստ որում, դարձյալ առաջին անգամ, գոնաների սահմանները որոշեց մաթեմատիկորեն: Վերջա-

պես, նա առաջինն էր, որ կազմեց աշխարհի քարտեզը, որտեղ օգտագործեց աստիճանացանց (սկզբնական՝ զրոյական միջօրեական նա համարում էր Ալեքսանդրիայի միջօրեականը):

Այսպիսով, կարող ենք պնդել, որ Երատոսթենեսը իր «հայտնագործած» գիտության՝ **աշխարհագրության մեջ միավորեց մաքեմադիկան, պատմությունն ու բնագիտությունը** և ստեղծեց այն նախադրյալները, որոնք պետք է կանխորոշեին գիտությունների դասակարգման արդի համակարգում աշխարհագրության մերկա սահմանային դիրքը բնական, հասարակական (սոցիալական) և գեխնիկական գիտությունների միջև:

Երատոսթենեսից հետո, երբ Հունաստանը զրկվեց անկախությունից, Միջերկրականի ավազանում վճռական քաղաքական ուժ դարձավ Հռոմեական պետությունը, և գիտության ու մշակույթի կենտրոնը տեղափոխվեց նրա մայրաքաղաք Հռոմ:

Ստացվեց այնպես, որ առաջատար դիրք գրավեցին պատմական հետազոտությունները: Այդ հանգամանքն իր ազդեցությունն ունեցավ նաև աշխարհագրության վրա: **Աշխարհագրական բովանդակություն ու մեծող աշխարհություններում ակնհայտորեն դիրքապետող դարձավ պատմական (սոցիալական) ուղղվածությունը**, ի տարբերություն անտիկ Հունաստանի, երբ ավելի տարածված էր բնագիտական մոտեցումը:

Նոր չափորված աշխարհագրության թեմատիկայի և մեթոդաբանության մեջ շեշտադրումների այդպիսի փոփոխության օրինակ են Հին Հռոմի խոչըրագույն գիտնական, ազգությամբ հովանական Հռոմեական աշխարհագրությունները: Դրանցից գլխավորներն են՝ «**Պատմությունը**» քաղաքաց 43 գրքից, և «**Աշխարհագրությունը**»՝ 18 գրքից: «Պատմությունից» գրեթե ոչինչ չի հասել մեզ, մինչդեռ «Աշխարհագրություն» պահպանվել է համարյա ամբողջությամբ:

Փաստագրական առումով Ստրաբոնի «Աշխարհագրություն» որևէ եական նորույթ նախորդների համեմատությամբ չի պարունակում: Ըստ դա մի կոթողային աշխատություն է, որտեղ իր արտապոլումն էր գտել այն ամենը, ինչ մինչ այդ կոտակվել էր աշխարհագրության բնագավառում, հատկապես, եթե նկատի ունենանք, որ նրա աղբյուրների մեծ մասը, որոնք հիշատակում է Ստրաբոնը, անդառնալիորեն կորել են հետագա սերունդների համար:

Ստրաբոնն իր աշխատությունը գրել է որոշակի կատեգորիայի

մարդկանց, մասնավորապես՝ Հռոմեական կայսրության չինովնիկների և քարշաքատիճան զինվորականության համար: Նա պետական իշխանությանը անհրաժեշտ տվյալներ էր տալիս ընակելի աշխարհի, կայսրության հեռու ու մոտիկ հարևանների, նրանց ժողովուրդների մասին: Այդ առումով Ստրաբոնի «Աշխարհագրությունը», Պ. Ջեյմսի և Զ. Մարտինի խոսքերով ասած, «կարելի է կոչել կառավարական ապարատի համար ստեղծված աշխարհում առաջին տեղեկատու»¹:

Ստրաբոնն ընդունում էր, որ աշխարհագրությունը խորությամբ յուրացնելու համար անհրաժեշտ են մաթեմատիկական կայուն գիտելիքներ: Միաժամանակ, նա քիչ էր հետաքրքրվում ինչ-որ երևոյթ քայլող վերացական դատողություններով և մեծագույն նշանակություն էր տալիս կոնկրետ փաստերին ու ճշգրտված տվյալներին:

Անտիկ ժամանակաշրջանի աշխարհագրության վերջին կարկառուն ներկայացուցիչը եղել է Կյապողիոս Պիլոմենոս (2-րդ դար): Նրա գլխավոր ստեղծագործություններն են աստղաբաշխությանը նվիրված «Ալմագեստ» կամ աշխատությունը և «Աշխարհագրության ուղեցույց» քաղկացած 8 գրքից: Վերջինս տեղեկություններ է տալիս քարտեզագրական պրոյեկցիաների մասին, ոստ որում նշվում են մի շարք կետերի կոորդինատներ, որոնք հաշվարկել է ինքը սեփական աստղաբաշխական դիտարկումների միջոցով: Աշխատության մի քանի հատորը ամփոփում են աշխարհագրական երկայնությունների ու լայնությունների մանրամասն աղյուսակներ, որոնց օգնությամբ նա ստեղծել է Օյկումենայի քարտեզը:

Հարկ է քիչ ավելի մանրամասն խոսել իին հույների ու հոռմեացիների պատկերացրած Օյկումենայի սահմանների մասին, որոնք որոշ ճշգրտումներով Ձեռնախ հասել էին մինչև Պտղոմեոս:

Օյկումենայի սահմանները որոշվում ու քարտեզագրվում եին ոչ միայն ճանապարհորդների ու վաճառականների հավաքած կոնկրետ փաստերի հիման վրա, այլև տեսական դատողությունների ու մտավոր կառույցածքների միջոցով:

Ինչ վերաբերում է ճանապարհորդություններով հաստատված ու ճշգրտված սահմաններին, այստեղ, թվում է, ամեն ինչ պարզ է: Մարդկան սեփական աշքով տեսնում էին, որ հունա-հոռմեական աշխարհի արևմտյան սահմանները հասնում էին մինչև Արևմտյան (Ատլանտյան)

¹ «Հշաբակված աշխարհությունը. էջ 67:

օվկիանոս, հարավային սահմանները դեմ էին առնում Սահարայի՝ բնակության համար ոչ պիտանի անապատին, արևելյան սահմանն ավարտվում էր Հնդկական օվկիանոսով: Ամբողջ ցամաքը (Ծվրոպա, Ասիա, Լիբիա), որ բոլոր կողմերից շրջապատված էր օվկիանոսի ջրերով, իր մի մասով էր միայն պիտանի բնակության համար:

Ընակեցված տարածքի բոլոր սահմանները չեին, որ ճշտված էին ճանապարհորդություններով ու անմիջական դիտարկումներով: Ընթադրյալ սահմաններն անցկացվում էին տեսական դատողությունների հիման վրա:

Այն ժամանակ էլ հայտնի էր, որ Երկիրը գնդազն է և դրա պատճառով մակերեսը աշխարհագրական տարբեր լայնություններում տարբեր քանակի ջերմություն է ստանում: Հետազոտողները այդ փաստի վրա հիմնված տեսական դատողություններով ու հաշվարկներով այն եղակացության էին հանգում, որ աշխարհագրական քարյու և ցածր լայնություններում համապատասխանաբար անտանելի ყուրտ և անտանելի շոգ է, ուստի բնակության համար պայմաններ չկան: Տիրապետում էր այն տեսակետը, որ մերձհասարակածային գոտում արեգակնային ճառագայթների տակ ամեն ինչ այրվում, սևանում է (որպես օրինակ բերվում էր նեգրերի մաշկի սև գույնը), իսկ քարյու լայնություններում, օրինակ՝ Ալպերից և մերչակներով լայն տափաստաններից հյուսիս, հավերժական ყուրտ է, և կարելի է գոյատևել մշտապես գտնվելով թեժ պահվող խարույկի շուրջը:

Ծիծու է, հոումեացիների ժամանակ Օյկումենայի սահմանները հասան մինչև Թրիտանական կղզիների հյուսիսային հատվածը, բայց ամբողջ Հյուսիսային, Կենտրոնական ու Արևելյան Ծվրասիան բնակելի ցամաքի սահմաններից դուրս էր մնում:

Ամփոփելով անտիկ ժամանակաշրջանում աշխարհագրական պատկերացումների և արդեն ձևավորված աշխարհագրական գիտության վիճակի վերլուծությունը, առանցնացնենք երկու գիրտական նկանում, որոնք կարևորագույն մերողարանական արժեք են ներկայացնում և ժառայում են որպես ելակեղային դրույթ աշխարհագրական գիրտության ամրող համակարգի, ուստի և հասարակական աշխարհագրության համար:

Դա աշխարհագրական բաղանքի երկու կարևոր հարկանիշներ՝ կոնտինուալության և դիսկրետության բացահայտումն էր:

Թուղթ աշքի ընկնող աշխատություններում կարմիր թելի նման անսնում էր այն գաղափարի կարևորությունը, որ անհրաժեշտ է բայց հայտել և նկարագրել ամբողջ երկրագնդի համընդհանուր հատկանիշները: Միաժամանակ ընդգծվում էր, որ մեկ միասնական ամբողջություն է ինչպես Համաշխարհային օվկիանոսը, այնպես էլ մթնոլորտը:

Սյուս կողմից, մեծ նշանակություն էր տրվում այն փաստին, որ Երկրի մակերեսը միասեռ չէ, որ, նմանությունները նկարագրելուց բայց, կարևոր է բայց հայտել նաև տարածքային տարբերությունները (քնական պայմանների, բնակչության, նրա զբաղմունքի, ապրելակերպի, սովորությունների և այլն):

Անտիկ ժամանակաշրջանին հաջորդած շուրջ մեկ հազարամյակը նշանավորվեց նրանով, որ ընդհատվեց եվրոպական գիտության, գրականության ու արվեստի առաջընթացը: Այդ դարերը լճացման ու մոռացության ժամանակներ էին նաև աշխարհագրության համար:

ՀԱՐՑԵՐ ԻՆՁՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ե՞րբ և որդե՞ն են ձևավորվել շրջապատի մասին առաջին շափ բև քիչ համակարգված գիտելիքները:
2. Այդ գիտելիքները ի սկզբանն ի՞նչ ուղղվածություն են ունեցնել:
3. Ե՞րբ և որդե՞ն են ձևավորվել աշխարհագրության՝ որպես գիտության իմքնուրույն ճյուղի հիմքերը:
4. Ո՞րն է փիլիսոփայության միերյան դպրոցի դերը աշխարհագրական պատկերացումների ձևավորման գործում: Ովքե՞ր են այդ դպրոցի ականավոր ներկայացուցիչները:
5. Ո՞րն է Թալեսի, Անարսիմանդրի, Հերոդորոսի և Արխափուելի ավանդը աշխարհագրական պատկերացումների զարգացման գործում:
6. Ի՞նչ պայմաններուն են հասունացնել միասնական գիտության գրողությունը և մասնագիտացված ճյուղերի (նաև աշխարհագրության) անջապումը:
7. Էրակուսը իր ո՞ր գիտական ժառայությունների համար է հորջորջվել «աշխարհագրության հայր»:
8. Ի՞նչ վնայի ունեցավ աշխարհագրության մեջ անդիկ ժամանակաշրջանի վերջում, երբ Հունաստանը գրեվեց անկախությունից, և գիտության ու մշակույթի հենարունք տեղափոխվեց Հոունական պետության մայրաքաղաք: Բնութագրե՛ք Սպրաբռին և Կրավդիոս Պարղունոսին:

- 9. Որո՞նք են անդիկ գիտության երկու գլխավոր նվաճումները, որոնք կարևորագույն մերժաբանական, ելակեպային նշանակություն ունեցան աշխարհագործության համար:**

2.1.2. ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐ

Միջն դարերում, ավելի քան մեկ հազարամյակ (5-15-րդ դդ.), գիտությունը, գրականությունը և արվեստը Եվրոպայում խոր անկում ապրեցին: Հռոմեական կայսրության քայլայումով Եվրոպայիների ճանապարհորդությունների և առևտրական կապերի շառավիղը կրծատվեց, նրանց աշխարհագրական հորիզոնը, որ մինչ այդ տարածվում էր Ասլանտիայի մինչև Խեդոս գետը, պարփակվեց սեփական տարածքի և մերձակոր հարևանների սահմաններում: Միաժամանակ, անտիկ աշխարհի գիտական նվաճումները հաստափոր չենագրերի տեսքով կուտակվեցին քրիստոնեական Եվրոպայի վանքերում ու եկեղեցիներում և շուտով մոռացության մատնվեցին: Մի տեսական ժամանակ ինչպես մի շարք այլ գիտությունների, այնպես էլ աշխարհագրության անունը շրջանառությունից դուրս եկավ: Տիրապետող դարձան աշխարհի մասին կրոնական պատկերացումները: Օրինակ, 6-րդ դ. աշխատություններից մեկը, որ կոչվում է «Տիեզերքի քրիստոնեական տեղագրությունը», պնդում էր, թե Երկիրու ունի եկեղեցու խորանի ձև, այսինքն մի քառանկյուն արկդ է՝ շրջապատված օվկիանոսով: Վերջինս ցամաքի մեջ է թափանցում Հռոմեական (Միջերկրական) ծովի, Արաբական, Պարսիկ և Կասպիկ ծոցերի ձևով:

Այս և մյուս քրիստոնեական պատկերացումներն իրենց արտացոլումը գտնում են նաև քարտեզներում, որոնց կենտրոնում տեղադրվում էր Երուսաղեմը, Նրանից արևելք՝ բնակելի տարածքից դուրս՝ դրախտը:

Այդ ամենը՝ վաղ միջնադարում: Հաջորդ դարերում աշխարհագրության վերակենդանացման որոշ նշաններ, այնուամենայնիվ, երևում են: Թայ դա վերաբերում է ոչ թե տեսական մտքին, այլ նոր փաստական նյութի կուտակմանը: Դրան նպաստում են Խաչակրաց արշավանքները, որոնց ընթացքում Եվրոպայիների վանգվածային հոսք է սկսվում դեպի Հարավարևմտյան Ասիա՝ Ավետյաց Երկիր: Կազմակերպվում են նոր ճա-

Նապարհորդություններ: Դրանցից են վենետիկյան Պոլո առևտրական ընտանիքի անդամների ճանապարհորդությունները դեպի Արևելք: Մեծ հոչակ չեղոք քերեց «Մարկո Պոլոյի գիրքը» երկը՝ գրված 1298թ., որտեղ հատկապես մանրամասն նկարագրված են Ծինաստանի, նրա տարբեր մասերի և վերադարձի ծովային երթուղու (Հարավ-Ծինական ծով, Յավա, Սումատրա, Ֆեյլոն Կոկիններ, Հարավային ու Արևմտյան Հնդկաստանի ափամերձ շրջաններ)՝ Եվրոպայինների համար անսովոր լանդշաֆտները, ժողովուրդները, նրանց զբաղմունքն ու սովորությունները, քաղաքները»:

Հատկանշական է, որ միջնադարյան Եվրոպայի ճանապարհորդները, դրանց թվում և Պոլո ընտանիքի անդամները, անտեղյակ են եղել իին դարերի աշխարհագրական պատկերացումներին ու գիտական նվաճումներին:

Հարկ է նշել միջնադարյան Եվրոպայի մի առանձնահատկություն ևս: Ինչպես ասվեց, անտիկ աշխարհի աշխարհագրական միտքը, որ մեծագույն առաջընթաց էր արյանագրել, այդ ժամանակ մոռացության էր տրվել: Դրան հակառակ, Արևմտյան Եվրոպայի պետություններում ու անկախ իշխանություններում **գրեգորացին գուգրներաց գուեղի էր ունենում մի երեսոյք, որը, ըստ Էուրյան գրարածքի ու քննկան հարսպուրյունների յուրացման խորքային աշխարհագրական պրոցես էր:** Երկրագործությունը ծովափնյա շերտից աստիճանաբար թափանցում էր ներքին հարթավայրերը, կառուցվում էին ճանապարհներ և զարգանում էին առևտրական կապերը ծովային նավահանգիստների և նոր յուրացվող շրջանների միջև, աշխատանում էր նաև գետային նավագնացությունը:

Պատահական չէ, որ Եվրոպայի գրեթե բոլոր միջնադարյան ամրոցները կառուցվում էին բլուրների կատարներին, որպեսզի հսկեն մշակվող հովիտների մուտքերն ու ելքերը: Բլուրների ստորոտներում,

1 Պոլոն եղբայրները և նրանցից մեկի որդի Մարկոն Ծինապանում եղել են երկու անգամ: Երկրորդ ուղևորությունը տևել է 25 տարի, որից 17 տարին նա քանկվել է Ծինապանում և ճանապարհորդել է երկրի ներքին շրջաններում. Մարկոն խանդի մոլու ծառապության է մտել, որը հենարավորություն է դրվագիների երկրի գրաբեր մասերում և խորությամբ ուսումնասիրել չինացիների ներքին կյանքը: Պոլո ընդունակի քարավանը վնասարձել է Եվրոպա 1295թ.:

«Մարկո Պոլոյի գրքում» հենարքիր գրեգորություններ կան նաև միջնադարյան Հայաստանի մասին:

ամրոցների հարևանությամբ ստեղծվում էին արդյունաբերական ու առևտրական արվարյաններ, որոնք ենթակա լինելով ամրոցներին, հարատացնում էին նրանց տերերին:

Այդ ժամանակներում գրված որոշ աշխատություններում այդ երևույթները նույնպես իրենց արտադրությունը գտնում էին: Դա երկրներին ու շրջաններին նվիրված նկարագրությունների մեջ արդեն նոր երևույթ էր:

Այդուհանդերձ «միջնադարյան խավարը» չկարողացավ պատմությունից ջնջել աշխարհագրական մտքի այն փայլատակումները, որոնց լուսավորվում էր Եվրոպան: Գիտական նվաճումները կորսատյան շմատնվեցին, այլ ժառանգվեցին արարեների կողմից, որոշ բնագավառներում ապրեցին նոր զարգացում և ուշ միջնադարում արդեն թարգմանությունների շնորհիվ կրկին վերադարձան Եվրոպա:

Անտիկ աշխարհի գիտական, մասնավորապես աշխարհագրական մտքի նվաճումների յուրացման ու զարգացման գործում արարեներից բացի իրենց մասնակցությունն են ունեցել նաև հայերը:

Հայտնի է, որ 5-րդ դարից սկսած, հայ գրերի գյուտից հետո Հայատանում լայնածավալ թարգմանչական աշխատանք է սկսվում, հունարենից հայերեն են թարգմանվում բազմաթիվ երկեր: Հատկանշական է, որ մի շարք արժեքավոր աշխատությունների հունարեն բնագրերը միջին դարերում անհետ կորել են, բայց պահպանվել են դրանց հայերեն թարգմանությունները կամ էլ հայերեն նկարագրությունները, և հետագայում հայտնի են դարձել հայերենի միջոցով:

Անտիկ ժամանակաշրջանի առաջավոր գիտական միտքը պահպանվել ու իր զարգացումն է գտնել միջնադարյան հայ մտածողների երկերում: Այդ առումով բացառիկ է 7-րդ դ. հայ գիտնական՝ աստղագետ, մաթեմատիկոս, աշխարհագետ Անանիա Շիրակացու դերը, որի գիտական ու մանկավարժական գործունեությունը խոր հետք է թողել հայ իրականության մեջ: Նա ընդունել է անտիկ ժամանակաշրջանի աշխարհագրական պատկերացումները, զարգացրել ու տարածել է դրանք: Ըստ այդմ էլ բայցարձությունը էր տարվա եղանակների և գիշերվա ու ցերեկվա առաջացումը: Հենվելով հին հունական բնափիլիսոփաների ուսումնասիրությունների վրա և ուսումնասիրելով բնությունը, Ա. Շիրակացին հանգել է այն ըմբռնմանը, որ բնուրյան մեջ ամեն ինչ փոփոխության է ենթարկվում, ծննդում, զարգանում և մահանում ընդունելով այլ գոյացել: Նա զարգացնում էր բնուրյան մեջ հակասությունների գոյության և նրանց միասնության գաղափարը, համարելով դա բնուրյան գոյության օրենք:

Լայն տարածում ուներ տիեզերագիտության և աշխարհագրության «Աշխարհացույց» կոչվող ցեղնարկը, որի հեղինակը համարվում է Անանիա Շիրակացին: Այն եղել է ավելի քան 15 քարտեզներից բաղկացած աշխարհի ատլասի բացատրություն-նկարագրությունը: «Աշխարհացույցը» հետևում էր հունական դպրոցի ներկայացուցիչների, մասնավորապես Կլավդիոս Պտղոմեոսի և Երատոսթենեսի հայացքներին երկրակենտրոնության ու Երկրի գնդաշնության մասին, ըստ այդմ էլ բացատրում էր տարգա եղանակների, գիշերվա ու ցերեկվա առաջացումը: Մաթեմատիկական հաշվարկներով կառուցված աստիճանացանցի և քարտեզների միջոցով նկարագրում էր այն ժամանակի հայտնի աշխարհը, առավելացնելով յոթ կլիմայական գոտիները, ինչպես նաև «Ընկրոպա», «Լիրիա» (Աֆրիկա) և «Ասիա» մայրցամաքները, «Օվկիանոսը և Երեք ծովերը» (Հնդկական, Հունական (Միջերկրական) Սև ծովի հետ միասին, և Կասպից), դրանց մեջ թափվող գետերը: «Աշխարհացույցը» պարունակում է նաև Մեծ Հայքի և նրան հարող Երկրամասերի նկարագրություններ ու քարտեզներ (Վիրք, Աղվանք, Պարսիկ աշխարհ, Հյուսիսային Կովկաս, Միջագետք), որոնք հունական աղբյուրներում բացակայում են:

Հիշատակված հայկական աղբյուրները վկայում են, որ **Վաղ միջնադարյան Հայաստանում եղել է անդիկ աշխարհի ավանդույթները շարունակող և բավականին զարգացած աշխարհագրություն ու քարտեզագրություն, որը նախորդել է արաբական աշխարհագրությանն ու քարտեզագրությանը:**

Եթե անտիկ ժամանակաշրջանում մարդկային քաղաքակրթության նվաճումները տարածվում էին հույն-հոռոմեացիների միջոցով, որոնք բնակեցված աշխարհի կենտրոն էին համարում Հարավային Եվրոպան և Միջերկրականի արևելյան ավագանը, որին հարում էր նաև Հայաստանը, ապա 7-րդ դարի կեսերից սկսած այն կատարվում էր արաբների կողմից: Վերջիններս Արաբական թերակղզու քոչվոր ցեղերին համախմբելով Մահմեդի և նրա քարոզած գաղափարների՝ մահմեդականության շուրջը, շուտով ստեղծեցին իրենց պետությունը: Արաբները արագորեն նվաճեցին Պարսկաստանը, Հայաստանը, Սիրիան, Միջին Ասիան, Եգիպտոսը, թափանցեցին Կենտրոնական Աֆրիկա և Հարավային Եվրոպա: Իրենց ենթարկելով Հյուսիսային Աֆրիկայի երկրները, նրանք անցան Պիրենեյան թերակղզի, նվաճեցին Իսպանիան ու Պորտուգալիան: Արաբների հետագա առաջխաղացումը դեպի Արևմտյան Եվրոպա-

յի խորքերը կանգնեցվեց Ֆրանսիայում՝ Տուրի ճակատամարտում (732թ.), որտեղ նրանք պարտություն կրեցին:

Ռազմական արշավանքները, հսկայական տարածությունները, տարբեր երկրներ ու ժողովուրդներ միավորող կայսրության (խալիֆաթի) ստեղծումը և դրա կառավարման կազմակերպումը պահանջում էին հավաստի աշխարհագրական տեղեկություններ: Հպոր կայսրության գիտության ու մշակույթի կենտրոններ դարձան **Կոռդովան**՝ արևմուտքում և **Բաղրամի**՝ արևելքում:

Անտիկ աշխարհագրության հիմնարար Երկերը թարգմանվեցին արաբերեն: Ավելին, Ժառանգված գիտելիքները հարստացվեցին արար ճանապարհորդների սեփական գիտարկումներով ու հավաքած լրացուցիչ փաստերով, որոնք նկատելիորեն ընդլայնեցին աշխարհագրության հորիզոնները: Արար ճանապարհորդներն ու գիտնականները, մասնավորապես Ջիրունին (10-11-րդ դր.), Իդրիսին (12-րդ դ.), Իբր Ջատուտան (14-րդ դ.), ստեղծեցին սեփական աշխատություններ, որոնք նոյնպես, հին հունական գործերի հետ մեկտեղ, ավելի ուշ թարգմանվեցին լատիներեն և օգտագործվեցին Աշխարհագրական մեծ հայտնագործությունների նախապատրաստման համար: Նրանց գլխավոր արժանիքը անտիկ աշխարհագրական պատկերացումների և Երկրագրական նկարագրությունների հարստացումն էր այն նոր փաստագրական նյութերով, որ արաբները հայթայթում էին իրենց ճանապարհորդությունների և ռազմական արշավանքների ընթացքում:

Ինչ վերաբերում է աշխարհագրական տեսական մտքին, ապա արաբները ընդօրինակել էին Երկրի գնդաշնության գաղափարը, իսկ քարտեզների կազմման հիմքում դրել էին Պտղոմեոսի սկզբունքներն ու պրոյեկցիաները:

ԴԱՐՅԵՐ ԻՆՁԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ տեղի ունեցավ ընդհանրապես գիտության ու, մասնավորապես, աշխարհագրության հետ վազ միջնադարյան Եվրոպայում:
2. Ինչպէս էր աշխարհագրությունը զարգանում միջնադարյան Հայաստանում: Գնահատիք Անանիս Ծիրակացու «Աշխարհացույց» դերը:
3. Ինչպիսի է արաբների պահանջ անդրի ժամանակաշրջանի գիտելիքների պահպանման ու զարգացման գործում:

4. Ովքե՞ր են ականավոր արար աշխարհագեղմները:
5. Որո՞նք էին Արարական խալիքայության գիտության ու ճշակույրի խոշորագույն կենդրութերը:

2.1.3. ՎԵՐԱԾՆՍԴԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՏԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Ակսած 15-րդ դարից կրկին մարդկային քաղաքակրթության առաջնաբեմ է դուրս գալիս Նվիրապան: Ակսվում է Վերածնունդի ժամանակաշրջանը: Աննախանդեալ վարգացում են ապրում գրականությունը, արվեստը, պատմությունը, կատարվում են մի շարք դարակազմիկ գյուտեր ու գիտական հայտնագործություններ: **Ակնհայտ է դառնում գիտության հումանիզմությունը:**

Աշխարհագրության համար հատկանշականն այն էր, որ վերակենդանացած անտիկ աշխարհագրության պատկերացումներն ու գաղափարները: Ստորաբռնի, Պոտումենոսի և Մյուս ականավոր աշխարհագետների հիմնարար աշխատությունները դարձան ոչ միայն գիտնականների, այլև նաև ապահովության համար աշխատությունների, ու վաճառականների սեղանի գիրքը: **Աշխարհագրությունը կրկին սկսեց անմիջականորեն ժառայել հասարակության զարգացման շահերին:**

Ներկայիս հետազոտողները նշում են աշխարհագրության մի առանձնահատկություն և՝ «գլուխասաշխարհագրական աշխարհությունները հայկական ավելի վաղ, քան ֆիզիկաաշխարհագրական աշխարհությունները, այդպիսին էին արտադրական պահանջները», գրում է Յու. Գ. Սառուկյանը: Սիածամանակ նա իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Ա. Գ. Խաչենկոյի այն մտքի հանդեպ, որ «Մինչև 16-րդ դ. աշխարհագրության բնագավառում Պոտումենոսը մնում էր գլխավոր հեղինակությունը, որը փոքր դեր չխաղաց այն բանում, որ այդ ժամանակվա աշխարհագետները չափազանց քիչ ուշադրություն էին

դարձնում բնությանը և աշխարհագրությանը անսահման միակողմանիություն հաղորդում»¹:

Սառչկինը, շիամազյանվելով Խաչենկոյի գնահատականի հետ, նշում է, որ «աշխարհագետներն իրենց գիտությանը հաղորդում են այն ուղղությունը, որն անհրաժեշտ էր հասարակական արտադրությանը, աշխատում էին այն պրոբլեմների վրա, ինչը պահանջում էր կյանքը, և դա թույլ էր տալիս գիտնականներին օգտագործել կուտակված փաստերը և մեթոդները»²:

Խսկ այդ ժամանակ կյանքը գիտնականներից պահանջում էր վերլուծել աշխարհի, տարբեր երկրների ու ժողովուրդների, նրանց արտադրական վրայմունքի, առևտուրի, սովորությունների, նավահանգիստների ու քաղաքների մասին կուտակված տվյալները, օգնել պետական իշխանություններին ու վաճառականներին կազմակերպելու նոր արշավախմբեր ու ճանապարհորդություններ, զարգացնել առևտուրը: Ի միջի այլոց նշենք հետևյալ փաստը՝ Պորտուգալիայի իշխան Հենրիկո Ծովագնացը դեռևս 1418թ. ծովափնյա **Սագրիչ** վայրում հիմնեց հետազոտական մի կենտրոն, ուր տարբեր երկրներից հրավիրվեց տարբեր կրոնական հավատքի գիտնականներ (աշխարհագետներ, քարտեզագիրներ, մաթեմատիկոսներ, աստղաբաշխներ, մասնագետ թարգմանիչներ): Նրանց առաջ խնդիր էր դրված նավագնայության միջոցների կատարելագործման հետ միասին, առկա փաստաթղթերի վերլուծության միջոցով պարզել Աֆրիկայի ափերին զուգահեռ դեպի հարավ նավարկելու և Համեմունքների (Սոլության) կղզիներ հասնելու հենարավությունը: Սասնավորապես պետք է պատասխան տրվեր այն հարցերին, թե քնակեցված է արդյոք հասարակածի շրջանը, սեանո՞ւմ է հասարակածում հայտնված մարդկանց մաշկը, ինչպիսի՞ն են Երկրի շափերը:

Սագրիչում կառուցվելին ընդարձակ պալատ, եկեղեցի, աստղադիտարան, զեռագրերի և քարտեզների գրապահոց, բնակելի տներ աշխատակիցների համար:

Կարծիք կա, որ **Սագրիչի հետազոտական կենտրոնը աշխարհում առաջին աշխարհագրական հետազոտական ինստիտուտն է եղել:**

Կյանքի պահանջով էր, որ 15-16-րդ դդ. Վասկո դե Գամայի պորտուգալական նավատորմը, շրջանցնելով Աֆրիկան հարավից, հայտնա-

1 А. Г. Исаченко, Развитие географических исслед. М., 1971, № 68:

2 Ю. Г. Саутиков, Աշված աշխատությունը, № 40-41:

գործեց Հնդկաստան ու Չինաստան տանող ծովային ուղին, Ջրիստափոր Կոլումբոսը Խսպանիային նավարկելով դեպի արևմուտք, որպեսզի հասնի Ասիա մայրցամաք, «որտեղ կան ուկու, արծաթի, թանկագին քարերի և համեմունքների հերթափային հարստություններ», ճանապարհին հանդիպեց արևմտյան կիսագնդի մինչ այդ անհայտ մայրցամաքին: Այդ նույն կյանքի պահանջով էր, որ խսպանական նավատորմը՝ Ֆերնան Սագելանի գլխավորությամբ, դարձյալ նավարկելով դեպի արևմուտք, կարողացավ գտնել Աստլանտյան օվկիանոսը Խաղաղ օվկիանոսին կապող նեղույթ, որը կոչվեց Սագելանի անունով, հասավ Հարավ-Արևելյան Ասիա, կտրելով Հնդկական օվկիանոսն ու շրջանցելով Աֆրիկան, վերադարձավ Սիբիր և ավարտեց առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը:

Այդ և մի քանի այլ նշանավոր հայտնագործությունները, որոնք միավորվեցին **Աշխարհագրական մեծ հայդրագործություններ** հասկացության մեջ, մեծապես հարստացրին Եվրոպայինների պատկերացումները երկրագնդի բնության, բնակչության, տնտեսության, բարքեր երկրների, նաև ահանգիստների ու քաղաքների, պետությունների կառավարման առանձնահատկությունների, ազգային սովորույթների ու կենցաղի մասին:

Նախկինում կուտակված և նոր չեղոք բերած տվյալները լայնորեն օգտագործվեցին նոր աշխատություններ ստեղծելու և տարածելու (հատկապես տպագրության գյուտից հետո) համար:

«ասպարակական աշխարհագրական ակնհայր ուղղվածություն ունեցող առաջին հետազոտությունն ընդունված է համարել Ֆլորենցիայի առևտրական ընկերությունների՝ Անտվերպենում հաստատված ներկայացուցիչ Լյուդվիգո Գվիշարդինիի «Նիդերլանդների նկարագրությունը»: Աշխատության առաջին բաժինը նվիրված է Երկրի բնությանը, բնակչությանը, տնտեսությանը և կառավարությանը ամբողջությամբ վերցրած: Երկրորդ բաժինը ամփոփում է Նիդերլանդների 17 մարզերից յուրաքանչյուրի, հատկապես քաղաքների մանրամասն նկարագրությունը: Աշխատության հեղինակը **հապուկ բննության և ենթարկում դնդեսաշխարհագրական երկույթների, մասնավորապես Անգլիականի և մյուս քաղաքների զարգացման նախադրյալներն ու պատճառները:**

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ հենց Նիդերլանդների Ֆլանդրիա մարզում և նրա կենտրոն Անտվերպենում են ստեղծվել և

տպագրվել 16-րդ դարի բոլոր աշքի ընկնող քարտեզագրական ստեղծագործությունները, ի թիվս որոնց նաև Մերկատորի՝ աշխարհի հայտնի քարտեզը, որտեղ առաջին անգամ արտապուլված էին Աշխարհագրական մեծ հայտնագործությունների արդյունքները¹:

Սվարտելով միջնադարյան աշխարհագրության զարգացման համառոտ ակնարկը, նշենք նրա գլխավոր հատկանշական կողմը: **Աչմիայն վերականգնվեցին, այլև ճշգրտվեցին ու էապես հարստացան Երկրի ու նրա գործերի մասերի մասին փաստական դպյակները և ընդհանուր պատկերացումները:** Հարուստ նյութ կուտակվեց մայրամաքների ու օվկիանոսների, մքնորորտի ու ջրորորտի, բուսական ու կենդանական աշխարհի, ժողովուրդների ու պետությունների մասին, նյութ, որը հիմնականում ճանապարհորդների եմպիրիկ ընկալման ու անմիջական տպագրության արդյունք էր:

Դրան հակառակ, մի կարևոր (գուցե կարևորագույն) բնագավառում միջնադարյան աշխարհագրությունը շհասավ անդիկ աշխարհագրության մակարդակին: **Դա դեսպանական ընդհանրացումների և աշխարհագրական սինթեզի բնագավառն է:** Ծվերսկսվեց նաև միասնական աշխարհագրության դիֆերենցման երեսույթը, որ սկսվել էր Երատոսթենոսից հետո: Ինչպես նշում է Սաուչկինը, «այդ ժամանակաշրջանում ստրաբոնյանի տիպի ու մակարդակի որևէ ամբողջական աշխարհագրական աշխատություն ի հայտ չի եկել..., ուստի դիֆերենցելու բան չի եղել: Պրոցեսը հակառակ ուղղվածություն ուներ. աշխարհագրությունը մասնավոր դիտարկումներից, առանձին չափումներից, ներ լուծումներից, մեկուսացված ընդհանրացումներից...» պետք է դուրս գար սինթետիկ հետազոտությունների և ամբողջ ճանաչելու լայն ասպարեզ², որը տեղի ունեցավ շատ ավելի ուշ:

ԴԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՎԱՐՄԱՐ

1. Ինչո՞ւ է բացադրվում անդիկ աշխարհագրության վերածնունդը Եվրոպայում: Որո՞նք են դրա գլխավոր առանձնահայկությունները:

1 Նոյն Նիդերլանդների Ամստերդամ քաղաքում 1695թ. դպագրվել է աշխարհի առաջին հայագրադարձը՝ «Համադրած աշխարհացույցը»:

2 Ю. Г. Саушкин, նշված աշխատությունը, Էջ 48:

- Ի՞նչ հարցի շուրջն էին բանավիճում խորհրդային շրջանի խոշոր աշխարհագեղմերը Ա. Խաչենկոն և Յու. Սառչկինը:**
- Որո՞նք էին այդ ժամանակաշրջանի առաջին ծովային ճանապարհորդությունները: Ի՞նչ գվեցին դրանք աշխարհագորական գիտությանը:**
- Ինչպէս է կոչվում ազնիայու հասարակական աշխարհագորական ուղղվածություն ունեցող առաջին աշխարհությունը: Որքն՝ ո՞ւ է այն դպագրվել և ո՞վ է նրա հեղինակը:**
- Աշխարհագրության ո՞ր բնագավառում միջնադարյան, մասնավորապես Վերածննդի ժամանակաշրջանի աշխարհագրությունը գերազանցեց անդիկ աշխարհագրությանը և ո՞ր բնագավառում ջհասալ նրա մակարդակին:**

2.1.4. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Աշխարհագրական ցածր ու ցրիվ տվյալների համախմբումը, դրանց կարգավորումը և գիտության տեսական հիմքերի վարդապումը նոր թափ առան, երբ աշխարհագրությունն ավելի հստակորեն սկսեց հենվել Եմափիրիկ բնագիտության նվաճումների վրա: Իսկ այդ նվաճումներն ակնառու դարձան հատկապես 16-18-րդ դարերում, երբ բնական երևույթների ճանաչման բնագավառում մի հիմնարար հայտնագործություն հաջորդում էր մյուսին: Ակրում հայտնագործվեց Երկրի մագնիսականությունը, ապա օպտիկայի ցեռքբերումների շնորհիվ հնարավոր դարձավ պատրաստել հեռադիտակը և մանրադիտակը, որոնք հսկոր միջոցով դարձան մակրոաշխարհի և միկրոաշխարհի հետազոտության համար: Ի հայտ եկան առաջին գեղեցիկական չափից գործիքները, այնուհետև՝ բարումետրը, ջերմաչափը, որոնք նոր որակ հաղորդեցին մեզուաշխարհի՝ Երկրի մակերևույթի, մթնոլորտի ու ջրողորտի ուսումնասիրությանը:

Ըստիանուր աշխարհագրության, հատկապես նրա մեթոդաբանության ու տեսության կարգայման վրա վիթխարի դրական ազդեցություն ունեցան բնագիտության՝ ընդհանրապես, և ֆիզիկայի՝ մասնավորապես, նվաճումները: Հարկ է առանցնացնել հատկապես Գալիլեո Գա-

Իիեյին (1564-1642թթ.) և Խսահակ Նյուտոնին: Գալիլեյը պաշտպանեց և լրացուցիչ ապացուցմբերով հիմնավորեց տիեզերքի արևակենտրոն (հելիոցենտրիկ) կառուցվածքի մասին Կոպենիկոսի ուսմունքը և հոչակ շեոք բերեց որպես փորձարարական ֆիզիկայի հիմնադիր: Նյուտոնը (1642-1727թթ.) ֆիզիկայի մաթեմատիկական հիմքերը դրեց, բայսահյուտեց կլասիկ մեխանիկայի հիմնական օրենքները և մշակեց հիդրոդինամիկայի գլխավոր սկզբունքները:

Անգլիական նվաճումները երկակի ապդեցություն ունեցան աշխարհագրության վրա: Նախ, դրանք ուղղակիորեն օգտագործվելով աշխարհագրության կողմից, նպաստեցին մի շարք հին պատկերացումների՝ վերանայմանը և ուժեղացորին երևույթների **բացադրության ապացուցելիությունը**, հիմնված ճշգրիտ շափումների ու մաթեմատիկական հաշվարկների վրա:

Մյուս կողմից, այդ նվաճումները եական փոփոխություն մտցնելով փիլիսոփայության մեջ, իրենց անդրադարձն ունեցան աշխարհագրության **մերոդարձնության** վրա:

Աշխարհագրության պատմության մասնագետները հատկապես առանցնացնում են հոչակավոր փիլիսոփա քնագետներ անգլիացի Ֆրենսիս Բեկոնին (1561-1626թթ.) և ֆրանսիացի Ռենե Շեկարտին (1560-1650թթ.): Նրանց փիլիսոփայական հայացքների համակարգը հայտնի դարձավ **մերսֆիզիկական մագնիալիզմ** անունով, որը հակադրվեց աստվածաբանությանն ու կրոնին, թեն շատ հարցերում դրսնորում էր դրանց հետ իր համայնացնությունը:

Գիտական ճանաչողության պրոցեսում **Բեկոնն** առաջնային նշանակություն տալիս էր ճշգրիտ փաստերին: Ընության հետապոտության նրա ուղին հետևյալն էր՝ **հնարավորին չափ շար փասկերի կուրակում-մանրազնին, իմամբով համակարգում-գիտական արսիունների (ճշմարգությունների) սահմանում**: Միաժամանակ, Թեկոնն անտեսում էր փաստերի ու երևույթների ժամանակային կապը, զարգացումը: Ըստ նրա, քննությունը մեկուսացված տարրերի ու երևույթների սոսկ գումար է, որոնք կարելի են ուսումնասիրել միայն փորձի միջոցով, այլ կերպ ասած՝ **ինդուկցիայի մերոդում**:

Դեկարտը, շենքանահատելով ինդուկցիայի մեթոդը, առաջնային էր համարում **դեղուկցիան**: Լինելով անալիտիկ երկրաշափության հիմնադիրը, նա գիտության զարգացման հիմքը ընդհանրապես համա-

րում էր մաթեմատիկան, իսկ բնագիտության մեջ առաջնությունը տալիս էր մեխանիկային: Անությունը նա դիտարկում էր երկու տեսակետից՝ տարածականության (երկարության) և տեղափոխության, վերջինս համարելով մեխանիկական շարժում: Նա առաջ ծաշեց մի տեսական դրույթ, ըստ որի գրարածությունը լցված է գրարքեր չգվածություն (չսփեր) ունեցող զանազան առարկաներով: (Մենք հետագայում կտեսնենք, որ տարածության դեկարտյան բացատրությունն իր արյագանքը աշխարհագրության մեջ գտնում է նաև մեր օրերում:)

Սետաֆիկական մատերիալիզմի անհետեղականությունը, որն իր բացասական ապդեցությունն ունեցավ նաև աշխարհագրության վրա, արդահայպնում էր երկու գլխավոր դրույթի չեզով: Առաջին. ընությունը բացարձակ առումով անփոփոխ է, այն ծագել է, իր նախասկզբնական տեսքով հասել է մեզ և այդպիսին էլ կմնա, քանի դեռ գոյություն ունի: Անության երևույթներն ու առարկաները վերափոխվել, զարգանալ չեն կարող, նրանք կարող են միայն տարածվել, ընդարձակվել:

Երկրորդ դրույթը վերաբերում էր մարդուն, սոցիալական երևույթներին: Օրինակ, Ռեկարտը համարում էր, որ մարդկային գործունեությունը գտնվում է աստվածային հայտնության ոլորտներում և չի կարող գիտական հետազոտության առարկա լինել: Ըստ նրա, մարդու գործունեության, սոցիալական կյանքի ուսումնասիրությամբ պետք է զրադարձի միայն կրոնը: Նոյն շեով Ռեկոնը գտնում էր, որ սոցիալական երևույթները իսկական գիտական ճանաչողությանը ենթակա չեն, նրանք մատշելի են միայն «աստծու մասին գիտությանը»:

Ծատ գիտնականների կարծիքով թեկոնից է սկսվել բնական գիտությունների հակադրումը հումանիտար գիտություններին: Ուեկոնի կարծիքով միայն բնական գիտություններում է, որ ինդուկտիվ մեթոդը հանգեցնում է արսիոմների ու օրենքների, մինչդեռ հումանիտար գիտություններում անհնար է բացահայտել օրենքներ ու օրինաշափություններ. այստեղ գործում է «աստվածային կամքը, որն անմեկնելի է»:

Ընական և հումանիտար գիտությունների հակադրման փորձեր պատահում են նաև ներկայումս, թեև այլ բացատրությամբ ու հիմնավորումով: Դա իր արտահայտությունն ունի նաև աշխարհագրության ներսում. այս դեպքում հակադրվում են նրա բնական և հասարակական բնոկները: Նման մոտեցումը ոչ թե նպաստում, այլ խոշընդոտում է ընդհանուր (տեսական) աշխարհագրության զարգացմանը:

Սառուշկինը գնահատելով 16-18-րդ դարերի էմպիրիկ բնագիտության դերը աշխարհագրության զարգացման գործում, գալիս է այն եկարակացության, որ նրա մեթոդաբանական մոտեցումներն ամբողջապես հակասում են աշխարհագրության էությանը: «Աշխարհագրության էությունը, -գրում է նա, -կայանում է երևույթների կապերի հետապոտության, ոչ միայն տարածության, այլև ժամանակի մեջ նյութերի շրջապտույտի ուսումնասիրության..., ոչ միայն բնական, այլև սոցիալական օրինաչափությունների, բնության ու հասարակության փոխներգործության բացահայտման մեջ... Մինչդեռ էմպիրիկ բնագիտությունը այս ամենը վճռականորեն մերժում էր և բնական ու սոցիալական երևույթների ուսումնասիրությունը անջատում իրարից»¹:

Էմպիրիկ բնագիտության և մետաֆիլիկական մատերիալիզմի ոգով է գրված գերմանացի տաղանդավոր աշխարհագետ **Թեոնիարդ Վարենիոսի** (1622-1650) «Համընդհանուր աշխարհագրությունը», որը մինչև այժմ էլ համարվում է բացառիկ երևույր և զնահարվում է որպես աշխարհագրության պարժանք: Այս գիրքը բազմիցս հրատարակվել է լատիներեն (վերջին հրատարակություններից մեկը՝ Խահակ Նյուտոնի խմբագրությամբ) և ավելի ուշ թարգմանվել է եվրոպական այլ լեզուներով, այդ թվում նաև ռուսերեն:

Վարենիոսին հաջողվել է ի մի հավաքել և ընդհանրացնել մինչ այդ կուտակված հարուստ ու բազմազան աշխարհագրական նյութը և շարադրել նորագույն պատկերացումները Երկրի, նրա բնության, այնտեղ ընթացող երևույթների էության ու պատճառների մասին: Ըստական է ասել, որ առնվազն մեկ հարյուրամյակ «Համընդհանուր աշխարհագրությունը» եվրոպական համալսարաններում ծառայում էր որպես աշխարհագրության հիմնական դասագիրք:

Միհաժամանակ պետք է նշել, որ Վարենիոսը, որը ծառայության մեջ էր գտնվում Հոլանդիայում, իր աշխատությունը ստեղծել է առաջին հերթին նկատի ունենալով նավագնացության և ծովային առևտության պահանջները: Այդ պատճառով էլ գիրքը հագեցած է այն բոլոր աստղաբաշխական, գեղողեպիհական և այլ տվյալներով, որոնք անհրաժեշտ էին ծովագնացներին ու վաճառականներին: Դա վայրի աշխարհագրական լայնությունը որոշելու, քարտեզագրական պրոյեկցիաներից օգտվելու, քարտեզների օգնությամբ տարածությունները չափելու, բայց օվկիանոսում նավագարության պրակտիկ ուղեցույց էր:

1 Ю. Г. Саушкин, Աշված աշխարհությունը, էջ 48:

Սուավել արժեքավոր է Վարենիուսի տեսական մոտեցումը: Նա աշխարհագրությունը բաժանում էր երկու մասի՝ **ընդհանուր աշխարհագրության**, որը հենվում է ճշգրիտ հաշվարկների ու ապացույցների վրա («Աշխարհագրությունը մաթեմատիկական ուսմունք է», -գրում էր նա), և **մասնավոր աշխարհագրության**, որը հենվում է լոկ նկարագրության վրա, որտեղ հաշվարկներ ու գիտական ապացույցներ չեն պահանջվում:

Հատկանշական է նաև, որ Վարենիուսը, հետևելով մետաֆիզիկական մատերիալիզմի դրույթներին, երևույթները քննարկում էր մեկուսի, անտեսելով նրանց կապն ու փոխազդեցությունը, չեր ընդունում պատմականությունը (երևույթների կարգացումը, որակական փոփոխությունը ժամանակի մեջ), միաժամանակ ընդհանուր նկարագրությունից (իուվին դուրս էր թողնում մարդուն: Մարդկային գործունեության նկարագրությունը նա թողնում էր մասնավոր աշխարհագրությանը, որը պետք է զբաղվեր առանձին երկրների (խորոգրաֆիա), նրանց մասերի ու առանձին վայրերի (տոպոգրաֆիա) նկարագրությամբ: Միաժամանակ նա նիշտ չեր համարում, որ նկարագրելով երկրի աշխարհագրական դիրքը, սահմանները, ներքին բաժանումը, շատ հեղինակներ անուշադրության են մատնում ընդհանուր աշխարհագրական օրինաչափությունները, ինչով և գյում են մասնավոր աշխարհագրության վարկը:

Ինչպես տեսանք, Էմպիրիկ բնագիտությունն ու մետաֆիզիկական մատերիալիզմը, դրանց հետքերով էլ՝ աշխարհագրությունը, մարդկային կյանքը և գործունեությունը գիտական քննարկմանը ենթակա ոլորտ չեին համարում:

Այդուհանդերձ, կյանքն իր նոր խնդիրներն եր առաջադրում: Այդպես թե այնպես, գիտականորեն հիմնավորված հավաստի քանակական տվյալների կարիք եր զգացում: Երկրի ու նրա մասերի բնակչության թվի, բնակավայրերի, առևտուրի և այլնի մասին տվյալները անհրաժեշտ եին դառնում պետական կառավարման, հարկային քաղաքականության և այլ խնդիրների լուծման համար: **Դա հասարակության կողմից ներկայացվող նոր սոցիալական պարզեր էր, որը պետք է կարարվեր:**

Այդ պատվերի կատարումը սկսվել է շրջանում իրենց վրա վերցրին, այսպես կոչված, «քաղաքական թվաբանությունը» և «կամերալ վիճակագրությունը», որոնք քանակական տվյալների հիման վրա ուսումնասիրում եին բնակչության և տնտեսության ամենատարբեր ասպեկտները:

Դա Էմպիրիկ բնագիտության յուրահատուկ կրկնօրինակումն էր:

Եթե Էմպիրիկ բնագիտուրյունը բնուրյան ուսումնասիրուրյունը կպրում էր մարդուց, հասարակուրյունից, ապա «քաղաքական բվարանուրյունն» ու «կամերալ վիճակագրուրյունը» հասարակական երևոյթների ուսումնասիրուրյունը նույն չեղով կպրում էին բնուրյան ուսումնասիրուրյունից:

Ընություն-մարդ հարաբերությունների մասին պատկերացումները լավագույն դեպքում գտնվում էին անտիկ պատկերացումների (Պտղոմեոս և Մյուսներ) մակարդակի վրա և սահմանափակվում էին այն հարցով, թե երկնային մարմինները և կիմայական պայմանները ինչպես են ազդում մարդկանց վարժագծի վրա: Օրինակ, ֆրանսիացի քաղաքական գործիչ ու փիլիսոփա **Ժան Բաղենը** (16-րդ դ.) և նրա հետևողը **Նարանիկ Կարպենտերը** (17-րդ դ.), որը Անգլիայում առաջին աշխարհագրական հետազոտության հեղինակն է, ընդունելով կիմայական գոտիների մասին իին հունական հայեցակարգը, ուղղակի կապ էին տեսնում մոլորակների դիրքի և մարդկանց բնավորության, վարժագծի և երկրների պետական կառուցվածքի միջև: Նրանք համարում էին, որ երկրագնդի հարավային շրջանների բնակիչները, գտնվելով **Սագուրնի** ազդեցության տակ, ապրում են կրօնական մտահայեցողականության վիճակում: Մինչդեռ հյուսիսի բնակիչները **Մարսի** ազդեցությամբ ուազմաշունչ են և տեխնիկական գյուտարարության հակում ունեն, իսկ բարեխառն գոտու բնակիչները, որոնց հովանավորում է **Յուպիտերը**, խստորեն հետևում են օրինականությանը և կոչված են առաջ տանելու քաղաքակրթությունը:

Հասկանալի է, որ նման ընդհանուր պատկերացումները, եթե նույնիսկ ճիշտ լինեին, չեին կարող բավարարել ժամանակի պահանջները, և նոր կուտակված վիթխարի փաստական նյութին համապատասխան պետք է վերանայվեին: Պետք է մշակվեր նոր մոտեցում բնություն-մարդ, բնություն-հասարակություն հարաբերություններին:

Այդ նոր մոտեցման հիմնադիր ընդունված է համարել ֆրանսիացի խոշոր փիլիսոփա ու հանրագիտակ **Շառլ Մոնտենյոն** (1589-1755թ.): Նա իր աշխատություններում (գիտակոր աշխատությունը կրում է «Օրենքների ոգու մասին» վերնագիրը) համեմատելով տարբեր աշխարհագրական պայմաններում գտնվող պետությունների օրենսդրությունները, փորձում է ցույց տալ դրանց կախվածությունը այդ պայմաններից՝ կիմայից, հողածածկություն և այլ բնական կոմպոնենտներից: **Նա համգում է այն եղակացուրյան, որ բնական միջավայրով է պայմանա-**

Վորվում երկրի զարգացման մակարդակն ընդհանրապես: Ռուսով իսկ նա հանդէս է գալիս որպես **աշխարհագրական ղետերմինիզմի** հիմնադիրներից մեկը, սոցիոլոգիական այն ուղղության, որը լայն տարածում գտավ 18-19-րդ դարերում և սկզբնական շրջանում առաջադիմական դեր խաղաց ֆեոդալակրոնական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում, այն գաղափարախոսության, որը հասարակական երևույթների աստվածային կանխորչվածություն էր քարոզում:

Ընություն-մարդ հարաբերությունների բացահայտմանն ու մարդու գոյության պայմանների վերլուծությանն են նվիրված նաև անգլիացի տնտեսագետ **Թոմաս Մայրուսի** (1766-1834թթ.) հետազոտությունները: «Փորձ ազգաբնակչության օրենքի մասին» աշխատության մեջ նա առաջ է քաշում այն միտքը, որ բնակչությունն աճում է ավելի արագ (Երկրաշափական պրոգրեսիայով), քան պարենամթերքի արտադրությունը (թվաքանական պրոգրեսիայով): Եվ բնակչության աճն ամեն անգամ նվազում է, երբ հասնում է սննդամթերքով ապահովման ներքին սահմանին. այդ ժամանակ սկսվում են պատերազմները, սովոր, համաճարակները: **Մայրուսի գլխավոր եզրակացությունն այն էր, որ երկրագունդն ի վիճակի չէ ապահովել գյուղագնդեական արդադրության այնպիսի քանակ, որ համապատասխանի բնակչության բնական աճին:**

* * *

18-րդ դարում աշխարհագրությունն ինքնատիպ զարգացման ուղի է ունեցել Ռուսաստանում: Գտնվելով հիմնականում արևմտավրոպական գիտության զարգացման հունում, ռուսական աշխարհագրական միտքը տեղական պայմանների ազդեցությամբ եացես տարբերվել է դրանից և հակադարձ դրական ազդեցություն ունեցել Եվրոպական աշխարհագրական մտքի վրա և հարստացրել այն:

Աշխարհագրության բույն զարգացումը Ռուսաստանում առաջին հերթին կապված է այդ ժամանակի մեծագույն մտածողներ **Վասիլի Տափիշևի** (1680-1750թթ.) և **Միհայիլ Լոմոնոսովի** (1711-1765թթ.) հետ:

I Մայրուսի գնառությունը և դրա հնդկորդների՝ նեոնալքուսականների հայացքները ամենախիստ բնադրագույքան են ենթարկել մարդաբազմ-լենինիզմի կրակիները, համարելով, որ նրանք ժիպում են ազգաբնակչության օրենքների պատմական բնույթը և իրենց էությամբ ռեակցիոն հետադիմական են:

Այդ ժամանակաշրջանի Ռուսաստանում տիրապետում էին Եվրոպականից տարբեր գործնական պահանջներ: Եթե Եվրոպայում գիտության գլխավոր շարժիչ ուժը, ինչպես արդեն ասվել է, ծովային նավագնայության և անդրօվկիանոսային առևտություն բավարարություն էր, ապա Ռուսաստանում՝ նոր գրավված յամաքային տարածքների տնտեսական յուրացումը: Իսկ այդ տարածքները հյուսիսում շգփում էին մինչև Բալթիկ ու Բարենսյի ծովերը, հարավում՝ Ազովի ու Սև ծովերը, արևելքում՝ Խաղաղ օվկիանոսը: Դա աշխարհի խոշորագույն յամաքային զանգվածն էր իր բազմաթիվ բնական պայմաններով ու հարստություններով՝ անապատից սկսած մինչև տունդրա:

Այդ տարածությունների յուրացումը ուղեկցվում էր ամբողջովին նոր տնտեսական-հասարակական երևույթներով, մասնավորապես աշխատանքի տարածքային բաժանումով և առանձին շրջանների արտադրական մասնագիտացումով: Այդ ամենը նոր խնդիրներ էին առաջադրություն աշխարհագրությանը: Պահանջվում էր նոր տարածքները հետագութելի բազմակողմանիորեն, իրենց ամբողջության մեջ, ընդգրկելով թե՛ բնության, թե՛ բնակչության ու աշխատանքային ռեսուրսների, թե՛ տնտեսության, տրանսպորտի, տարբեր վայրերի տնտեսական մասնագիտացման առանցնահատկությունները: Դիպուկ է ասված, որ եթե նավը հատելով օվկիանոսը իր հետևից որևէ հետք չի թողնում, ապա յամաքի յուրացման ժամանակ բնախուզը, անտառահատը, շինարարը, երկրագործը ուղղակի հակադարձ ազդեցություն են ունենում բնական միջավայրի վրա և փոխում են այն:

Տարիշներ. Ինելով բազմակողմանիորեն զարգացած և գործնական աշխատանքի հարուստ փորչի տեր անշնավորություն (պինվորական, դիվանագետ, նոր գործարաններ ու քաղաքներ կառուցող, գիտնական) և ստանլով Պետրոս Առաջինի հատուկ հանշնարարությունը, շեռնամուխ է լինում Ռուսաստանի պատմությանն ու աշխարհագրությանը նվիրված բազմահատոր աշխատության ստեղծման գործին: (Տարիշների սկսած գործը տասնամյակների ընթացքում ավարտում են նրա հետնորդները):

Տարիշների գլխավոր գիտական ավանդն այն է, որ Ռուսաստանի աշխարհագրությանը վերաբերող վիթխարի նյութ հավաքելու և համակարգելու հետ մեկտեղ, նա նոր մակարդակի բարյարացրեց աշխարհագրություն-պատմություն, այլ կերպ ասած՝ բնություն-հասարակություն հարաբերությունների վերլուծությունը: Նա առաջին անգամ պատմական

Վերլուծության ժամանակ հատուկ նշանակություն է տվել այնպիսի գործոնների գնահատմանը, ինչպիսիք են՝ աշխարհագրական դիրքը, տարածական հեռավորությունը, բնական արգելքները:

Սեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա «Ընդհանրապես աշխարհագրության և ոռուսական աշխարհագրության մասին» աշխատությունը, որտեղ նոր և շատ ավելի լուրջ հիմնավորումով, քան Վարենիոսի հիմնավորումն էր, որի մասին նա հիշատակում է, կատարում է աշխարհագրության ներքին դասակարգում: Ուշագրավ է հատկապես այն, որ աշխարհագրությունը ըստ որակական հատկանիշի նա բաժանում է երեք մասի՝ մաթեմատիկական (ըստ Եության՝ գեոդեզիայի ու քարտեզագրության), ֆիզիկական և քաղաքական (վերջինիս տակ նա հասկանում է մարդկային գործունեությունն ընդհանրապես):

Տատիշչևի կյանքի վերջին տասնամյակները համընկնում են Լոմոնոսովի գործունեության առավել բուռն շրջանին: *Լոմոնոսովի* բազմաբեղուն գործունեության մեջ (փիլիսոփայություն, ֆիզիկա, քիմիա, պոեզիա, տնտեսագիտություն, քարտեզագրություն, երկրաբանություն, գիտության ու բարյրագույն կրթության կազմակերպում. հիմնադրել է Մոսկվայի համալսարանը) առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհագրությունը:

Ցարական արքունիքից ստանալով գիտությունների ակադեմիայի աշխարհագրական դեպարտամենտի ղեկավարի պատասխանատու պաշտոնը, Լոմոնոսովը լայնածավալ աշխատանք է սկսում Ռուսաստանի Աշխարհագրական ատլասի ստեղծման և աշխարհագրական լիակատար նկարագրություն կազմելու ուղղությամբ:

Նյութեր հավաքելու նպատակով նրա կազմած «հարցաթերթիկը», որը պետք է լրացնեին լայնածավալ կայսրության բոլոր մարզերում, քաղկացած էր 30 կետից: Նրանք վերաբերում էին քննությանն ու քնական հարստություններին, քաղաքներին ու նրանց աշխարհագրական դիրքին, արեւետներին, ֆաբրիկաներին ու գործարաններին, առևտուրին, ճանապարհներին, նավագնացությանը, երկրագործությանը, անասնապահությանը, որսորդությանը: Այդ հարցաթերթիկը, ըստ Եության, կոնկրետ տարածքի կոմպլեքսային աշխարհագրական հետազոտության (տնտեսաշխարհագրական թերումով) և կոմպլեքսային աշխարհագրական ատլասի և սինթետիկ տնտեսական քարտեզների կազմման մանրամասն ծրագիր էր:

Այդ ծրագրում, ինչպես նաև մի շարք գիտական աշխատություն-

Ներում («Երկրային շերտերի մասին», «Ռուսաստանյան ժողովրդի բազմայման ու պահպանման մասին»), նա նկատելի հորեն առաջ անցավ արևմտաեվրոպական աշխարհագետներից ինչպես պատմականության կիրառման (քնական ու հասարակական երևույթների ժամանակային կարգայման վերլուծության), այնպես էլ այդ երևույթների փոխադարձ կապերի բացահայտման ու մեկնարանության քնագավառում։ Նա առաջինն էր, որ ներմուծեց «գլուխական աշխարհագրուրյուն» գերմանը, կարելորագույն նշանակուրյուն գրալով աշխարհանքի աշխարհագրական բաժանմանը և գրարածքների աշխարհագրական մասնագիրացմանը։

Տատիշչևի և Լոմոնոսովի՝ աշխարհագրական տեսության և պրակտիկայի մեջ կատարած նորամուծություններն իրենց կարգայումը գտան հետապոտողների հաջորդ սերունդների աշխատություններում։ Դրանք ավանդական դարձան որուս աշխարհագրական գիտական դպրոցի համար և համաշխարհային լայն ճանաչման արժանացան։

Ռուսական աշխարհագրությունը նույնպես գալիս էր հաստատելու այն միտումը, որ տիրապետող էր դառնում 18-րդ դարերի նվազայինը, այն է՝ գեղի էր ունենում Երկրի վրա ընթացող քնական և հասարակական երևույթների գիրական հետազոտուրյան միասնականացում, ինքնազգիա, հասունանում էր նոր իրադրուրյուն, որը պետք է պրամարանական ավարտին հասցներ միասնական աշխարհագրուրյան չեակորումը։

Այդ առաքելության իրականացումը վիճակված էր 19-րդ դարի խոշորագույն աշխարհագետներ Ալեքսանդր Հումբուլյովին և Կառլ Ռիգերին։

Սակայն աշխարհագրության մեջ հասունացող նոր իրադրության ընութագիրը կիխնի թերի, եթե, թեկուց համառոտակի, չիհշատակենք 18-րդ դարի վերջի, 19-րդ դարի սկզբի խոշորագույն մտածողներ Իմանուիլ Կանդիկ, Գեորգ Հեգելին, Ադամ Միմրին և Դավիդ Ռիկարդոյին, որոնց հայցըները մեծագույն ազդեցություն ունեցան աշխարհագրական մտքի հետագա կարգայման վրա։ Այստեղ նշենք միայն ամենագլխավորները, որոնց առնչությունը աշխարհագրությանը անմիջական է և նշանակալի։

Կանգն իր գլխավոր փիլիսոփայական աշխատություններում, ժխտելով սկզբնապատճառի աստվածաբանական գաղափարը, ապացույում է, որ երևույթի պատճառը պետք է փնտրել ժամանակագրական ա-

ոռումով դրան նախորդողի մեջ: **Ըստ էության վերջ էր դրվում մինչ այդ պիրապելող այն պատկերացումներին, որ երևոյթների հագիանիշները պրված են «ի սկզբանե», որ նրանց միջև չեն կարող լինել պատճառականքարային կապեր, որ նրանց փոփոխությունները կանխորոշված են «ի վերուսպ»:**

Կանտը, լինելով Ջյոնիզբերգի համալսարանի պրօֆեսոր, այլ առարկաների թվում ավելի քան 40 տարի դասավանդել է նաև ֆիզիկական աշխարհագրություն: Նա իր «Համընդհանուր բնական պատմությունը և երկնքի տեսությունը» աշխատության և աշխարհագրության դասախոսությունների մեջ, հենվելով զգողականության ու վանողականության հավերժական ուժերի վրա, զարգացնում է **պիեզորածնության (կումպոնիտական) գիտությունը**: Իր դասախոսությունները Կանտն ամեն տարի սկսում էր նրանից, որ հիմնավորում ու վերլուծում էր աշխարհագրության տեղը ուսումնական առարկաների շարքում: Նա գտնում էր, որ ուսումնական առարկաները (գիտությունները) կարելի է խմբավորել (դասակարգել) երկու սկզբունքով:

Առաջին. Սատ ծագման: Ծագումով միանման իրերն ու երևոյթները, անկախ նրանից, թե երբ և որտեղ են նրանք ծագել և հայտնվել, նա միավորում էր մի խմբի մեջ: Դրանք համընդհանուր երևոյթներն են, որոնք ուսումնասիրող գիտությունները ավելի ուշ, ինչպես արդեն ասվել է, ստացան **միապեսապիկ գիտություններ** անվանումը:

Երկրորդ. տարբեր որակի ու տարբեր հատկանիշներով, բայց նույն ժամանակ կամ նույն վայրում ծագած երևոյթները նա միավորում է մի այլ խմբի մեջ:

Առաջին սկզբունքը Կանտը կոչեց **գիրելիքների դրամարանական դասակարգում**, երկրորդ սկզբունքը՝ **ֆիզիկական դասակարգում**: Ֆիզիկական դասակարգման սկզբունքով առանձնացված երևոյթների նկարագրությունը ժամանակային կտրվածքով պատկանում է պատմության ոլորտին (խրոնոգիական գիտություններ), իսկ տարածքային կտրվածքով՝ աշխարհագրության ոլորտին (խորոլոգիական գիտություններ)¹:

Հեգելի մեծագույն ծառայությունը ընդհանրապես գիտությանը և դրա կազմում էլ աշխարհագրությանն այն է, որ **նրա շնորհիվ հիմնովին**

1 Ալֆրեդ Հեգելների մշակած՝ յեզ արդեն հայտնի գիտությունների դասակարգումը, որի մասին խոսվեց դասագրքի առաջին գլուխում, հիմնվում էր Կանդի այս մոդեման վրա, ուստի և կոչվեց Կանդ-Հեգելներյան:

մերժվեց մելութիղիկական մակերիալիզմի՝ բնուրյան անփոփոխ-լիուրյան մասին դրույթը և ներդրվեց զարգացման, դիալեկտիկայի գա-դափարը:

Ենչ վերաբերում է կլասիկ բուրժուական քաղաքատնտեսության ականավոր ներկայացուցիչներ Աղամ Մմիրին և Դավիդ Ռիկարդոյին, ապա աշխարհագրուրյան զարգացման վրա իոր ազդեցուրյուն են բո-դել մարդկանց գննեսական գործունեուրյան, բնօգտագործման, նյու-րական արդադրուրյան, ընդհանուր ջևով ասած՝ բնուրյուն-արդա-դրուրյուն կապերի՝ նրանց գրեսական վերլուծուրյունները:

Ամփոփելով աշխարհագրության շևավորման այս փուլի վերլու-ծուրյունը, Նշենք, որ վերածնունդի և դրան հաջորդած ժամանակաշրջա-նի (ընդհուած մինչև 19-րդ դ. սկիզբ) փիլիսոփայական, տեխնիկական, բնագիտական և տնտեսագիտական մտքի հիրավի նշանավոր նվաճում-ներն են, որ հիմք ծառայեցին 19-րդ դարի առաջին կեսին արդեն աշ-խարհագրական գիլիպուրյունների միասնական համակարգի վերջնա-կան ջևավորման համար, այն համակարգի, որտեղ արդեն ուրվագծվում են նրա ենթահամակարգերը և ավելի փոքր բաղադրիչները:

Միասնական աշխարհագրության շևավորման եւրափակից ա-րարի գլխավոր դերակալարմներն էին Ալեքսանդր Հումբուղվը, Կառլ Ռիկերը, ինչպես նաև Իոհան Թյունենը:

Ձեզ արդեն հայտնի «All possible worlds. A history of geogra- phical ideas» գրքի հեղինակներն իրենց աշխատության գլուխներից մե- կը վերնագրել են «Ավարտը և սկիզբը. Ալեքսանդր Հումբուղտ և Կառլ Ռիտեր»: Ի նկատի են ունեցել այն, որ գիտության այս երկու հսկաներով **ավարտվում է աշխարհագրուրյան՝ որպես միասնական ինքնուրույն գիլիպուրյան ջևավորումը**: Աշխարհագրությունը հասարակական լայն հա- նաչում է ստանում, իսկ նրա առաջատար ներկայացուցիչները դառնում են ամենալայն ժողովրդականություն ու հարգանք վայելող գործիչներ: **Աշխարհագրուրյունը հասնում է մի այնպիսի մակարդակի, երբ միաս- նականուրյան հետագա խորացումը և գիլիպուրյան՝ դրա վրա հենվող ա- ռաջընթացը դառնում է անհնար:** Մինչ այդ կուտակված փաստերն ու եւ- պիրիկ դիտարկումների արդյունքներն արդեն գտել են իրենց ընդհան- րացումն ու տեսական իմաստավորումը: Անհրաժեշտ էին նոր փաստեր ու դիտարկումներ, որոնք կարող են խթանել նոր տեսական ընդհանրա- ցումները և ամբողջ աշխարհագրությունը բարչրացնել նոր մակարդակի:

Իսկ նոր, խորապես փաստեր ու դիտարկումներ կարելի եր սպասել աշխարհագրության ներքին մասնագիտապման և նյուղային աշխարհագրական գիտությունների չեավորման միջոցով։ Դա արդեն նշանակում էր աշխարհագրության զարգացման նոր փուլի սկիզբը։

Այսպիսով՝ Հումքողակով ու Ռիգերով ավարտվում է կլասիկ աշխարհագրությունը և սկսում է «նոր» աշխարհագրությունը։

Ալեքսանդր Հովմբուդոս (1769-1859թթ.) և Կառլ Ռիտերը (1779-1859թթ.) նույն ժամանակաշրջանում ապրել ու աշխատել են Թեոլինում, որտեղ և մահացել են նույն՝ 1859 թվականին։ Նրանք եղել են ծանոթներ, քայլ ոչ մտերիմ ընկերներ, թեև երկուսն ել նույն ջերմեռանդությամբ ու հավատով զբաղվել են մինչ այդ հայտնի և սեփական հետազոտություններով շեռված հսկայածավալ գիտական ինֆորմացիայի **աշխարհագրական սինթեզով**։ Խիստ կարևոր է այն փաստը, որ նրանցից յուրաքանչյուրն այդ սինթեզին և միասնական աշխարհագրության հասունացմանն ու ամրապնդմանը գնացել է ուրույն, մյուսից տարբեր ուղիով։

Հումքողակը, սերելով պրուսական արիստոկրատական միջավայրից և դեռ մանկուց տնային պայմաններում ստանալով բազմակողմանի կրթություն, համալսարանական տարիներին խորացել է կլասիկ լեզուների, մաթեմատիկայի, բնագիտության, հնագիտության, բուսաբանության, երկրագիտության մեջ։ Այդ ժամանակ էլ դրսեորդվում է նրա բացառիկ հետաքրքրությունը այն ամենի նկատմամբ, ինչ տեսնում է իր շրջապատում։ Ունենալով լայն մտահորիկոն և յուրացրած լինելով Ծրբի մասին մինչ այդ կուտակած գիտական ինֆորմացիան, իր բազմաթիվ ճանապարհորդությունների¹ ընթացքում հավաքում է բացառիկ հարուստ նոր փաստագրական նյութ, որը նա ընտրում, չափագրում և հետազոտում էր նախանձելի ջանապարհությամբ ու թախնողությամբ։

Նա այսօր էլ համարվում է երքեւ եղած ամենաքեղմնավոր գիտականներից մեկը։ Նրա մտքի ու գրչի արդյունքի՝ ավելի քան 600 գիտական աշխատությունների միջով կարմիր թելի նման անցնում է **քննություն**։

¹ Ալեքսանդր Հումքողակը ժառանգություն սրացած կալվածքի, որ գրպահվում էր Օդեր գետի ափին, եկամուտքների հաշվիմ կազմակերպել և արշավարման և ճանապարհորդություններ Եվրոպայի երկրներում ու Ռուսականում, համալով միմյանց Աստրախան։ Տոնակ ու Մոնղոլիայի սահմանը։ Արևմտյան կիսազդում նա հետազորություններ է կարարել Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափերի մոլու Հարավային Անդերում։ Կորսակ և Հայիրի կղզիներում, Վենետիկայում, Էկվադորում և Հյուսիսային Անդերում։

ՐՅԱՆ ԱՄՔՈՂՋԱԿԱՆՈՒՐՅԱՆ և ԵՐԱԿՈՒՐՅԱՆԵՐԻ պալրմառականուրյան գաղափարը:

Նրա աշխատությունները Եվրոպայի, Ասիական Ռուսաստանի, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի, մթնոլորտի, ջերմային ուժի-մի, ծովային հոսանքների, վերնթաց գոտիականության, տարբեր ժողովուրդների տնտեսական գործունեության, և նրանց կողմից բնական լանդշաֆտների օգտագործման տարբերությունների մասին վիթխարի քանակության նոր գիտական տվյալներ պարունակելուց բացի, նոր մակարդակի են բարձրացնում ընդհանուր աշխարհագրական տեսական միտքը: Տեսական լայն ընդհանրացումներով հատկապես աչքի են ընկնում «Ընության պատկերներ» գիրքը և «Ժենկերը» 5-հատորյա աշխատությունը, որը նա գրել է իր երկարատև կյանքի ութերորդ տասնամյակում (Վերջին՝ 5-րդ հատորը լուս է տեսել հեղինակի մահից հետո):

Հումքություն, ըստ Էռիքյան, դրև է լանդշաֆտների մասին ուսմունքի հիմքը, դիպելով լանդշաֆտները ոչ միայն որպես կլիմայի, հողերի ու բույսերի փոխազդեցուրյան շնորհիվ գոյացած բնական մարմին, այլև հետևանք բնուրյան և մարդու դարավոր փոխներգործության: Նա առաջին անգամ իր իսկ հավաքած փաստական նյութի և կատարած դիտարկումների հիման վրա ցույց տվեց համեմատական մեթոդի նշանակությունը տարբեր երկրների ու լանդշաֆտների ընդհանուր և տարբերիչ գծերի բացահայտման ու բացատրության համար: Տարածային տարբերությունների համեմատությունը և դրանց պատճառների բացահայտումը նա համարում էր աշխարհագրության «շնորհակալ, թեև դժվարին խնդիրը»:

Հումքություն նախ և առաջ բնագետ էր, էմպիրիկ բնագիտության խոշորագույն ներկայացուցիչ: Կյանքի Վերջին տարիներին, ամփոփելով իր բազմաբնույթ գիտական գործունեության արդյունքները, նա կրկին հավաստում էր, որ ինքը նախապատվությունը տվել է «էմպիրիկ հայեցողությանը որպես... հենվում է փորձերի, չափումների և փաստերի հետապոտության վրա», միաժամանակ պատշաճ հատուցելով աշխարհագրության տեսությանն ու մեթոդաբանությանը:

Նա իր գիտական գործունեության ոլորտը չէր սահմանափակել միայն ֆիզիկական, կենսաբանական կամ հասարակական (մշակութային) երևույթների ուսումնասիրությամբ, թեև դրանցից յուրաքանչյուրի բնագավառում նրա ավանդն անվիճելի է: **Նա գիտուրյան պարմուրյան**

մեջ առաջին հերթին մտել է որպես ճշմարիկ աշխարհագեղի, որը առավել է ական էր համարում դադում ունեցող երևոյթների ու պրոցեսների փոխադարձ կապերի և փոխազդեցությունների բացահայտում ու ուսումնասիրություն:

Կառլ Ռիփերը, ի տարբերություն Հումբոլդտի, որը դեպի աշխարհագրություն եկավ մի շարք այլ գիտություններ ուսումնասիրելուց հետո, իր փայլուն կրթության հենց առաջին տարիներից կողմենորոշված էր դեպի աշխարհագրությունը և պատրաստվում էր դառնալու աշխարհագրության ուսուցիչ: Իր համալսարանական ուսումնառությունն ավարտելուց, մեծահարուստների տներում մասնավոր դասեր տալուց և մի շարք աշխատություններ, այդ թվում Եվրոպայի աշխարհագրության դասագիրքը հրատարակելուց հետո, որոնք նրան լայն ճանաչում բերեցին, Ուիտերը 1820 թ. Նշանակվում է Բեռլինի համալսարանի՝ Գերմանիայի առաջին աշխարհագրական ամբիոնի առաջին վարիչի պաշտոնում, որը նա վարում է մինչև իր կյանքի վերջը՝ 1859թ.:

Ուիտերը փայլուն դասախոս էր և գործընկերների և ուսանողության շրջանում շատ մեծ հեղինակություն էր վայելում: Նրա դասախոսությունները դեպի աշխարհագրությունն էին չգում մեծաթիվ ուսանողների, որոնցից շատերը հետազայում դարձան նրա գաղափարների ծերմեռանդ պաշտպաններ ու տարածողներ: **Բակ այդ գաղափարների հիմքում ընկած էր «բազմազանության միասնության» հայեցակարգը**, բազմականության՝ երկրագնդի մակերեսի, նրա տարածքային միավորների ու աշխարհագրական օրյեկտների: Ըստ որում, այդ բազմազանության ուսումնասիրությունը նա տեսնում էր ոչ թե տարբեր առարկաների ու դրանց հատկանիշների, տարբեր երևությունների լոկ թվարկման ու նկարագրության, այլ այն փոխարարերությունների ու պատճառական կապերի բացահայտման մեջ, որոնք ընդգծում են տվյալ տարածքային միավորի միասնությունը:

«Բազմազանության միասնության» որոնումը Ռիփերին բերեց աշխարհագրության մեջ շրջանային կոնցեպցիայի գերակայության գաղափարին: Պաշտպանելով ու վարդապելով այդ գաղափարը, նա միաժամանակ չէր մերժում աշխարհագրության մեջ կոմպոնենտային (նյուրային) խորացված հետապոտությունների կարևորությունը, որի ջատագովք Հումբոլդտն էր:

Ուիտերը, մեծագույն հարգանք տածելով դեպի Հումբոլդտը և

շթաքնելով իր հիամբունքը նրա գիտական գործունեությունից, ըստ Էության, շարունակում ու լրացնում էր նրա գործը՝ ուղղված միասնական աշխարհագրության հեղինակության բարչրացմանը և հատկապես համալսարանական աշխարհագրության՝ որպես ուսումնական առարկայի, տեղի ու դերի ամրապնդմանը: Սակայն մի սկզբունքային հարցում Ռիտերն ուղղակիորեն հակադրվում էր Հումքուղտին: Նա քննադատում էր վերջինիս այն բանի համար, որ քննարկելով ու բացահայտելով երկրային ու տիեզերական բազմաքնությ երևույթները, նա չի հիշատակում աստվածային նախախնամությունը:

Ռիտերի բոլոր աշխատությունները համակված են այն գաղափարով, որ այն ամենը, ինչ առկա է Երկրի մակերեսին, այսինքն՝ բոլոր աշխարհագրական օբյեկտներն ու երևույթները, որոշակի իմաստ ունեն: Այդ իմաստը կանխորոշված է «Ամենաքարչրյալի նախախնամությամբ» և հանգում է **Երկրի՝ որպես մարդկուրյան գրան, սրբեղծմանը**:

Ռիտերը իր գիտակոր տեսական աշխատության մեջ («Գաղափարներ համեմատական երկրագիտության մասին») զարգացնում է այն միտքը, որ քննության մեջ առկա կարգն ու ներդաշնակությունը տրված է վերուատ հանուն մարդու, որ նոյնիսկ մայրցամաքների աշխարհագրական դիրքը և ափերի գծագրությունը որոշակի իմաստ ունեն: Ասիան, որ խորհրդանշում է **արևածագը**, մարդկային քաղաքակրթության օրիանն է: Աֆրիկային համապատասխանում է **կեսօռը** նրա ափազճերը ավելի սահուն են, կլիման՝ միապաղաղ, իսկ քնակչությունը պասիվ է, քնկու և խոսափում է արտաքին շփումներից: Ծվրոպայի համար այլ ճակատագիր է կանխորոշված. նա արևմուտքը է, օրվա ավարտը, երբ մարդկության զարգացումը հասնում է իր բարչրակետին: Ամերիկայի հայտնագործում նշանավորում է **Առող արևմուտքը**, զարգացման նոր բարչրակետ, որին մշտապես զգտում է մարդկությունը: Դա այն թելեղոգիական հայեցակարգն էր, որը մինչև վերջ պաշտպանում էր Ռիտերը և որը քննադատվում էր նաև իր ժամանակակիցների կողմից:

I Հարկանշական է, որ Ռիտերի թեկնոգիական (հուն. *τελος-άναπτωσι*) հայեցակարգը իր արժագանքն է գրնուն նաև մեր օրերում՝ կապված համանորուսակային քնապապանական ճգնաժամի անձնախաղեակ սրբան հեն: Այդ ճգնաժամի հիմքը համարում են այն, որ մարդկուրյունը շեղում է ասպածային նախամանությամբ կամբորոշված աշխարհակարգից, անդեսում է մարդ-քառություն հարաբերությունների վերուսդ սահմանված իմաստը ու «նպագակը» և, ի վերջո, կարող է գնալ ինքնակիրծանան:

Այդ գաղափարը Ռիտերը հետևողականորեն վարգապնում է նաև իր գլխավոր աշխատության՝ «Երկրագիտության»¹ մեջ: Ռիտերը նպատակ էր դրել, ի մի հավաքելով ու ընդհանրացնելով մարդկության կողմից կուտակված բազմահարուստ նյութը, ստեղծել մի բազմահատոր աշխատություն, որը լնկարագրի երկրագունդն իր ամբողջության մեջ և ըստ մասերի:

Այս աշխատությունը Ռիտերը սկսել է 1822թ.: Երբ պարզ են դառնում մտահայցման վիթխարի ծավալները, 1831թ. նա հրաժարվում է իր մի շարք պաշտոններից, որպեսզի ամբողջությամբ նվիրվի սկսած գործին: Մահվանից մեկ տարի առաջ՝ 1858թ. Ռիտերը ավարտում է բազմահատորյակի 19-րդ հատորը: Զոլոր 19 հատորները ամփոփում էին միայն Աֆրիկայի և մասամբ Ասիայի բնության ու բնակչության նկարագրությունը:

Աշխարհագրության վարգապնման գործում Հումբոլդտի և Ռիտերի գիտության պատմության մասնագետների գնահատականը միանշանակ է. 19-րդ դարի այդ խոշորագույն գիտնականները Երկրի ճանաչողությունը բարձրացրին նոր՝ գիտական աշխարհագրության մակարդակին, որը հիմնվում է մի կողմից երկույթների պարզառահետքեանքային կապերի անխզելիության, մյուս կողմից՝ բնության և մարդու օրգանական միասնության վրա: Նրանք իրենցով նշանավորում են տեսանելի, բայց հեռավոր հորիզոններում գտնվող աշխարհի ճանաչելու մարդկության հավարամյա ջանքների բարձրագույն կետը, միաժամանակ ցույց տալով այն նոր հորիզոնները, որոնք պետք է մարդը նվաճի նոր գաղտնիքների բացահայտման ճանապարհին:

Հումբոլդտի և Ռիտերի հայտնաբերած նոր հորիզոնները պետք է ուսումնասիրեին աշխարհագրության մասնագիտացված հյուղերը, որոնց մեջն էլ, ինչպես տեսանք գրի առաջին բաժիններում, հասարակական աշխարհագրությունն է: Հասարակական աշխարհագրությունը աշխարհագրության մյուս ճյուղերի նման 19-րդ դարի առաջին կեսին իր սալմնային հասունացումն էր ապրում Հումբոլդտի ու Ա-իդերի «նոր» աշխարհագրության մեջ: Այդ հասունացմանը և, ի վերջո, հասարակա-

1 «Երկրագիտությունը» (կամ «Հնդկանոր երկրագիտությունը») աշխարհության կրծագ անվանումն է. լրիվ անվանումը բարգմանարար հերկյալն է: «Երկրագիտությունը բնության և մարդկային պարմության առումով կամ ընդհանուր համեմատական աշխարհագրությունը որպես ֆիզիկական և պարմական գիտությունների բնագավառում դասավանդման հուսալի հիմք»:

կան աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտական ճյուղի շնավորմանը նպաստեցին հասարակական (սոցիալական) գիտությունների, մասնավորապես քաղաքանակական բնագավառում կատարված հետազոտությունները:

Դրանց շարքում հատկապես առանձնանում են գերմանացի տնտեսագետ **Իոհան Թյունենի** հետազոտությունները, նվիրված տնտեսական օրյեկտների տարածական կապերին ու փոխհարաբերություններին՝ կախված նրանց հեռավորությունից ու փոխադարձ դիրքադրությունից:

Թյունենը խոշոր կալվածատեր էր և ուսումնասիրելով իր ընդարձակ կալվածքի տնտեսական գործունեության արդյունքները, վերուժելով բոլոր հաշվապահական փաստաթղթերը և համադրելով սեփական դիտարկումների հետ, գրեց մի աշխատություն, որը հետագայում վիթխարի նշանակություն ունեցավ ընդհանրապես աշխարհագրության և մասնավորապես տնտեսական աշխարհագրության և բոլոր այն գիտությունների համար, որոնք մաթեմատիկական մոդելավորման միջոցով ուսումնասիրում են օրյեկտների ու երևոյթների տարածական հարաբերությունները և դրանց փոխադարձ դիրքադրությունը:

Թյունենն իր աշխատությունը, որ լուս տեսավ 1826թ., անվանեց «Մեկուսացված պետությունը գյուղատնտեսության և ապգային էկոնոմիկայի հետ իր հարաբերություններում»: Հետազոտություն երկրագործության վրա հայի գների, հողի հարստությունների և հարկերի ազդեցության մասին՝ կրնատ «Մեկուսացված պետություն»: Պայմանականորեն իր կալվածքը դիտելով որպես «մեկուսացված պետություն», նա կոնկրետ հաշվարկներով ու մաքենագիրկան բանաձեռքի օգնությամբ ցույց էր փախս, թե կալվածքի կենդրումական քաղաքից ունեցած հեռավորությունից և բնական պայմաններից ու հողի թերրիությունից կախված, ինչպես է փոխական գյուղագնդեսության վարման համակարգը և մասնագիրացումը: Դա, ըստ եռթյան, Ռիկարդոյի դիֆերենցիալ ունտայի տեսության մաթեմատիկական մոդելավորումն էր:

Այսպիսով, մի կողմից՝ Հումքողիքի ու Ռիտերի բնաաշխարհագրական գաղափարները և մյուս կողմից՝ Թյունենի գնդեսաշխարհագրական գնասակերը դարձան այն անկյունաքարերը, որոնց վրա բարձրացավ հասարակական աշխարհագրության կուր ու ներդաշնակ շենքը:

ԴԱՐՁԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ շահեց աշխարհագրությունը՝ իննվելով էմպիրիկ բնագիտության նվաճումների վրա: Թվարկե՛ք էմպիրիկ բնագիտության՝ աշխարհագրության համար առավել մեծ հշանակություն ունեցող հայդռագործությունները:
2. Աշխարհագրության, հավելապես նրա մերոդարանության վրա ի՞նչ ազդեցություն ունեցավ մնացածիկական մագիերիալիզմը: Ովքե՞ր էին նրա հիմնադիրները: Նշե՛ք այդ ազդեցության դրական և բացասական հետևանքները:
3. Ինչպիսի՞ն էր էմպիրիկ բնագիտության և մնացածիկական մագիերիալիզմի վերաբերմունքը դեպի մարդկային գործունեության և ընդհանրապես հասարակության հետազոտությունը:
4. Ո՞րն է Բեռնիարդ Վարենիոսի «Համընդհանուր աշխարհագրության» գիտական արժեքը:
5. Ինչպիսի՞ն էին զիրական պատկերացումները բնույթուն-մարդ հարաբերությունների մասին 16-18-րդ դարերում:
6. Ո՞րն է աշխարհագրական դեսերմինիզմի էությունը: Ե՞րբ է այն ժագել, ովքե՞ր են դրա հիմնադիրները:
7. Որո՞նք են 18-րդ դարում Ռուսաստանում աշխարհագրության զարգացման առաջնահարկությունները (Վ. Տագիջչև, Մ. Լոնենովսկի):
8. Ներ ժամանակաշրջանի վերջին աշխարհագրական նիրքի զարգացման վրա ի՞նչ ազդեցություն ունեցան խոշորագույն մորածողներ Կանգր, Հեգելը, Ադամ Սմիթն ու Դավիդ Ռիկարդն:
9. Ո՞րն է Ալեքսանդր Հումոլովի և Կառլ Ռիփերի գլխավոր ներդրումը աշխարհագրության մեջ:
10. Ի՞նչ նմանություն ու գործերություն կարող եք գտնել Ալեքսանդր Հումոլովի և Կառլ Ռիփերի գիտական հայացքների մեջ:
11. Ո՞րն է Ինհան Թյունենի աշխագությունը: Ինչո՞վ է այն արժեքավոր աշխարհագրության համար:

21.5. ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԵՍ ԻՆՔՍՈՒՐՈՒՅՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կասարակական աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտության զևավորումը զուգահեռաբար ընթանում էր մի քանի երկրներում, բայց առավել ինտենսիվ՝ Ֆրանսիայում: Այստեղ սկսվել է աշխարհագրության նոր ուղղությունը հանդես էր գալիս «անտրոպոաշխարհագրություն» (մարդաաշխարհագրություն) անվան տակ:

Ինչո՞ւ ինենց մարդաաշխարհագրություն:

Բանն այն է, որ աշխարհագրությունը, ինչպես արդեն ասվել է, ի սկզբանե, ունեցել է **մարդակենացրոն բնույթ**, այսինքն՝ երևույթներն ուսումնասիրությունը և նրա շահերի դիրքերից, այդ երևույթներն անմիջապես մարդուն ծառայեցնելու նպատակով: Եվ երբ աշխարհագրության կողմից հետազոտվող երևույթների շրջանակը այնքան էր ընդլայնվել, որ միասնական աշխարհագրության տրոհումը դարձել էր անխոսափելի, տարանջատվող ճյուղերից մեկը սկսեց **հայկապես զրադակել մարդու կյանքի ու գործունեության, ինչպես նաև դրանք ուղղակիորեն պայմանավորող բնական ու հասարակական գործուների ուսումնահրությամբ և սպացակ մարդաաշխարհագրություն անվանումը**:

Անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի խոշրագույն ներկայացուցիչը՝ ըստ եռթյան հիմնադիրը, եղել է **Պոլ Վիդալ դը լա Բլազ** (1845-1918): Վիդալ դը լա Բլազը հետևելով Կառլ Ռիտերին, աշխարհագրության գլխավոր խնդիրը համարում էր Երկրի, որպես «**մարդության դրան**» ուսումնասիրությունը: Ըստ որում, այդ «տունը» ոչ թե պատրաստի վիճակով տրված է բնության կողմից, այլ ստեղծվում է մարդու մասնակցությամբ, կառուցվում է ինը իր՝ մարդու կողմից: Վիդալ դը լա Բլազը և Կառլ Ռիտերը ուսումնասիրության օբյեկտը՝ Երկիրը (Երկրի աշխարհագրական թաղանթը), և սուբյեկտը՝ մարդուն, քննարկում են ոչ թե առանցին-առանցին, այլ միասնականացված՝ ինտեգրացված չնույնություն:

Անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցը հենվում էր այն ելակետային դրույթի վրա, որ տարբեր վայրերում բնությունը մարդուն տրամադրում է որոշակի հնարավորություններ (ուսուրանելու ու պայմաններ): Իսկ թե ինչպես կօգտագործվեն այդ հնարավորությունները, կախված է հասարակությունից, այդտեղ բնակվող մարդկանցից, նրանց ավանդույթներից:

Անության շնչեռած հնարավորությունները երկրագնդի մակերեսին տարաքածանվում են զոնաների և վերընթաց գոտիների: Մարդկային կյանքն էլ այդ զոնաներում ու գոտիներում տարրեր է: Ըստ որում, այդ տարբերությունը պայմանավորված է ոչ միայն բնական միջավայրով, այլև հասարակության զարգացման մակարդակով, ժողովուրդների մշակութային ու եթնիկական առանձնահատկություններով: Այդ գործոնների ազդեցության տակ չենավորվում են բնակչության տարրեր կենսայն ու կրաղմունք ունեցող խմբեր, օրինակ՝ հովիվներ, ցենորսներ, դաշտավարներ, վիճականներ, լեռնագործներ, քաղաքաբնակներ:

Գիտական այս դպրոցի համար հետազոտության գլխավոր օբյեկտ է դառնում **ռեզիլինը** (տարածաշրջանը, շրջանը), որը կուական վիճակում գտնվող բնատարածք չէ, այլ արդյունք է շրջակա բնական միջավայրի և մարդկային գործունեության (մարդկային նախացեռնությունների) փոխադարձեցության:

Անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի զարգացումը կարևոր որակական առաջընթաց էր մեր գիտության ջևակորման ճանապարհին:

Անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցին հակառակում էր գերմանացի հետազոտող Ֆրիդրիխ Ռատցելի տեսությունը: Նա «անտրոպոաշխարհագրություն» անունն ընդունելով հանդերձ, հենվում էր ամբողջովին **այլ փիլիսոփայական հայեցակարգի վրա** Դա չեզ արդեն հայտնի աշխարհագրական դետերմինիզմի հայեցակարգն էր: Աշխարհագրական դետերմինիզմն ընդունում է աշխարհագրական օբյեկտների ու երևույթների, մարդկային հասարակության ու աշխարհագրական միջավայրի փոխադարձ կապերի ու փոխկախվածության օբյեկտիվ գոյությունը: Ֆ. Ռատցելը դրան ծայրահեղ մեկնաբանություն էր տալիս գտնելով, որ հասարակության զարգացումը **ամրողապես կախված** է աշխարհագրական միջավայրից:

Ֆրիդրիխ Ռատցելը իր տեսությունը շարադրել է «Անտրոպոաշխարհագրություն, կամ Երկրագիտությունը պատմության նկատմամբ կիրառելու սկզբունքները» երկիատոր աշխատության մեջ (առաջին հատորը լույս տեսավ 1882թ., երկրորդը՝ 1899թ.): Ֆ. Ռատցելի պատկերացմամբ անտրոպոաշխարհագրությունը, կամ նույնն է, թե «սոցիալական աշխարհագրությունը», կենսաաշխարհագրության մի մասն է, առավել բարդ բաղկացուցիչ մասը, որը գտնվում է բույսերի աշխարհագրության և

կենդանիների աշխարհագրության կողքին: Նա անտրոպոաշխարհագրությունը ավելի շատ կապում էր մարդաբանության ու կենդանաբանության, քան հասարակական գիտությունների հետ և փորձում էր դարվինիզմի մեթոդաբանությունը (մասնավորապես գոյության պայքարի ընթացքում կենդանի օրգանիզմների հարմարվողականությունը բնական միջավայրին) տարածել հասարակական հարաբերությունների ուսումնասիրության վրա:

Ուալրույան անդրոպոաշխարհագրությունը, ի գարբերություն ֆրանսիականի, մարդկությունը համարում էր ոչ թե սոցիալական օրգանիզմ, այլ կենսարամական էակների ընդհանուրություն, որոնք ըստ ուսայական հարկանիշների միավորվում են էրակական խմբերի ու ազգերի մեջ: Իսկ տարբեր ռասաներին ու ազգերին հատուկ են մարդկանց տարբեր ֆիզիկական վիճակներ, տարբեր ընդունակություններ, մտածելակերպ, բարոյական զգացմունքների և եպետիկական ապրումների տարբեր կարողություններ, որոնք չեն պահպանվում են բնական միջավայրի ներգործությամբ: Դրանից ել Ֆ. Ռատցելը բխեցնում էր իր այն առանցքային հիմնադրույթը, որ անդրոպոաշխարհագրությունը պետք է մարդուն հետազոտի լանդշաֆտի հետ որպես միասնական համայիր:

Ֆ. Ռատցելը անտրոպոաշխարհագրական պատկերացումները կարգացրեց 1887թ. լուս տեսած «Քաղաքական աշխարհագրություն» աշխատության մեջ: Պետությունը նա դիտում էր որպես կենսաբանական օրգանիզմ, որը պայքարում է իր կենսատարածքի համար և անընդհատ ընդարձակման է զգությում, այն պետք է ընդարձակվի կամ կործանվի:

Պատահական չէ, որ անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի և ռատցելյան անտրոպոաշխարհագրության զարգացման ուղիները շուտով բաժանվեցին և հանգեցրին բոլորովին տարբեր արդյունքների:

Ռատցելյան անտրոպոաշխարհագրությունը դարձավ այն հիմնաժարերին մեկը, որի վրա հետագայում կառուցվեց գեղագույն համար և աշխարհագրական առաջնորդ (աշխարհագրական առաջնորդությունը), մասնավորապես նրա այն ծայրահեղ տարբերակը, որը տեսական հիմք ծառայեց ֆաշիզմի նվաճողական քաղաքանության համար: Իսկ դա, ի վերջո, հանգեցրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի սանչակերծմանը:

Անտրոպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի գաղափարներն արագորեն տարածվեցին աշխարհով մեկ և խթանեցին մարդկային

հասարակության աշխարհագրական հետազոտությունների ծավալումը:
Դրամք հանդիսացան այն գիտական հիմքը, որի վրա կայացավ աշխարհագրական գիտությունների հասարակական բլոկը և չեափրվեց դրա ներկայիս կառուցվածքը (տեղի ունեցավ դրա ստրուկտորացումը):

Հատկանշական է նաև այն, որ գիտության կայացման պրոցեսը Արևմուտքում և Խորհրդային Սիությունում ու սոցիալիստական համակարգի մյուս երկրներում ընթացավ տարբեր ուղղություններով:

Արևմուտքում անտրոպոաշխարհագրությունը աստիճանաբար վերանեց մի համալիր գիտության, որն ստացավ *Humana geographia* անունը (թարգմանվում է՝ մարդու աշխարհագրություն կամ հասարակական աշխարհագրություն): Նրա կազմում ձևավորվեցին համապատասխան կառուցվածքային բաղադրամասերը՝ բնակչության աշխարհագրությունը, գնդեսական աշխարհագրությունը, սոցիալական աշխարհագրությունը, բաղաքական աշխարհագրությունը, մշակույթի աշխարհագրությունը:

Ռուսաստանում, հետազոտում և ԽՍՀՄ-ում մինչև 1930-ական թվականները գիտության նոր նյուի կարգացումը հիմնականում ընթանում էր նոյն ուղղությունում: Սակայն, երբ ԽՍՀՄ-ում մենաշնորհ դիրք գրավեց պաշտոնական մարզսիստական գաղափարախոսությունը, այդ ուղիները քածանվեցին:

ԽՍՀՄ-ում այդ գործընթացը միակողմանի կարգացում ստացավ: Սկզբում մերժվեց ընդհանրապես միասնական աշխարհագրության գաղափարը: Հասարակական երևույթները հետազոտող նյուիները սկսեցին հակադրել բնական երևույթները հետազոտող նյուիներին: Այդ երևույթը աշխարհագրության մեջ ստացավ **դուալիզմ** (լատ. *dualis* բառից-երկվություն) անվանումը: Իսկ հասարակական երևույթների շարքում բացարձակ առավելություն տրվեց հասարակական կյանքի միայն մեկ ոլորտին՝ տնտեսությանը (արտադրությանը): Մյուս՝ սոցիալական, բաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտները հայտարարվեցին աշխարհագրության իրավասությունից դուրս: Գիտությունն ստացավ «տնտեսական աշխարհագրություն» պաշտոնական անվանումը:

Պահանջվեցին տասնամյակներ, որպեսզի այդ միակողմանիությունը աստիճանաբար հաղթահարվի: Սկզբում աշխուժացան բնակչության, ավելի ուշ՝ նաև հասարակական կյանքի մյուս ոլորտների աշխարհագրական հետազոտությունները: Ակնհայտ էր դառնում, որ նոր գիտու-

թյունը չի կարող մնալ «տնտեսական աշխարհագրություն» անվան պրոկրուստան մահինում: Եվ 70-ական թվականների կեսերին արդեն «տնտեսական աշխարհագրությունը» պաշտոնապես վերանվանվեց «տնտեսական և սոցիալական աշխարհագրություն»: Ծուտով պարզվեց, որ այդ անվանումը ևս լիովին չի արտապոլում գիտության արդի բովանդակությունը, որն ընդգրկում է հասարակական կյանքի, այլ կերպ ասած՝ աշխարհագրական թաղանթի մարդուրտում կատարվող բոլոր երևույթները¹:

Դա նշանակում է, որ մեր գիտությունը, **անցնելով անդրուպոաշխարհագրություն-գննիասական աշխարհագրություն-գննիասական ու սոցիալական (սոցիալ-գննիասական) աշխարհագրություն պարզմական զարգացման ուղին, այժմ վերաճել է հասարակական աշխարհագրության:**

ՎԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. **Հասարակական աշխարհագրությունն իր ձևավորման սկզբնական շրջանում ի՞նչ անունով էր հանդիս գալիս և ինչո՞ւ:**
2. **Ո՞վ էր անդրուպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի հիմնադիրը:**
3. **Որո՞նք էին անդրուպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի հիմնական գննական դրույթները:**
4. **Ի՞նչ ընդհանուրություն և գործերություն կա անդրուպոաշխարհագրական ֆրանսիական դպրոցի և գերմանական (ռաֆցելյան) դպրոցի միջև:**
5. **Ո՞րն է «աշխարհագրական դեմքերմինիգմի» էուրոպանը:**
6. **Ի՞նչ գրեթե ունեցավ անդրուպոաշխարհագրության հետ 20-րդ դարում Արևոտքի երկրներում և սոցիալիստական երկրներում:**
7. **«Անդրուպոաշխարհագրությունը» զարգացման ի՞նչ փուլեր անցավ մինչև վերաճեց «հասարակական աշխարհագրության»:**

1 Այժմ Ռուսասփանում հասարակական աշխարհագրության գծով պաշտպանվող արենախոսությունների համար շնորհվող գիրական ասդիմանը կրում է «գննիասական սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» պաշտպանական անվանումը:

2.2. ՀԱՍՏԱԿԱՎԿԱՄ ԱՇԽԱՐԻԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դասարակական աշխարհագրություն անվանումն արդեն հուշում է նրա եռթյունը և տեղը գիտությունների դասակարգման համակարգում: Թեև հասարակական աշխարհագրական գիտությունների և բնական աշխարհագրական գիտությունների հետազոտության օբյեկտները բոլորովին տարբեր են (մի դեպքում՝ մարդուրութ, մյուս դեպքում՝ աշխարհագրական թաղանթի բնական ոլորտները), դրանք միասնական են և աշխարհագրական գիտությունների համակարգի հավասարապոր քաղադրիչներն են:

Ինչո՞ւ է հիմնավորվում դրանց միասնությունը: Նրանով, որ աշխարհագրական բոլոր գիտությունների համար գոյություն ունի. **առաջին՝ նպագրակի ընդհանուրություն, երկրորդ՝ մերդաբանական ընդհանուրություն, երրորդ՝ բարբեզզի սպեցիֆիկ գիտական լեզվի ընդհանուրություն** (այդ մասին մանրամասն տե՛ս ստորև, էջ 87-89):


Դրա հետ մեկտեղ, հասարակական աշխարհագրությունը, ըստ հետազոտության օբյեկտի, հասարակական գիտություն է: Այդ երկակիության՝ «Երկրագագացիության» պատճառով հասարակական աշխարհագրությունը տեղադրվում է աշխարհագրական գիտությունների համակարգի այն հատվածում, որը թափանցում է հասարակական գիտությունների համակարգ:

Հասարակական աշխարհագրության տեղը գիտությունների դասակարգման համակարգում ունի հետևյալ գրաֆիկական պատկերը (տե՛ս նկ. 4, էջ 82):

Ինչպես պատկերված է նկարում, աշխարհագրական գիտությունների համակարգը իր բաղադրիչի՝ հասարակական աշխարհագրության միջոցով սերտորեն առնչվում է հասարակական գիտությունների և տեխնիկական գիտությունների հետ: Հասարակական գիտությունների հետ առնչվում է, որովհետև առկա է հետազոտության ընդհանուր օբյեկտ՝ մարդկային հասարակությունը, տեխնիկական գիտությունների հետ՝ որովհետև տեխնիկայի միջոցով է հասարակությունը արտադրական գործունեություն իրականացնում և փոփոխում աշխարհագրական թաղանթը, նրա բաղադրիչները:

Հետազոտության օբյեկտ ունենալով մարդկային հասարակու-

թյունը, հասարակական աշխարհագրությունը սերտորեն համագործակցում է այդ նոյն օբյեկտը հետազոտող մյուս՝ մեծաքանակ մասնավոր գիտությունների հետ: Այդ համագործակցության ընթացքում հասարակական աշխարհագրությունը ոչ միայն օգտվում է դրանց հետազոտական մեթոդներից ու գիտական արդյունքներից, այլև ինքն է ապդում դրանց վրա:



**Նկ. 4. Հասարակական աշխարհագրության տեղը
գիտությունների դասակարգման համակարգում**

Հասարակական մասնավոր (ոչ աշխարհագրական) և տեխնիկական գիտություններից թվարկենք այն գիտությունները, որոնց հետ հասարակական աշխարհագրությունն առավել սերտ փոխազդեցության մեջ է. **Պնդեսագիրություն, սոցիալ-դնդեսական վիճակագրություն, ժողովրդագրություն, ազգագրություն, մարդաբանություն, պարմություն,**

սոցիոլոգիա, մշակութարանուրյուն, քաղաքաշինուրյուն ու շրջանային հասակագծում, արդադրության կազմակերպում ու կառավարում (մենացմնենու), բարբեր արդադրությունների վեխնողոգիաներ:

ԴԱՐՁԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Որո՞նք են հասարակական աշխարհագրական գիտությունների և բնական աշխարհագրական գիտությունների հետազոտության օրյեկտները:
2. Ինչո՞ւ այդ գիտություններն ունենալով հետազոտության միանգամայն դարբեր օրյեկտներ, միանում են նույն՝ աշխարհագրական գիտությունների համակարգի մեջ:
3. Ի՞նչն է ընդհանուր բոլոր աշխարհագրական գիտությունների համար:
4. Ինչո՞ւմ է դրսևորվում հասարակական աշխարհագրության երկակիությունը՝ «երկրագագիությունը» Բացադրե՛ք սխեմայով:
5. Հասարակական աշխարհագրությունն ինչպե՞ս է առնչվում հասարակական գիտությունների և դեխմիկական գիտությունների հետ:
6. Որո՞նք են այն ոչ աշխարհագրական մասնավոր գիտությունները, որոնց հետ հասարակական աշխարհագրության փոխադրեցությունը հարկապես ուժնել:

2.3. ԴԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասարակական աշխարհագրության արդի կառուցվածքը չնավորվել է կարգացման վերջին տասնամյակների ընթացքում: Անդ որում, **ժամանակահավածի սկզբում դիրապելող է եղել գիտությունների գործարանումը (դիֆերենցումը)**, իսկ ներկայումս **ավելի ակտիվ է գիտությունների ինդիկացումը**:

Արդեն գիտենք, որ հասարակական աշխարհագրությունը մյուս հասարակական գիտությունների հետ միասին ուսումնասիրում է մարդկային հասարակությունը, հասարակական կյանքը, այսինքն՝ միևնույն օրենսդրությունը: Այդ օրենսդրությունը սեփական կառուցվածքը, սպեցիֆիկ կողմերը, ինքնազարգացման ուրույն օրենքներն ու օրինաշափությունները:

Հասարակական կյանքի մեկ կողմի կամ դրանց որոշակի խմբերի ուսումնասիրությամբ վրադիմում են հասարակական բլոկի մասնավոր գիտությունները, դրանց թվում և հասարակական աշխարհագրությունը:

Արդեն ասվել է, որ հասարակական աշխարհագրության համար հետազոտության առարկա (օբյեկտ՝ ներ իմաստով) ծառայում է **հասարակության գործադրային կազմակերպումը ամրողությամբ կամ ըստ հասարակության առանձին բաղադրիչների և դրանց կողմերի**: Այսուեղից էլ բխում է հասարակական աշխարհագրության սկզբունքային տարբերությունը մյուս հասարակական գիտություններից: Օրինակ, եթե տնտեսագիտությունը գլխավորապես գործ ունի հասարակական կյանքի հիմնական ոլորտներից մեջի՝ տնտեսության հետ, քաղաքագիտությունը՝ քաղաքական ոլորտի հետ, սոցիոլոգիան՝ սոցիալական ոլորտի հետ, մշակութաբանությունը և հոգեբանությունը՝ հոգեսոր-մշակութային ոլորտի հետ, ապա հասարակական աշխարհագրությունը՝ այդ բոլոր ոլորտների **առանձնահատուկ կողմի՝ գործադրային կազմակերպուման հետ**:


Նույն վերաբերում է նաև բնակչությանը: Դրա, որպես հետազոտության ընդհանուր օբյեկտի ուսումնասիրությամբ վրադիմում է ժողովրդագրությունը, մինչդեռ հասարակական աշխարհագրությունն ուսումնասիրում է դրա **գործադրային կազմակերպումը**:

Այս առումով հասարակական աշխարհագրությունը հար և նման է պատմությանը: Տարբերությունն այն է, որ հասարակական աշխարհագրությունը կենտրոնանում է հասարակական երևույթների խորողոգիական (տարածական) կողմի, իսկ պատմությունը՝ խրոնոլոգիական (ժամանակային) կողմի վրա: Պարզեցված չենք կարող ենք ասել, որ եթե **պատմության համար գլխավոր են «ե՞րբ», «ինչո՞ւ», «ինչպի՞ս» հարցերը, ապա աշխարհագրության համար՝ «որդե՞ն», «ինչո՞ւ», «ինչպի՞ս» հարցերը**:

Հասարակական աշխարհագրության հետազոտության օբյեկտը՝ հասարակությունը, և առարկան՝ նրա տարածքային կազմակերպումը, բարդ, բազմաթերթ, բազմակումպնենտ և դինամիկ իրողություն են: Դրանց կարգացումը տեղի է ունենում տարածույթ բնական ու հասարակական գործոնների, ներքին ու արտաքին պայմանների, պատճառների ու հանգամանքների փոխներգործության շնորհիվ:

Հետազոտության օբյեկտի ու առարկայի կառուցվածքային առանձնահատկություններին համապատասխան ել չենավորվել է գիտության՝ հասարակական աշխարհագրության կառուցվածքը:

Այդ կառուցվածքը կարելի է գրաֆիկորեն պատկերել հետևյալ սխեմայով (տե՛ս նկ. 5):



Նկ. 5. Հասպակական աշխարհագրուրյան կառուցվածքը

Ինչպես Երևում է սխեմայից, հասարակական աշխարհագրության առաջին կարգի կառուցվածքային միավորներից 5-ը իրենց բովանդակությամբ կոմպոնենտային են: Դրանք համապատասխանում են հասարակական կյանքի ոլորտներին (սույնալական, քաղաքական, հոգևոր-մշակութային, տնտեսական) և բնակչությանը, որը հանդես է գալիս որպես հասարակական կյանքի և նրա բոլոր չորս ոլորտների կրող:

Ինչ վերաբերում է տեսական հասարակական աշխարհագրությանը, որը սխեմայում առանձնացված է, ապա դրա համար որպես հետազոտության օբյեկտ են ծառայում աշխարհագրական տարածությունը

և հասարակական գեղիամակարգերն իրենց վերացական՝ աբստրահ-ված, խիստ ընդհանրացված տեսրով: Տեսական հասարակական աշխար-հագրությունը հավասար չափով սպասարկում է հասարակական աշ-խարհագրության համակարգի բոլոր կոմպոնենտային բաղադրիչներին:

Հասարակական աշխարհագրության կառուցվածքը սրանով չի սպառվում: Դրա ամեն մի կոմպոնենտային բաղադրիչ իր հերթին բա-ժանվում է ճյուղերի, ենթաճյուղերի և ուղղությունների: Օրինակ, տնտե-սական աշխարհագրության կազմում առանցնանում են՝ արդյունաբերու-թյան աշխարհագրությունը, գյուղատնտեսության աշխարհագրությունը, տրանսպորտի աշխարհագրությունը, սպասարկող ոլորտի աշխարհ-գրությունը և այլն: Դրանք, այսպես կոչված, ճյուղային բաղադրիչներն են (համապատասխանում են տնտեսության ճյուղերին):

Սուանձնացվում են հասարակական աշխարհագրության բաղա-դրիչներ նաև նաև հետազոտության օբյեկտի (առարկայի) տարածքային ընդգրկման՝ առանցին շրջաններից, պետություններից ու տարածաշր-ջաններից սկսած մինչև ամբողջ երկրագունդը: Այդպիսիք են, օրինակ, համաշխարհային տնտեսության աշխարհագրությունը, միջազգային առևտության աշխարհագրությունը, կամ՝ Հայաստանի տնտեսության աշ-խարհագրությունը, ԱՄՆ-ի տնտեսության աշխարհագրությունը և այլն:

Կամ մի այլ օրինակ՝ բնակչության աշխարհագրությունը: Այն բա-ժանվում է բնակավայրերի աշխարհագրության, միգրացիաների աշ-խարհագրության, աշխատանքային ռեսուրսների աշխարհագրության, և այդպես շարունակ:

Ամփոփելով հասարակական աշխարհագրական գիտություննե-րի համակարգի կառուցվածքի ու դասակարգման մասին շարադրանքը, կարող ենք ընդգծել հետևյալը:

Սկսած 19-րդ դարի վերջերից, տեղի է ունեցել նախկին միասնա-կան աշխարհագրության արագացման դիմերենսումը, որը հատկապես խորացել է 20-րդ դարում: Կատարվել է նաև գիտությունների **ինդիկա-ցում միասնացում**: Ծյուղային (կոմպոնենտային) գիտությունների կող-քին ծնվել են միջնուղային համալիր գիտություններ:

Սկզբունքային նշանակություն ունի այն փասփի ընդունումը և ըմբռնումը, որ այդ ամենի հետեւանքով աշխարհագրությունը ոչ թե կորցրել, այլ ավելի է ամրապնել իր գլխավոր՝ ինտեգրող հատկանիշը: Նեռն դարասկրին Պոլ Վիդալ դը լա Բլաշը այն միտքն էր արտահայ-

տում, որ աշխարհագրությունը որպես երախտիք մյուս գիտություններից ստացած օգնության դիմաց, գիտելիքների համընդհանուր զանցարանը մուծում է իր կարողությունը՝ շմասնատել այն, ինչ բնությունը միավորել է, հասկանալ իրերի հարաբերակցությունն ու կապը ինչպես Երկրի ամբողջ մակերեսի սահմաններում, այնպես էլ դրանց տարածման առանցին շրջաններում:

Աշխարհագրությունը ոչ թե կոտորակվել է, պատառ-պատառ եղել և դադարել մեկ ամբողջություն լինելուց (ինչպես կարծում էին առանցին հետազոտողներ), այլ վերափոխվել է, ստացել նոր որակ ու բովանդակություն: Նա վերածվել է գիտությունների համակարգի՝ իր բարդ, բազմաշերտ ու բազմակոմպոնենտ կառուցվածքով:

Դիմերենցման ու ինտեգրացման հետևանքները հավասար չափով վերաբերում են նաև մասնավոր աշխարհագրական գիտություններին:

Սկզբունքային հարց է ծագում, թե ո՞րն է այն կենտրոնացիկ ուժը, որի շնորհիվ մասնավոր գիտությունները, ինչքան էլ ամրապնդած լինեն իրենց ինքնուրույնությունն ու ինչքան էլ հեռացած լինեն իրարից, այնուամենանիվ մնում են մեկ համակարգում, միասնական իմացական դաշտի շրջանակներում:

Վերևում թվարկեցինք այդ կենտրոնացիկ ուժի երեք բաղադրիչները (նպատակ, մեթոդաբանություն, սպեցիֆիկ գիտական լեզու): Այժմ քննարկենք դրանք առանցին-առանցին:

1. Աշխարհագրական գիտությունների ընդհանուր միասնական նպատակը, հետեւապես և միասնական սոցիալական ֆունկցիան: Անդհանուր չենք դա հանգում է հետեւալին. աշխարհագրությունը աշխարհայացքային ու հումանիստական (մարդակենտրոն) գիտություն է և ունի հանրակրթական, ճանաչողական ու դաստիարակչական վիթխարի ներուժ: Իր հիմնարար հետազոտություններով նա հայտնագործում է Երկրի աշխարհագրական թաղանթի և դրա ոլորտների զարգացման օրենքներն ու օրինաչափությունները և նպաստում է դրանք մարդկության շահերին ծառայեցնելուն: Աշխարհագրական գիտությունների համատեղ ուժերով է, որ հնարավոր է դառնում լուծել այնպիսի գիրագործնական խնդիրներ, ինչպիսիք են ուսցիունալ բնօգդագործումն ու մարդկային հասարակության դարածքային կազմակերպումը և քնարարածքային ու հասարակական դարածքային համակարգերի (գեղամակարգերի) կառավարումը:

2. Աշխարհագրական մոտեցումը որպես ընդհանուր մեթոդաբանական միավորող հիմք բոլոր աշխարհագրական գիտությունների համար:

Ի՞նչ է «աշխարհագրական մոտեցումը», որո՞նք են դրա հատկանիշները:

Դա քննարկենք քիչ ավելի հանգամանորեն: **Աշխարհագրական մոդեգման կամ նույնն է քե՛ աշխարհագրական մտածողության գիտվոր հաղեցամիջներն են**

ա) Տարածականություն: Դրա իմաստն այն է, որ յանկացած երևոյթ, լինի քննական թե հասարակական, ունի իր կոնկրետ հասցեն և տարածման չափերը, որոնց փոփոխությունը կարող է փոխել նաև երևոյթի քննույթը և որակը:

բ) Կոմպլեքսայնություն (համալիրություն): Դա նշանակում է, որ տվյալ օբյեկտը կամ երևոյթը քննարկվում է բոլոր ներքին ու արտաքին կապերի, բոլոր անհատական հատկանիշների և դրանց վրա ազդող գործոնների հաշվառմամբ:

գ) Կոնկրետություն: Սրա տակ պետք է հասկանալ այն, որ ամեն մի աշխարհագրական օբյեկտ ենակի է, հետևապես կոնկրետ է և ունի իր ուրույն, միայն իրեն հատուկ հատկանիշներն ու զարգացման պայմանները, որոնք այլ տեղում նույնությամբ կրկնվել չեն կարող:

դ) Համբնդիանրականություն (գլոբալություն): Սրա իմաստն այն է, որ մի կողմից հետապոտվում են ամբողջ մոլորակն ընդգրկող աշխարհագրական թաղանթն ու դրանցում ընթացող պրոցեսները, մյուս կողմից՝ ամեն մի ռեգիոնալ կամ լոկալ երևոյթ ուսումնասիրվում է նույն համամոլորակային երևոյթի կազմում և դրա համադրությամբ:

Ցանկացած հետապոտություն, եթե հավակնում է լինել **աշխարհագրական հետազողություն**, պետք է բավարարի «աշխարհագրական մոտեցման» (աշխարհագրական մտածողության) այս թվարկված պահանջները:

3. Ընդհանուր սպեցիֆիկ լեզվի՝ քարտեզի առկայությունը և գիտական եզրակացություններն ու դատողությունները **քարտեզի վրա փոխադրելու հնարավորությունը**:

Դիպուկ է հնչում խորհրդային ժամանակաշրջանի ոռու ականավոր աշխարհագետ, տնտեսական աշխարհագրության խորհրդային դըպ-

րոցի հիմնադիր Նիկոլայ Ջարանսկու խոսքերը աշխարհագրության և քարտեզի կապի մասին. «Ամեն քարտեզագրվող երևույթ չէ, որ աշխարհագրական է, բայց ինչը չի քարտեզագրվում հասդարապես աշխարհագրություն չէ»:

Իրոք, քարտեզը լինելով տարածության գրաֆիկական մոդելը, լայն կիրառություն է գտել բոլոր այն գիտություններում, որոնք գործ ունեն երևույթների տարածական օրինաչափությունների ուսումնասիրության հետ: Օրինակ, աստղագետներն ստեղծում են աստղային երկնքի քարտեզներ, երկրաբաններ՝ երկրաբանական քարտեզներ և օգտագործում են իրենց հետազոտություններում: Այլ կերպ ասած, ոչ աշխարհագրական գիտություններին հետաքրքրող շատ երևույթներ կան, որ կարելի է քարտեզագրել, սակայն դրանք աշխարհագրություն չեն: Դրանք չեն բավարրում իրենց եռթյամբ աշխարհագրական լինելու վերը շարադրված մյուս պահանջներին:

Զայյ հաստատ աշխարհագրական չի կարող լինել այն երևույթը, որը ընդհանրապես հնարավոր չէ քարտեզագրել: Իսկ հնարավոր չէ քարտեզագրել այն երևույթը, որը չունի տարածական դրսնորում, հետևապես աշխարհագրության հետաքրքրությունների ոլորտից դուրս է գտնվում:

ՎԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ինչի՞ հետևանքը է գիտությունը չնոր բնորում ներքին կառուցվածքայնություն:**
Ինչպես են դրա վրա ազդում գիտության դիմերենցումը և ինքնարացումը:
2. **Ի՞նչ կապ գոյություն ունի հասարակական աշխարհագրությամբ որպես
առանձին գիտության կառուցվածքի և նրա հետագործության օրյեկտի
կառուցվածքի միջև:**
3. **Ո՞ր է հասարակական աշխարհագրության սկզբունքային դարրերությունը
մյուս մասնավոր հասարակական գիտություններից:**
4. **Ինչո՞վ է հասարակական աշխարհագրությունը նմանվում պատմությանը և
ինչո՞վ է գարրերվում նրանից:**
5. **Ինչպես է գրաքիերեն պատկերվում հասարակական աշխարհագրության
կառուցվածքը:**
6. **Ինչո՞ւ գենական հասարակական աշխարհագրությունը առանձնացվում է
հասարակական աշխարհագրության կոմպոնենտային (ճյուղային) բաղադրիչ
ներից:**

7. Ո՞րն է այն կենցորդացիզ ուժը, որը աշխարհագրական գիտուրյունները պահում է մեկ ամբողջությամբ՝ միասնական համակարգի մեջ:
8. Ո՞րն է աշխարհագրական գիտուրյունների ընդհանուր միասնական նպատակը և միասնական սոցիալական ֆունկցիան:
9. Ի՞նչ է ճշգնակում «աշխարհագրական մովեցում», որը աշխարհագրական գիտուրյունները միավորող մերոդարձանական հիմքն է: Թվարկե՛ք և վերլուծե՛ք դրա հարգեանքիները:
10. Ինչպիսի՞ն է աշխարհագրության և քարտեզագրության կապը: Ինչպե՞ս է այն նպատակ աշխարհագրական գիտուրյունների միասնությանը:

2.4. ՎԱՍՏԱՐԱԿԱՎԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վասարակական աշխարհագրությունը աշխարհագրական համակարգի մյուս գիտությունների հետ մեկտեղ ի սկզբանե քավարաբել է մարդկանց ընական մղումը՝ ճանաչելու շրջակա միջավայրը, մերձակոր ու հեռակոր հարևաններին: Ինչպես արդեն ասվել է, դեռևս միասնական աշխարհագրությունը, Հերոդոտոսից, Էրատոսթենեսից ու Ստրաբոնից սկսած, իր ուշադրության կենտրոնում ունեցել է ժամանակի հայտնի աշխարհի ոչ միայն ընությունը, այլև պետությունները, դրանց ժողովուրդներին, նկարագրել է տիրող հասարակարգը, քնակչության գրադարանը, սովորությունները, ներմուծվող ու արտահանվող ապրանքները, զորքը: ճանապարհորդներն ու զորապետերը այդ ամենի մասին հավաքել են տվյալներ և փոխանցել սեփական իշխանություններին:

Կյանքի պահանջներին և մարդկային իմացության առաջընթացին համապատասխան, հատկապես 19-րդ դարից սկսած, երբ հասարակական աշխարհագրությունը չնավորվեց որպես գիտության ինքնուրույն ճյուղ, ավելի քարդացան ու միաժամանակ կոնկրետացան նրա խնդիրները: Հասարակական կյանքի տարածքային տարբերությունները նկարագրելուց, երկրների ու ժողովուրդների մասին ինֆորմացիա տալուց քայի, այն սկսեց քացահայտել այդ տարբերությունների պատճառները, վերլուծել ու գնահատել դրանք:

Աշխարհագրական բոլոր գիտությունների, ի թիվս դրանց և հասարակական աշխարհագրության նկարագրական-տեղեկատվական և վերլուծական ֆունկցիան դեռ այսօր էլ պահպանում է իր նշանակությունը: Զայս դա արդեն բավարար դիտվել չի կարող: **Կյանքը նոր, շատ ավելի բարդ խնդիրներ է դնում աշխարհագրական գիտությունների առջև, խնդիրներ, որոնք կապված են երկրագնդի վրա ընթացող հասարակական նոր երևույթների, մարդ-բնույթուն հարաբերությունների նոր մակարդակի և հասպատված նոր աշխարհակարգի հետ:**

Աշխարհագրության առջև ծառացած նոր խնդիրները, որ զնակերպվել են ԱՄՆ գիտությունների ազգային ակադեմիայի «Աշխարհագրության վերահայտնագործման հանչյաժողովի վեկույցում», ընդհանուր զնուկ քննարկվել են դասագրքի 1.2 գլխում (էջ 18-23): Այդ խնդիրները ընդհանուր են աշխարհագրական բոլոր գիտությունների համար և պետք է լուծվեն դրանց համատեղ ջանքերով: Զայս և միաժամանակ աշխարհագրական գիտությունների ամեն մի ճյուղ ընդհանուր խնդիրների լուծման գործում իր դերն ունի և զուգահեռաբար՝ իր ուրույն խնդիրները: Եվ դա բնական է: Երկրագնդի վրա նոր փոփոխությունները տրուվի են ազդում աշխարհագրական գիտությունների յուրաքանչյուր ճյուղի հետապոտության առարկայի (օբյեկտի) վրա, այդ պատճառով էլ նրա առաջ ծագած նոր խնդիրներն ունեն սպեցիֆիկ բնույթ:

Ո՞րն է այդ նորը, որ լրացուցիչ խնդիրներ է առաջադրում հասարակական աշխարհագրությանը:

1. Գիտատեխնիկական առաջադիմության վիրխարի նվաճումները, որոնց շնորհիվ հասարակությունը աշխարհագրական թաղանթի վրա երկրաբանական գործոնին համապոր գործոն է դարձել: Անօգտագործման հարածուն տեմպերի և բնության վրա մարդու ներգործության անընդհատ հզորացման պայմաններում ակնհայտ է դարցել շվերականգնովող բնական ռեսուրսների սպառման և բնական միջավայրի դեգրադացիայի հարածուն վտանգը: Գիտնականները կանխատեսում են, որ եթե մարդ-բնություն հարաբերության բովանդակությունը էական փոփոխության շենթարկվի, և բնական ռեսուրսների սպառման տեմպերը մեծան նույնը, ապա 100-150 տարի անց Երկիր մոլորակն այլևս պիտանի չի լինի մարդկանց բնակության համար, այն կարկվի «մարդկության ընդհանուր տան» հատկանիշներից:

2. 19-րդ դարի վերջերից սկսած համաշխարհային տնտեսություն-

Աք ճևավորվել է որպես մեկ միասնական համակարգ: Վիթխարի ծավալներ է ընդունել համաշխարհային առևտուրը: Ստեղծվել են համաշխարհային տրանսպորտային և ինֆորմացիոն համակարգեր: Անսահմանորեն մեծացել են վերազգային կորպորացիաների ու ընկերությունների գերն ու Նշանակությունը: Այժմ ցանկացած լուր և ինֆորմացիա բողեների ընթացքում կարելի է հաղորդել երկրագնդի ցանկացած կետ: Իսկ օդագնայության վարգացումը հնարավորություն է տալիս մի քանի ժամում կրտրել-անցնել աշխարհի մի ծայրից մյուսը: Տեղի է ունենում ողջ հասարակական կյանքի արագացած գլոբալացում:

Այդ ամենը նշանակում է, որ կորուկ փոխվել են մեր գործածական ու ժամանակային հնարավորությունները ու պատկերացումները: Կարծես թե Երկիր մոլորակը և դրա հետ մեկտեղ աշխարհագրական թաղանթը սեղմվել են, փոքրացել, կրծատվել են տարածությունները: Թվում է, թե սեղմվել, կրծատվել է նաև մարդուրուտում կատարվող երևույթների ժամանակը:

Չա նշանակում է նաև, որ անսահմանորեն մեծացել է մարդկության թե՛ կոմպոնենտային բաղադրիչների՝ հասարակական կյանքի ոլորտների, և թե՛ տարածական բաղադրիչների՝ պետությունների, ժողովուրդների, ազգերի փոխկախվածությունը: Այժմ աշխարհի նույնիսկ հեռավոր անկյունում կատարվող ցանկացած, շատ թե թիշ նշանակալի երևույթ իր անմիջական արշագանքն է գտնում ամբողջ աշխարհում, չեղոք է բերում միջազգային նշանակություն, դրանից բխող բոլոր հետևանքներով: Հիշենք, թեկուց, 1988թ. Սահիտակի ավելիշ երկրաշարժը, նախկին Խորհրդային Միության փլուզումը և միութենական հանրապետությունների անկախացումը, Իրաքի կողմից Զուվեյթի անեքսիան, Ղարաբաղյան հակամարտությունը, Կասպիչ ծովի նավթամթերքների օգտագործումը, Կոսովոյի հակամարտությունը: Այդ և նման բնույթի բոլոր իրադարձություններն անմիջապես դուրս են գալիս տեղական սահմաններից և չեղոք են բերում տարածաշրջանային և համամոլորակային նշանակություն: Դրանք արագորեն միջազգայնացվում են:

3. Ժողովրդագրական հեղափոխությունը նույնպես նոր երևույթ է մարդկային հասարակության պատմության մեջ և նոր պահանջներ է ներկայացնում նաև աշխարհագրությանը:

Ծողովրդագրական հեղափոխության շնորհիվ այժմ՝ 20-րդ դարի վերջին, աշխարհի բնակչությունն ընդամենը մեկ տարվա ընթացքում

ավելանում է այնքանով, ինչքանով ավելացնել է մեր թվարկության առաջին հազար տարիների ընթացքում: Այժմ արդեն մեր մոլորակը դժվարությամբ է կերակրում աշխարհի 6 մլրդ բնակչությանը (ՄԱԿ-ի պաշտոնական տվյալներով շուրջ 1.5 մլրդ մարդ թերսնվում է):

Ծագչության թվաքանակի ու խտության աճին գումարվում է նյութական արտադրության ընդհանուր ծավալի, հետևապես և խտության աճը: Դրա արդյունքում վտանգավոր տեմպերով մեծանում է աշխարհագրական միջավայրի ինչպես բիոտիկ, այնպես էլ արիոտիկ թաղանթների վրա մարդու ննշումը:

Այժմ բնական միջավայրի վրա անտրոպոգեն ապդեցության ընդամենը 1 տարվա հետևանքները հավասարապոր են նախորդ 1 հազարամյակում կուտակված հետևանքներին:

Այս բոլոր տվյալները երկրագնդի միջինայգած պատկերն են միայն արտապոլում: Իրական վիճակը շատ ավելի բարդ է, հակասական ու տագնապալի:

Ծագական է ասել, որ աշխարհի բնակչության 70%-ը բնակվում է ցամաքի ընդամենը 7% կազմող տարածքի վրա: Հասկանալի է, որ այդտեղ էլ տեղի է ունենում բնական ռեսուրսների ամենաինտենսիվ շահագործումը և մարդու ամենամեծ միջամտությունը շրջակա բնական միջավայրին:

4. Մարդկային հասարակությունը չեղք է բերել անհամենագեղի բարդ կառուցվածքը ու ներքին բազմազանությունը: Աշխատանքի հասարակական բաժանման անընդհատ խորացման շնորհիվ հազարների են հասել տնտեսության բնագավառները, նյուտերն ու ենթաճյուղերը, մարդկանց մասնագիտություններն ու մասնագիտացումները: Դրան համապատասխան խորացել է աշխատանքի աշխարհագրական բաժանումը. այժմ հազարներով են հաշվվում հասարակական գեղիամակարգերը՝ տարբեր մակարդակի տնտեսական շրջաններն ու մասնագիտայգած տարածքները:

Ընդամենը 200 տարի առաջ աշխարհի պետությունների թիվը չեր հասնում նույնիսկ 3 տասնյակի, այսօր այն գերազանցում է 200-ին: Այժմ մարդկությունը բաժանված է 5000 ազգերի, բազմաթիվ կրոնների ու քաղաքակրթությունների:

Հարաճուն տեմպերով աճում է բնակչության ուրբանիզացումը: Ավելի արագ աճում են խոշոր քաղաքները: Եթե պայմանականորեն քա-

ηար համարենք 5000 և ավելի բնակչություն ունեցող բնակավայրերը¹, ապա 1800թ. քաղաքային բնակչությունը կազմել է աշխարհի բնակչության 3%, իսկ 100-հազարանոց և ավելի խոշոր քաղաքների բնակչությունը՝ ընդամենը 1.7%: Այժմ, ընդամենը 200 տարի անց, այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաքար՝ 50% և 40%: Մեր դարի սկզբին աշխարհում կար 1 մլն-ից ավելի բնակիչ ունեցող ընդամենը 10 քաղաք, ներկայում՝ ավելի քան 400 քաղաք, այդ թվում՝ երկու տասնյակը առավել խոշորներն են՝ յուրաքանչյուր 10 մլն և ավելի բնակչությամբ:

Ակնհայտ է, որ մեր՝ **մարդաբնակ մոլորակն արագործեն վերածվում է քաղաքների մոլորակի:** Անդ որում, այդ քաղաքների 80%-ը կենտրոնացված են ծովափերին կամ մերձծովյան շերտում: Սա պետք է համարել նրկրի վրա բնակչության արդի տեղաբաշխման, հետևապես և մարդկային հասարակության տարածական կառուցվածքի շատ կարևոր հատկանիշը:

Այսպիսով, տեղի է ունենում մի կողմից քավմազանության խորացում, մյուս կողմից՝ միասնացման ուժեղացում: Այդ ամենի արդյունքում խիստ բարդացել է մարդուրոտի կառուցվածքը, անսահման շատացել են մարդկային հասարակության ներքին կապերը, դրանք դարձել են ավելի տարաբնույթ ու քավմաբովանդակ:

Վերլուծելով մարդկային հասարակության՝ որպես չափազանց բարդ համակարգի վերը նշված հատկանիշները և պարզացման արդի միտումները, գիտնականներն եկել են այն եվրակացության, որ **մարդկության գոյուրյան և զարգացման միջև այժմ գործող սկզբունքները և զարգացման ուղղությունը չեն կարող ապահովել նրա գոյագելումը,** առավել են՝ **հեռանկարային զարգացումը:**

Կարելի է հանգել խիստ սկզբունքային եվրակացության, որ ժամանակակից գիտությունը, շնանաշելով ամբողջ խորությամբ երկրագնդի աշխարհագրական թաղանթը և դրա ինքնազարգացման ու ինքնակարգավորման օրինաչափությունները, դեռևս ի **վիճակի չէ կարգավորել դրանք և օգտագործել ի նպաստ մարդկության:**

1 Հայրենի է, որ բնակավայրը քաղաք համարելու միասնական չափանիշնը գոյություն չունեն: Օրինակ, Դամբայում բնակավայրը քաղաք է համարվում, եթե բնակչության թիվը գերազանցում է 250 մարդուց, մինչդեռ Ծապոնիայում դրա համար նվազագույնը պահանջվում է 30 հազ. մարդ: ՄԱԿ-ի չափանիշներով քաղաքը է համարվում 20 հազ. բնակիչ ունեցող բնակավայրը:

Գիտությունը դեռևս անկարող է բացահայտել ու գնահատել քնական և հասարակական բազմարնույթ երևույթների ուղղակի և միջնորդավորված, ուղիղ ու հակադարձ կապերը և կանխատեսել այն բոլոր հետևանքները, որոնք կարող են երևան գալ այդ կապերը խախտելու, աշխարհագրական բաղանքի ինքնազարգացման ու ինքնակարգավորման մեխանիզմներն ու օրինաչափությունները շնանաշելու կամ անտեսելու, դրանց անխոհեմ միջամտելու պատճառով:

Ասվածը հավասար չափով վերաբերում է նաև հասարակական աշխարհագրությանը:

Արդեն նշվել է, որ հասարակական աշխարհագրությունը մյուս աշխարհագրական գիտությունների նման արդեն հաղթահարել է իր զարգացման սկզբնական՝ նկարագրական-տեղեկատվական և վերլուծական փուլերը և թեակոխում է նոր՝ կոնստրուկտիվ գիտություն դառնալու փուլը:

Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հասարակություն-քություն ավանդական հարաբերությունները մոտեցել են կրիտիկական սահմանագծին, իսկ հասարակական կյանքը դարձել է չափավանց անկայուն ու պայթյունավտանգ:

Հասել է այն պատմական պահը, երբ մարդկային միզորը պետք է բարոյակերիկական նոր հիմքի վրա գրնի այն իրական ուղիները, որոնք ոչ միայն չեն խախտում աշխարհագրական բաղանքի ինքնազարգացումն ու ինքնակարգավորումը, այլև դրանում ընթացող երևույթները դարձնում են կառավարելի:

Իսկ երևույթները, առավել ևս հասարակական կյանքում ընթացող բազմարնույթ ու բացառիկ բարդ երևույթները կառավարելի կղաղնան միայն այն դեպքում, եթե գիտությունը լիովին ճանաչել ու գնահատել է դրանց եռությունը, ներքին մեխանիզմները, ներքին ու արտաքին բազմարնույթ կապերը: Այսինքն՝ եթե ապահովել է յուրաքանչյուր երևույթի բազմակողմանի համայիր հետազոտությունը:

Սա ընդհանուր գերխնդիր է բոլոր աշխարհագրական գիտությունների համար:

Հասարակական աշխարհագրության խնդիրները ընդհանուր գերխնդիր համեմարտությամբ ավելի կռնկնելի են ու բխում են գիտության այդ ճյուղի հիմնարար նպատակից, այն է՝ հասարակության դրամածրային կազմակերպման օրինաչափությունների բացահայտումն ու կառավարումը:

Հասարակական աշխարհագրության արդի խնդիրները կարելի է քաժանել երեք խմբի.

Առաջին. Խնդիրներ, որոնք ընդհանուր են մարդու օրտի, մարդկային հասարակության տարածքային կազմակերպման համար՝ անկախ տեղիս ու ժամանակից: Այդ խնդիրների հետապոտությամբ զբաղվում է տեսական հասարակական աշխարհագրությունը, որը հասարակական աշխարհագրական երևույթները հետապոտում է ընդհանուր, գլխավորապես արսուրահված, վերացարկված չնով և մշակում է աշխարհագրության մեջ ընդհանուր գիտական մեթոդաբանության (համակարգային մուտքաման, մաթեմատիկական մեթոդների, ինֆորմացիայի տեսության և այլն) կիրառման տրամաբանական հիմունքները:

Երկրորդ. Խնդիրներ, որոնք ծագում են մակրոմակարդակով, այսինքն՝ ընդգրկում են համայն մոլորակը:

Երրորդ. Խնդիրներ, որոնք ընորոշ են մեկում ակարդակի (ընդարձակ շրջանների՝ աշխարհամասերի, տարածաշրջանների, խոշոր պետությունների) և միկրոմակարդակի (համեմատաբար փոքր պետության, տնտեսական շրջանի, քաղաքի և այլն) համար:

Գծվար չեն նկատել, որ, ի տարբերություն առաջին խմբի խնդիրների, որոնցով զբաղվում է տեսական հասարակական աշխարհագրությունը, երկրորդ և երրորդ խմբի խնդիրները առնչվում են կոնկրետ տարածքների, կոնկրետ հասարակական գետհամակարգերի հետ և **պարկանում են ոեզրոնալ հասարակական աշխարհագրության ոլորտին:**

Սա բավականին ընդարձակ ու ինքնուրույն հարց է, որը հատուկ քննարկման կարիք ունի:

Մարդու օրտը, հետևապես և մարդկային հասարակությունն իր միասնականությամբ և ընդհանուր օրենքներով ու օրինաշափություններով հանդերձ, ինչպես գիտենք, աշքի և ընկնում տարածական բացառիկ բազմազանությամբ: Այդ բազմազանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկային հասարակության տարածական միավորները՝ գետհամակարգերը, սկսած առանցին բնակավայրից, շրջանից, պետությունից և ավարտած ընդարձակ տարածաշրջաններով ու ամբողջ մարդու օրտով, բացառապես ինքնատիպ, եզակի օբյեկտներ են, որոնք ունեն միայն իրենց հատուկ վարգային պայմաններն ու հատկանիշները: Դրանք իրարից տարբերվում են ոչ միայն որակապես՝ իրենց բովանդակությամբ, կառուցվածքով, ներդին ու արտաքին կապերով, այև քանա-

կապես (տարածական ընդգրկմամբ): Դրանք իրարից տարբերվում են, ի-հարկե, նաև զարգացման հասունության մակարդակով, որը փոխվում է ժամանակի ընթացքում: Դա նշանակում է, որ աշխարհագրական օրյեկտի համարի (հետևապես՝ լիարժեք) հետազոտության համար տարածային չափերից (մակերեսի մեծություն և բարձրություն) բայի, **անհրաժեշտ է դառնում օգտագործել չափման մի կոռորդինատ և սամանակի կոռորդինատը, և օրյեկտը դիմացն ու զարգացման մեջ:** Եթե որ զարգացման շնորհիվ է չեղք բերվում հասունության որոշակի մակարդակ:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր կոնկրետ աշխարհագրական օրյեկտի հետազոտության խնդիրները պետք է բխեն այն կոնկրետ ներքին ու արտաքին իրադրությունից (քնական, տնտեսական, ժողովրդագրական, քաղաքական և այլն), որում տվյալ ժամանակահատվածում գտնվում է հետազոտվող օրյեկտը, այն հիմնախնդիրներից, որոնց լուծումը տվյալ օրյեկտի համար այսօր արդեն կենսական անհրաժեշտություն է կամ հեռանկարային նշանակություն ունի:

Սակրումակարդակի հետազոտական խնդիրների շարքում համեմատաբար նոր ու բավմարնույթ են մարդկության համամոլորակային հիմնախնդիրները, որոնց դուք ծանոթ եք դեռևս դպրոցական աշխարհագրության դասընթացներից: Այդ հիմնախնդիրներն ունեն միջնորդային, համալիր բնույթ և հետազոտության օրյեկտ են ծառայում բավականին մեծ թվով քնական, հասարակական և տեխնիկական գիտությունների համար:

Աշխարհագրությունն ընդհանրապես և **հասարակական աշխարհագրությունը մասնավորապես՝ լինելով սահմանային, սինքրեզող գիրուրյուն, առանձնահապուկ դեր ունի կարարելու այդ հիմնախնդիրների հետազողության գործում:**

Օրինակ, **բնական միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ուղիղնալի օգտագործման համամոլորակային հիմնախնդիրը** ծագել է այն ժամանակ, երբ աշխարհագրական քաղանթում ամբողջությամբ վերցրած կամ դրա առանձին հատվածներում (ուեգիններում) խախտվել է տարբեր ուղրուների ու կոմպոննենտների միջև նյութափոխանակության միջինավոր տարիների ընթացքում հաստատված հավասարակշուղթությունը:

Այդ հավասարակշուղթյան խախտման գլխավոր պատճառը, ինչպես գիտենք, մարդու արտադրական գործունեությունն է:

Ներկայումս հասարակական աշխարհագրության առջև ծառացած հրատապ խնդիր է՝ բարելավել, կատարելագործել արտադրության և բնօգտագործման տարածական կազմակերպումը դրա բոլոր մակարդակներով (մակրո, մեզո, միկրո) և նպաստել մարդկության ճակատագրի համար կարևորագույն նշանակություն ունեցող այդ հիմնախնդիրի լուծմանը:

Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը նույնական պես ունի իր աշխարհագրական բովանդակությունը: Այն տարբեր կերպ է դրսարձում տարբեր աշխարհամասերում ու երկրներում: Եթե աշխարհի մի մասում շարունակվում է «ժողովրդագրական պայթյունը», և բնակչությունն աճում է շատ բարձր տեմպերով (օրինակ՝ արարական երկրներում բնակչության թիվը կրկնապատկվում է յուրաքանչյուր 25-30 տարում), մյուս մասում առկա է «ժողովրդագրական ճգնաժամը»: Խախտված է բնակչության վերարտադրությունը, տեղի է ունենում բնակչության բացարձակ թվի կրծատում և ընդարձակ տարածքների դեպոպուլյացիա (ապաքնակեցում): Նոր թափ են առնում բնակչության միգրացիոն շարժումները, կարծես թե կրկնվում է ժողովուրդների «մեծ գաղթը», բայց բազմապատիկ մեծ մասշտաբներով:

Հասարակական աշխարհագրության առջև կանգնած կոնկրետ խնդիրներից է՝ հետազոտել այդ երևույթները, բացահայտել դրանց պատճառները, կապերն ու առնչությունները բնածին և տնտեսական, սույնական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ երևույթների հետ, օգնել մեղմացնելու դրանց բացասական հետևանքները (բավական է նշել թեկուց այն փաստը, որ միայն փախստականների ու բռնագաղթածների թիվն այսօր աշխարհում տասնյակ միլիոնների է հասնում):

Զավմաթիվ են ուրբանիզացման երևույթի հետ կապված աշխարհագրական խնդիրները:

Օափական բարդ ու տարեցտարի սրվող համամոլորակային հիմնախնդիր է **պարենային ռեսուրսների անբարարությունը**: Այն կապված է մի կողմից՝ երկրագնդի բիոտիկ և հողային ռեսուրսների ոչ ռայինալ օգտագործման, պահպանման ու վերականգնման, լանդշաֆտների վերափոխման, անապատացման, հողերի դեգրադացիայի, օդային ու ջրային ավագանի թունավորման, մյուս կողմից՝ հասարակական կյանքի կազմակերպման արատների հետ: Այդ բոլոր հարցերն ունեն

սուր արտահայտված աշխարհագրական բնույթ և կարող են լուծվել հասարակական աշխարհագրության ամենագործուն մասնակցությամբ միայն:

Զարդ խնդիրների մի թնջուկ է իրենից ներկայացնում **համաշխարհային գննդեսուրյան գործաժքային կառուցվածքի կալարելագործումը**, միջազգային փոխահավետ առևտորի ապահովումը, թույլ զարգացած երկրների հետամնացության և աղքատության վերացումը: Այդ խնդիրները նույնպես իրենց բնույթով ու բովանդակությամբ աշխարհագրական են, որոնցով զբաղվում են շատ երկրների բազմաթիվ աշխարհագրական հետապոտական կենտրոններ և միջազգային կազմակերպություններ:

Այժմ քննարկենք **հասարակական աշխարհագրուրյան խնդիրների երրորդ խումբը՝ մեզո և միկրոմակարդակների հետազոտական խնդիրները**, որոնք շատ ավելի բազմազան ու մեծաթիվ են, քան առաջին երկու խմբերինը: Դրանց բոլորի վերլուծությունը հնարավոր չէ, ուստի ծանոթանանք մի քանիչին Հայաստանի Հանրապետության օրինակով:

Ծխորանալով Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին ներկայիս ընդհանուր իրադրության մեջ, որը քավարար մակարդակով հայտնի է չեկ, և ենելով մեր գիտության ընդհանուր նպատակից, որի մասին արդեն ասվել է, այդ խնդիրները նույնպես կարելի է բաժանել 3 խմբի:

Առաջին. խնդիրներ, որոնք վերաբերում են **հասարակուրյունը բնուրյուն փոխարարերուրյունների, դրանց միջև ուղիղ և հակադարձ կապերի քարելավմանը**: Այս խնդիրների մեծ մասը միջնյուղային (միջուկասիպի հնար) բովանդակություն ունեն: Դրանց հետապոտումը կարող է հաջողությամբ պահպել աշխարհագրական համակարգի տարբեր գիտությունների, ի թիվս դրանց՝ հասարակական աշխարհագրության համատեղ ջանքերով:

Այդպիսի խնդիրներից կարելի է առանձնացնել.

- **բնական ռեսուրսների ու պայմանների գննդեսական** (արտադրական ու տեխնոլոգիական) **գնահարումը**, որը հնարավորություն է տալիս իրական պատկերացում ունենալ մեր քնատարածքի հնարավորությունների (տնտեսական ներուժի) մասին և ճիշտ որոշել օգտագործման հեռանկարային ուղղությունները.

- **գործաժքի և նրա գործեր մասերի ռեկրեացիոն ներուժի ու**

բոշումը, որի ընթացքում հաշվի են առնվում ոչ միայն բնական համալիրի առանցնահատկությունները, այլև պատմամշակութային հարստությունները և արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի վիճակն ու զարգացման հեռանկարները.

• **գրարաժիր և նրա գրարեր մասերի էկուոգիական իրադրության վերլուծությունն ու գնահապումը**, մարդկանց արտադրական գործունեության տարբեր բնագավառների դերի բացահայտումը և վիճակի բարելավման կոնկրետ ուղիների որոշումը.

• հասարակություն-բնություն փոխադրեցության շնորհիվ գոյացած **գեղամակարգերի բացահայտումը և հեղազուրումը դրանք կառավարելու նպատակով**: Դա կատարվում է բնական միջավայրի համար կամ ըստ կոմպոնենտների շրջանացման շնորհիվ՝ հաշվի առնելով միջավայրի տեխնոգեն բաղադրիչը:

Երկրորդ խնդիրների, որոնք **անմիջականորեն առնչվում են հասարակության գրարաժրային կառուցվածքի կարգելագործմանը** և պետական ոեգիոնալ քաղաքականության գիտական հիմքերի ամրապնդմանը:

Այս խնդիրների շարքում մեր երկրի զարգացման արդի փուլում առաջնահերթ նշանակություն ունեն.

• հասարակության կառուցվածքի **գրարաժական վերլուծությունը և սոցիալ-դրամական զարգացման գրարաժրային անհամանությունների բացահայտումը**, դրանց մեջմացման կամ վերացման ուղիների որոշումը:

• **ՀՀ գարշադարձական շրջանացման սինեմայի (գարշադրաժրային բաժանման) կարգելագործումը**, նպատակ ունենալով այն առավելագույն մոտենալի հասարակության օբյեկտիվորեն չնավորված տարածքային կառուցվածքին:

• **ՀՀ գարշական մարզերի համալիր զարգացման կանխադեսումների ու ծրագրերի մշակումը**:

Երրորդ. հասարակության առանցին քաղադրիչների՝ բնակչության, արտադրության, ենթակառուցվածքի, սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային ոլորտների տարածքային կազմակերպման բարելավման հետ կապված խնդիրներ: Օրինակ, բնակչության աշխարհագրության բնագավառում առաջնահերթ է համարվում տարաքնակեցման կատարելագործման, ներքին և արտաքին միգրացիոն շարժումների,

բնակչության կյանքի որակի տարածքային տարբերությունների, խոշոր քաղաքների միկրոաշխարհագրական հետազոտության խնդիրները:

Քաղաքական աշխարհագրության իրավասությանը վերաբերող և իրենց հետազոտությանը սպասող խնդիրների շարքում առաջնահերթ են՝ անկախացած Հայաստանի Հանրապետության աշխարհագրագաղաքան դիրքի վերլուծությունն ու գնահատումը մեզումակարդակով (տարածաշրջանային՝ Կովկաս, Մերձավոր Արևելք) և մակրոմակարդակով, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տեղաբաշխման և դրա արդյունավետության վերլուծությունն ու գնահատումը, երկրի ներսում քաղաքական ուժերի բաշխման տարածական առանցնահատկությունների վերլուծությունը և այլն:

Նվազագույն հասարակական աշխարհագրության ամեն մի գիտական ճյուղի գծով առանցին-առանցին:

Հասարակական աշխարհագրության այստեղ թվարկված ու չթվարկված խնդիրները ժամանակի ընթացքում փոխում են իրենց կոնկրետ բովանդակությունը, երևան են գալիս նորերը, հները գտնում են իրենց լուծումը կամ կորցնում են հրատապությունը: Չայ դրանց ընդհանուր ուղղվածությունը և գիտության ընդհանուր նպատակը մնում են անսատան՝ նպաստել հասարակության գորածքային կազմակերպման և մարդ-հասարակություն-քնություն հարաբերությունների կապարելագործմանը:

Թվարկված խնդիրները թերևս կօգնեն աշխարհագրական ուսումնասիրությունների ոլորտ մուտք գործող երիտասարդությանը ավելի ամբողջական պատկերացում կազմելու մեր գիտության հետազոտական և գործնական հնարավորությունների մասին և գիտակցված մասնագիտական ընտրություն կատարելու գործին:

ՎԱՐՑԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Նախկինում ո՞ր է եղել հասարակական աշխարհագրության գլխավոր ֆունկցիան:
2. Հասարակական կյանքի ո՞ր երևույթներն են, որ նոր, ավելի բարդ խմբիրներ են առաջարկում հասարակական աշխարհագրությանը: Թվարկե՛ք դրանք:
3. Ինչո՞ւ գիտաբեխմիկական առաջադիմության նվազումները մարդ-քնություն հարաբերությունների բովանդակության էական փոփոխությունը դարձնում են անհրաժեշտություն:

- 4.** Համաշխարհային դմբռևուրյան՝ որպես մնկ միասնական համակարգի յևավորումը ինչպես և առնչվում հասարակական աշխարհագրուրյան խնդիրների բարդացման հետ:
- 5.** Ժողովրդագրական հեղափոխուրյունն ի՞նչ նոր պահանջներ է առաջարկում հասարակական աշխարհագրուրյանը:
- 6.** Մարդուորդի կառուցվածքի անընդհատ բարդացումն ու ներքին բազմազանուրյան խռացումը ինչպես և ազդում հասարակական աշխարհագրուրյան վրա:
- 7.** Որք ՞նք են հասարակական աշխարհագրուրյան արդի խնդիրների երեք գլխավոր խճքերը:
- 8.** Հասարակական գերհամակարգերի հետազոտուրյան համար փարածը քննութագրող կոռորդինատներից բացի ուրիշ ի՞նչ կոռորդինատ է օգտագործվում:
- 9.** Որք ՞նք են հասարակական աշխարհագրուրյան մակրոմակարդակի հիմնախնդիրները:
- 10.** Ինչո՞ւ մեզու և միկրոմակարդակի հետազոտական խնդիրներն ավելի բազմազան ու մեծարիկ են, քան մակրոմակարդակինը:
- 11.** Որք ՞նք են Հայաստանի Հանրապետուրյան արդի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրուրյան գլխավոր խնդիրները:

ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԻՄԱՐԱՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն մի գիտություն մշակել է հասկացությունների իր համակարգը, որն արտահայտում է այդ գիտության հիմնական բովանդակությունը, մեթոդաբանությունն ու մեթոդիկան: Այդպիսի համակարգի առկայությունը ավելի դուրին է դարձնում թե՛ գիտության յուրացումը և թե՛ գիտական հետազոտությունների կազմակերպումը:

Աղիանրապես գիտական հասկացությունը ոչ այլ ինչ է, քան գիտության տվյալ նյուիում ընդունված **գիտական միաժողովրդյան չեզ, որի միջոցով ընդհանրացնում և արդահայտում ենք իրերի ու երկույրների էական հարկանիշները, կապերը, հարաբերությունները:** Տարբեր առիթներով օգտագործում ենք, օրինակ, լեռ, կենդանի, մարդ, քաղաք, լանդշաֆտ, արտադրություն, ճանապարհորդություն, պատերազմ բառերը: Ապացույցման կարիք չկա, թե այդ օբյեկտներից յուրաքանչյուրը ներքին ինչպիսի վիթխարի բազմազանություն ունի: Բայց երբ ասում ենք, օրինակ, քաղաք և այն օգտագործում ենք որպես հասկացություն, ապա ընդգծում ենք երկրի վրա կառուցված տասնյակ հազարավոր մեծ ու փորք քաղաքային բնակավայրերի **ոչ թե բազմազանությունը, գաղրերից գծերը, այլ այդ բնակավայրերի էական ընդհանուր հարկանիշները:**

Ամեն մի հասկացություն չնավորվում է իմացության պատմական զարգացման պրոցեսում, երբ զգայական ճանաչողությունից անցում է կատարվում դեպի արամաբանական մտածողությունը: Դրա շնորհիվ էլ չնավորվում է հասկացությունը: **Հասկացությունը գիտական արժեք է սպանում և որոշակի իմացական ֆունկցիա է կարարում, երբ զարգանալով վերածվում է գիտական սահմանման և իր տեղն է գրավում որոշակի գիտական գիտության մեջ:**

Օստ մատերիալիստական մոտեցման, հասկացությունը ոչ այլ ինչ է, քան **օրյեկտիվ իրականության արդացուում:** Դա ինչ-որ ավարտուն քան չէ և գիտական ճանաչողության խորացման հետ մեկտեղ կարող է փոխել իր բովանդակությունը, հարստանալ ու զարգանալ:

Հասարակական աշխարհագրության, ինչպես և գիտության ամեն մի ճյուղի հասկացությունները մշակվել են այդ ճյուղի ներսում, սեփական ուժերով կամ փոխ են առնվել այլ գիտություններից:

Դասագրքի այս գլխում կքննարկենք աշխարհագրության հասարակական թևի համար առանցքային համարվող հասկացությունները:

3.1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՄԱԳՐԱԿԱՄ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ) ԲԱԺԱՆՈՒՄ (ԱԱԲ)

Դասարակության զարգացման պրոցեսում տեղի է ունենում մարդկանց աշխատանքային գործունեության որակական տրոհում: Ձևավորվում են դրա տարբեր տեսակները, որոնք լրացնում են իրար և գոյություն ունեն համատեղ:

Աշխարհանքի բաժանման պարզագույն չեզ եզել է աշխարհանքի բնական բաժանումը, որը ընտանիքի և տոհմային համայնքի ներսում ծագել է սեղի ու տարիքի տարբերություններից: Կանայք, երեխաներն ու տարեցները զբաղվել են հավաքչությամբ, երիտասարդ տղամարդիկ՝ որսորդությամբ:

Հետագայում արտադրության միջոցների բարդացման ու ընության վրա մարդկանց ներգործության չենքի ընդլայնման հետևանքով նրանց աշխատանքային գործունեությունը սկսել է տրոհվել, և դրա տարբեր տեսակներն իրարից բաժանվել են: Այդ պրոցեսը անհրաժեշտ ու անխոսափելի էր, որովհետև իր հետ բերում էր աշխատանքի արտադրողականության բարձրացում:

Ընդունված է համարել, որ աշխարհանքի առաջին խոշոր հասարակական բաժանումը տեղի է ունեցել մարդկության զարգացման արշալույսին, երբ երկրագործությունն առանցնացել է անասնապահությունից: **Երկրորդ** բաժանումով գյուղատնտեսությունից առանցնացել են արհեստները, **երրորդ** բաժանումով չենավորվել է վաճառականությունը: Ավելի ուշ երկրագործության զարգացման հետ մեկտեղ ծագել է գյուղացիների տնային արտադրությունը, իսկ քաղաքներում սկիզբ են առել արհեստները: **Հետագայում** այդ պրոցեսը ընդլայնվել ու խորացվել է:

Ծամանակակից հասարակական արտադրությունը, ինչպես հայտնի է, բաժանված է երկու ոլորտի՝ Նյութական արտադրության և ոչ Նյութական արտադրության (կամ նույն է, թե արտադրական և ոչ արտադրական): Դրանք բաժանվում են խոշոր ճյուղերի: Նյութական արտադրությունը բաժանվում է արդյունաբերության, գործատնտեսության, տրանսպորտի: Ոչ Նյութական արտադրությունը բաժանվում է կրթության, գիտության, առողջապահության, առևտի, արվեստի և այլն: Խոշոր ճյուղերը բաժանվում են ենթաճյուղերի, վերջիններս եւ՝ ավելի մանր միավորների:

Ներկայում մարդկանց աշխատանքային գործունեության տեսակները հավաքների են հասնում և շարունակում են անել: Աշխատանքի հասարակական բաժանման խորացումը պատմական անհրաժեշտություն է և, ըստ Հուրյան, անվերջ է, ինչպես անվերջ է արտադրության ու տեխնիկայի զարգացումն ու կատարելագործումը:

Աշխարհանքի հասարակական բաժանումն ունի նաև իր բարձական դրսերումը, այսինքն՝ աշխատանքի բաժանումը կատարվում է նաև չեռնարկությունների, հիմնարկների, գորոշերի, քաղաքների, շրջանների, պետությունների միջև: Այդ բաժանումը հայտնի է աշխատանքի աշխարհագրական (կամ տարածքային) բաժանում անունով:

Ըստ գիտական սահմանումի, **աշխարհանքի աշխարհագրական բաժանումը հասարակության զարգացման պրոցեսում աշխարհանքային գործունեության բարձական դրույթն է:** Դա դրսերվում է տարբեր տիպի ու մեծության փոխկապակցված տարածքային կազմավորումների (պետություն, շրջան, տնտեսական կենտրոն և այլն) արտադրական մասնագիտացման, կոռպարացման, մասնագիտացված արտադրանքի և ծառայությունների փոխանակման տեսքով:

Ասվածը նշանակում է, որ **աշխարհանքի աշխարհագրական բաժանումը աշխարհանքի հասարակական բաժանման բարձական չեն է:**

Հասկացության շփոթմունք է թույլ տրվում, եթե արտադրության բազմազանության ու ապրելակերպի տարածքային տարբերությունները համարում են աշխատանքի աշխարհագրական բաժանում: Ծայր Հյուսիսում կբաղվում են ձկնորսությամբ ու եղերվարուծությամբ, բնակարանները ներսից ու դրսից պատում են մորթիներով, սևվում են հիմնականում մսով: Անտառատափաստանում արտադրում են տարեկան և վուշ, մեր-

շարևադարձային երկրներում՝ բրինց և բամբակ: Ակնհայտ է արտադրանքի, բնակչության վրազմունքի ու ապրելակերպի տարրերությունը:

Բայց դա աշխատանքի աշխարհագրական բաժանում չէ: Աշխատանքի բաժանումը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ արտադրողը տվյալ արտադրանքը (չուկը, վուշը, բամբակը և այլն) **բռղպարկում** է ոչ միայն իր սեփական պահանջները բավարարելու, այլև ուրիշ ապրանքների հետ փոխանակելու, վաճառելու համար: Այլ կերպ ասած, աշխատանքի աշխարհագրական բաժանումը սկզբում է այն ժամանակ, երբ մի երկիրը (շրջանը, քաղաքը, գյուղը) աշխատում է նաև ուրիշ երկրի (շրջանի, քաղաքի, գյուղի) համար, երբ կատարվում է ապրանքափոխանակություն, առևլուր:

Աշխատանքի աշխարհագրական բաժանումը կարող է զարգանալ երկու դեպքում:

Առաջին. Երկիրը (շրջանը, քաղաքը, գյուղը) ներմուծում է այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը բնական պայմանների պատճառով անհնար է տեղում կազմակերպել:

Երկրորդ. Ներմուծում է այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը տեղում թեև հնարավոր է, բայց ավելի թանկ է նստում, պակաս արդյունավետ է, տնտեսապես ոչ չեղնտու:

Մարդկային հասարակության վարգացմանը զուգընթաց ծավալվել ու խորացել է աշխատանքի հասարակական բաժանումը ընդհանրապես և դրա տարածական դրսնորումը՝ աշխատանքի աշխարհագրական բաժանումը, մասնավորապես:

Սկզբանական շրջանում աշխատանքի աշխարհագրական բաժանումը պայմանավորող գործոններից ավելի ասդեցիկ է եղել **բնական պայմաններից** գործոնը: Օրինակ, բոլոր լեռնային երկրներում այդ բաժանումը սկզբից կատարվել է բարձրադիր լեռնային գոտիների արոտային անասնապահության և ցածրադիր հարթավայրային շրջանների երկրագործության միջև, որը պայմանավորված է ուղիեժային և կլիմայական պայմանների տարրերությամբ:

Հետագայում անել է տնտեսական, սոցիալական գործոնների և տնտեսաաշխարհագրական դիրքի դերը: Օրինակ, ներկայում աշխարհի բոլոր քաղաքների շուրջը և բարձր ուրբանիկացված շրջաններում գյուղատնտեսությունը մասնագիտանում է այն ճյուղերի գծով, որոնք ապահովում են քաղաքային բնակչության ամենօրյա պահանջները թարմ

սննդամթերքով և ծառայություններով: Այդպիսի մասնագիտացում ունեցող տնտեսությունը ստացել է **մերժապարային գննդեսություն** անունը:

Կամ, սոցիալ-տնտեսական գործոնի ազդեցությամբ է, որ խիտ բնակչություն և հարուստ աշխատանքային ռեսուրսներ ունեցող շրջանները և խոշոր քաղաքները գերազանցապես մասնագիտանում են աշխատատար ու գիտատար արտադրությունների գծով, իսկ նավթ ներմուծող երկրների խոշոր նավահանգիստներն ու դրանց հարող շրջանները՝ նավթամշակման և նավթագիմիական արտադրությունների գծով:

Ակնհայտ է, որ աշխատանքի աշխարհագրական բաժանման անընդհատ խորացման ու ընդլայնման **գլխավոր շարժիչ ուժը գննդեսական շահն է:**

Առաջին հայացքից կարող է թվայի, որ աշխատանքի աշխարհագրական բաժանումը, որ բերում է ապրանքների փոխադրման և այլ տրանսպորտային ծախսների ավելացման, ի վերջո պետք է հանգեցնի ապրանքների ինքնարժեքի և վաճառման գների աճի և տնտեսական կորուստների:

Դատեցն՝ ինքններդ. 20-րդ դարի ընթացքում տրանսպորտի զարգացման և ապրանքափոխադրումների վրա կատարվող ծախսների միջին տարեկան աճը 2-3 անգամ ավելին է, քան փոխադրվող ապրանքների արտադրության ծավալի միջին տարեկան աճն է:

Այդուհանդերձ, աշխատանքի աշխարհագրական բաժանումը և դրա արգասիք միջազգային ու միջազգային առևտրի և բեռնափոխադրումների ծավալն աճում է առաջանցիկ տեմպերով, միաժամանակ բարձրանում է տնտեսական շահութաբերությունը: Եվ դրա հիմքում ընկած է ապրանքի գնի տարբերությունը դրա արտադրության վայրում և իրացման վայրում: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ տարբերությունը պետք է ավելին լինի, քան տեղափոխման համար պահանջվող ծախսներն են:

- | | |
|----------|---|
| Այսինքն՝ | Cv>Cr+t, |
| որտեղ՝ | Cv-ն ապրանքի գինն է իրացման վայրում, |
| | Cr-ն ապրանքի գինն է արտադրության վայրում, |
| | t-ն տրանսպորտային ծախսներն են: |

Ուրեմն, աշխատանքի աշխարհագրական բաժանումն այնքան ավելի ցեղնտու է, ինչքան ապրանքի գինը արտադրության վայրում ցածր

Ե, իսկ տրանսպորտային ծախսերը՝ պակաս: Իսկ դրանք, այսինքն՝ անհավասարության աջ մասը, հիմնականում պայմանավորված է ինքնարժեքով:

Հարց է ծագում, ի՞նչ կապ կարող է գոյություն ունենալ աշխատանքի աշխարհագրական բաժանման և արտադրվող ապրանքի ու մատուցվող սպասարկումների ինքնարժեքի միջև:

Հայտնի է, որ ինքնարժեքը մի շարք գործոններով է պայմանավորվում: Դրանց շարքում առանձնահատուկ նշանակություն է տրվում տեխնիկային և տեխնոլոգիային, արտադրական պրոցեսների մեջենայսման ու ավտոմատացմանը: Մինչդեռ պարզվում է, որ դրա հետ մեկտեղ աշխատանքի աշխարհագրական բաժանումը նույնական աշխարհագրի արդարողականության բարչրացման հզոր գործոն է:

Աշխատանքի աշխարհագրական բաժանման շնորհիվ հնարավոր է դառնում, օրինակ, որնէ բույսի մշակումը կենտրոնացնել դրա համար առավել նպաստավոր բնական ու տնտեսական պայմաններ ունեցող շրջանում և դրանով իսկ բարչրացնել բերքատվությունն ու աշխատանքի արտադրողականությունը և նվազեցնել ծախսերը: Կամ, հնարավոր է դառնում որնէ հանքանյութի արդյունահանումը կենտրոնացնել առավել խոշոր, Երկրի մակերեսին մոտ և ավելի դյուրամատչելի երկրաբանական պայմաններ ու տրանսպորտաշխարհագրական դիրք ունեցող հանքավայրերում և ստանալ ավելի ցածր ինքնարժեքով հանքային հումք:

Բայց դրանով չի սահմանափակվում աշխատանքի աշխարհագրական բաժանման դերը: Աշխատանքի աշխարհագրական բաժանումը, մասնավորապես արտադրության տարածական համակենտրոնացումը անուղղակիորեն խթանում է տեխնիկական առաջընթացը:

Հարց է ընդգծել, որ աշխատանքի աշխարհագրական բաժանման և գիտատեխնիկական առաջադիմության կապը նաև հակադարձ է: Տեխնիկայի զարգացումը, մեջենայացումն ու ավտոմատացումը ընդլայնում են զանգվածային արտադրության հիմքերը, արտադրության ոլորտն են ներգրավվում բնության նորանոր տարրեր, մարդը հայտնագործում և օգտագործում է հովածի և ներգիտայի նոր, մինչ այդ անմատչելի աղբյուրներ: Աննախադեպ զարգացում է ստանում տրանսպորտը: Ըստ այդ ամենը ի մի վերցրած նոր թափ է հաղորդում աշխատանքի աշխարհագրական բաժանմանը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ աշխատանքի աշխարհագրական բաժանման վրա ապդոյ բնական, տնտեսական, սոցիալական գործուները չեն սպառվում վերը նշված մասնավոր տեսակներով: Դրանք շատ ավելի բազմազան են ու բազմարնություն:

Աշխատանքի աշխարհագրական բաժանման գործում կարևոր են նաև՝ պետության (շրջանի, քաղաքի, գյուղի) *տնտեսաշխարհագրական դիրքը, ժողովրդի ազգային, պատմամշակուրային* առանցնահատկությունները, *կրթական մակարդակը, տնտեսական-արդարական առանցնահատկությունները*, որոնց կանդրադառնանք գրգի հաջորդ բաժիններում:

Կախված ընդգրկված տարածքի մեծությունից, տարրերում են *աշխարհանքի տարածրային բաժանման երեք հիմնական դարձութակ՝ ա) միջազգային բաժանում, բ) միջշրջանային բաժանում, գ) ենթշրջանային բաժանում:*

Աշխարհանքի միջազգային բաժանումը տեղի է ունենում համաշխարհային տնտեսության ներսում: Սուանձին երկրներ մասնագիտանում են արտադրանքի որոշակի տեսակների գծով, որոնցով և դուրս են գալիս համաշխարհային շուկա: Առևտորի միջոցով տեղի է ունենում ապրանքների փոխանակում: Աշխատանքի միջազգային բաժանման շնորհիվ է, որ, օրինակ, ճապոնիան արտադրում է ավելի շատ ավտոմոբիլներ և ռադիոէլեկտրոնային սարքեր, քան երկրի ներքին պահանջն է, և արտահանում է ուրիշ երկրներ: Կամ, նույն պատճառով Արաբական ծոցի երկրները արտահանում են նավթ, Գերմանիան՝ տարրեր տեսակի մերձնայական սարքավորում, Խաղանիան ու Հունաստանը՝ ցիտրուսներ, Կանադան ու Ավստրալիան՝ ցորեն, Հայաստանը կոնյակ ու ոսկերչական իրեր, որոնք գերազանցում են այդ երկրների ներքին պահանջը: Օրինակները կարելի են անվերջ շարունակել:

Աշխատանքի միջազգային բաժանման շնորհիվ է, որ զարգանում են միջազգային առևտուրն ու միջպետական տնտեսական հարաբերությունների մյուս տեսակները, մեծանում է երկրների փոխկանութեանը և արդյունքում ամրապնդվում է համաշխարհային տնտեսությունը, իսկ դա իր հերթին խթանում է գիտության նվաճումների և նոր տեխնոլոգիաների փոխանակումն ու տարածումը, արտադրողական ուժերի առաջնթացը և աշխատանքի արտադրողականության աճը:

Վերջապես, աշխատանքի միջազգային բաժանման արգասիք է

դեռևս դպրոցական աշխարհագրությունից շեկ հայտնի «աշխարհի աշխարհագրական մոդելը», որն անընդհատ փոփոխվում է ու բարդանում:

Երբ 19-րդ դարում շարունակվում էր միասնական համաշխարհին տնտեսության զևավորումը, աշխարհի աշխարհագրական մոդելը քավականին պարզունակ էր: Այն բաղկացած էր մեկ զարգացած կենտրոնից, որը նվազագույն էր, և մնացած աշխարհից, որը ծայրամասի դեր էր կատարում: **Դա համաշխարհային գննդեսուրյան եկրակենպրոն մոդելն էր:**

Հետագայում աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետևանքով բարդացած նաև աշխարհի աշխարհագրական մոդելը: Ձևավորվեցին նոր կենտրոններ, մասնավորապես ԱՄՆ-ը, ավելի ուշ՝ ԽՍՀՄ-ը, Չինաստանը, Հապօնիան, Վերջին տասնամյակներում՝ Չինաստանը, Հնդկաստանը, Հարավ-Արևմտյան Ասիայի նավթ արտահանող երկրները, Հարավ-Արևելյան Ասիայի նոր ինդուստրիալ երկրները, Ավստրալիան: **Միակենպրոն մոդելը վերածվեց բազմակենպրոնի:** **«Հզոր կենդրումների և հետամեջ ծայրամասերի միջև հայդրավեց զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների մեծարանակ մի խումբ»:**

Աշխարհանքի միջջրանային բաժանումն ընդգրկում է առանցին վերցրած երկիրը, պետությունը, որի ներսում տեղի է ունենում փոխկապակցված տարածամասերի՝ շրջանների, ենթաշրջանների, տնտեսական կենտրոնների արտադրական մասնագիտացում: Դրա հիմքի վրա զարգանում է միջջրանային արտադրական կոռպերացիան և մասնագիտացած արտադրատեսակների ու ծառայությունների փոխանակում, զևավորվում ու ամրապնդվում է **ազգային գննդեսուրյունը և ազգային շուկան: Հասկանալի է, որ այս դեպքում նույնպես աշխատանքի աշխարհագրական բաժանումը հիմնավորվում է արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման նոր հնարավորություններով:**

Աշխարհանքի ներջրանային բաժանումն ընդգրկում է պետության առանցին տնտեսական շրջանը, որի ներսում նույնպես, ճիշտ է, ավելի սահմանափակ մասշտարք, տեղի է ունենում տարածքների արտադրական մասնագիտացում:

Ծրջանի առանցին հատվածների, առանցին քաղաքների ու գյուղերի միջև հաստատվում են կայուն տնտեսական-արտադրական կապեր և տեղի է ունենում արտադրանքի ու ծառայությունների փոխանակում:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ «աշխարհանքի աշ-

իսարհագրական բաժանում»՝ հասկացությունը իրոք հասարակական աշխարհագործության և դրա բոլոր ճյուղերի ու ենթաճյուղերի համար հիմնարար նշանակություն ունեցող հասկացություն է:

Այդ նշանակությունը հասարակական աշխարհագրության նյութերից հատկապես մեծ է գրնդեսական աշխարհագործության համար: Ի վերջո անվիճելի է, որ համաշխարհային տնտեսության աշխարհագրությունը գրեթե ամբողջությամբ հանգում է համաշխարհային մասշտարով աշխատանքի աշխարհագրական բաժանման կոնկրետ պատկերին, դրա ձևավորմանն ու զարգացմանը և դրանց ուսումնասիրությանը: Նույն ձևով էլ առանձին երկրի տնտեսաաշխարհագրական հետապոտությունը հանգում է այդ երկրի ներսում աշխատանքի միջջրանային բաժանման հետապոտությանը և, վերջապես, շրջանի տնտեսաաշխարհագրական հետապոտությունը՝ աշխատանքի ներջրանային բաժանման հետապոտությանը:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել ընդհանուրապես աշխարհագրության համար խիստ կարևոր մի հանգամանք ևս. ցանկացած տարածքային միավոր, լինի դա ամբողջ տարածաշրջան (պետությունների խումբ), պետություն, դրա մասը կազմող շրջան, թե առանձին քաղաք, աշխարհագրությունը **հետպատճեն է երկու գենամկյունից՝ արդարին և անդրին:**

Արդարինի դեպքում, այսինքն՝ երբ դիտարկում ենք դրախոց, հետապոտության օրյեկտը մենք ընկալում ենք որպես ավելի խոշոր միավորի բաղադրամաս: Գլխավոր ուշադրությունը դարձվում է դրա արտաքին կապերի ու հարաբերությունների վրա:

Երկրորդ դեպքում, երբ գենամկյունը **անդրին է**, օբյեկտը դիտարկվում է որպես ավելի փոքր բաղադրամասերից կազմված մի առանձին միավոր: Գլխավոր ուշադրությունը դարձվում է ներքին կապերի ու հարաբերությունների վրա:

Եվրափակելով սույն բաժինը, նշենք աշխատանքի աշխարհագրական բաժանում գիտական հասկացության կարևորությունն ընդգծող մի հանգամանք ևս: Դա այն է, որ աշխատանքի աշխարհագրական բաժանումով պայմանավորվում են կամ առնվազն դրա հետ առնչվում են ժամանակակից տնտեսության մեջ տեղի ունեցող գրեթե բոլոր էական պրոցեսները: Դրանք են՝ գրնդեսական գործոքային կազմակերպությունը, գործադրային կառուցվածքի կարարելագործությունը, շրջանագոյացումը, գրնդեսական կյանքի գարածական ինդեքրացումը, գրնդեսությունը:

ԴԱՐՑԵՐ ԻՆՁՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ է գիտական հասկացուրյունը:
2. Գիտական հասկացուրյունը հենվում է հետազողվող օրյեկտի, երևոյթի բազմազանության, դարքերի գծերի՝, բն՝ էական ընդհանուր հատկանիշների վրա:
3. Որո՞նք են աշխարհանքի խոշոր հասարակական բաժանումները:
4. Ի՞նչ է աշխարհանքի աշխարհագրական բաժանումը:
5. Ինչո՞ւ աշխարհանքի (փնտեսության) դարաժրային դարքերուրյունները դիսես աշխարհանքի աշխարհագրական բաժանում չեն:
6. Որո՞նք են աշխարհանքի աշխարհագրական բաժանման նախադրյանները:
7. Աշխարհանքի աշխարհագրական բաժանումը ինչպես է նպաստում արդարության արդյունավետության բարձրացմանը:
8. Որո՞նք են աշխարհանքի աշխարհագրական բաժանման դարադեռականները:
9. Արդի փնտեսական կյանքում ընթացող ո՞ր պրոցեսներն են ուղղակիորեն առնչվում աշխարհանքի աշխարհագրական բաժանման հետ:

3.2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ (ԱԴ)

Աշխարհագրական դիրք հասկացությունը ընդհանրական և ունիվերսալ է աշխարհագրության բոլոր ճյուղերի և ուղղությունների համար:

Աշխարհագրական դիրքը ընդհանրապես կվյալ աշխարհագրական օրյեկտի հարաբերուրյունն է դրանից դուրս գտնվող այլ օրյեկտների հետ։ Ավելի ճիշգ՝ օրյեկտի դիրքն է երկրի մակերեսին և այնպիսի այլ օրյեկտների նկատմամբ, որոնց հետ նա գրնջում է փոխազդեցության մեջ։

Աշխարհագրական դիրքը ամեն մի օբյեկտի կարևոր բնութագրիչներից է։ Դա որոշակի պատկերացում է տալիս նրա տեղայնացման բնական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պայմանների ու առանձնահատկությունների մասին և ունի կարևորագույն մեթոդաբանական նշանակություն։

Յանկացած օրյեկտի ինչպես ֆիզիկաաշխարհագրական, այնպես էլ սոցիալ-տնտեսաաշխարհագրական հատկանիշները եապես պայմանավորված են դրա աշխարհագրական դիրքով:

Ընդունված է տարբերել **աշխարհագրական դիրքի 3 մակարդակ՝** միկրո, մեզո և մակրո:

Միկրոմակարդակը բնութագրում է օրյեկտի այն մեկուսի շրջապատը, որը ուղղակի կոնտակտի մեջ է մյուս աշխարհագրական օրյեկտների հետ:

Մեզոմակարդակը վերաբերում է օրյեկտի այն դիրքին, որ նա ունի համեմատաբար խոչըր շրջանի՝ երկրի, տարածաշրջանի նկատմամբ:

Մակրոմակարդակը ի նկատի ունի երկրագունդն ամբողջությամբ կամ աշխարհագրական թաղանքի ընդարձակ հատվածը (կիսագունդ, աշխարհամաս, մայրցամաք), որտեղ գտնվում է օրյեկտը:

Կախված աշխարհագրական օրյեկտի վրա շրջապատի թողած ազդեցության բնույթից և ուղղությունից, առանցնացվում են աշխարհագրական դիրքի մի քանի տարատեսակ. **համաաշխարհագրական (կամ մաքրնագրիկաաշխարհագրական) դիրք, ֆիզիկաաշխարհագրական դիրք, գնդիկաաշխարհագրական դիրք, գրանցութաաշխարհագրական դիրք** և այլն:

Գիտության մեջ ինչպես ամեն մի դասակարգում, աշխարհագրական դիրքի այս դասակարգումը նույնպես պայմանականության մեծ քաժին ունի: Առանցնացված տարատեսակների նշանակությունը բացարձակ չէ, և հաճախ մի նշանակությունը փոխարինվում է մյուսով: Օրինակ, որևէ օրյեկտի հեռավորությունը ծովերից կարող է դիտվել և՛ որպես ֆիզիկաաշխարհագրական դիրքի հատկանիշ, և՛ որպես տնտեսաաշխարհագրական դիրքի հատկանիշ, կախված այն քանից, թե ծովը ինչ առումով է մեկ հետաքրքրում՝ ֆիզիկաաշխարհագրական (օրինակ՝ որպես կիմայի ցևավորման գործոն), թե տնտեսաաշխարհագրական (որպես ռեսուրս և տրանսպորտային ելք դեպի միջազգային ծովային ուղիները): Ծատ հաճախ միասնաբար են հանդես գալիս նաև դիրքի տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական և տրանսպորտաաշխարհագրական տարատեսակները:

Ավելի մանրամասն քննարկենք **գնդիկաաշխարհագրական դիրքը (ՏՍԴ)** և դրա առնչությունները աշխարհագրական դիրքի մյուս տարատեսակների հետ:

Նախ տանք հասկացության ներկայումս տարածված սահմանումը, նշելով միաժամանակ, որ դա միակը չէ: ՏՍԴ-ի այլ սահմանումներ ևս կան, որոնք սակայն իրարից տարբերվում են ոչ թե բուն բովանդակությամբ, այլ շեշտադրումներով՝ դրա այս կամ այլ հատկանիշին ավելի մեծ կարևորություն տալով:

«Տնտեսաաշխարհագրական դիրքը չեղոնարկությունների, բնակավայրերի, արեալների, շրջանների, առանձին երկրների ու դրանց խմբերի և այն արդարին օրյոնկամների հարաբերությունների ամբողջությունն է, որոնք դրանց համար ունեն բնտեսական նշանակություն»: Այս սահմանումը պատկանում է «Географический энциклопедический словарь»-ին (Սոսկվա, 1988թ.) և առ այսօր առավել ամբողջականն ու սպառիչն է:

Ինչպես տեսնում ենք, խոսքը գնում է աշխարհագրական օբյեկտների տարածական հարաբերությունների մասին, որոնք կարող են լինել քաղաքական, և որոնց ամբողջությունը կարող է եական ազդեցություն ունենալ օբյեկտի վրա, որոշելով դրա տնտեսական, սոցիալական ու քաղաքական վարգացման պայմանները և նշանակությունը:

Տնտեսաաշխարհագրական դիրքը կարող է լինել **բարենպատճակամ** անքարենպատճակամ:

Պրոֆեսոր Ն. Ն. Չարանսկին, որ այդ հարցին հատուկ ուսումնասիրություն է նվիրել, երկրի աշխարհագրական դիրքի տնտեսական նշանակությունը ցույց տալու համար վերլուծում է մի քանի օրինակներ, մասնավորապես Ըվեդիան համեմատում է Ուրալի, Սիբիրը՝ Կանադայի և Կովկասը՝ Ըվեյցարիայի հետ¹:

Ըվեդիան և Ուրալը իրենց համաաշխարհագրական դիրքով (հարում են Հյուսիսային քենոային շրջագծին), բնական պայմաններով (լեռնային երկիր են) և ուսուրաներով (աղքատ են կոկսացող քարածուխով, բայց հարուատ են քարցրորակ երկաթահանքով և անտառով) հար և նման են: 18-րդ դարում նրանք եղել են փայտածիսի վրա հիմնված մետաղացուլության նվրոպայի առաջատար կենտրոնները և հաջողությամբ մըրցակցել են:

Ավելի ուշ Ըվեդիան հաղթող է դուրս եկել այդ մրցակցությունից և զգալիորեն առաջ է անցել շնորհիվ իր նպաստավոր բնտեսաաշխար-

1 Sh'v H. N. Баранский. Экономическая география. Экономическая картография. Москва, 1956.

հազրական դիրքի: Գտնվելով ծովի ափին և մոտիկ լինելով ցամաքային Ծվրոպային, Եժան ծովային ուղիով սերտ կապեր է հաստատել զարգացած երկրների հետ:

Դրան հակառակ, Ուրալը գտնվելով ծովային ուղիներից հեռու, Ծվրասիա մայրցամաքի խորքային մասում, պետք է սպասեր արևելք-արևմուտք ուղղության երկաթուղու կառուցմանը, որը կրարելավեր նրա տնտեսաշխարհագրական դիրքը և զարկ կտար նրա արտադրողական ուժերի զարգացմանը, ինչը տեղի ունեցավ շատ ավելի ուշ: Ուրալի սև մետալուրգիան վերածնունդ ապրեց 1930-ական թվականներից հետո, երբ ստեղծվեց Ուրալ-Կուվանցյան կոմբինատը, և հնարավոր դարչավ Կովկասի կոկսացող քարածուխը 2000 կմ հեռավորությունից հասնել Ուրալ:

Սիրիոր և Կանադան նույնպես քնական պայմանների շատ ընդհանրություններ ունեն: Բայց Ն. Ռարանսկին վերլուծում է նրանց տնտեսաշխարհագրական դիրքի տարրերությունները: Կանադայի համար նպաստավոր է համարում արևմուտքից և արևելքից նրա ափերը ողողող չսառչող ծովերի և նավահանգիստների (Խաղաղ օվկիանոսի ափին Վանկուվերի և Ատլանտյանի ափին Համիլֆակսի) առկայությունը և այնպիսի հվոր երկրի հարևանությունը, ինչպիսին ԱՄՆ-ն է: Եթե վերանանդ Կանադայի քարչը զարգացման սոցիալ-քաղաքական պատճառներից, աշխարհագրական գործուների շարքում գլխավորը նա համարում է տնտեսաշխարհագրական նպաստավոր դիրքը:

Նոյն ձևով էլ Կովկասը և Ծվելյարիան, ունենալով քնական պայմանների քավականին շատ ընդհանուր գծեր, եապես տարրերվում են սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներով: Այս դեպքում նույնպես կարևոր դեր է խաղում տնտեսաշխարհագրական դիրքերի տարբերությունը: Ծվելյարիայի համար խիստ նպաստավոր է անմիջական հարևանությունը Արևմտյան Ծվրոպայի քարչը զարգացած երկրներին ինչպես նաև համեմատաբար մոտ գտնվելը Միջերկրական ծովին: Մինչդեռ Կովկասը, գտնվելով Ծվրոպա և Ասիա աշխարհամասերի սահմանագլխին և տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում, մշտապես եղել է հակամարտությունների ու պատերազմների ասպարեզ: Զայտաքար է ապդել նաև նրա հեռու գտնվելը միջերկրածովյան քանուկ ուղիներից և Արևմտյան Ծվրոպայի քարչը զարգացած երկրներից:

Առանձնապես է տնտեսաշխարհագրական դիրքի (ՏԱԴ) երեք գլխավոր հատկանիշ, որոնք հատուկ քննարկման կարիք ունեն.

Առաջին. ՏՄԴ-ը ցույց է տալիս օրյեկտի *ոչքե ներքին վիճակը, այլ արդարին հարաբերությունները, արդարին ազդեցություններն ու փոխազդեցությունները:*

Երկրորդ. ՏՄԴ-ը Ընդգծում է օրյեկտի **հնարավորությունը, զարգացման հավանական ուղղությունը, պոտենցիալը (ներուժը):** Հիրավի, ամեն մի օրյեկտի սոցիալ-տնտեսական կարգայման հնարավորության և ուղղության համար դժվար է գերազանահատել ՏՄԴ-ի դերը: Խնշպես տեսանք վերոհիշյալ օրինակներից, այն երեսն կարող է վճռորոշ նշանակություն ունենալ, եապես նպաստել առաջադիմությանը կամ արգելակել այն, փոխել կարգայման ուղղությունը:

Դրանով հանդերձ, չի կարելի ՏՄԴ-ի հշանակությունը բացարձականացնել: Դա ինչքան էլ կարևոր, բայց բոլոր դեպքերում մեկն է միայն սոցիալ-տնտեսական երևույթների կարգայումը կանխորոշող գործոններից: Ենթադրությունը կախված է այն բանից, **թե ինչպիսի է օգտագործվում ՏՄԴ-ի ընձեռնած հնարավորությունը:**

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՏՄԴ-ը հենց ֆունկցիա է օրյեկտի կարգայումից և, կախված այդ կարգայման ուղղությունից, կարող է բարեկավել կամ հակառակը:

Այդ առումով հետաքրքրական է պետությունների մայրաքաղաքների օրինակը: Վերցնենք Կիևը կամ Անկարան, որոնք մինչև մայրաքաղաք դառնալի ել (Կիևը 1935թ., Անկարան 1923թ.) պետության տարածքի նկատմամբ ունեցել են կենտրոնական դիրք, իսկ մայրաքաղաք դառնալուց ի վեր դրանցից դուրս գտնվող օրյեկտները, որոնք կապված են նրանց հետ և ազդում են նրանց վրա, եական փոփոխություն չեն կրել: Այլ կերպ ասած՝ դրանց դիրքի երկրաչափական պարամետրերը մնացել են անփոփոխ: Բայց մայրաքաղաք դառնալու և դրա շնորհիվ նաև խոչըն արդյունաբերական, ֆինանսական ու մշակութային կենտրոնի վերածվելու շնորհիվ դրանց շուրջը ստեղծվել են նոր տարածական հարաբերություններ: Ենթադրությունը կապվում է Անկարան, ինչպես նաև աշխարհի մայրաքաղաքների մեջ մասը ինչ-որ իմաստով **իրենք են «սպեկոնել» իրենց բարեպատճ աշխարհագրական դիրքը:**

Սեփական տնտեսաշխարհագրական դիրքը փոխելու, այն բարեկավելու բազմաթիվ օրինակներ են տպել պետությունները:

Պատմության դասընթացներից չեզ հայտնի Ռուսաստանի պայքարը սկսվում դեպի Բալթիկ ծով, ապա Ավովի և Սև ծով դուրս գալու հա-

մար, սատ էության, պայքար էր հանուն տնտեսաաշխարհագրական դիրքի բարելավման:

ԱՍՍ-ը, որն սկզբնական շրջանում զարգանում էր որպես փակուղային դիրք ունեցող երկիր (Ատլանտյան ծովափից ելք չկար դեպի մայրացմաքի անհայտ ու անմատչելի խորքերը) շուտով տրանսպորտային շինարարության շնորհիվ դարչավ «Երկու օվկիանոսներից օգտվող» բացառիկ բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող երկիր: Դա տեղի ունեցավ Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներն իրար միացնող տրանսմայրցամաքային երկաթուղիների և Պանամայի ջրանցքի կառուցման միջոցով:

Տնտեսաաշխարհագրական դիրքի **եռորդ** հատկանիշը հեռավորության, տարածության հատկանիշն է: Առանց տարածական հեռավորության չի կարող լինել աշխարհագրական դիրք: Տարբեր օբյեկտների միջև եղած **հեռավորությունը աշխարհագրական գիրուրյան կարևոր կապեգորիաներից** է: Դա գծի երկարություն է և եական ապդեցություն է ունենում աշխարհագրական օբյեկտների փոխազդեցության վրա:

Հասարակական աշխարհագրության մեջ ընդունված է տարբերել և որոշել հեռավորության երեք տարատեսակ:

1. **Գեոդեզիական հեռավորություն:** Դա ամենակարճ հեռավորությունն է ուղիղ գծով, որն անփոփոխ է:

2. **Իրական աշխարհագրական հեռավորություն:** Որոշվում է առկա հաղորդակցության ուղիների երկարությամբ և կարող է փոփոխվել:

3. **Տնտեսական հեռավորություն:** Դա նոյն իրական աշխարհագրական հեռավորությունն է, բայց արտահայտված ոչ թե ֆիզիկական մեծությամբ (օրինակ՝ կմ-ով), այլ ժամանակային (օր, ժամ, րոպե) կամ արժեքային մեծությամբ, որը կարող է չափվել էներգետիկական ծախսերով կամ հաղորդակցության արժեքով:

Դժվար չեն կատել, որ թվարկված չափանիշերից հասարակական աշխարհագրության համար առավել կարևոր տնտեսական հեռավորությունն է:

Աշխարհագրության մեջ տարածական առումով տարբերում են **կենտրոնական դիրք, ժայրամասային դիրք և հարեւային դիրք հասկացությունները:**

Եթե կենտրոնական դիրքը սովորաբար համարվում է նպաստավոր և բարերար ապդեցություն է ունենում օբյեկտի վրա, ապա ժայրամա-

սային դիրքը աննպաստ է և լրացուցիչ անհարմարություններ է ստեղծում օբյեկտի համար: Դա ակնհայտ է և հատուկ ապացույցների կարիք չի պառա։

Հատուկ հետազոտության կարիք ունի *հարկանային դիրքը*: Դա սույց է տալիս օբյեկտի մերձավոր շրջապատի ոչ միայն հեռավորությունը, այլև բնույթը, որակը։

Դժվար չէ պատկերացնել, թե օբյեկտի տնտեսաաշխարհագրական դիրքը ինչ աստիճանի անրարենպաստ է, եթե դրա անմիջական հարևաններ են, օրինակ, թշնամաբար տրամադրված պետություն, հակամարտության կամ պատերազմական որևէ օջախ, տրանսպորտային առումով անմատչելի լեռնաշղթա կամ ընդարձակ անմարդաբնակ անապատ։

Դրան հակառակ, ինչքան ավելի յանկալի ու բարենպաստ է օվկիանոսի կամ բաց ծովի, բարյո զարգացած և բարեկամաբար տրամադրված երկրի, հզոր տնտեսական կենտրոնների կամ հաղորդակցության բանուկ ուղիների հարևանությունը։

Պետք է աշքի առաջ ունենալ մի հանգամանք ևս։ Միշտ չէ, որ տնտեսական օբյեկտների փոխադարձ հարևանային դիրքը, որ առաջին հայացքից կարող է բարենպաստ թվական, անպայմանորեն նպաստում է դրանց երկուստեր հավասարակշռված զարգացմանը։ Հարևանային դիրքը ոչ միայն հանգեցնում է համագործակցության ու համատեղ զարգացման, այլև հաճախ անխուսափելի է դարձնում մրցակցությունը։ Տեղի է ունենում հարևան օբյեկտների տնտեսական ֆունկցիաների տարարածանում։ Հարևան քաղաքները, տնտեսական շրջանները և նույնիսկ ոչ շատ հզոր պետությունները տնտեսության կառուցվածքով և մասնագիտացմամբ սովորաբար ոչ թե կրկնում են, այլև լրացնում են միմյանց։ Ինչ-որ ֆունկցիաների գծով մեկը առաջ է անցնում, իսկ մյուսը ետ է մնում։ Այդպես է, օրինակ, Եվրոպական Շուսաստանում, երբ Կենտրոնական արդյունաբերական շրջանի հարևանությամբ գտնվող Կենտրոնական սևահողային շրջանը ետ է մնացել իր ինդուստրիալ զարգացման մակարդակով և ստացել է զարգացման այլ ուղղություն, որը լրացնում, սպասարկում է առաջինին։

Մի այլ օրինակ. հարևանային դիրքի շնորհիվ է, որ բոլոր խոշոր քաղաքների անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները ստացել են գյուղատնտեսական ուղղվածություն և մասնագիտանում են այն նյութերի գծով, որոնց արտադրանքի կարիքն ունի կենտրոնական քա-

դաքը: Այդ տարածքներում շևավորվում է հատուկ տիպ՝ **մերժապարային գմբեսություն**:

Տնտեսաշխարհագրական դիրքը, ի տարբերություն համաշխարհագրական ու ֆիզիկաշխարհագրական դիրքերի, որոնք ժամանակի մեջ գործնականում անփոփոխ են, հանդես է գալիս որպես **պարմական կատեգորիա**: Այսինքն, այն քննութագրվում ու գնահատվում է կոնկրետ ժամանակի ու կոնկրետ իրադրության մեջ և ենթակա է փոփոխության:

Այդ դրույթի ճշմարտացիությունը կարելի է հաստատել բազմաթիվ քաղաքների, շրջանների, պետությունների օրինակներով:

Աշխարհագրական գրականության մեջ ավելի հաճախ քննարկվում է Անգլիայի օրինակը: Այդ երկրի պատմության ընթացքում մի քանի անգամ փոխվել է նրա աշխարհագրական դիրքի տնտեսական և ռազմատրատեգիական նշանակությունը:

Վաղ միջնադարում Անգլիան եղել է Հռոմեական կայսրության հետավոր ծայրամասը և աչքի է ընկել խիստ անբարենպապտ տնտեսաշխարհագրական դիրքով:

Նոր և նորագույն ժամանակաշրջանում, ծովագնացության բուռն վերելքի շնորհիվ, հեռավոր Անգլիան «մոտեցավ» մյուս աշխարհամասերին և հայտնվեց Արևմտյան կիսագունդը և Միջերկրականի ու Աֆրիկայի երկրները Հյուսիսային Եվրոպային կապող ճանապարհների խաչմերուկում: Նրա աշխարհագրական դիրքը գարշավ խիստ բարենպապտ:

20-րդ դարում իրադրությունը կրկին փոխվեց: Համաշխարհային տնտեսական կենտրոնները փոխադրվեցին յամաքային Եվրոպա, Հարավարևելյան Ասիա և Խաղաղ օվկիանոսի ավազանի երկրներ: Անգլիայի տնտեսաշխարհագրական դիրքը դարձավ պակաս բարենպապտ: Այդ գործոնը նույնպես կարևոր դեր խաղաց այն քանում, որ Անգլիան կորցրեց իր երեմնի դերը համաշխարհային տնտեսության ու քաղաքականության մեջ, առաջնությունը զիջելով ԱՄՆ-ին, Բաղոնիային, Գերմանիային:

Պակաս հատկանշական չէ Խտալիայի օրինակը: Խտալիան գտնվելով Պիրենեյան թերակղզում, կենտրոնական դիրք է գրավում ամբողջ միջերկրածովյան ավազանի նկատմամբ և կապող օղակ է վերջինիս և յամաքային Եվրոպայի միջև: Այս վիճակը խիստ նպաստավոր աղեցություն էր ունենում երկրի տնտեսական զարգացման վրա ընդհուպ մինչև 15-րդ դարի երկրորդ կեսը, երբ Օսմանյան Թուրքիան, նվաճելով

ամբողջ Մերձավոր Արևելքը՝ Սև ծովի, Կոստանդնուպոլիսի (Ստամբուլի) ու Ըալկանյան թերակղզու հետ մեկտեղ, կտրեց Եվրոպայի Հնդկաստան տանող առևտրական ճանապարհները: Խտալական բարգավաճող նավահանգիստները՝ ճենովան, Վենետիկը և Մյուս վաճառականական կենտրոնները, վրկվեցին Արևելքի հետ կատարվող առևտրի թերած եկամուտներից և շուտով կորցրին նախկին շուրջն ու վեհությունը: Տնտեսական կյանքը խոր անկում ապրեց:

Սկսվեցին դեպի Հնդկաստան տանող ծովային ուղիների եռանդուն որոնումները: Այս հարցում ավելի ակտիվ գտնվեցին Խսափանիան ու Պորտուգալիան: Այդ երկրների արքունիքներում ծառայության մտած իտալացի փորձաված ծովագնացների ջանքերով հայտնաբերվեցին Հնդկաստան տանող շուրջաֆրիկյան ջրային ուղին, ինչպես նաև Ամերիկան (Վեստինդիան) և բազմաթիվ անհայտ երկրներ: Խտալիայի տնտեսաշխարհագրական դիրքը կորցրեց իր առավելությունները, դրան հակառակ Խսափանիայի ու Պորտուգալիայի դիրքը դարձավ նպաստավոր:

Պատմական իրադարձությունների թերումով փոխվել է նաև Հայաստանի գննիքնաաշխարհագրական դիրքը: Ջննարկենք թեկուց 19-20-րդ դդ. տեղի ունեցած փոփոխությունները: Ռուսաստանին միանալով, Արևելյան Հայաստանը հայտնվեց Եվրոպական քաղաքակրթության ոլորտում, իսկ քիչ ավելի ուշ, Երկաթուղու շնորհիվ միացավ համառուսաստանյան և համաեվրոպական տրանսպորտային ցանցին: Այդ դրական տեղաշարժերով հանդերձ նա, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԽՍՀՄ կազմում, մնում էր որպես մի լայնարձակ տերության հեռավոր ծայրամաս: ԽՍՀՄ պետական սահմանների փակ լինելու պատճառով ի շիք էր դարձել միջազգային ճանապարհների խաչմերուկում գտնվելու դրական էֆեկտը:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի նպաստավոր կողմերի օգտագործման հնարավորությունները ընդլայնվեցին և հաղեանների հետ հարաբերությունների կարգավորման դեպքում կարող են դրսնորվել ամբողջ ուժով:

Սուազնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում *բաղարձերի ՏԱՂ-ը*: Հայտնի է, թե քաղաքների ինչպիսի վանականություն գոյություն ունի թե՛ ըստ մեծության ու զարգացման տեմպերի, թե՛ ըստ ֆունկցիաների ու տնտեսական մասնագիտացման, ել չենք խոսում դրանց պատմական ճակատագրի տարբերությունների մասին: Ծվ այդ ամենի վրա բացառիկ մեծ է ՏԱՂ-ի ապդեցությունը:

Զաղաքներն այն հասարակական աշխարհագրական օբյեկտներից են, որոնք գոյություն ունեն և զարգանում են ոչ թե անմիջականորեն իրենց հարող տարածքի ռեսուրսների հաշվին, որ սովորաբար սահմանափակ են (առավելագույնը մի քանի հազ. քկմ), այլ շնորհիվ մերժավոր ու հեռավոր կապերի, ավելի ընդարձակ շրջապատի հետ ունեցած տարածքային հարաբերությունների: Եթե քաղաքի ՏՍԴ-ը բարենպաստ դարձնող հորիզոնական կապերը խպվում են, և տարածքային հարաբերությունները՝ խաթարվում, քաղաքը դադարում է զարգանալ, թուլանում է ու կորցնում իր վաղեմի նշանակությունը: Ընդունված է ասել, **որ ամեն մի քաղաք իր գլոբուսաշխարհագրական դիրքի արդյունք է:** Զաղաքների պատմական ճակատագիրն ուղղակի արտացոլում է իր պետության, շրջանի, ժողովրդի տնտեսական ու քաղաքական զարգացման գործընթացների:

Դա հատկապես ցայտուն է երևում մայրաքաղաքների օրինակով: Հռչակավոր Հռոմը կորցնում է իր շուքն ու նշանակությունը Հռոմեական կայսրության կործանման հետ մեկտեղ, որի հետևանքով խաթարվում են քաղաքի երրեմնի բարձր զարգացման հասած բազմաթիվ տարածքային հարաբերություններ: Նվազագույնը վերականգնում է իր կենտրոնական քաղաքի նշանակությունը, սկսում է զարգանալ ու բարգավաճել, երբ հաստատվում է իտալական միասնական պետությունը և դառնում է դրա մայրաքաղաքը:

Գիտական հետազոտություններով հաստատվել է, որ **ուղղակի կապ գոյուրյուն ունի ՏՍԴ-ի և քաղաքի հիեարխիկ կարգի միջև:** Մեծ մասամբ խոչոր քաղաքի ՏՍԴ-ը լինում է **արքասովոր**, ինչ-որ քանով աշքի ընկնող, խոչորագույն քաղաքինը՝ **երկելի**, առանցնահատուկ, իսկ գերիշողը քաղաքինը՝ **եզակի, բացառիկ:**

Զաղաքների ՏՍԴ-ի նշանակությունը գնահատելիս հարկ է հաշվի առնել մի հանգամանք ևս: Տարբեր առիթներով նշվել է, որ ամեն մի աշխարհագրական օբյեկտ ունի իր սեփական, միայն իրեն հատուկ դիմագիծ, աշքի է ընկնում անհատականությամբ, չի կրկնում որևէ այլ օբյեկտի հատկանիշների ամբողջությունը: Նվազագույնը աշխարհագրական ամեն մի կոնկրետ օբյեկտ չեղու է բերում առաջին հերթին իր աշխարհագրական դիրքի յուրահակուրյան միջոցով և դրա շնորհիվ:

ՎԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ է աշխարհագրական դիրքը:
2. Որո՞նք են աշխարհագրական դիրքի մակարդակները:
3. Որո՞նք են աշխարհագրական դիրքի գտարագիտականները:
4. Ի՞նչ է գնդիսաաշխարհագրական դիրքը:
5. Ո՞վ և ի՞նչ աշխագության մեջ է գնդիսաաշխարհագրական դիրքը հայուղ ուսումնակարության ենթակեն:
6. Տնտեսաաշխարհագրական դիրքը ինչպէ՞ս է ազդել Եվրոպայի և Արևալի մերժապահության զարգացման վրա:
7. Ի՞նչ ընդհանրություն և փարբեռություն կա Կանադայի ու Միքանի գնդիսաաշխարհագրական դիրքերի միջև, ի՞նչ ազդեցություն են դրանք ունեցել գնդիսաարության զարգացման վրա:
8. Ինչպիսի՞ն է Եվրոպայի և Կովկասի գնդիսաաշխարհագրական դիրքը և ինչպէ՞ս է ազդել գնդիսաական զարգացման վրա:
9. Որո՞նք են գնդիսաաշխարհագրական դիրքի գլխավոր հարկանիշները:
10. Ինչպիսի՞ն է օրյեկտի հակադարձ ազդեցությունը գնդիսաաշխարհագրա - կան դիրքի վրա: Բերքը օրինակներ:
11. Ո՞րն է գնդիսաաշխարհագրական դիրքի երրորդ հարկանիշի՝ հեռավորության, գտարածության նշանակությունը: Թվարկե՛ք և բնութագրե՛ք հեռավորության գտարագիտականները:
12. Որո՞նք են գտարածական առումով գնդիսաաշխարհագրական դիրքի գտարագիտականները:
13. Ինչո՞ւ է գնդիսաաշխարհագրական դիրքը պատմական կապեգորիա:
14. Տնտեսաաշխարհագրական դիրքը ի՞նչ նշանակություն ունի քաղաքների զարգացման համար: Յուրաքանչյուր գործադրության վերաբերյալ պատմական կապեգորիա:

3.3. ՎԱՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ: ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Վասարակության տարածքային կազմակերպում և տարածքային կառուցվածք հասկացությունները համեմատաբար նոր են: Դրանք վերջերս են միայն մտել գիտական շրջանառության մեջ, բայց արդեն հաստատուն տեղ են գրավում հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունների շարքում:

Հասարակության գրարածքային կազմակերպում հասկացությունը կիրառվում է երկու իմաստով, առաջին՝ որպես պրոցես, գործողություն (կազմակերպում, ինքնակազմակերպում): Եվ երկրորդ՝ պրոցեսի, գործողության արդյունք, այսինքն՝ կազմակերպվածության ու ինքնակազմակերպվածության որոշակի վիճակ, մակարդակ:

Ներկայում տիրապետող է այն կարծիքը, որ հասարակության տարածքային կազմակերպումն իր թե՛ մեկ և թե՛ մյուս իմաստով **հասարակական աշխարհագրության հետազոտության հիմնական առարկան** է: Տարբեր դեպքերում, կախված կոնկրետ իրադրությունից և հետապոտության նպատակից, առաջնություն կարող է տրվել առաջին (պրոցես) կամ երկրորդ (կազմակերպվածության վիճակ, արդյունք) իմաստին: **Բայց բոլոր դեպքերում դրանց գրարածանումը պայմանական է:** **Դրանք հանդիս են զայխ համապեկ և փոխպայմանավորված են:**

Գիտությունը տվել է հասարակության տարածքային կազմակերպում հասկացության երկու իմաստների յուրաքանչյուրի սահմանումը:

Առաջին. հասարակության տարածքային կազմակերպումը բնակչության, բնօգտագործման, արտադրության (նյութական, ոչ նյութական), հասարակական կյանքի մյուս ոլորտների գեղարաշխումը կարգավորող այնպիսի պրոցեսների կամ գործողությունների ամբողջությունն է, որը հենվում է դրանց զարգացման օրինաչափությունների, կապերի, փոխկախվածությունների համայիր հաշվառման վրա:

Երկրորդ. հասարակության տարածքային կազմակերպումը (կազմակերպվածությունը) բնակչության տարաբնակեցման և հասարակական կյանքի ոլորտներում ընթացող պրոցեսների արդյունքում չեավորված կառուցվածքային միավորների՝ հասարակական գեղահամակագերի գուգորդումն է որևէ կոնկրետ գրարածություն: Այս դեպքում հա-

սարակության տարածքային կազմակերպում հասկացությունն իր մեջ ներառում է **աշխագունքի գործադրային** (աշխարհագրական) բաժանումը, արդադրողական ուժերի գեղարաշխումը, բնակչության գործադրանքումը, կյանքի գործերի կողմերի (կենսամակարդակ, կենցաղ, սովորություններ, մարդ-ընություն հարաբերություններ և այլն) գործադրային գործերությունները, պետքության վարչակարգածքային բաժանումը և **կառավարման մարմինների գեղարաշխումը:**

Հասարակության տարածքային կազմակերպման կարգավորման (լայն առումով՝ կառավարման) նպագունքն է **հասարակության գործադրային կառուցվածքի կագարելագործումը և դրա միջոցով աշխագունքի արդյունավելության բարձրացումը, մարդկանց բարեկեցության ապահովումը և Ընդհանուրապես կյանքի որակի բարձրացումը:**

Վերևում նշեցինք, որ հասարակության տարածքային կազմակերպումը հասարակական աշխարհագրության հետազոտության գլխավոր առարկան է: Այս հայտնի է, որ մինչև վերջերս հետազոտության գլխավոր առարկան համարվել է հասարակական երևոյթների, ավելի կոնկրետ՝ արտադրության տեղաբաշխումը: Այդ տեսակետն այժմ մերժվում է:

Նշված տեղաշարժը, այսինքն՝ «տեղաբաշխման» փոխարինումը «տարածքային կազմակերպումով», տեղի ունեցած շնորհիվ այն բանի, որ ինչպես մյուս աշխարհագրական գիտությունների, այնպես էլ հասարակական աշխարհագրության մեջ արմատավորվեց **համակարգային մուլտիպումը:** Ակնհայտ դարձավ, որ արտադրության Ընդհանուրապես և նրա առանցին ոլորտների ու ճյուղերի տեղաբաշխումը չի կարող դիտվել որպես հասարակական կյանքի մեկուսացված ինքնուրույն բնագավառ: Այն պայմանավորված է բազմաթիվ գործոններով և հապարավոր թելերով կապված է բնական պայմանների ու ռեսուրսների, դրանց քանակի ու որակի, օբյեկտի աշխարհագրական դիրքի, բնակչության քանակի ու որակի, տարարնակեցման, ներքին ու արտաքին կապերի և բազմաթիվ այլ երևոյթների հետ: Չստ որում, այդ երևոյթներն ապդում են տեղաբաշխվող օբյեկտի վրա ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդված չենով: Դա առավել ևս վերաբերում է տնտեսությանը, որը ոչ թե մի առանցին օբյեկտ է, այլ բազում օբյեկտների գուգորդում, բնական միջավայրի, բնակչության և նրա արտադրական գործունեության կուր միասնություն, որն օժտված է համակարգի բոլոր գլխավոր հատկանիշներով:

Այսպեղից էլ բխեցվեց այն սկզբունքային հետևորյունը, որ ա-

**ուանչին վերցրած աշխարհագրական օրյեկտների գրեպաշխման օպ-
դիմալացում հնարավոր չէ:** Պահանջվում է կատարել բոլոր օբյեկտների
համատեղ տեղաբաշխում, տեղաբաշխում մեկը մյուսի նկատմամբ, ընդս-
մին դրանք դիտելով ոչ թե սոսկ որպես ամբողջի առանցին մասեր, այլ
համակարգի տարրեր, բաղադրիչներ: Դա արդեն երևոյթի սոսկ գրեպա-
շխում չէ, որը հիմնականում պատասխանում է «որդե՞ղ» հարցին,
այլ գարածքային կազմակերպում է, որը պատասխանում է ոչ միայն
«որդե՞ղ», այլև «ինչո՞ւ» և «ինչպե՞ս» հարցերին:

Սկզբունքային դրույթ է նաև այն, որ գարածքային կազմակերպ-
ման ճանաչումը, դրա ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարա-
վոր է միայն հենվելով գարածքային կառուցվածք հասկացուրյան
վրա:

Հայտնի է, որ կառուցվածքայնություն ունեցող ամեն մի բնական
մարմին, ի տարբերություն ամորֆ, անկերպ մարմնի, բնորոշվում է իր
յուրահատուկ ներքին կառուցվածքով: Օափազանց քարդ կառուցված-
քայնությամբ են օժտված աշխարհագրական թաղանթը, նրա առանցին
վերցրած ոլորտները և ավելի յաձր կարգի երկրահամակարգերը: Դա
հավասարապես վերաբերում է նաև մարդու որտին ընդհանրապես և
մարդկային հասարակությանը մասնավորապես:

Սովորաբար տարբերում են կառուցվածքի երկու հատույթ՝
(կտրվածք)` կոմպոնենտային և տարածքային:

Հասարակական աշխարհագրության և ռեգիոնալ տնտեսագի-
տության մեջ կոմպոնենտային կառուցվածք տերմինի փոխարեն օգտա-
գործվում է **ճյուղային կառուցվածք** տերմինը:

Ճյուղային կառուցվածքն աշխարհի, առանցին երկրի, շրջանի,
յանկացած այլ օբյեկտի ներսում ընթացող հասարակական գործունեու-
թյան փոխականացված ոլորտների, բնագավառների, **ճյուղերի ու են-
քամյուղերի ամրողությունը և դրանց միջն զարգացող կապերն ու
առնչություններն են:**

Տարածքային կառուցվածք ասելով նկատի են ունենում այդ
նույն օբյեկտները՝ աշխարհը, երկիրը, շրջանը և այլն կազմող գարած-
քային կառուցվածքային միավորների (ավելի փոքր հասարական
գեղիամակարգերի) ամրողությունը և դրանց միջն զարգացող կապերն
ու առնչությունները: Նթե ճյուղային (կոմպոնենտային) կապերը սովորա-
բար

բար լինում են ուղղացիգ, ապա գեղիամակարգերի կապերը տարածքայն են, հորիզոնական:

Հասարակական կյանքի ոլորտներից առ այսօր աշխարհագրության կուլմիս ավելի մեծ ուշադրության արժանացել է տնտեսական ոլորտի տարածքային կառուցվածքը: Այս բնագավառներին են նվիրված աշխարհագետների ու ոեգիոնալիստ-տնտեսագետների գիտական հետազոտությունների ճնշող մեծամասնությունը:

Լայն տարածում է ստացել տնտեսության տարածքային կառուցվածքի հետևյալ սահմանումը. **դնդանության գործածքային կառուցվածքը որոշակի գործածքում և որոշակի չենք փոխադարձորեն իրար նկատմամբ գնդադրված դնդանության գործածքային օրյեկտների ամբողջությունն է:** Տնտեսության զարգացման ընթացքում այդ օբյեկտները գտնվում են բարդ փոխազդեցության մեջ, իսկ որոշակի պայմաններում չնավորում են նոր որակի տնտեսական օրգանիզմներ՝ հասարակական աշխարհագրական (տարածքային) համակարգեր:

ՀԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Որո՞նք են «հասարակության գործածքային կազմակերպում» հասկացության երկու իմաստները: Տվեր յուրաքանչյուրի սահմանումը:**
2. **Ո՞րն է հասարակության գործածքային կազմակերպման կարգավորման (կառավարման) նպատակը:**
3. **Ինչո՞ւ հասարակական աշխարհագրության հետազոտության գլխավոր առարկան՝ հասարակության «գնդարաշխումը», այժմ փոխարինվել է «գործածքային կազմակերպումով»:**
4. **Ի՞նչ է «գործածքային կառուցվածքը»: Ինչպես է այն առնչվում «գործածքային կազմակերպման» հետ:**
5. **Ի՞նչ է «դնդանության գործածքային կառուցվածքը»: Տվեր սահմանումը:**

3.4. ՇՐՋԱՄՆ, ՇՐՋԱՄԱԳՈՅԱՑՈՒՄ, ՇՐՋԱՄԱՑՈՒՄ

Վանրահայտ է, որ մարդիկ շնչում են օդ, խմում են ջուր, սնվում են, ծնվում ու մահանում են: Դրանք, շատ կարևոր փաստեր լինելով հանդերձ, աշխարհագրությանը մասնագիտորեն չեն հույսում: Բայց երբ պարզվում է, որ ջրի և օդի որակը, սննդի հայթայթման եղանակները, կյանքի տևողությունը և պայմանները տարբեր վայրերում տարբեր են, աշխարհագրությունը սկսում է հետաքրքրվել այդ տարբերություններով և փորձում է պարզել դրանց պատճառները: Տարբեր վայրերում միանման չեն նաև բնական միջավայրի բաղադրիչները, ամտեղ ապրող ժողովուրդները, նրանց սովորություններն ու ապրելակերպը, արտադրական գրադարաններն ու հասարակական կյանքի կազմակերպումը: Այս ամենը երկրի աշխարհագրական թաղանթին հաղորդում է բացառիկ մեծ բազմազանություն:

Արդի աշխարհագրությունը եկել է այն եւրակացության, որ այդ բազմազանությունը, գեղից գեղ դիպվող դարբերություններն ինքնին մարդկային քաղաքակրթության վիճակի ոնսուրա են: *Տեղից գեղ դարբերությունները ինչպիսին էլ դրանք լինեն, իրանում են մարդկային գործունեությունը:*

Դուք գիտեք, որ առանց պոտենցիալների տարբերության ելեկտրական հոսանք չի կարող լինել, առանց մակերևույթի բարչությունների տարբերության չեն կարող հոսել գետերը, և ցամաքը բավարար խոնավության դեպքում կվերածվի համատարած ճահիճ: Սուանց մթնոլորտային ճնշման տարբերությունների չի լինի օդային զանգվածների տեղաշարժ և քամի:

Ծիշտ նույն ցնով էլ Երկրի վրա չեր պահպանվի կյանքը և չեր զարգանա մարդկային քաղաքակրթությունը, եթե չլինենին զարգացումը խթանող տարածքային տարբերությունները, պայմանների բազմազանությունը: *Այդ դարբերությունների ու բազմազանության շնորհիվ է, որ ինչպես մարդկանց, այնպես էլ վայրերի միջև գեղի և ունենում դերերի ու գործառույթների դարպարաժանում և որպես դրա արդյունք՝ մրցակցություն ու համագործակցություն:*

Գիտական լեզվով ասած՝ զարգանում է *շրջանագոյացման* երևութը: Զնավորվում են տարբեր մեծության ու բովանդակության տարածքներ՝ իրենց ուրույն հատկանիշներով ու առանձնահատկություններով:

Ծրջանագոյացման երևույթը հատուկ է ոչ միայն աշխարհագրական թաղանքին ամբողջությամբ վերցրած, այլև դրա առանցին բաղադրիչներին և դրանցում ընթացող պրոցեսներին՝ բուսական ու կենդանական աշխարհին, հողածածկույթին ու կիմային, Երկրի մակերևույթին ու ջրագրությանը, բնակչության տարաբնակեցմանը, նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտին, տնտեսության նյուղերին ու ենթաճյուղերին:

Աշխարհագրական գիտությունը, որպեսզի **ճանաչի լրարածական լրարքերությունները, համակարգի և ուսումնասիրի աշխարհի բազմազանությունը, կարարում է շրջանացում, առանձնացնում է շրջաններ:**

Ընդունված է ասել, որ **շրջանը աշխարհագրական գիտության համար մուրավորապես այն է, ինչ արումը՝ ֆիզիկայի, մոլեկուլը՝ քիմիայի, քիչը՝ կենսաբանության համար:**

Իսկ շրջանցումը աշխարհագրության համար ունի այն նշանակությունը, ինչ, ասենք, դասակարգումը՝ բուսաբանության ու կենդանաբանության, կամ պարբերացումը՝ պատմության համար:

Նվազագույնը աշխարհագրական գիտության համար է այն նշանակությունը, որը պարագաների մասնիկի՝ շրջանների:

«Ծրջան» գիտական փերմինն ունի երկու իմաստ՝ լրացրանական և լրացրանմիական (կարգարանական): Ինչ է դա նշանակում:

Ծրջան է համարվում ամեն մի ինքնապիս ամրողական լրացրածք, որն ունի ուրույն հարկանիշներ, սեփական բնուրագիր և դրանցով լրացրելովն է հարկան լրացրածքներից: Տարածքն ինքնատիպ է, եթե առկա են բնական և հասարակական տարրերի տարբեր տեսականի, դրանց տարբեր քանակական հարաբերակցություն և փոխկապակցվածություն: Այդպիսի տարբեր տարածքներ՝ ինքնուրույն շրջաններ են ցեզ արդեն հայտնի բնական գոտիները, զոնաները, ենթավոնաները, ցանկացած այլ աշխարհակարգ:

Տարածքն ինքնատիպ է համարվում նաև այն դեպքում, եթե աչքի է ընկնում որևէ մեկ առանցին եական հատկանիշով, օրինակ, անտառաշատությամբ, բնակչության մեծ խտությամբ, ուրբանիզացման բարձր աստիճանով, որոշակի արտադրական մասնագիտացմանը և այլն:

¹ Ծրջան բառը հայերենում օգտագործվում է նաև գիտական հայուկ փերմինի իմաստով. լրիմարինելով միջազգային լրացրածում գլուծ ույուն (ֆր. rayon-d'activité) և ուղիղ (լատ. region-մարզ) բառերին:

Հայտնի է, որ ամեն մի տարածք չէ, որ ինքնատիպ է: Հետևապես ամեն մի տարածք չէ, որ կարող է շրջան լինել: *Տարածքը շրջան է, եթե իր բոլոր հարկաններից դարրերվում է ինքնապիպուրյամբ, ամրողական ուրույն թնուրագրով անկախ իր մեծուրյունից ու կոնկրետ բովանդակուրյունից:* Ծրջան չէ, եթե չունի այդ հատկանիշները և ընդամենը մի այլ շրջանի լոկ շարունակությունն է:

Սա այն դեպքն է, երբ «շրջան» տերմինը մենք օգտագործում ենք իր **դիպարանական իմաստով (դարածքի ինքնուրույն դիպ):**

Ուրեմն, առանցին շրջաններ տիպարանական միավորներ են, օրինակ՝ բնական գոտին ու զոնան, մայրցամաքն ու աշխարհամասը, Սիրիոս, Կովկասը, Կենտրոնական Ամերիկան, Մերձավոր Արևելքը, Երկրոների խմբերը, առանցին պետություններ, պետության վարչատարածքային միավորը:

Ինչպես տեսնում ենք, տիպարանական շրջանները կարող են տարբեր կարգի լինել, ունենալ տարբեր աստիճանի ներքին բարդություն և ընդգրկել տարբեր մեծության տարածքներ:

Ծրջանայում կատարելիս ընդարձակ և բարդ տարածքները տրոկվում են առանցին մասերի, վերջիններս՝ ավելի ցածր աստիճանի միավորների, և այսպես շարունակ: Այդ միավորները դասավորվում են հիերարխիայի՝ ենթակարգության սկզբունքով: *Տարրեր կարգի միավորները հայտնի են դարսուններ անունով:* Օրինակ, ֆիզիկաաշխարհագրական շրջանայման տարբեր տարսուններ են՝ բնական գոտին, բնական զոնան, մայրցամաքը, ենթացամաքը, երկիրը, մարզը, ենթամարզը, ֆիզիկաաշխարհագրական շրջանը, ենթաշրջանը և ավելի փոքր բնատարածքային միավորները: Տնտեսական շրջանայման տարսուններ են՝ տրնտեսական գոտին, տնտեսական շրջանը, ենթաշրջանը, միկրոշրջանը և այլն:

Ինչպես տեսնում ենք, շրջանայման տարսունոմիական համակարգը հեշտությամբ կարելի է նմանեցնել զինվորական աստիճաններին ու կոչումներին՝ սկսած մարշալից ու գեներալից մինչև սերժանտն ու շարքային զինվորը:

Ծրջանայման մակարդակների՝ տարսունների թվարկումից դուք նկատեցիք, որ շրջան կարող է կոչվել նաև շրջանացման համակարգի որևէ դարսունը: Դա «շրջան» դերմինի երկրորդ՝ դարսունոմիական (նույնն է թե կարգարանական) միավոր արդահայտող իմաստն է:

Ծրջան և շրջանայման հասկացությունները պատկանում են աշ-

խարհագրական գիտությունների ինչպես մյուս ճյուղերի, այնպես էլ հասարակական աշխարհագրության կարևորագույն գիտական կատեգորիաների թվին, բայց հատկապես լայն կիրառություն ունեն տնտեսական-արտադրական երևույթների ուսումնասիրության ու կառավարման քնազակառությունների վերաբերյալ:

Տնտեսական շրջանները և շրջանայումը **լինում են երկու գուակի՝ համապնդեսական ինքնազրայ և ճյուղային:** Համատնտեսականի դեպքում հիմք է ընդունվում տնտեսության ամբողջությունը, սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանրական ցուցանիշները: Մինչդեռ ճյուղայինի դեպքում հաշվի են առնվում միայն տվյալ ճյուղի զարգացման ու տեղաբաշխման առանձնահատկությունները և պայմանները:

Ի՞նչ է համապնդեսական (կամ ուղղակի տնտեսական) շրջանը:

Գոյություն ունեն դրա տարրեր սահմանումներ: Առավել տարածում է գտել հետևյալ սահմանումը. **գննիքեսական շրջանը երկրի (պարածաշրջանի) գործակությունները և գննիքեսապես ամբողջական մասն է, որը բնուրագրվում է բնական և գննիքեսական պայմանների ինքնապիպուրյամբ, ներքին կայուն գննիքեսական կապերով և գննիքեսական մասնագիրացմամբ:**

Տնտեսական շրջանը հասարակական արտադրության տարածքային կազմակերպման կարևոր օղակ է: Դա **պետության ոեզիոնալ քաղաքականության և պարածքային պլանավորման գլխավոր օրյենկում է:**

Սովորաբար տնտեսական շրջանին վերագրում են երկու կարևոր ժողովրդատնտեսական գործառույթներ: Առաջին գործառույթը որոշակի **ապրանքներով ու ծառայություններով արդարին (կամ համազգային) շուկան սպասարկելն է:** Դրանք այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնց ծավալն ավելին է, քան տեղական պահանջներն են: Դրանց զերպարփակումը աշխատանքի ավելի բարենպաստ քնական ու տնտեսական պայմաններ, որոնց արդյունավետ օգտագործման միջոցով կատարվում է բերվում աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն և արտադրանքի ավելի սահմանափակում: Դա նշանակում է, որ այդ ապրանքներն ու ծառայությունները արտադրին շուկայում դիմանում են մըրցակցությանը և որոշում են շրջանի տեղը աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում, ինչպես նաև տնտեսական դիմագիծը:

արտաքին աշխարհում: Այդ ամենի շնորհիվ տնտեսական շրջանը չեղք է բերում որոշակի **մասնագիրացում**:

Տնտեսական շրջանի երկրորդ կարևոր գործառույթը դա որոշակի ապրանքներով ու ծառայություններով շրջանի **ներքին շուկան, այսինքն՝ գեղական պահանջները, բավարարելն է:**

Խնչպես առաջին, այնպես էլ երկրորդ գործառույթի հաջող կատարումը շատ բանով կախված է նրանից, թե ինչ մակարդակի վրա է գտնվում շրջանի **կուսալեքսային զարգացումը:** Նախ և առաջ կոմպլեքսայնության շնորհիվ է, որ շրջանը դառնում է տնտեսական ամբողջություն: Տնտեսության տարբեր ճյուղերի ու բնագավառների միջև կարգանում են կայուն տնտեսական կապեր: Համամասնություն է հաստատվում շրջանի բնական ու աշխատանքային ռեսուրսների օգտագործման, արտադրության կազմակերպման և շրջանի ներքին պահանջարկի միջև: Արդյունավետ կապերն ու իմանավորված համամասնությունները նույնպես նպաստում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և ապրանքների ինքնարժեքի իջեցմանը:

Դժվար չէ կոսիել, որ տնտեսական շրջանների հիերարխիայում մասնագիտապման ու կոմպլեքսայնության ավելի բարձր մակարդակ կունենան ավելի բարձր կարգի տաքսոնները: Այստեղից էլ բխում է հաջորդ օրինաչափությունը՝ **ինքան բարձր է վնայեական շրջանի գարուն-միական կարգը, այնքան ավելի մեծ է նրա վնայեական ինքնարապուրյան, ինքնուրույնուրյան ու անկախուրյան ասպեկտները:**

Օպենք է մոռանալ, որ այդ տնտեսական ինքնարապությունը, ինքնուրույնուրյունն ու անկախուրյունը երբեք բացարձակ լինել չեն կարող: Դրանք հարաբերական հատկանիշներ են և օգտագործվում են տարբեր շրջաններ իրար հետ համեմատելու համար:

Երկայումս ոչ միայն տնտեսական շրջանները, այլև բազմակողմանիորեն կարգացած կողոր պետությունները չեն կարող լինել ինքնարավ, ինքնուրույն ու անկախ՝ բացարձակ իմաստով: Դրանք համաշխարհին տնտեսության բաղադրիչներից են, գտնվում են նրա ազդեցության տակ և գոյություն ունեն ու կարգանում են փոխադարձ կապերի ու փոխկախվածության մեջ գտնվելով մյուս պետությունների ու շրջանների հետ:

Ծրջանները, այդ թվում նաև տնտեսաշխարհագրական շրջանները, լինում են երկու տիպի՝ **միասնուկամ հոմոնգեն** (հոն. homogenes-միասնուկ) և **հանգուցային** կամ **նոդուլ** (լատ. nodus-հանգույց, կծիկ բառից):

Միասեռ համարվում է այն շրջանը, որի սահմաններում բոլոր կեդրերն ունեն նույն հագեկանիշը: Այդպիսին են, օրինակ, լանդշաֆտը, հողերի տեսակը, կիմայական շրջանը, անասնապահական շրջանը:

Հանգուցային է այն շրջանը, որն ունի արդարայլված գոնիք-սական կենսարուն: Դա տարածքի այն կազմակերպիչ կենտրոնն է, որի շուրջը որոշակի շառավիղով համախմբվում են շրջանի եվրային տեղամասերը: Օրինակ, տրանսպորտում այդպիսի կազմակերպիչ կենտրոն կարող է լինել տրանսպորտային հանգույցը, որտեղից նյուտավորվում են ծայրամասերն սպասարկող ավտոմոբիլային ու երկաթուղային նաև պարհերը: Հանգուցային շրջան կարող է լինել նաև փոքր պետությունը իր մայրաքաղաքով, եթե մայրաքաղաքը միաժամանակ ծայրամասերն իրեն չգոր խոչըր արդյունաբերական, տրանսպորտային, մշակութային ու կրթական կենտրոն է:

Շրջանի ու շրջանացման եռթյան մասին գիտնականների տեսակետները չեն համընկնում: **Նրանց մի մասը այն կարծիքին է, որ շրջանները գոյուրյուն ունեն օրյեկտիվորեն, մարդկանց կամքից անկախ:** Այդ դեպքում գիտնականների խնդիրն է բացահայտել այդ շրջանները, տարաքանական իրարից, սահմանագծել և հետապուտել:

Մյուս տեսակետի համացայն թեն ընդունվում է, որ մարդկանց կամքից անկախ գոյուրյուն ունի աշխարհագրական թաղանթի և դրա քաղաքիշների ու երևույթների տարածքային բազմազանություն, **բայց այդ բազմազանուրյան բացահայլվումը և շրջանների առանձնացումը կախված է հետազոտողից, նրա կողմնորոշումից ու նաև պահապահադրումից:** «Ու է պատճառը, -պնդում են երկրորդ տեսակետի կողմնակիցները, -որ տարբեր հետազոտողներ նույն երևույթի շրջանացման տարբեր սխեմաներ, տարբեր քանակի ու մեծության շրջաններ և տարբեր կոնկրետ սահմանագծեր են առաջարկում»:

Այսպես թե այնպես, բոլորը միահամուռ են այն կարծիքում, որ շրջանը և շրջանացմը արդի աշխարհագրության կարևորագույն հասկացություններից են և դրանց ինչպես գիտանախաչողական, այնպես էլ կիրառական, կոնստրուկտիվ նշանակությունը դժվար է գերազնահատել:

Շրջանացումը գիտական ճանաչողության միջոց է, աշխարհագրական հետազոտուրյան հզոր գործիք, որի օգնությամբ ուսումնակիրում են աշխարհագրական բաղանքի եզակի ու կարևորագույն առանձնահատկությունը՝ բարածքային բազմազանուրյունը, բացահայ-

տում են դրա տարբեր տաքսոնոմիական (կարգաբանական) միավորները և դրանց կարգայման մեխանիզմները, ներժին ու արտաքին կապերը:

Չատ մեծ է նաև շրջանացման կիրառական, կոնստրուկտիվ նշանակությունը: Շրջանացումը միաժամանակ, գրարածքային կառավարման արդյունավետ մերոդ է, որը հարկապես լայն կիրառություն ունի հասարակական պրակտիկայում, առաջին հերթին՝ դրա տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներում:

Շրջանացման կիրառական նշանակության ցայտուն օրինակ է պետության վարչարարական շրջանացումը, որի միջոցով իրականացվում է պետության գրարածքային կառավարումը: Ամեն մի պետություն բաժանվում է վարչական տարածքների, յուրաքանչյուր տարածքում չենավորվում է կառավարման (պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման) համակարգ, և պետության կենտրոնական իշխանությունները դրանց միջոցով իրականացնում են ամբողջ երկրի կառավարումը:

Տարբեր երկրներում վարչատարածքային բաժանումը շրջանացման տարբեր սխեմաներով է իրականացվում: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում այդ բաժանումը երկաստիճան է. առաջին աստիճանին համապատասխանում են մարզերը, երկրորդ աստիճանին՝ քաղաքային և գյուղական համայնքները:

Ռուսաստանի Դաշնության շրջանացումը պետական կառավարման նպատակով շատ ավելի բարդ կառուցվածք ունի: Այն եռաստիճան է և, բայց այդ, առաջին աստիճանում այդ բաժանումը տարածքի մի մասի համար քաղաքական բաժանում է, մյուս մասի համար՝ վարչական բաժանում: Քաղաքական տարածքային միավորներ են Ռուսաստանի Դաշնության մեջ մտնող հանրապետությունները, օրինակ՝ Շաթարստանը, Բաշկորտոստանը, Յակուտիա-Սախան, Հյուսիսային Օւեթիա-Ալանիան, Դաղստանը՝ ընդամենը 21 հանրապետություն: Առաջին աստիճանին են պատկանում նաև երկրամասերն ու մարզերը, որոնք արդեն ոչ թե քաղաքական, այլ վարչատարածքային միավորներ են:

Շրջանացման երկրորդ աստիճանում թե՛ հանրապետությունները և թե՛ երկրամասերն ու մարզերը բաժանվում են վարչական շրջանների (և մարզային ենթակայության քաղաքների), իսկ շրջանները՝ շրջանային ենթակայության քաղաքների և գյուղական խորհուրդների:

ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Շոտլանդիայում և մի շարք այլ եր-

կըրներում տարածքի կառավարումը կատարվում է եռաստիճան, իսկ, օրինակ, Ֆրանսիայում՝ 5-աստիճան շրջանայման միջոցով:

Պետությունների մեծ մասում շրջանայման հատուկ տեսակներն օգտագործվում են նաև ոեգիոնալ քաղաքականության մշակման ու իրականացման համար:

Ա-եզրակացնականությունը պետության գործունեության մի հավույք ոլորդ է, որի միջոցով իրականացվում է երկրի բնակչության առջևադիմության, բնակչության պահպանը և բնակչության ու բնակչության պարագային կառավարումը և համապետական ծրագրերի կառարումը:

Արդեն ասվել է, որ ամեն մի պետության ներառում գոյություն ունեն քնական պայմանների ու ոեսուրսների, քնակչության խտության, տրանսպորտային ապահովածության, տնտեսաշխատարարական դիրքի և քաղում այլ հատկանիշների տարածքային տարբերություններ: Դա նշանակում է, որ տարբեր մասերի սոցիալ-տնտեսական վարգայման, ոեսուրսների յուրացման և քնական միջավայրի պահպանման հիմնախնդիրները նույնպես տարբեր են, որոնք միատեսակ լուծումներ ունենալ չեն կարող:

Այդ հիմնախնդիրները լուծելու համար պետությունը մշակում և իրականացնում է ուղղակի և անուղղակի միջոցառումների մի ամբողջ համակարգ: Ուղղակի միջոցառումներից են պետական կապիտալ ներդրումները, որոնք պետությունը կատարում է այս կամ այն շրջանում նոր քաղաքներ ու գյուղեր, արդյունաբերական ձեռնարկություններ, ճանապարհներ կառուցելու, տնտեսության տարածքային կառուցվածքը կատարելագործելու համար:

Անուղղակի միջոցառումներից են տարբերակված հարկերի, տուրքերի ու վարկերի սահմանումը, որով պետությունը զգտում է որոշակի շրջաններում ստեղծել այս կամ այն նյուիդի վարգայման համար ավելի նպաստավոր պայմաններ ու խթանել արագացված տնտեսական գործունեությունը:

Ո՞րն է ոեգիոնալ քաղաքականության կազմակերպման չեզ, ինչպես է դա իրականացվում: Դա իրականացվում է ոեգիոնալ ծրագրավորման միջոցով (սոցիալիստական երկրներում ոեգիոնալ ծրագրավորումը հայտնի էր ոեգիոնալ (կամ տարածքային) պլանավորում անունով):

Պետությունների փորձը ցույց է տալիս, որ ոեգիոնալ քաղաքականություն իրականացնելու համար միայն վարչական շրջանայումը քա-

վարար չե: Անհրաժեշտ է լինում կատարել այլ՝ **հարուկ շրջանացում**, **որը դմբռեական (կամ սոցիալ-դմբռեական)** շրջանացումն է: Տևուսական շրջանացման համար օգտագործվում են այլ սկզբունքներ ու չափանիշներ, քան վարչական շրջանացման դեպքում է: Ուսումնասիրվում են յուրաքանչյուր շրջանի վարդապետական պայմանները և մակարդակը, բայց այսպիսի շրջանացում են ուժեղ և թույլ կողմերը, որոշվում են համապետական նպատակները և դրա հիման վրա կազմվում է շրջանի կոմպլեքսային վարդապետական ծրագիր (պլան), որը կարող է լինել կարճաժամկետ կամ երկարաժամկետ:

Ուեգիոնալ ծրագրավորման միջոցով մի շարք երկրներում կարողացել են հաղթահարել թույլ վարդապահ տարածքների ետ մնալը և վերացնել սոցիալ-տնտեսական վարդապետական տարածքային անհամամասնությունները: Դրա համբավավոր օրինակներն են ԱՄՆ-ում Թեննեսի գետահովտի, Ֆրանսիայում՝ Ռուսայի գետաբերանի, Լավուրյան ծովափի, Կանադայում՝ Ատլանտյան մարզերի և Հյուսիսի, Բրազիլիայում՝ Ամազոնիայի վարդապետական թեգիոնալ ծրագրերը:

Նախկին Խորհրդային Միությունում ռեգիոնալ պլանավորման միջոցով մեկ կենտրոնից կառավարվում էր տնտեսական շրջանների և միութենական հանրապետությունների սոցիալ-տնտեսական վարդապետումը, պետական կապիտալ ներդրումների միջոցով չևավորվում էին նոր տարածքային-արտադրական համալիրներ, խթանում էին Սիրիի և Չայքակի բնակեցումը և հարուստ բնական ռեսուրսների յուրացումը:

Հայաստանի պայմաններում նույնպես տարածքային պլանավորման հիմքում դրվում էր երկրի գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական շրջանացումը: Խորհրդային Հայաստանի գոյության վերջին 20-ամյակում գործող սոցիալ-տնտեսական շրջանացման համապատասխան երկիրը բաժանված էր 6 շրջանի, որոնցից յուրաքանչյուրի համար մշակվում էր կոմպլեքսային վարդապետական հնգամյա և երկարաժամկետ պլան:

Ներկայում Հայաստանի Հանրապետության ռեգիոնալ քաղաքականության առաջնահերթ նպատակային խնդիրներն են՝ աղետի գոտու վերականգնումը, սահմանամերձ տարածքների ամրապնդումը և բարյրալեռնային գոտու յուրացումը:

ԴԱՐՁԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչո՞ւ աշխարհագրական քաղաքի բազմազանությունը դիպվում է որպես մարդկային քաղաքակրության ռեսուլու:
2. Ո՞րն է «շրջան» գիտական գեղարմինի՝
 - ա) գիտաքանակական իմաստի բովանդակությունը,
 - բ) գարսուննիւսական իմաստի բովանդակությունը:

Ցույց դրեք օրինակներով:
3. Ի՞նչ է համագնուեական շրջանը:
4. Ի՞նչ է ճյուղային շրջանը:
5. Որո՞նք են գննիւսական շրջանների երկու ֆունկցիաները:
6. Ի՞նչ է գննիւսական շրջանի կոմպլեքսային զարգացումը:
7. Որո՞նք են շրջանի (և մասնավորապես գննիւսական շրջանի) երկու գրիպերը, ինչո՞վ են դրանք իրարից փարբերվում:
8. Ծրջանի ու շրջանացման էլուրյան մասին իմշայիկ՝ գննակեղմներ գոյուրյուն ունեն:
9. Ո՞րն է շրջանացման գիտաճանաչողական նշանակությունը:
10. Ո՞րն է շրջանացման կիրառական նշանակությունը:
11. Ի՞նչ է ոնգիռնալ քաղաքականությունը:
12. Ծրջանացումն ի՞նչ առնչություն ունի ոնգիռնալ քաղաքականության հետ:
13. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության ոնգիռնալ քաղաքականության առաջնահերթ նպատակային խնդիրները զարգացման արդի փուլում:

3.5. ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՐՆ ԴԱՄԱԿԱՐԳ:

ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՐՆ ՄՈՏԵՅՈՒՄ

Աշխարհագրական համակարգ հասկացությունը միշտ է! Եղել է աշխարհագրական գիտության առանցքային նշանակության հասկացությունների թվում, իսկ վերջին տասնամյակներում չեղոք է քերել բացառիկ կարևորություն և հայտնվել նրա ուշադրության կենտրոնում: Այդ հասկացության ներդրումը և տարածումը արմատական փոփոխություններ առաջացրին աշխարհագրական գիտության մեթոդա-

բանության ու տեսության մեջ և անշափ մեծապրին նրա գործնական հնարավորությունը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է այն քննարկել ավելի մանրամասն:

Կա մի հայտնի պրեկյան առած. չորս կույրերի մոտեցնում են փղին: Առաջին կույրը, հանդիպելով փղի ոտքին, գոչում է՝ սա սյուն է: Երեսրորդը դեմ առնելով փղի իրանին, հայտարարում է, որ իր առջև պատ է, երրորդը շոշափում է կնճիթը, և համոզված է, որ օչ է: Վերջապես չորրորդը, դիպելով պղչին, կարծում է, որ պարան է: Վեճի ընթացքում յուրաքանչյուրն ապացուցում է «իր ճշմարտությունը», և ոչ մի կերպ չեն կարողանում համայախության գալ ու ստեղծել փղի ամբողջական պատկերը: Յուրաքանչյուրը ճանաչել է իրեն բաժին ընկած մասը և ի վիճակի չե պատկերացնել, որ տարբեր մասերի միասնությունն ամբողջովին նոր որակ է՝ փղի կոչվող մի հսկա կենդանի:

Երկար ժամանակ գիտնականները սահմանափակվելով մեզ շրջապատող միջավայրի և ընդհանրապես աշխարհագրական թաղանթի առանձին բաղադրամասերի ուսումնասիրությամբ, չեն կարողանում ստանալ նրա ամբողջական գիտական պատկերը:

Դուք դպրոցում ուսումնասիրել եք ոեգիոնալ աշխարհագրության և Հայաստանի աշխարհագրության դասընթացները, ծանոթացնել եք առանձին տարածաշրջանների ու պետությունների: Իհարկե, ձեր ուշադրությունը չի վրիպել, որ տարածաշրջաններն ու պետությունները ներկայացվել են նոյն սխեմայով՝ բնություն, բնակչություն, տնտեսություն, ներքին տարբերություններ: Այդ սխեման գործել է դեռ այն ժամանակներից, երբ աշխարհագրությունը նոր միայն սկսել էր ուսումնասիրել առանձին վերցրած պետությունները և ոեգիոնները:

Բայց մինչև վերջերս ոչ միայն բնությունը, բնակչությունը և տնտեսությունը, այլև դրանց ավելի փոքր բաղադրամասերը մեծ մասամբ քննարկվում էին մեկուսի, թեև իրականության մեջ դրանք հանդես էին գալիս միասնաբար: Նրանց անջատ-անջատ քննարկումն ավելի հեշտ էր ու հասկանալի: Գիտությունը չէր կարողանում բացահայտել ու խորությամբ ուսումնասիրել դրանց փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները: Լավագույն դեպքում կատարվում էր աշխարհագրական միջավայրի առանձին բաղադրիչների մեխանիկական միացում: Խսկ դա բավարար չէր, որպեսզի ուսումնասիրվող բարածքն ընկալվեր որպես մեկ ամբողջություն, որպեսզի սպացվեր այդ բարածքի միասնական գի-

Կրական պատկերը: Իսկ դրա համար պահանջվում էր կոմպլեքսային, փոխկապակազմական մոտեցում, Ն.Ն. Թարանսկու խոսքերով ասած՝ անհրաժեշտ էր «...նվազել ակորդներով և ոչ թե մեկ մատով»:

Իրականում աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտները, նրանց ավելի փոքր բաղադրիչները կապված են իրար հարյուրավոր ու հապարակոր ակնհայտ ու թաքնված, տեսանելի ու անտեսանելի թելերով և մշտապես գտնվում են շատ բարդ փոխհարաբերությունների մեջ: **Այդ կապերի ու փոխհարաբերությունների շնորհիվ է, որ գոյուրյուն ունի և զարգանում է աշխարհագրական ռադարը՝ աշխարհագրության հետազոտության միասնական օրյենկով:** Աշխարհագրությունն ի վիճակի չեր բացահայտել այդ կապերն ու փոխհարաբերությունները, ի մի բերել դրանք և նաև ամբողջության մեջ: Եվ դա այն պատճառով, որ աշխարհագրության դիֆերենցումը, մասնավոր գիտությունների մեկուսի զարգացումը հանգեցնում էր կապերի թուլացմանը դրանց միջև: Իրական եր դարձել միասնական աշխարհագրության «պատռա-պատռ» լինելու վտանգը: **Արդեն շուկաներ էին պրովում այն մասին, որ աշխարհագրություն մայր գիտությունը, ծննդով մնածարիվ մասնավոր գիտություններ, մահանուն է:**

Հիմնախնդիրը չափավանց բարդ էր, իսկ աշխարհագրության տեսական և մեթոդական վիճանոցը պատրաստ չեր լուծելու այն:

Օգնության եկավ կիրեննետիկան, որի ընդերջում իր տեսական չև ակերպումը ստացավ մի հասկացություն, որն այժմ լայնորեն կիրառվում է գիտության բոլոր ճյուղերում, տեխնիկայում ու հասարակական պրակտիկայում: **Դա «համակարգ» (սիստեմ) հասկացությունն է (Sistema հունարեն նշանակում է «մասերից բաղկացած ամբողջություն»):**

Համակարգ հասկացությունը և դրա կիրառությունը գիտության կողմից երկար պատմություն ունեն: Դեռևս Արիստոտելը, անդրադառնալով համակարգ հասկացությանը, պնդում էր, որ **ամրողը մնած է իր մասերի գումարից:** Անտիկ, ինչպես և նորագույն փիլիսոփայությունը մեծ ուշադրություն էր հատկացնում մարդկային իմացության համակարգայնության խնդրին:

Այդուհանդերձ, մինչև 19-րդ դ. կեսերը տիրապետող է եղել բարդ օբյեկտը առանձին մասերի բաժանելու գգոտումը: Գտնում էին, որ ամրողի հատկությունները հնարավոր են բացատրել միայն այդ մասերի հատկություններով:

Օսաներորդ դարում խիստ աշխուժացան գիտական հետազոտության համակարգային մեթոդները: Ներկայում դրանք առավել լայն կիրառություն ունեն զարգացող բարդ օբյեկտների հետազոտության ժամանակ: Այդպիսի օբյեկտներից են, ինչպես արդեն գիտեք, աշխարհագրական թաղանթը և նրա բնական ու հասարակական (սոցիալական) բաղադրիչները, որոնք ինքնակարգագործող ու ինքնազարգացող համակարգեր են:

Գիտական իմացության զարգացումը ցույց տվեց հետազոտության ավանդական եղանակների անբավարարությունը: Անհրաժեշտություն էր դառնում այնպիսի մեթոդների հայտնագործումը, որոնք կարող էին ապահովել համակարգային օբյեկտների ճիշտ (աղեկված) ճանաչումը:

Ի վերջո հանգեցին այն սկզբունքային հետևողականությունը, որ օբյեկտի, որպես ամբողջական համակարգի, հատկությունները որոշվում են.

ա) ոչ այնքան նրա առանձին բաղադրիչների գումարով որքան նրա կառուցվածքի հարկություններով ներքին ու արդարին կապերով ու փոխհարաբերություններով:

բ) ոչ միայն համակարգը կազմող տարրերի միջև առկա կապերով ու հարաբերություններով, այլև օրյեկտի ամխաղելի միասնությամբ միջավայրի հետ, օրյեկտ-միջավայր փոխհարաբերություններով:

Սուանցքային նշանակություն ունի այն դրույթը, որ եթե գործընթացը առկա կապերն ու հարաբերությունները համակարգային օրյեկտին հաղորդում են որոշակի կառուցվածքայնություն ու կազմակերպվածություն, ապա՝ օրյեկտի և միջավայրի միասնությունը ապահովում է համակարգի ամբողջականությունը:

Ցանկացած համակարգ կարող է դիտարկվել իբրև ավելի բարձրակարգ համակարգի բաղադրիչ, միաժամանակ միավորելով ավելի ցածրակարգ համակարգեր: Դա նշանակում է, որ մեծ համակարգերը հիերարխիկ, ենթակարգային կառուցվածք ունեն: Ամեն մի մակարդակին բնորոշ են վարքի ու գործառույթների (Փունկցիաների) որոշակի որակ: Ավելի բարձր կարգի համակարգի վարքն ու գործառույթները հանդես են գալիս ոչ թե որպես հիերարխիկ ցածր մակարդակի համակարգերի վարքի ու գործառույթների մեխանիկական գումար, այլ դրանց փոխազդեցության արդյունք, ամբողջովին նոր որակ:

Համակարգային ընդհանուր տեսության հիմնադիրը համարվում է ավստրիացի գիտական Լյուդվիգ ֆոն Ռերտալանֆին (1901-1972թ.): Այդ տեսությունը լայն տարածում գտավ 20-րդ դարի 50-60-ական թվա-

կաններից և նշանավորեց գիտական իմաստության զարգացման նոր փուլ։ Այն նոր շունչ հաղորդեց նաև աշխարհագրությանը։

Եվ ոչ միայն դա: Չատ գիտնականներ աշխարհագրության չորրորդ ժամանակը և զարգացման պահագան կապում են հատկապես **համակարգային դեսուրյան կիրառման**, այլ կերպ ասած՝ **համակարգային մոդելման հետ**: Եվ դա հասկանալի է: Մեր շրջապատում չկա ավելի բարդ համակարգ, քան աշխարհագրական թաղանթն է՝ աշխարհագրության հետապոտության օբյեկտը։

Չափազանց բարդ համակարգ է նաև հասարակական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը՝ լայն իմաստով մարդկային հասարակությունը և ներ իմաստով (այսինքն՝ ուսումնասիրության առարկան)՝ հասարակության տարածքային կազմակերպումը։ Այդ պատճառով էլ արդի **հասարակական աշխարհագրությունը չափազանց կարևոր նշանակություն է գույնի իր մերուարանուրյան հաւաքելագործմանը և առաջին հերթին՝ համակարգային մոդելման զարգացմանը**։

Մինչև համակարգային մոտեցման տարածումը, աշխարհագրական օբյեկտների ուսումնասիրությունը գլխավորապես հենվում էր նրանց տարածման (տեղաբաշխման) բացահայտման և դասակարգման վրա: Այլ կերպ ասած՝ այդ ուսումնասիրության համար ելակետ էր ծառայում օբյեկտի բաղադրամասերի միատարրությունը, միամեական ծագումը, համաձին (հոմոգեն), ինչպես նաև նույն որակի (հիգոտոռայ) լինելը։

Համակարգային մոտեցման դեպքում առաջին պլան են միվում այլ հատկանիշներ՝ բազմատարրությունը, տարածնությունը (հետերոգենությունը) և տարասեռությունը (անիկոտրոպությունը), հատկանիշներ, որոնք օբյեկտը դարձնում են իրոք բարդ համակարգ¹։

Համակարգային մոտեցումը գիտական ճանաչողության և կառավարման այն ուղղությունն է, որի հիմքում ընկած է օբյեկտի՝ որպես համակարգի ընկալումը։ Այդպիսի ընկալման դեպքում ուսումնասիրությունը կողմնորոշվում է դեպի օբյեկտի ամբողջականությունը և այն մեխանիզմների, փոխադարձ կապերի ու փոխազդեցությունների բացահայտումը, որոնք ապահովում են այդ ամբողջականությունը և միաժամանակ օբյեկտի ինքնակազմակերպումն ու ինքնակարգացումը։

Համակարգային մոդելման անհրաժեշտությունը բեկարվում

1 Ст. «Итоги науки и техники. Теоретические и общие вопросы географии», т. 4, Москва, 1985г, № 114.

է ժամանակակից կյանքի, սոցիալական պրակտիկայի պահանջներով, այն բանով, որ էակես փոխվել են գիտական և գործնական խնդիրների դիպը, բովանդակությունը:

Նախկինում տիրապետող են եղել նյուղային և լոկալ խնդիրները, որոնց լուծումը համակարգային մոտեցում չի պահանջել: Դա բավարարել է հասարակական առաջնաժամկետ պահանջները: Ներկայումս հասարակական կյանքն այնքան է բարդացնել, բազմապիսի ու բազմաշերտ դարձել, որ ծագող խնդիրների լուծումները նախկին մեթոդներով սպասվող արդյունքը չեն տալիս: Սպասվող արդյունքը չի ստացվում նաև այն դեպքում, եթե փորձում են մասնավոր խնդիրները լուծել առանց հաշվի առնելու ամբողջի՝ ավելի մեծ համակարգի առանցնահատկությունները:

Ներկայումս հասարակական աշխարհագրության (ինչպես և աշխարհագրության՝ ընդհանրապես) գլխավոր ելակետային մերողարանական դրույթն այն է, որ ամեն մի հիմնական աշխարհագրական օրյեկտ ոչ այլ ինչ է, քան համակարգ: Մարդկային հասարակության մեջ այդպիսիք են՝ համաշխարհային տնտեսությունը, առանձին վերցրած պետության (ազգային) տնտեսությունը, տնտեսական շրջանը, բազմահյուր արտադրական համալիրը և այլ օբյեկտներ, որոնց թիվն անհամար է: Համակարգային են նաև քնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, ամեն մի քնապահպանական միջոցառում և ուրիշ շատ երևույթներ, որոնք տեղի են ունենում հասարակության ներսում և մարդունություն հարաբերությունների ընթացքում:

Պատահական չե, որ համակարգ տերմինն այսօր հավասարապես մտել է այնպիսի աշխարհագրական հասկացությունների մեջ, ինչպիսիք են՝ տարաբնակեցման տարածքային համակարգը, տրանսպորտային համակարգը, միջազգային հարաբերությունների համակարգը և այլն:

Այսօր ակնհայտ է, որ բոլոր այդ երևույթների ուսումնասիրումը դրական արդյունք կարող է տալ միայն և միայն համակարգային մոտեցման և համակարգային վերլուծության հիման վրա¹:

1 Համակարգային վերլուծությունն իր լայն իմաստով օգտագործվում է որպես համակարգային մոդելման հոմանիշ: Նեղ իմաստով դա մերողարանական միջոցների մի այլպիսի ամրություն է, որն օգտագործվում է գլամուրական սոցիալական, քաղաքական, գիտական, ուսմանական գեներական բարդ պրոբլեմների լուծումը նախապատրաստելու և հիմնավորելու համար: Նա ինչպես պետքական քաղաքականության քնազականություն, այնպես էլ մասնավոր գործարարության ոլորտում ավելի ու ավելի լայն կիրառություն է գրնում:

ԴԱՐՁԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Աշխարհագրության դրույման և նրա ճյուղերի մեկուսի զարգացման պայմանով ի՞նչ վկանգ էր սպառնում մայր գիտությանը:
2. Ինչո՞ւ միայն աշխարհագրական մասնավոր գիտությունների ուժերով հենարա վոր չէր սպառնուել աշխարհագրական բաղանքի (կամ կոնկրետ գրադարձի) միասնական գիտական պատկերը:
3. Կիրառման դիմում ինչպես օգնեց աշխարհագրությանը աշխարհագրական բաղանքի բաղադրիչների փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները բացահայտելու և խորությամբ ուսումնասիրելու հարցում:
4. Ինչո՞վ են որոշվում աշխարհագրական օրյեկտների՝ որպես ամբողջական համակարգերի հավելությունները: Բերքը հասարակական-աշխարհագրական համակարգերի օրինակներ:
5. Ի՞նչ է համակարգային մոդելում: Ինչո՞վ է բերադրվում դրա անհրաժեշտությունը ներկայում:
6. Ի՞նչ է համակարգային վերլուծությունը լայն և ներ իմաստներով:

3.6. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՆԵՐՁԻՆ ՌԵՖԼԵՔՏԻՎԱՅԻ ԴՐՄԱԱՆԴԻՐԸ

Qիտության ամեն մի նյուի կյանքի առաջադրած պահանջները բավարարելու և աշխարհանանաշողության իր գործառույթը կատարելու ընթացքում վերածվում է սպեցիֆիկ գիտելիքների մի համակարգի: Դա նշանակում է, որ այն չեղք է բերում **ինքնազարգացման ու ինքնակարգարելագործման հավելությունների**:

Գիտության ինքնազարգացումն ու ինքնակատարելագործումը կատարվում է սեփական վիճակի, հատկապես **մերողարանության ու մերողիկայի մշտական վերլուծության**, **ինքնազնահագուման միջոցով**: Ինքնազնահատման կարողությունը գիտության ամեն մի նյուի հասունության կարևոր չափանիշ է:

Համակարգային մոտենյման և համակարգային վերլուծության

Ներթափանցումը աշխարհագրության մեջ նպաստեց, որպեսզի այն նույնպես ավելի մեծ ուշադրություն դարձնի ինքնազիտակցման, ինքնաճանաչման, այլ կերպ ասած՝ իր ներքին ռեֆլեքսիայի պրոբլեմին¹:

Գիտության ներքին ռեֆլեքսիայի հանգույցային պրոբլեմը նրա մեթոդաբանության կատարելագործումն է: Խսկ մեթոդաբանությունը, ինչպես արդեն ասվել է, լայն իմաստով սկզբունքային մոտեցումներն են, ճանաչողության միջոցներն ու գործունեությունը: **Այն իր մեջ ներառում է դեպի հեկազովուրյան օբյեկտը դրսորվող մուգեցումը (առդեցման սկզբունքները), ինչպես նաև գիրուրյան հիմնարար կարեգորիաներն ու հասկացուրյունները, հեկազովուրյան մերոդմերն ու միջոցները, գիրական վարկածի ու գիրական վեսուրյան կառուցումը:**

Աշխարհագրության ներքին ռեֆլեքսիայի գլխավոր խնդիրը գիտության վարգայման արդի փուլում ոչ թե ընդհանրապես գիտական ճանաչողության պրոբլեմն է որպես այդպիսին (այդ պրոբլեմը հավերժ է), այլ **ուսցիոնայի արդյունավետ, օպտիմալ ճանաչողուրյունը:**

Ընդունված է յուրաքանչյուր գիտության վարգայման մակարդակը չափել ոչ միայն այն բանով, թե ինչ մակարդակի վրա է գրնավում նրա ներքին ռեֆլեքսիան, այլև՝ թե ունի դիմում է դիրապեկությունը:

Թան այն է, որ գիտության վարգայման ամեն մի փուլին համապատասխանում է ռեֆլեքսիայի որոշակի տիպ:

Եթե գիտական ճանաչողությունը բաժանենք վարգայման երեք գլխավոր փուլի, ապա դրանց համապատասխան ել կառանցնանան ռեֆլեքսիայի հետևյալ երեք տիպերը:

Սուազիկ՝ օնկուլոզիզմ (հուն. ὀντόντος φοῖ, իր բառից): Դա տիրապետել է գիտության վարգայման ամբողջ կասմիկ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 19-րդ դարը: Օնտուլոզիզմի համար ընորոշ է ուղղվածությունը դեպի ճանաչողության օբյեկտը (դեպի այն, ինչ գոյություն ունի): Հիմնականը համարվել է «**գիրակիր-օբյեկտ**» ուղղակի կապը, այսինքն **օբյեկտի գոյի ճանաչողուրյունը համարվել է միանշանակ և նույնիսկ բացարձակ**: Ինչ վերաբերում է ճանաչողության սուրյեկտին՝ հետապոտություն կատարողին, ապա նրան հատկացվել է լոկ միջնորդի դեր գիտելիք-օբյեկտ հարաբերություններում:

Օնտուլոզիզմ՝ որպես ռեֆլեքսիայի հատուկ տիպի դրսեորումը

¹ Ռեֆլեքսիա (լատ. reflexio-անդրադրչում բարից-գիրական դերմին, որ մշանակում է անդրադրչում, արդացոլում, ճանաչողական ակդրի ուսումնասիրում:

Եղել է կլասիկ գիտության եմպիրիզմը, որի համայայն գիտելիքների միակ աղբյուրը համարվում է զգայական ճանաչողությունը, փորչը (հուն. *επρείρια*-փորչ բառից) և թերագնահատվում է ճանաչողության մեջ գիտական վերացարկման ու տեսությունների, ինչպես նաև ճանաչողության սուրյեկտի դերը:

Գիտության վարգայման *հաջորդ փուլին համապատասխանում է գնունողիզմ կոչվող ուժիերսիայի դիպլոմ*: Որա սկիզբ համարվում է միանուիլ Կանտի (1724-1804թ.): *ճանաչողության դիմուրյունը*:

Գնունողիզմը (հուն. *gnosisis-իմացուրյուն*, *գիտելիք* բառից), ի տարբերություն օնտուոգիզմի, կենտրոնանում է ոչ թե «գիտելիք-օրյեկտ», այլ «սուրյեկտ-օրյեկտ» **կապի վրա**: Գլխավոր համարվում է *սուրյեկտի* (*հետազողողի*) *իմացական հարուկ ընդունակությունները, որոնք հանդիս են գալիս որպես գիտական ճանաչողության պրոցեսի հիմքերի հիմքը*: Ուժիերսիայի այս տիպի շնորհիվ ընդունելություն գտավ այն համընդհանուր դրույթը, որ *գիտական ճանաչողությունը ոչ թե բացարձակ է, այլ հարաբերական*:

Գնունողոգիական ուժիերսիայի հետ են կապում հիմնարար գիտությունների բազմաթիվ նվաճումները, ի թիվս դրանց և հարաբերականության տեսությունը, քվանտային մեխանիկան, կազմակերպվածության մակարդակների կենսաբանական կոնցեպցիան:

Գիտության վարգայման արդի՝ 20-րդ դարի փուլին համապատասխանում է *ուժիերսիայի երրորդ դիպլոմ՝ մերոդողիզմը*¹:

Մեթոդուոգիզմը, ըստ Էության, գնունողոգիզմի բնական շարունակությունն է, նրա ավելի բարձր մակարդակը: Այս դեպքում *որպես ուժիերսիայի առարկա հանդես է գալիս մերոդարանուրյունը*, որի ընութագրությունը տրվեց Վերնու: Եթե մեթոդարանությունը գիտական ճանաչողության միջոցների, մոտեցումների ու գործողությունների միասնությունն է, ապա ակնհայտ է, որ ժամանակակից ոչ մի գիտություն չի կարող թերագնահատել մեթոդարանության նշանակությունը, եթե յանկանում է համընթաց քայլել կյանքի հետ և ժամանակին արշագանքել նրա պահանջներին:

Նույնը հավասարապես, գույն և ավելի շատ, վերաբերում է բուհական դիսցիլիններին: Ամեն մի բուհական դիսցիլին ավելի խորո-

1 *Հուն. methodos-միջոց, եղանակ բառից:*

թյամբ պետք է ներկայացնի իր գիտության մեթոդաբանությունը և ավելի ընդգծված ու սցուն ձևով հրամցնի մեթոդաբանության նշանակությունը:
Դա անհրաժեշտ է նրա համար, որպեսզի բարձրագույն կրոռուրյունը ոչ միայն հետ շմառ գիտության նորագույն նվաճումներից, այլև լինի առաջանցիկ: Իսկ աշխարհագրական, դրա հետ մեկտեղ և բնապահպանական կրթությունը պետք է լինի առաջանցիկ, որովհետև նա մասնագետներ է պատրաստում ոչ այնքան այսօրվա, ինչքան վաղվա օրվա համար:

Լիովին հասկանալի է շատ գիտնականների մտահոգությունը աշխարհագրության մեջ մեթոդաբանական ոեֆլեքսիայի համեմատաբար դանդաղ զարգացման մասին: Նրանք ընդգծում են հատկապես աշխարհագրության համար մեթոդոլոգիզմին անընելու հրատապությունն ու բացառիկ կարևորությունը: «Անցումը մեթոդոլոգիզմին, —գրում են նրանք, —գիտության ինչ-որ վերացական ու սխոլաստիկ ինքնազարգացման արդյունք չէ: Ավելին, դա սուկ առաջ վազել չէ, որ ինքնին այնքան բնական է հանուն տեսական գիտելիքների զարգացման ու պրակտիկայի խթանման: **Դա գիտագրեխնիկական հեղափոխության դարաշրջանի դիպական հարկանիշն է ու համայականը»¹:**

Շատ գիտնականներ համուված են, որ եկել է ժամանակը և դրա համար բոլոր նախադրյալներն արդեն հասունացել են, որպեսզի **հասարակական աշխարհագրությունը նույնական վճռական շրջադարձ կարարի եմակիրիզմից ու օնկուոգիական ոեֆլեքսիայից դեպի հիմնարար գիտությունների համար այդքան դիպական գիտագրեսական ընդհանրացումները և մեթոդաբանական ոեֆլեքսիան:** Որա ամենից ավելի հեռանկարային ու արդյունավետ բնագավառը համարվում է հասարակության տարածքային կազմակերպումը, տարածքային կառուցվածքի հետապոտությունն ու օպտիմալացումը:

1 Л. И. Василевский, П. Н. Полян, А. И. Трейваш, Культуры экологической теории территориальных структур. В кн. Изучение территориальных производственных структур экономических районов, Московский филиал Географического общества ССР, М., 1978г., с. 78.

ԴԱՐՑԵՐ ԻՆՁՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ է գիրուրյան ներքին ռեժիմիան: Ո՞րն է նրա հանգուցային պրոբլեմ:
2. Ինչպես է գիրուրյան զարգացման մակարդակը հարաբերվում ռեժիմիայի պիավերին:
3. Ո՞րն է ռեժիմիայի օնտույլոգիզ պիավի էուրյունը:
4. Ո՞րն է ռեժիմիայի գնուելողական պիավի էուրյունը, ինչո՞վ է այն տարրերվում օնտույլոգիզը: Ո՞ր փիլիսոփայի անվան հետ է կապված նրա սկզբնավորումը:
5. Ռեժիմիայի ո՞ր պիավն է համապատասխանում գիրուրյան զարգացման պրոյեկտին:

Գ Լ Ո Ւ Խ 4

ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԲ: ՀԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՂԱՄԻՉՆԵՐԸ

Դասագրքի առաջին բաժիններում քննարկելով գիտության մեջ զուգահեռաբար ընթացող դիֆերենցման ու ինտեգրացման պրոցեսները, մենք տեսանք, որ դրանց արդյունքում մարդկային իմաստության միասնական ծառը, անելով ու հասունանալով, նորանոր ճյուղեր է տալիս:

Նույն օրինաշափությամբ անտիկ ժամանակներում զևավորվեց աշխարհագրությունը, որը, զարգանալով, վերածվեց մի քարդ համակարգի: 19-րդ դարում դրա ներսում ուրվագծվեց երկու ենթահամակարգ՝ քնաաշխարհագրական և հասարակական-աշխարհագրական: Ավելի ուշ դրանցից յուրաքանչյուրը դիֆերենցվեց ինքնուրույն մասնավոր գիտությունների: Դիֆերենցմանը զուգահեռ տեղի էր ունենում նաև ինտեգրացման պրոցեսը, և մասնավոր գիտությունների կողքին ծնվում էին սահմանային գիտություններ: Նոր՝ սահմանային գիտությունները մի

դեպքում արդյունք են երկու Ենթահամակարգերի (բլոկների) ինտեգրացման, մյուս դեպքում՝ յուրաքանչյուր Ենթահամակարգի ներսում գոյություն ունեցող մասնավոր գիտությունների կամ նրանց և հարակից աշխարհագրական գիտությունների ինտեգրացման:

Հասարակական աշխարհագրական գիտությունների բլոկը (ինչպես և բնաաշխարհագրական գիտություններինը) աշխարհագրական գիտությունների համակարգի բաղադրիչը լինելով, ըստ եռթյան, հանդես է գալիս որպես Ենթահամակարգ: Այն միաժամանակ պայմանականորեն կարող է դիտարկվել նաև որպես ինքնուրույն համակարգ՝ նկատի ունենալով նրա ներկայիս բազմանջուղ ու բարդ ներքին կառուցվածքը և միշտը մեթոդաբանական ու մեթոդական յուրահատկությունները:

Այս գլխում կը նարկենք հասարակական աշխարհագրության հետևյալ գլխավոր բաղադրիչները, որոնք ունեն ինչպես մասնավոր գիտությունների (որպես դիֆերենցման հետևանք), այնպես էլ սահմանային գիտությունների (որպես ինտեգրացման հետևանք) հատկանիշներ: Այդ բաղադրիչներն են՝ **բնակչության աշխարհագրությունը, գնացեական աշխարհագրությունը, բնական ռեսուրսների աշխարհագրությունը, սոցիալական աշխարհագրությունը, քաղաքական աշխարհագրությունը, ունակույթի աշխարհագրությունը** (հասարակական-աշխարհագրական երկրագրությունը) և **գետական հասարակական աշխարհագրությունը:**

4.1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրական գիտությունների համակարգի բաղադրիչների շարքում առանցնահատուկ տեղ է գրավում բնակչության աշխարհագրությունը: Դա բացատրվում է նրանով, որ բնակչության աշխարհագրության հետազոտության օբյեկտը՝ բնակչությունը, կրողն է և կերտողը (սուբյեկտը) այն ամենի, ինչ տեղի է ունենում հասարակական կյանքում: Իսկ հասարակական կյանքը, մարդ-

կային հասարակությունը, ինչպես գիտեք, հասարակական աշխարհագրության հետազոտության օբյեկտ է: Դրան համապատասխան էլ բնակչության աշխարհագրության հետազոտության առարկան (օբյեկտը՝ նեղ իմաստով) առանցքային դեր ունի բոլոր հասարակական գիտությունների համար:

Թայս միաժամանակ հայտնի է, որ մարդու և մարդկանց հավաքականությունը նույն է թե՝ ազգաբնակչություն, հետապոտության օբյեկտ են մի ամբողջ շարք ոչ աշխարհագրական գիտությունների համար, օրինակ, մարդաբանության, ժողովրդագրության, ազգագրության, պատմության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի: Դրանցից յուրաքանչյուրը վրադարձում է թնակչության որոշակի կողմերի ու հատկանիշների ուսումնասիրությամբ, որոնք և այդ գիտությունների համար հանդես են գույնս որպես հետապոտության առարկա (օբյեկտ՝ ներդ իմաստով):

Աշխարհագրական գիտությանը բնակչությունը հետաքրքրում է այն տեսանկյունից, թե ինչպիսին են տարրեր սոցիալական, տնտեսական և բնական իրադրություններում բնակչության կյանքի կազմակերպման օրինաշափությունները և տարածական առանձնահատկությունները¹:

Թանն այն է, որ ընակչությունը, լինելով մարդկանց՝ կենսաբանական եակների հավաքականություն, հանդես է գալիս որպես չափական բարդ սոցիալական օրգանիզմ: Ուստի ամեն մի գիտության համար առանցնահատուկ կարևորություն է չեղոք բերում այն հարցը, թե ընակչությունը հետապոտելիս ինչ նշանակություն է հատկացնում կենսաբանականի և սոցիալականի հարաբերակցությանը: Կենսաբանական է ընակչության այն կարևորագույն հատկանիշը, երբ ընակչությունը, կյանքից հեռացնող սերունդներին նորերով փոխարինելու ճանապարհով, անընդհատ վերականգնվում է: Այդ պրոցեսը հայտնի է **բնակչության վերաբերություն** կամ **բնական շարժ** անունով և նմանվում է այլ կենսաբանական պոպուլյացիաների ընական բազմազան բարձրացումների:

Չայց և պակաս կարևոր հատկանիշ չեն, որ ընակչության տևական գոյուրյունն ապահովում է կենամիջոցների անընդհանուր արդարությունը:

І Уздачарік ўзխаріпірјуміннікір ын ынхаріваш азхарівашақынан զімпірірјама
и рімсақыпірірјама *апиңпірірјуміннікірікі:* *Тұраңдар* *апишақыл* *жупріпірірјама* *рімсақыпірірјама* *ін* *піши*
жүнгір *аузхарішада* *Пәнкіржықын* *мінбаға* *пірірірјумінні*. *Чын* *В. В. Покашинескин*,
Населеніне ж география. Теоретические очерки. Москва. 1978г.

որուրյամբ, որի հիմքում ընկած է մարդկանց աշխատանքային գործունեությունը:

Մարդկանց աշխատանքային գործունեության շնորհիվ էլ չեավորվել է մարդկային հասարակության սկզբունքորեն նոր վերաբերմունք դեպի բնությունը, որն արդեն իր եռթյամբ տարբեր է զուտ կենսարանական վերաբերմունքից: **Դա վերկենասարանական է:** Այդ ընթացքում մարդկանց միջև ևս չեավորվել են բոլորովին նոր տիպի՝ հասարակական (սոցիալական) կապեր, որոնք որակապես տարբերվում են կենսարանական կապերից: Այդ **նոր՝ արդակենասարանական կապերը գործում են ոչ միայն արդադրության ոլորտում, այլև վճռական ազդեցություն են ունենալու բնակչության ամբողջ կենսագործունեության վրա, ներառյալ նաև բնակչության վերաբերության ոլորտը** (հիշե՛ք «Ծողովրդագրական քաղաքականությունը», «Ընտանիքի պլանավորումը» և այլն):

Կարևոր է շեշտել, որ այդ ամենով հանդերձ մարդը՝ homo sapiens-ը, անջատվելով կենդանական աշխարհից, շարունակում է մնալ բնության մասը: Կենսարանական պոպուլյացիաներին հատուկ մարդկանց կայուն հատկանիշներն են (ծնունդ, ծերացում, մահ, սնունդ, որոշակի ջերմաստիճանային պայմանների հարմարվողականություն և այլն) իրենցով որոշում են այն սահմանները, որտեղ գործում են հասարակական (սոցիալական) օրենքները: Որանք այն անհրաժեշտ հատկանիշներն են, որոնց բնականոն գոյության պայմաններում կարող են զարգանալ նաև սոցիալական հատկանիշները:

Բնակչությունը մարդկային հասարակության գլխավոր նյուրական բաղադրաման է և գլխավոր արդադրողական ուժը: Եթե աշխատանքը մի պրոցես է, որը կատարվում է մարդու և բնության միջև, ապա այդ պրոցեսում **բնուրյունը աշխատանքի օրյենկում է (որի վրա ազդում է մարդը), իսկ մարդը՝ սուրյենկուրը (որն ազդում է օրյենկուի վրա):** Արտադրության սուբյեկտի և արտադրության օբյեկտի փոխազդեցությամբ էլ որոշվում է մարդ-բնություն փոխհարաբերությունների եռթյունը:

Աշխատանքի և արտադրության շնորհիվ չեավորվել է և այժմ էլ զարգանում է աշխարհագրական թաղանթի ամենաերիտասարդ ոլորտը՝ մարդուորտը:

Զայյ բնակչությունը միայն արտադրողական ուժ, արտադրության սուբյեկտ չէ: Նա միաժամանակ **հասարակական արդադրության սպառողական բնուն է, այն բնուղը, որը նոր ավարտին է հասնում ար-**

Մադրության պրոցեսը, և փակվում է մարդու և բնական միջավայրի միջև կարարվող նյութափոխանակության շղամ:

Մարդուրոտում բնակչությունը հանդես է գալիս երեք որակներով.

ա) իբրև արդադրության սուրյեկտ,

բ) իբրև նյութական և ոչ նյութական արժեքների սպառող,

գ) իբրև հասարակական վերարդադրության ամբողջական շղամի կենտրոնական օդակը, որն ինքը ենթակա է վերարդադրության:

Ընակչությունն իր բոլոր այս որակներով ավելի կամ պակաս չափով հետաքրքրում է հասարակական աշխարհագրական գիտությունների համակարգի բոլոր բաղադրիչներին:

Նույնիսկ անտիկ աշխարհագրության ներկայացուցիչները, սկսած Հեկատեից ու Հերոդոտոսից և ավարտած Ստրաբոնվ ու Պտղոմեոսով, իրենց աշխատություններում եական տեղ են հատկացրել բնակչությանը, մարդկանց զբաղմունքին, սովորությներին, հասարակական կյանքի մյուս ոլորտներին:

Ընակչությունն անմիջականորեն հետաքրքրել է գիտության շատ այլ ճյուղերի ևս, բայց ոչ թե որպես հասարակական կյանքի ինքնուրույն ոլորտ, նյութական հիմք, այլ որպես հարակից բնագավառ:

Ընակչությունը, որպես գիտական հետազոտության հատուկ ոլորտ, հանդես եկավ 18-19-րդ դարերում, և զնավորվեց **Ժողովրդագրություն** կոչվող գիտությունը, որը, լինելով առաջինը, բնակչությունը ամբողջությամբ վերցրած դիտեց որպես հետազոտության ինքնուրույն օբյեկտ՝ շեշտը դնելով նրա վերարտադրության օրինաշափությունների վրա կախված պատմահասարակական կոնկրետ պայմաններից:

Ավելի ուշ, հիմնականում 20-րդ դարի կեսերին, գիտությունների հետագա դիմերեննցման և ինտեգրացման շնորհիվ, աշխարհագրության, ժողովրդագրության, ինչպես նաև ազգագրության ու պատմության սահմանագլխին զնավորվեց բնակչության աշխարհագրությունը:

Նրա՝ որպես հասարակական աշխարհագրության ինքնուրույն ճյուղի վերջնական սահմանումը դեռևս գտնված չէ:

Համեմատաբար մեծ տարածում ունի հետևյալ սահմանումը.

Ընակչության աշխարհագրությունը գիտություն է «...տարբեր սույնական, տնտեսական, պատմական և բնական պայմաններում բնակ-

չության և բնակավայրերի կազմի ցևավորման ու գարգացման օրինաշափությունների և տարածական առանձնահատկությունների մասին»¹:

Բազմաթիվ են այն մասնավոր հարցերը, որոնց հետապոտությամբ զբաղվում է բնակչության աշխարհագրությունը: Թվարկենք դրանցից գլխավորները. բնակչության վերաբաշխության (բնական շարժի) և ժողովրդագրական և սոցիալական կառուցվածքի (սեռատարիքային, ռասայական, ազգային, պրոֆեսիոնալ կազմի, ըստ կրթական ցենսի, բնակության վայրի և այլն) տարածքային տարբերությունները, աշխատանքային ռեսուրսները և դրանց օգտագործումը, միգրացիաների չափը, կազմը և ուղղությունները: Պակաս կարևոր չեն նաև բնակչության խտության ու տարաքնակեցման հետ առնչվող հարցերը, ապրելակերպի և կյանքի որակի տարածքային տարբերությունները, բնակչության տեղաբաշխման, տարաքնակեցման և արտադրության տեղաբաշխման ու տարածքային կազմակերպման փոխազդեցությունները:

Ընակչության աշխարհագրության՝ որպես հասարակական աշխարհագրության ինքնուրույն ճյուղի ցևավորման հենց սկզբից ի հայտ եկան նրա դիմերենցման միտումները և ուրվագծվեցին գլխավոր ենթանյութերը: Այժմ արդեն լիովին ցևավորված ենթանյութեր են՝ *աշխարհաբարյան ռեսուրսների աշխարհագրությունը, միգրացիաների աշխարհագրությունը, բնակչավայրերի աշխարհագրությունը, որի կազմում որպես առանձին բաղադրամասեր՝ բազարների աշխարհագրությունը և գյուղական բնակչավայրերի աշխարհագրությունը*.

Ընակչության աշխարհագրության համար ելակետային են հետևյալ հիմնադրությունները.

- բնակչության հետ կապված բոլոր երևույթները քննարկվում են տարածական փոփոխությունների ու տարբերությունների բացահայտման տեսանկյունից.

- հետապոտության պարտադիր առարկա են բնակչության ներսում առկա տարաքնույթ հասարակական (սոցիալական) կապերը, որոնք ընդգրկում են և՝ արտադրական, և՝ սպառման ոլորտները.

- հետապոտության պարտադիր առարկա են բնակչության և շրջակա միջավայրի փոխադարձ կապերը.

- հետապոտություններում անհրաժեշտ է պատմածագումնարանական մոտեցումը:

¹ Географический энциклопедический словарь. Понятия и термины, Москва, 1988г., с. 58.

ԴԱՐՁԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ինչո՞վ է բացապրվում հասարակական աշխարհագրական գիրուրյունների համակարգում բնակչության աշխարհագրության առանձնահատուկ գեղը:
2. Բնակչության աշխարհագրությունը ի՞նչ նշանակություն է վերագրում մարդկանց՝ որպես կենսարանական էակների հավաքանության կենսարանական հագեկանիշների:
3. Բնակչությունը ինչպիսի՞ որակներով է հանդիս զայլս մարդու որդում:
4. Ե՞րբ և ո՞ր գիրուրյունների սահմանագլխիք է չնավորվել բնակչության աշխարհագրությունը:
5. Ինչպիսի՞ն է «Բնակչության աշխարհագրություն» գիրուրյան սահմանումը:
6. Որո՞նք են բնակչության աշխարհագրության լիովին չնավորված ենքայուղերը:
7. Ո՞ր հիմնադրույթներն են ելակերպային բնակչության աշխարհագրության համար:

4.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

◀ասարակական աշխարհագրության համակարգում առավել կարգացած տնտեսական աշխարհագրությունն է:

Հայտնի է, որ մարդկանց արտադրական-տնտեսական գործունեության մասին տեղեկությունները հանդիպում են դեռևս անտիկ հեղինակների մոտ: Նրանք, նկարագրելով հարևան պետություններն ու ժողովուրդներին, հատուկ ուշադրություն են դարձնում բնակչության զբաղմունքին, այն հարցերին, թե ինչպես են հայթայթում իրենց կենսամիջոցները, ի՞նչ բույսեր են մշակում, ի՞նչ են արտադրում, ի՞նչ և որտե՞ղ են վաճառում, ի՞նչ և որտե՞ղ են գնում, ո՞ւմ հետ են առևտուր անում: Այդ տվյալներն անհրաժեշտ են լինում առաջին հերթին այն վաճառականներին, ճանապարհորդներին, զորապետերին, որոնք արշավանքի են պատրաստվում, ինչպես նաև՝ պետության ղեկավարներին:

Մինչև 19-րդ դարի վերջերը պետությունների ու նրանց տարբեր

մասերի տնտեսության ուսումնասիրությունները կատարվում էին միասնական աշխարհագրության, ինչպես ևան պատմության և վիճակագրության կազմում:

Տնտեսական աշխարհագրության՝ որպես գիտական հետազոտությունների ինքնուրույն ուղղության զնակորմանը էապես նպաստես տնտեսագիտության, ավելի ճիշտ նրա տեսական հիմք հանդիսացող քաղաքատնտեսության (տնտեսագիտության տեսության) զարգացումը: Զարդարածնտեսության հայտնագործած հասարակության տնտեսական զարգացման հիմնարար օրենքներն ու օրինաշափությունները մեթոդաբանական ու տեսական հիմք են ծառայում հասարակական կյանքի տնտեսական ոլորտով զբաղվող բոլոր գիտությունների, իհարկե, առաջին հերթին տնտեսագիտական գիտությունների ամբողջ համակարգի ու նրա բաղադրիչների (արդյունաբերության էկոնոմիկա¹, գյուղատնտեսության էկոնոմիկա, տրանսպորտի էկոնոմիկա, աշխատանքի էկոնոմիկա, բնօգտագործման էկոնոմիկա և այլն) համար:

Դրանք(տեսական աշխարհագրության՝ տարածքի կազմակերպման օրենքների ու օրինաշափությունների հետ միասին հիմնարար նշանակություն ունեն ևան տնտեսական աշխարհագրության համար:/

Տնտեսությունը նախ և առաջ բնուրյան վրած և մարդկանց չեռուկ սրբնաժիշտած այն միջոցների միասնությունն է, որոնք մարդկան օգտագործում է կենսապայմանների պահպանման ու բարելավման համար: Իսկ կենսապայմանների պահպանումն ու բարելավումը կատարվում է աշխարհականիք, արդադրության միջոցով:

Տնտեսագիտական իմաստով՝ **աշխարհանքը մարդկանց նպատակահարմար ներգործությունն է բնուրյան վրա, սեփական պահանջմունքները բավարարելու համար:** Դա մարդկության գոյության անհրաժեշտ պայմանն է, մշտական բնական անհրաժեշտություն: **Աշխարհանքը հապուկ է միայն մարդուն:** Ի տարբերություն կենդանիների բնապային գործողությունների, մարդու աշխատանքային գործունեությունը բնու-

¹ Էկոնոմիկա-հունա օկոս-տուն, լրացնաւուրյուն և ոտոս-օրենք, կանոն բարերից: Բառացի բարգմանությամբ նշանակում է՝ լրացնավարության կանոններ:

Եվրոպական լիգուններում լրացնաւագիւրության հոմանիշը «Էկոնոմիկան» է: Այժմ շրջանառության մեջ է դրվում նաև «Էկոնոմիկ» անվանումը, որն օգտագործվում է նաև «բաղադրապետնություն» և «լրացնաւագիւրության լրատուրյուն (ուսմունք)» գերմանիների փոխարձեն:

թագրվում է որոշակի նպատակառությամբ: Մարդը, ստեղծելով անհրաժեշտ կենսամիջոցներ, բարելավելով կենսապայմանները, կարգավորում է Այուրափոխանակուրյունը հասարակության ներսում և իր ու բնուրյան միջն, վերափոխում է բնական միջավայրը, միաժամանակ փոխելով իր և անփական բնուրյունը:

Ինչ վերաբերում է **արդադրությանը**, ապա դա սահմանվում է որպես **գրնդական արժեք ունեցող փառքերի իրերի սկզբանական պրոցես**: Դա մարդկային կյանքի բնական վիճակն է և գործունեության մյուս՝ հոգևոր-մշակութային, սոցիալական, քաղաքական և այլն, ոլորտների նյութական հիմքը:

Աշխատանքը, հետևապես և արտադրությունն ունեն հասարակական բնույթ, մարդիկ աշխատում և արտադրում են համատեղ՝ հարաբերություններ հաստատելով բնության հետ: Այդ ընթացքում նրանք որոշակի հարաբերությունների մեջ են մտնում նաև միմյանց հետ: Դա նշանակում է, որ հասարակական արդարությունը երկու փոխայմանավորված կողմերի՝ արդարողական ուժերի և արդարական հարաբերությունների միասնությունն է:

Արդարությունը յի սահմանափակվում բարիքների սրբազնանության պրոցեսով միայն, այլ իր մեջ ներառում է նաև այդ բարիքների փոխանակումը, բաշխումը և սպառումը:

Հասարակական արտադրության պատմական կարգայումը, ինչպես արդեն նշվել է դասագրքի 3-րդ գլխում, անպայմանորեն ուղեկցվում է աշխատանքի հսսարակական բաժանման խորացումով ու կատարելագործումով։ Դրանով պայմանավորված է՝ անընդհատ բարդանում է տնտեսության կառուցվածքը իր տարածքային դրսնորման բոլոր մակարդակներում՝ համամոլորակային, տարածաշրջանային, ազգային, լոկալ (տեղական), որոնք հատկապես հետաքրքրում են աշխարհագրությանը։

Տնտեսության տարածքային կառուցվածքի բարդացումը անդրադառնում է, իհարկե, նաև գիտության վրա: Ավելի է հարստանում նրա ներքին կառուցվածքը, չնայովում են նոր ճյուղեր ու ենթաճյուղեր: Երբ սկզբում (18-րդ դարի կեսերին) U. Lումնոսովն առաջին անգամ հասարակական աշխարհագրության նոր չնայովուղու ճյուղին տվեց տնտեսական աշխարհագրություն (խօյակտեղային գեոգրաֆիա) անվանումը¹, ժո-

ղովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը բաղկացած էր ընդամենը մի քանի ճյուղերից ու ենթաճյուղերից, իսկ տարածքային կառուցվածքը՝ տնտեսական զարգացման տարբեր ուղղվածություն ունեցող ընդամենը մի քանի տիպի տարածքներից: Այն ժամանակ, և ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը, տնտեսական աշխարհագրության կոտորակման և գիտության ճյուղերի ու ենթաճյուղերի զևավորման համար նպաստավոր պայմանները հասունացած չէին:

Այժմ տնտեսական աշխարհագրությունը, արտացոլելով արդի տնտեսության կառուցվածքը, հանդես է գալիս որպես **աշխարհագրական հասարակական գիտուրյունների մի համակարգ** (ենթահամակարգ), որն ուսումնասիրում է **հասարակական արդարության բարձրային կազմակերպումը և դրանում գնդի ունեցող դրաժանական պրոցեսները, ելակեր ունենալով արդարության արդյունավելության բարձրացումը և հասարակություն-բնուրյուն հարաբերությունների ներդաշնակեցումը:**

Տնտեսական աշխարհագրության հետապոտության առարկան (օրյեկտ՝ նեղ իմաստով) հասարակական արտադրության տարածքային կազմակերպումն է, մասնավորապես՝ տարածքային կառուցվածքը, որը տարբեր մակարդակներում տարբեր դրսնորում ունի: Համամոլորակային, այսինքն՝ համաշխարհային տնտեսության, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակում տնտեսության կառուցվածքային բաղադրամասերը աշխարհի՝ զեկ արդեն ծանօթ «աշխարհագրական մողելի» բաղադրամասերն են, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության ու առևտրի սուբյեկտները՝ պետությունները և դրանց խմբավորումները:

Ազգային գնդեանուրյունների՝ պետությունների մակարդակում որպես այդպիսի բաղադրամասեր առաջնային նշանակություն են զեռք բերում տնտեսական շրջանները, համապետական կարենորության տարածքային-արտադրական համալիրները, տրանսպորտային համակարգերը, խոշոր տրանսպորտային հանգույցները:

Լոկալ (տեղական) մակարդակում տնտեսության կառուցվածքի գլխավոր ինքնուրույն տարբեր բնակավայրերն են՝ իրենց արտադրական զեռնարկություններով հանդերձ:

Տնտեսական աշխարհագրությունը, լինելով հասարակական աշ-

ձևակերպեց գիտության այդ ճյուղի հիմնադրույթները: Այդ դրսւյթների հիմքում ընկած էին իր ուսուցչի՝ Ֆ. Ռադցենի անդրուպաշխարհագրական գաղափարները:

Խարիագրության համակարգի կազմում, զարգացած կապեր է պահպանում համակարգի բոլոր բաղադրիչների հետ: **Բայց այդ կապերն ավելի սերդ ու ինդեნսիվ են բնակչության աշխարհագրության ու բնական ռեսուրսների աշխարհագրության հետ:**

Եվ դա հասկանալի է: Ընակչության և բնական ռեսուրսների համատեղ ու միաժամանակյա մասնակցությամբ միայն կարող է տեղի ունենալ արտադրության պրոցեսը, մի պրոցես, որտեղ մարդը հանդես է գալիս որպես արտադրության սուբյեկտ, իսկ բնական ռեսուրսները՝ արտադրության օբյեկտ: Չստ որում, տնտեսական աշխարհագրությունը և բնակչության աշխարհագրությունը սերտորեն համագործակցում են բնակչության տարաբնակեցման չներն ու տարածքային համակարգերը, աշխատանքային ռեսուրսների տարածքային առանձնահատկությունները ուսումնասիրելիս: Նույն չնով էլ բնության տարրերն ու երևույթները, որպես ռեսուրս, հետազոտվում են բնական ռեսուրսների աշխարհագրության և տնտեսական աշխարհագրության համատեղ ուժեղով:

Ինչպես աշխարհագրությանը պատկանող մյուս գիտությունների կառույցածքը, այնպես էլ տնտեսական աշխարհագրության կառույցածքն ունի երկու հատույթ՝ կոմպոնենտային և տարածքային: Տնտեսական աշխարհագրության կառույցածքում որպես կոմպոնենտային բաղադրիչներ հանդես են գալիս տնտեսության ոլորտներն ու ճյուղերն ուսումնասիրող գիտությունները: Այդպիսիք են, օրինակ, **արդյունաբերության աշխարհագրությունը, գյուղատնտեսության աշխարհագրությունը, գրանսպորտի աշխարհագրությունը, սպասարկման ոլորտի աշխարհագրությունը:** Գիտության համեմատարար զարգացած ճյուղեր են նաև **արդարին առևտուն աշխարհագրությունը, միջազգային գուրիզմի աշխարհագրությունը:**

Տնտեսական աշխարհագրության կառույցածքի տարածքային հատույթին համապատասխանող բաղադրիչներն են՝ **համաշխարհային գնաժանության աշխարհագրությունը, որոշակի գարածաշրջանի տնտեսական աշխարհագրությունը, պետության տնտեսական աշխարհագրությունը, գնաժանի գրանի, գարածքային-արդարական համաշխարհի և նույնիսկ առանձին բնակավայրի տնտեսական աշխարհագրությունը:**

Եթե տնտեսության ոլորտը կամ ճյուղը ուսումնասիրելիս տնտեսական աշխարհագրությունը պետք է հենվի այդ ոլորտի կամ ճյուղի էկոնոմիկայի տեսական դրույթների ու հետազոտման մեթոդների վրա,

ապա տարածքային միավորներն ուսումնասիրելիս՝ ավելի շատ առջնակում է աշխարհագրական երկրագրության՝ որպես համակր գիտական նյուղի հետ (երկրագրության մասին մանրամասն տե՛ս ստորև):

ՏԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Մինչև դնդանական աշխարհագրության չեավորումը դնդանության ուսումնասիրությունը ո՞ր գիտությունների կազմում էր կարստավոր:
2. Ո՞ր գիտության հայտնագործած հիմնարար օրենքներն ու օրենչափություններն են մերդաբանական ու դեսական հիմք ծառայում դնդանական աշխարհագրության համար:
3. Ի՞նչ է դնդանությունը:
4. Ի՞նչ է աշխատանքը, արդադրությունը:
5. Որո՞նք են հասարակական արդադրության փոխականակությած կողմերը:
6. Ո՞րն է դնդանական աշխարհագրության սահմանումը:
7. Ո՞րն է դնդանական աշխարհագրության հետազոտության առարկան (օրյեկտը՝ նեղ իմաստով):
8. Որո՞նք են դնդանական աշխարհագրության հերաճուղերը:
9. Տնտեսական աշխարհագրությունը գիտության աշխարհագրական և արդարացների հետ է սերդ կապերի մեջ:

4.3. ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Fնական ռեսուրսների աշխարհագրությունը պատկանում է հասարակական աշխարհագրության ամենից ավելի երիտասարդ ու դինամիկ ուղղությունների թվին: Որպես ինքնուրույն նյուղ այն չափորոշիչ է բնական աշխարհագրության և հասարակական աշխարհագրության սահմանագլխին՝ դրանց համապատասխան բաղադրիչների ինտեգրացման շնորհիվ: Այդ պատճառով ել առավել սերտ կապի մեջ է բնական աշխարհագրական գիտությունների համակարգի

հետ: Կա նույնիսկ տեսակետ, որ ոեսուրսների աշխարհագրությունը ավելի ճիշտ է դիտարկել ոչ թե հասարակական աշխարհագրության կազմում, այլ աշխարհագրության երկու բլոկների միջև՝ որպես միջանկյալ կոմպլեքսային նյուղ, ինչպիսին է, օրինակ, բժշկական աշխարհագրությունը: Նամանավանդ, որ բնական ոեսուրսների աշխարհագրական հետազոտությունը, բնագիտությունից ու հասարակագիտությունից բացի, մեծապես հենվում է նաև տեխնիկական գիտությունների նվաճումների վրա:

Այդուհանդերձ, ավելի լայն տարածում է գտնում ոեսուրսների աշխարհագրությունը հասարակական աշխարհագրության կազմում տեղադրելը: Ենք ահա թե ինչո՞ւ:

Մինչև բուն հարցին անդրադառնալը քննարկենք բնական ոեսուրս հասկացության **բռվաճակությունը**:

Անական ոեսուրսների բոլոր տեսակները, առանց բացառության, **բնուրյան արիութիկ ու բիուրիկ գործեր են և բնական երկույթներ, որոնք հասարակական արդադրության պրոցեսում օգտագործվում են (կամ կարող են օգտագործվել) մարդու կողմից հասարակության պահանջումները բավարարելու համար:**

Անության այդ տարրերն ու երևույթները (ապարներ ու միներալներ, այդ թվում՝ ջուրը, անտառային ու տափաստանային բուսականությունը, կենդանական աշխարհը, քամին, յամաքում ու օվկիանոսում՝ ջրի շարժումը, արեգակնային ու Երկրի ընդերքի շերմությունը և այլն, և այլն) որպես այդպիսիք ուսումնասիրության առարկա են Երկրի մասին գիտությունների (Երկրագիտություն), ինչպես նաև ֆիզիկայի, քիմիայի ու կենսաբանության համար:

Այդ գիտություններին առաջին հերթին հետաքրքրում են բնության տարրերի ու երևույթների ծագումը, կառույցվածքը, ներքին մեխանիկմները, կապը աշխարհագրական թաղանթի մյուս բաղադրիչների հետ:

Անության այդ նույն տարրերն ու երևույթները հետաքրքրել են հասարակագիտությանը այն պահից սկսած, երբ ակնհայտ է դարձել ու իմաստավորվել դրանց տնտեսական-արտադրական նշանակությունը:

Այդ նշանակությունը գիտականորեն բացահայտվեց և հիմնավորվեց **աշխարհագրական դեկերմինիզմի** միջոցով (տե՛ս 2-րդ գլուխ, 2.1.5), իսկ ներկայիս մակարդակին հասավ տնտեսագիտության տեսու-

թյան (քաղաքատնտեսության) զարգացման շնորհիվ, երբ չեավորվեց աշխատանք և արդադրություն հասկացությունների լինդեսագիրական բռվանդակությունը:

Տնտեսագիտությունն այժմ առանցնացնում է արտադրության չորս գործոն, որոնցից կախված են թողարկվող արտադրանքի գիշավոր տնտեսական ցուցանիշները՝ քանակը, որակը, մրցունակությունը: **Այդ գործուններն են՝ բնագագարածքը, աշխատանքը, կապիկալը և գործարական ակտիվությունը (ընդունակությունը):**

Ոժվար չենկատել, որ չորս գործուններից երկուսը՝ բնագագարածքը և աշխատանքը, անմիջականորեն վերաբերում են աշխարհագրական հետազոտությունների ոլորտին: Անատարածքը՝ բնական միջավայրի (ֆիզիկաաշխարհագրական պայմանների ու բնական ռեսուրսների) միջոցով, իսկ աշխատանքը՝ բնական միջավայրի վրա մարդու ազդեցության միջոցով:

Քաղաքատնտեսությունը ելնում է այն հիմնարար դրույթից, որ աշխարհագրական միջավայրը, ամեն մի բնագագարածք՝ իր կոնկրետ պայմաններով ու ռեսուրսներով, անհրաժեշտ, մշտապես գործող պայման է հասարակական արդադրության համար:

Նշվում է հասարակական արտադրության վրա բնական միջավայրի ազդեցության երեք կողմ. **բնական միջավայրը՝**

1) մարդու կյանքի և արդադրական գործունեության անհրաժեշտ մշտական պայմանն է,

2) հասարակության արդադրական գործունեության նյութական ելակերպային հիմքն է, համակողմանի նախադրյալը,

3) մարդու (բնակչության) ներգործության օրյակին է, այն առարկան, որին ուղղված է մարդու վերափոխիչ գործունեությունը և առանց որի չի կարող ընթանալ աշխատանքը, արդադրական պրոցեսը: Իսկ արտադրական պրոցեսը, ինչպես հայտնի է, ոչ այլ ինչ է, քան նյութափոխանակության պրոցես բնակչության և բնության միջն:

Մենք արդեն գիտենք, որ աշխատանքը տնտեսագիտական իմաստով մարդկանց նպատակային ներգործությունն է բնության վրա: Աշխատանքի պրոցեսը բաղկացած է երեք տարրերից: Դրանք են.

ա) մարդկանց նպատակահարմար գործունեություն կամ բուն աշխատանք,

- թ) առարկա, որի վրա ներգործում է մարդը,**
**գ) աշխատանքի միջոցներ, որոնցով մարդը ներգործում է
աշխատանքի առարկայի վրա:**

Ղժվար չեն նկատել, որ այդ երեք տարրերից երկուսը բնության տարրերն են: Դրանք կարող են լինել նախասկզբնական՝ անփոփոխ վիճակով, ինչպես, օրինակ, հանքաքարը, հողը, վայրի բույսը: Կարող են լինել նաև մարդու կողմից չեափոխված վիճակով: Այդպիսիք են, օրինակ, հանքաքարի յուլումից ստացված մետաղը, մետաղն մուրճն ու հաստոցը, տարաքնույթ նյութերի օգտագործումով արտադրված ավտոմեքենան, ինքնաթիռը, համակարգիչը (կոմպյուտերը):

Անության տարրերն ու երևութեներն իրենց այն մասով, որով ներգործում են մարդու կյանքի ու հասարակական զարգացման վրա, հանդես են գալիս **որպես բնական պայման ու բնական ռեսուրս:** **Դրանք են հենց բնագիտական առումով աշխատանքի առարկան և աշխատանքի միջոցներն են:**

Տնտեսագիտական տեսությունը մեզ ուսուցանում է, որ աշխատանքի առարկաները և աշխատանքի միջոցները արտադրողական ուժերի տարրեր են, ճիշտ այնպիսի տարրեր, ինչպիսին աշխատողներն են, աշխատանքային ռեսուրսները: **Գիտության ու գիտմանի կարգացման համեմատ արդարության պրոցեսին մասնակցող բնուրյան փառքերի ու երևութեների գործականին անում է, այսինքն՝ դրանց ավելի շատ գետակներ են դառնում բնական ռեսուրս և բնական արդարողական ուժ:**

Ի՞նչ եվրակացության կարելի է հանգել:

Ըստական ռեսուրսները գիտությունների որոշակի խմբի համար հետապոտության առարկա են որպես բնության տարրեր ու բնական երևութեներ, **իսկ բնագիտական ռեսուրյան ու հասարակական աշխարհագրության համար՝ որպես հասարակության արդարողական ուժեր, այսինքն՝ որպես բնագիտական կարգորիչ:**

Վերջին տասնամյակներում չեավորվել է գիտության մի ինքնուրույն ճյուղ՝ **ռեսուրսագիտությունը** (ֆր. *ressource*-օժանդակ միջոց, հնարավորություն): Դա մաթեմատիկայի վրա հենվող մի գիտություն է, որը զբաղվում է ընդհանրապես ռեսուրսի ստեղծման ու կառավարման տեսական հարցերով: «Ռեսուրսի» տակ նա հասկանում է ընդհանրապես բոլոր տեսակի հնարավորությունները, միջոցները, պաշարները՝ սկսած

մարդկային կարողություններից, մեքենաների ու սարքերի տեխնիկական հնարավորություններից, վերջապահ բնական ու ֆինանսական պաշտպանություններով:

Հասկանալի է, որ **բնական ռեսուրսների աշխարհագրուրյունը պետք է օգտվի ոչ միայն ռեսուրսի կոնկրետ գետակների, օրինակ՝ օգտակար հանածոների, բուսական ու կենդանական աշխարհի, հողածածկությի հետազոտությամբ գրաղվող գիտությունների նվաճումներից և համագործակցի դրանց հետ, այյլ գեղյակ լինի ռեսուրսագիրուրյան գետական ու մերոդական չեռքերումներին և հիմնվի դրանց վրա:**

Ընական բազմապիսի ռեսուրսները Երկրի մակերեսի տարբեր մասերում տարբեր տարածքային վուգորդումներ են կազմում: Մի վայրում գլխավորը հողային ռեսուրսներն են, մյուս վայրում՝ օգտակար հանածոները, երրորդում՝ անտառային ռեսուրսները: Մի վայրում ռեսուրսների տեսականին աղքատ է, մյուսում՝ հարուստ ու բազմազան, և այդպես շարունակ: Աշխարհագրությունը, ի տարբերություն մյուս գիտությունների, իր հետազոտության առարկան համարում է ռեսուրսների առանձին գետակների և դրանց գործառքային գուգորդումների գեղարաշխումն ու կառուցվածքը, գնահատումը, նպագրակահարմաք օգտագործումը, ինչպես նաև գեղեցիկ դրանց ազդեցության հիմնախնդիրները:

Հատուկ բացատրության կարիք ունի բնական ռեսուրսների գնահատման հիմնախնդիրը:

Բնական ռեսուրսների գնահատումը միշտ եղել է աշխարհագրության ուշադրության կենտրոնում: Ընդհանուր սկզբունքային մոտենալում այն է, որ տարբեր բնական ռեսուրսների արժեքը, դրանց կարևորությունը որոշվում է ենելով մարդկանց տնտեսական գործունեության կոնկրետ պահանջներից ու տեխնիկական հնարավորություններից, որոնք փոխվում են թե՛ ժամանակի մեջ և թե՛ ըստ բնագավառների ու ժողովրդական տնտեսության նյուիերի:

Եթե բնական ռեսուրսները դիտում ենք որպես գնահատման օբյեկտ, ապա կոնկրետ բնագավառի պահանջները և այդ պահանջները բավարարելու տեխնիկական հնարավորությունները ոչ այլ ինչ են, քան գնահատման սուբյեկտ: Ցուրաքանչյուր գնահատում կարող է որևէ արժեք ունենալ, եթե հսկակորեն պարզված է գնահատման օրինակի սուբյեկտը գործառնությունը, եթե որոշված են գնահատման կոնկրետ նպագրակը և ռեսուրսի օգտագործման բնագավառը (արդյունաբերու-

թյուն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, ռեկրեացիա, դրանց կոնկրետ ճյուղեր ու ենթաճյուղեր և այլն):

Ընական ռեսուրսների այն գնահատումը, որը նպատակ ունի պարզելու դրանց կարևորությունը հասարակության համար ընդհանրապես, այլ կերպ ասած՝ որոշելու նրանց ժողովրդատնտեսական նշանակությունը, հասարակական օգտակարությունը, անկախ գնահատման ցուցանիշներից ու եղանակներից, ընդունված է կոչել **գնահատում լայն առումով**:

Տնտեսական գնահատում հասկացությունն օգտագործում են նաև **ներ իմաստով**, հասկանալով դրա տակ այն գնահատումը, որ հանգում է բնական ռեսուրսի արժեքավորմանը դրամով, այսինքն՝ գնի որոշմանը: Գնահատման այս ուղղությունն ավելի մեծ տարածում ունի տնտեսագիտության մեջ և մեծ մասամբ վերաբերում է բնական ռեսուրսների առանձին տեսակներին (օգտակար հանածոներ, հողահանդակներ, անտառներ, ջրային պաշարներ և այլն):

Հաճախ անհնար է լինում որոշել բնական ռեսուրսների քայրացակ արժեքը: Այդ դեպքում պարզում են, թե ո՞ր շրջանում են մարդու կյանքի կամ արտադրության այս կամ այն ճյուղի պարզացման բնական պայմաններն ավելի նպաստավոր, թե տվյալ պայմաններն ընդհանրապես պիտանի՞ են այդ կոնկրետ ճյուղի կամ արտադրության կազմակերպման համար, ինչպիսի՞ են օդի կամ ջրի հիգիենիկ հատկանիշները և այլն:

Նման գնահատումները ներ իմաստով տնտեսական, արժեքային գնահատումներ չեն: Դրանց համար օգտագործվում են, այսպես կոչված, **հապուկ գնահապումները՝ փեխնողոգիական, ագրոարդյուրական, հիգիենիկ և այլն**: Այդպիսի գնահատումներն անհնար է կատարել քայրացակ արժեքային ցուցանիշներ, որոնք ընդունված է արդարացնել պայմանական բալերով: Մշակված են 5 քալանոց, 10 քալանոց, 100 քալանոց և այլ համակարգեր: Դրանք հնարավորություն են տալիս կատարել տարբեր շրջանների ու ռեսուրսների տարբեր տեսակների համեմատություններ՝ ըստ նրանց ոչ քանակական, այլ որակական ցուցանիշների, այսինքն՝ կատարել, ըստ եռության, **որակական գնահապում**:

Որակական մոտեցումն ավելի հաճախ օգտագործվում է բնական ռեսուրսների տարածքային զուգորդումները գնահատելու և միմյանց

հետ համեմատելու համար: Այդ մոտեցման տարատեսակներից է բնառեսուրսային շրջանապումը, որը աշխարհագրության մեջ լայն կիրառություն ունի:

ՀԱՐՑԵՐԻ ԽՆՋԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Բնուրյան գարրերի և ռեսուրսների ուսումնասիրության ընթացքում ո՞րն է բնական աշխարհագրության և հասարակական աշխարհագրության մոդելումների գլխավոր գարրերությունը:
2. Որո՞նք են հասարակական արդարության վրա բնական միջավայրի ազդեցության երեք կողմները:
3. Ո՞ր դեպքում բնուրյան գարրերն ու երևոյթները հանդիս են գայիս որպես ռեսուրս:
4. Ի՞նչ է ռեսուրսագիրությունը:
5. Ի՞նչ է բնական ռեսուրսի գնահատումը: Որո՞նք են գնահատման գարագինակները:
6. Ո՞րն է բնական ռեսուրսների գնահատական գնահատման բովանդակությունը:
7. Ի՞նչ մոդելում է կիրառվում բնական ռեսուրսների գարածքային գուգորդումների գնահատման համար:

4.4. ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոցիալական աշխարհագրությունը հասարակական աշխարհող ճյուղերից է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկային հասարակության զարգացման համեմատ, հատկապես նրա ինդուստրիալ և ետինդուստրիալ փուլերում, ուժեղանում է տնտեսության սոցիալական ուղղվածությունը: Դա նշանակում է, որ հասարակությունն ավելի մեծածավալ միջոցներ է ծախսում բնակչության սոցիալական խնդիրների լուծման համար:

Ըստ Էության, ամբողջ հասարակության համար սոցիալական հարցերը դառնում են դոմինանտ: Այդ հարցերը լուծելու համար վարգայած պետությունները մշակում և իրականացնում են **հապուկ սոցիալական քաղաքականություն**:

Սոցիալական քաղաքականությունը պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մի համակարգ է, որը բնակչության համար ապահովում է բարեկեցության պատշաճ մակարդակ և կյանքի որակի անշեղ բարչրացում, այլ կերպ ասած՝ **հասարակական կյանքի սոցիալական ոլորտիկ առաջանցիկ զարգացում**:

Սոցիալական տերմինը ծագել է լատ. *socialis*-ընդհանուր (հանրային, հասարակական) բառի և ընդգրկում է այն ամենը, ինչ վերաբերում է մարդկանց համակեցության ընթացքում նրանց փոխհարաբերություններին, հանրության և միմյանց հետ հաղորդակցման չներին:

Ինչ վերաբերում է «**սոցիալական ոլորտիկ**» բովանդակությանը, ապա ժամանակակից գիտությունը դրա տակ հասկանում է այն **ճյուղերի**, **չեռնարկությունների** ու **կազմակերպությունների** միազումարդ, **որոնք ուղակիորեն կապված են մարդկանց ապրելակերպի**, **կենսամակարդակի** ու **բարեկեցության հետ**: Վերջիններիս մակարդակը, ըստ Էության, պայմանավորված է այդ ճյուղերի, չեռնարկությունների ու կազմակերպությունների զարգացման մակարդակով:

Սոցիալական ոլորտը, որ հայտնի է նաև **սպասարկման ոլորտ** անունով ներառում է կրթությունը, մշակույթը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, ֆիզիկական կուլտուրան, հասարակական սնունդը, կոմունալ սպասարկումը, ուղևորատար տրանսպորտը, կազմ, այսինքն՝ այն ամենը, ինչ ուղղակիորեն չի մտնում նյութական արտադրության և քաղաքական ոլորտների մեջ:

Մարդկանց ապրելակերպի, աշխատանքի ու հանգստի պայմանների բարելավման և կենսամակարդակի բարչրացման խնդիրները գտնվում են ոչ միայն տնտեսապես զարգացած և ժողովրդավարական ուղիով ընթացող պետությունների, այլև 20-րդ դարի կեսերից սկսած նաև համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում: Ստեղծվել են հեղինակավոր միջազգային կազմակերպություններ և հիմնադրամներ, որոնք համակարգում են աշխարհի պետությունների շանքերը սոցիալական ոլորտում և օգնություն են կազմակերպություններ այն երկներին, որտեղ տարրեր պատճառներով և տարրեր ժամանակներում քնակչության սոցիալական վիճակը հատկապես վատթարանում է:

Հասարակությունը, որպես մեկ ամբողջական համակարգ՝ իր սույհալական խնդիրներով ու ներքին հարաբերություններով հանդերձ, հետազոտության օբյեկտ է սույհոլոգիայի համար, այսինքն՝ այն գիտության, որը համագործակցելով աշխարհագրության հետ, սնունդ է տալիս սույհալական աշխարհագրությանը:

Սոցիոլոգիան (լատ. *societas*-հասարակություն, հանրություն և հուն. *logos*-ուսմունք բառերից), լայն իմաստով գիտություն է մարդկանց (ինչպես նաև կենդանիների ու բույսերի) համակեցության չների ու փոփոխությունների մասին:

Սույհալական աշխարհագրությունը, լինելով աշխարհագրական գիտություն, հետազոտում է այդ նույն ուրոտի, ինչ ուսումնասիրում է սույհոլոգիան, **գոյության ու զարգացման դրաժամական կողմը**: Ավելի ճիշտ, ըստ ներկայումս ընդունված գիտական սահմանման, «**սոցիալական աշխարհագրությունն ուսումնասիրում է մարդկանց կյանքի կազմակերպման դրաժամական պրոցեսներն ու ջեները, դիրքարկելով դրանք աշխատանքի, կենցաղի, հանգստի և մարդու կյանքի վերաբարության պայմանների գեսանկյունից» (Географический энциклопедический словарь, 1988, էջ 286):**

Թերքած սահմանումը մեկ օգնում է պարզելու, թե, ի վերջո, ո՞րն է սույհալական աշխարհագրության **հետազոտության օբյեկտը և առարկան**:

Հետևենք ընդունված սկզբունքին, այն է՝ հասարակական աշխարհագրությունը և նրա բաղադրիչները իրենց հարակից գիտությունների հետ ունեն հետազոտության ընդհանուր օբյեկտ: Արդեն գիտենք, որ հասարակությունը ընդհանուր օբյեկտ է հասարակագիտության և հասարակական աշխարհագրության համար, բնակչությունը՝ ժողովրդագրության ու բնակչության աշխարհագրության համար, տնտեսությունը՝ տնտեսագիտության և տնտեսական աշխարհագրության համար:

Նույն չնով էլ կարող ենք ասել, որ **հասարակական կյանքի սոցիալական ոլորտը՝ սոցիոլոգիայի հետազոտության օբյեկտը, հետազոտության օբյեկտը է նաև սոցիալական աշխարհագրության համար**: Ինչ վերաբերում է «մարդկանց կյանքի կազմակերպման տարածական պրոցեսներին ու ջեներին», ապա **դրանք սոցիալական աշխարհագրության հետազոտության առարկան են, կամ նույնն է, թե օբյեկտը՝ նեղ իմաստով**: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ սկզբունքը նույնն է, ինչը աշխարհագրական մյուս գիտությունների պարագայում է:

Այսպիսով, սոցիալական աշխարհագրության սահմանային (ընդհանուր) օբյեկտը ամբողջ մարդկությունն է, իսկ կոնկրետ օբյեկտները՝ մարդկանց տարբեր մեծության ու մակարդակի տարածքային ընդհանությունները (բնակավայրեր, շրջաններ, պետություններ): **Սոցիալ-աշխարհագրական դիրքարկումների գլխավոր միավորը նույնական մարդն է, որը բնութագրվում է իր ազգային, դասակարգային, արդադրական պատկանելությամբ, սեռով, տարիքով, կրթական մակարդակով, առողջական վիճակով:**

Ուշադրության կենտրոնում են գտնվում այդ ընդհանրությունների ներսում մարդկանց տարածական վարժագիծը, ինչպես նաև ընդհանությունների միջև ընթացող պրոցեսները՝ կախված պատմական, տնտեսական, քաղաքական, եկոլոգիական գործոններից:

Վերը թվարկվեցին այն սոցիալական խնդիրները, որոնց լուծմանն է ուղղված սոցիալական քաղաքականությունը: Այդ խնդիրները, ի վերջո, իրենց խորացված դրսևորումը գտնում են «կյանքի որակ» հասկացության մեջ: Ուստի անհրաժեշտ է դրա մասին որոշ լրացուցիչ բացատրություն տալ:

Կյանքի որակը մի սիմբոլիկ ցուցանիշ է, որով բնութագրվում են բնակչության կյանքի պայմանները և մակարդակը: Օսպամազան են այն գործոնները, որոնցից ուղղակիորեն կախված են կյանքի պայմանները և մակարդակը: **Դրանք իրենց բովանդակությամբ կարող են լինել գնալիսական, ժողովրդագրական, սոցիալական, աշխարհագրական, քաղաքական, եկոլոգիական, բարոյական:**

Կյանքի որակը պայմանավորող կոնկրետ գործոնները լինում են **օրյեկտիվ**, որոնք կարող են ունենալ «չափ ու կշիռ», գնահատման հստակ ցուցանիշներ, և՝ **սուրյեկտիվ**: Օբյեկտիվ գործոններից նշենք, օրինակ, բնակչության կողմից սպառվող սննդամթերքի քանակը և որակը, բնակարանային պայմանները, կրաղվածության (գործարկության) մակարդակը, կրթության և սպասարկման հիմնարկների պարզացման աստիճանը: **Մրանք բոլորն էլ կարող են օրյեկտիվորեն գնահատվել քանակական և համեմատվել:**

Սուրյեկտիվ գործոններից նշենք՝ մարդկանց քավարարվածությունը աշխատանքից և կյանքի պայմաններից, սեփական վիճակից հասարակության մեջ և միկրոշրջապատում, սոցիալական կարգավիճակից, ընտանիքի ֆինանսական վիճակից, քաղաքացիական ազատություններից

ու քաղաքական իրավունքների մակարդակից: Թվարկումը կարելի է շարունակել:

Ըոլոր սուբյեկտիվ գործոնների համար ընդհանուր է այն, որ **անհնար է դրանք գնահատել օրյեկտիվ ցուցանիշներով և համեմատելի:** Հնարավոր է կարարել դրանց որակական գնահատում, օրինակ՝ անկետային հարցումների միջոցով պարզել մարդկանց (անհատների) սոցիալական վիճակի ինքնագնահատումը և արդյունքներն արտահայտել պայմանական բալերով:

Աշխարհագրական հետազոտությունների ժամանակ, երբ գլխավոր ուշադրությունը դարձվում է տարբեր երկրների ու տարածքային միավորների համեմատությանը, կարևոր է ապահովել **ցուցանիշների համեմատելիությունը**, որը օբյեկտիվ ու սուբյեկտիվ ցուցանիշների չափազանց մեծ բազմազանության պայմաններում չափազանց դժվարին խնդիր է:

Միջազգային կազմակերպությունները տարբեր մասնագետների ուժերով փորձում են մշակել ցուցանիշների այնպիսի համակարգ, որ կիրառելի լինի աշխարհի բոլոր երկրների համար և հնարավորություն տա համեմատել աշխարհի երկրներն ու տարածաշրջանները միմյանց հետ:

Այժմ աշխարհի երկրների մեծ մասում կիրառվում է դեռևս 1961թ. ՍՍԿ-ի համապատասխան կազմակերպությունների մշակած ցուցանիշների համակարգը, որտեղ առաջնակարգ նշանակություն է տրվում **սննդամբերի սպառմանը, բնակչության առողջական վիճակին, կըրպատության մակարդակին, մանկական մահացության գործակցին, բնակչության երկարակեցության ցուցանիշին**:

Կան այլ դասակարգումներ ևս, որոնք իրարից տարբերվում են ցուցանիշների քանակով և այն բանով, թե որ ցուցանիշին ինչ կարևորություն է տրվում: Օրինակ, այսպես կոչված, շվեդական մոդելում, որը լայն տարածում գտավ 70-ական թվականներին, առաջին տեղում են աշխատանքի և դրա պայմանների, քաղաքացու տնտեսական և քաղաքական հնարավորությունների ցուցանիշին¹:

Կյանքի որակի գնահատման համակարգում վերջին տարիներին մեծ նշանակություն է տրվում նաև շրջակա միջավայրի վիճակի և մարդու անշնչական անվտանգության և սոցիալական պաշտպանվածության,

1 Կյանքի որակի գնահատման ցուցանիշների մասին մանրամասն գլուխացնելու հարցում աշխատման համակարգում վերջին տարիներին մեծ նշանակություն է տրվում նաև շրջակա միջավայրի վիճակի և մարդու անշնչական անվտանգության և սոցիալական պաշտպանվածության, հնարավորությունների ցուցանիշին:

քաղաքացիական ու քաղաքական ազատությունների, ընտանիքի կայունության ու բարեկեցության սույցանիշներին:

Սոցիալական աշխարհագրությունն իր գլխավոր խնդիրը՝ հասարակական կյանքի սոցիալական ոլորտի տարածական կողմի հետապոտությունը կատարելիս գործ է ունենում տարբեր ռեգիոններին, պետություններին, շրջաններին և ավելի փոքր տարածական միավորներին վերաբերող վերը թվարկված և նման բնույթի այլ սույցանիշների հետ:

Սոցիալական աշխարհագրությունը սերտորեն համագործակցում է բնակչության աշխարհագրության և տնտեսական աշխարհագրության հետ:

ՀԱՐՑԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ինչո՞ւ է պայմանավորված սոցիալական աշխարհագրության ներկայիս արագ զարգացումը:**
2. **Ո՞րն է սոցիալական քաղաքականության բովանդակությունն ու նպատակը:**
3. **Ո՞րն է հասարակական կյանքի սոցիալական (սպասարկման) ոլորտի բովանդակությունը (բաղադրիչները):**
4. **Գիտության ո՞ր ճյուղի համար է, որ հասարակության սոցիալական խնդիրների ու ներքին հարաբերությունների ամբողջությունը ժառայում է որպես հետազոտության օբյեկտ:**
5. **Ո՞րն է սոցիալական աշխարհագրության գիտական սահմանումը:**
6. **Ո՞րն է սոցիալական աշխարհագրության հետազոտության օբյեկտն ու առարկան:**
7. **Ի՞նչ է «կյանքի որակը»: Որք նոր և այն պայմանավորող գործոնները:**
8. **Ինչո՞ւ է անհրաժեշտ ցուցանիշների համեմատելիությունը: Օրյենկույթի և սուրյենկույթի ցուցանիշների մնած բազմազանության պայմաններում ինչպես և կարելի է հասնել դրան:**
9. **Կյանքի որակի գնահատման ո՞ր ցուցանիշներն են առաջնային:**
10. **Սոցիալական աշխարհագրությունը ո՞ր գիտությունների հետ է առավել սերտ համագործակցությամ մեջ:**

45. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական աշխարհագրությունը հասարակական աշխարհագրության այն ճյուղն է, որ վբաղվում է հասարակական կյանքի քաղաքական ոլորտով:

Քաղաքական ոլորտն ընդգրկում է այն ամենը, ինչն առնչվում է **հասարակության և նրա գործերի հավածների կառավարման, պետական իշխանության նվաճման, պահպանման և օգտագործման հետ:**

Հասարակական կյանքի քաղաքական ոլորտի բաղադրիչները սովորաբար բաժանում են **երեք խմբի՝** ա) **քաղաքական հարաբերություններ,** բ) **հպատակ հասպատությունների համակարգ** և գ) **քաղաքական գործունեություն:**

Քաղաքական հարաբերություններ են՝ պետությունների, ազգերի, քնակչության սոցիալական խմբերի, կուսակցությունների, այլ հասարակական կազմակերպությունների, ինչպես և անհատների միջև եղած այն հատուկ տեսակի հարաբերությունները, որոնց հիմքում ընկած են **պետական իշխանության նվաճման, պահպանման և օգտագործման հարցերը:**

Հպատակ հասպատությունների (ինսպիրուվաների) համակարգը բավականին բարդ է ու բազմանդամ: Դրա մեջ մտնում են պետական իշխանության կենտրոնական ու ոեգիոնալ մարմինները, քանակը, ոստիկանությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև՝ քաղաքական կուսակցությունները, արհեստական միությունները, հասարակական-քաղաքական մյուս կազմակերպությունները: Դրանք իրականացնում են պետական ու քաղաքական գործունեություն: Դրանց միջոցով **կարգավորվում են քաղաքական հարաբերությունները:**

Քաղաքական գործունեություն են՝ քաղաքական հատուկ հաստատությունների գործողությունները, մասնավորապես համաժողովքրդական ընտրություններն ու հանրաքվեները, քաղաքական գործադրությունները և նման տիպի այն միջոցառությունները, որոնք դարձյալ առնչվում են պետական իշխանության նվաճման, պահպանման ու օգտագործման հետ:

Ինչպես տեսնում ենք, հասարակական կյանքի քաղաքական ոլորտը նույնպես, ինչպես տնտեսական ոլորտն է, մի բազմաբովանդակ, բարդ ու անընդհատ շարժման ու փոփոխության մեջ գտնվող բնագավառ է: Այդ բնագավառի ամեն մի մասնակից (պետական իշխանության մար-

մին, քաղաքական կուսակցություն և այլն) իր քաղաքական նպատակներին հասնելու համար իրականացնում է հատուկ տեսակի հասարակական գործունեություն, որը հայտնի է **քաղաքականություն** անունով:

Ուրեմն, **քաղաքականությունը հասարակական գործունեության մի այլպիսի փեսակ է**, որի միջոցով կարգավորվում են պետությունների, ազգերի, սոցիալական խմբերի ու կուսակցությունների միջև եղած հարաբերությունները: Այդ ընթացքում գործունեության յուրաքանչյուր մասնակի յգտում է պաշտպանել իր շահերը:

Զաղաքականությունն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները (Եկոնոմիկա, գաղափարախոսություն, իրավունք, հոգևոր-մշակութային, կրոնական) և ներգործում է բոլոր կարգի հարաբերությունների վրա՝ սկսած պետությունից մինչև միջանցնային հարաբերությունները:

Քաղաքականության միջուկը պայրադն է իշխանության համար (Ավաճելու, պահելու, օգտագործելու):

Հասարակական կյանքի քաղաքական ոլորտը հետապոտության ամբողջական օբյեկտ է քաղաքական գիտությունների համակարգի համար, որը հայտնի է նաև **քաղաքագիրություն** (լայն առումով) անունով¹:

Հասարակական կյանքի քաղաքական ոլորտի որոշակի կողմերի հետապոտությամբ զբաղվում է քաղաքական աշխարհագրությունը: Դա նշանակում է, որ քաղաքական աշխարհագրության հետապոտության օբյեկտը (լայն իմաստով) նույնպես քաղաքական ոլորտն է, մեկը հասարակական կյանքի ոլորտներից, որոնք ավելի լայն ոլորտի՝ աշխարհագրական թաղանթի մարդուրտի քաղադրիչներն են և զարգանում են նրա կազմում: Մինչդեռ քաղաքական ոլորտի այդ «որոշակի կողմերը», որոնց մասին կնշվի ստորև, կազմում են քաղաքական աշխարհագրության հետապոտության առարկան:

Այսպիսով, ընդհուած մոտեցանք քաղաքական աշխարհագրության բնորոշմանը: **Քաղաքական աշխարհագրությունը գիրություն է հասարակական կյանքի քաղաքական ոլորտի և նրա քաղադրիչների դարաժրային կազմակերպման, քաղաքականության դարաժրական դադրներությունների մասին:**

1 Ներ իմաստով քաղաքագիրության հետապոտության օրինակ քաղաքական իշխանությունն է որպես քաղաքականության սկիզբ, ընթացք և նպատակ:

Կան այլ բնորոշումներ ևս, որոնք, տարբերվելով մանրամասների մեջ, գլխավոր հարցում միանման են: Այդ առումով հետաքրքիր է չեզ արդեն հայտնի «Географический энциклопедический словарь»-ի բնորոշումը: Ըստ նրա «Материкական աշխարհագրությունը հասարակական աշխարհագրական գիտություն է, որն ուսումնասիրում է աշխարհի քաղաքական քարտեզը, քաղաքական ուժերի տեղաբաշխումը և տարածքային գուգորդումները, նկատի ունենալով դրանց փոխառնչությունները հասարակական-քաղաքական կյանքի տարածական կազմակերպման հետ (սահմաններ, վարչատարածքային բաժանում և այլն)» (էջ 170):

Վերոհիշյալ երկու սահմանումներն ուշադրությամբ համեմատելու դեպքում դժվար չենկատել, որ դրանց տարբերությունը եական չե, եթե հատկապես նկատի ունենանք, որ **աշխարհի քաղաքական քարտեզ ասելով չպետք է հասկանանք լոկ քարտեզի վրա աշխարհի պետությունների տեղաբաշխումը և սահմանները: Իրականում այն արտապուրում է հասարակական կյանքի քաղաքական ոլորտն իր ողջ բովանդակությամբ, աշխարհի քաղաքական-քարածական կառուցվածքը, պետությունների փոխարարերությունները և ընդհանուր միջազգային իրադրությունը, այսինքն՝ այն ամենը, ինչ ավելի սեղմ չենք արտահայտված է առաջին բնորոշման մեջ:**

Քաղաքական աշխարհագրական հետազոտությունները, ինչպես և աշխարհագրական հետազոտություններն ընդհանրապես, ըստ տարածքային ընդգրկման լինում են երեք կատեգորիայի (մակարդակի՝ մակրո, մեզո և միկրո): Այս դեպքում նոյնպես ամեն մի մակարդակ ունի իր բնորոշ բովանդակությունն ու խնդիրները: **Մակրոմակարդակը** հիմնականում քննարկում է քաղաքական ուժերի, պետությունների, նրանց խմբավորումների փոխարաբերությունները համաշխարհային ընդգրուկումով: **Մեզոմակարդակի** դեպքում գործ ենք ունենում աշխարհի առանձին տարածաշրջանների և դրանց սահմաններում չեավորված քաղաքական հարաբերությունների (հիմնականում միջազգային) հետ, իսկ **միկրոմակարդակի** դեպքում՝ առանձին պետությունների ներսում ընթացող քաղաքական պրոցեսների հետ:

Եթե մակրոմակարդակում ուշադրության կենտրոնում գտնվում են պետությունների արտաքին քաղաքանությունն ու միջազգային հարաբերությունները, ապա ամենացածր՝ միկրոմակարդակում առանցքային են դառնում պետության ներքին քաղաքականությունը և քաղաքական ուժերի դասավորությունը պետության ներսում:

Զաղաքական աշխարհագրության տեղը հասարակական աշխարհագրության համակարգում և փոխհարաբերությունների համակարգի բաղադրիչների հետ ճիշտ հասկանալու համար հարկ է քննարկել **նրանց հետպատճերության օրյեկտի ու առարկաների իրական փոխհարաբերությունները:**

Հին ժամանակներում Ենթադրում էին, որ քաղաքական ոլորտի (քաղաքականության) և հասարակական կյանքի մյուս ոլորտների միջև որևէ կապ գոյություն չունի, որ նա դրանցից անկախ է: Զաղաքական գործողությունների ու շարժումների դրդապատճառը համարում էին ընդհանրապես մարդ արարածի բնույթը, այն, որ մարդն ի ծնե ներքին մղում ունի դեպի քաղաքականությունը, որ քաղաքականությունը մարդու բուն եռթյունն է: Այստեղից հետևություն էր արվում, որ քաղաքականությունը մարդկանց կրաղմունքի հատուկ ոլորտ է, որ ծագել ու զարգանում է հասարակական կյանքի մյուս ոլորտներից մեկուսի և դրանցից անկախ:

Մի այլ կարծիքի համացայն, քաղաքական հարաբերություններն իրենց եռթյամբ դասակարգային հարաբերություններ են, իսկ քաղաքականությունը դասակարգային շահերի բախման արտահայտություն, նա ծագել է դասակարգերի հետ մեկտեղ: Դրանից այն հետևությունն էր արվում, որ քաղաքականությունը պատմական կատեգորիա է և դասակարգերի հետ մեկտեղ կդադարի գոյություն ունենալուց:

Կյանքը ժխտեց թե՛ առաջին, թե՛ երկրորդ կարծիքի ճշմարտացիությունը:

Ներկա պատկերացումն այն է, որ **մարդկային հասարակությանը ներիալուկ են որոշակի հարաբերություններ**, որոնք ձևավորվում են **հասարակության ներսում առկա ոչ միայն դասակարգային, այլև ազգային, էրներկան, կրոնական, պատմամշակութային, սոցիալական գործառնություններից**: Պատմական զարգացման ընթացքում եթե մի տարբերություն վերանում է, ծնվում է մի ուրիշը: Ինչ-որ տարբերություններ և դրանցից բխող հարաբերություններ մշտական եղել են, կան և կինեն նաև ապագայում: Զանի որ դա այդպես է, ապա մարդկությունը միշտ այդ հարաբերությունների մշտական կարգավորման ու կատարելագործման կարիք ունենալու է:

Ուրեմն, կարող ենք ասել, որ **քաղաքականությունը ծնվել է հասարակական հարաբերությունների կարգավորման ու կապարելագործման օրյեկտիկ անհրաժեշտությունից**: Իսկ այդ անհրաժեշտու-

թունը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի մարդկային հասարակությունը:

Թաղաքական հարաբերությունները սերտ փոխառնչության մեջ են գտնվում հասարակական կյանքի մյուս ոլորտների և, առաջին հերթին, տնտեսական ոլորտի հետ:

Տնտեսական ոլորտը, ինչպես արդեն գիտեք, իր մեջ ներառում է նաև տնտեսական հարաբերությունները, որոնք կազմում են **հասարակության դնդեսական կիմքը՝ բաղիսը**: Տնտեսական հարաբերություններին զուգահեռ զևավորվում ու զարգանում է նաև քաղաքական հարաբերությունները և ամբողջ քաղաքական ոլորտը: Եթե տնտեսությունն ու տնտեսական հարաբերությունները հասարակության տնտեսական բազիսն են, ապա **բաղաքանությունն ու բաղաքական ոլորտը հասարակության բաղաքական վերնաշներն են**:

Ակնհայտ է բազիսի և վերևաշների փոխհարաբերությունների առանցնահատուկ բնույթը, դրանց փոխպայմանավորվածությունը: **Ընդհանուր առմամբ բաղաքանությունը խիստ կախման մեջ է դնդեսությունից**, թեպես մեծ մասամբ այդ կախվածությունը ոչ թե ուղղակի ու բացահայտ է, այլ անուղղակի և քողարկված:

Բացառիկ չեն նաև այն դեպքերը, երբ քաղաքականությունը չեղոք է բերում հարաբերական ինքնուրույնություն և հանդես է գալիս տնտեսությունից անկախ: **Ավելին, նա սկսում է հակազդել դնդեսության, ինչպես նաև հասարակական կյանքի մյուս ոլորտների վրա և դառնում է առաջնորդություն**: Հասարակական զարգացման ներկա փուլում քաղաքականությունը վերածվել է մի հսկող առաջնային ուժի, որի միջոցով լուծվում են թե՛ տնտեսական, թե՛ ազգային, կրոնական, միջազգային խնդիրները, պետությունների անվտանգության, պատերազմի ու խաղաղության հարցերը:

Այդ ամենիվ հանդերձ, **արդյունավետ է համարվում հասարակության այն վիճակը**, երբ ներդաշնակություն է հաստատված քաղաքականության և մյուս ոլորտների միջև: Այդ դեպքում բացառվում են սոցիալական բախումները և ցնցումները: Հասարակության պայթյունավտանգ հարցերը լուծվում են ոչ թե հեղափոխությունների, այլ բարեփոխումների, ոեփորմների միջոցով:

Հասարակություն-քնություն հարաբերությունների հարցը տարբեր առիթներով քննարկվել է գործի նախորդ բաժիններում, մասնավորա-

պես տնտեսական աշխարհագրությանը և քնական ուսումների աշխարհագրությանը նվիրված բաժիններում:

Այդ հարաբերությունները առանցնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև քաղաքական աշխարհագրության համար:

Նեռևս քաղաքաաշխարհագրական առաջին հիմնարար գիտական հետազոտության մեջ, ինչպիսին էր գերմանացի աշխարհագետ ու սովորոգ Ֆրիդրիխ Ռատցելի (1844-1904թթ.) «Քաղաքական աշխարհագրություն» գիրքը՝ տպագրված 1890թ., հատուկ քննարկվում էր քաղաքանության, մասնավորապես միջազգային քաղաքականության վրա աշխարհագրական գործոնների ազդեցությունը:

Մինչ այդ, աշխարհագրական դետերմինիզմի ռադիկալ ներկայացուցիչները աշխարհագրական պայմանները վճռական գործոն էին համարում հասարակական կյանքի տնտեսական և հոգևոր-մշակութային ոլորտների գարգարման համար: **Ֆ. Ռապելը առաջին անգամ աշխարհագրական գործոնները վերլուծեց և գնահատեց քաղաքական ոլորտի գենամկյունից:** Նա կարգարեց այն գաղափարը, որ պետությունը, որպես քաղաքական-տարածքային կառույց, կենդանի օրգանիզմ է և նրա կենսագործունեությունն էլ, ինչպես բոլոր կենդանի օրգանիզմներինը, կախված է շրջակա միջավայրից: Ֆ. Ռատցելը երկիր-պետությունը համարում էր մարդկանցով լցված մի տարածություն՝ **կենսադրամածք**, որի աշխարհագրական առանցնահատկություններով էլ պայմանավորվում է պետության ոչ միայն ներքին, այլև, առաջին հերթին, արտաքին քաղաքականությունը: Ուստի, ամեն մի պետություն իր կարգացումն ապահովելու համար ճգտում է բարեկավել իր կենսատարածքը, ընդարձակել այն, բարենպատ դարձնել աշխարհագրական դիրքը, ուժեղացնել իր ազդեցությունը այլ տարածքների վրա: Ըստ Ռատցելի, ամեն մի պետության քնական իրավունքն է: Այստեղից էլ՝ պետությունների շահերի անխուսափելի բախումները:

Ռատցելի «Քաղաքական աշխարհագրությանը» հաջորդեցին այլ հեղինակների նույն ոգով գրված աշխատություններ, և չնավորվեց մի ուղղություն, որ հայտնի դարձավ **աշխարհագրականություն (գեղագոլիքիկա)**¹՝ անունով:

Գեղագոլիքիկա օգտագործվեց գերմանական նացիստների

1 Գեղագոլիքիկա գերմինն առաջին անգամ օգրագործել է շվեյ սոցիոլոգ Ռ. Շելենը 20-րդ դարի սկզբին:

կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի սանյապերծությունը և ֆաշիստական Գերմանիայի նվաճողական քաղաքականությունը արդարացնելու համար: Այդ պատճառով մի տեսական ժամանակ գեոպոլիտիկան նույնացվում էր պատերազմի ու ազգեսիայի գաղափարախոսության հետ և համարվում էր հետադիմական ու վարկաբեկված գիտական ուղղություն:

Գեղապոլիտիկայի նկատմամբ հետաքրքրությունը կրկին աճեց 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած: Միաժամանակ տարածում գտան այլ մոտեցումներ ու տեսակետներ՝ պայմանավորված հետաքրքրական նոր աշխարհակարգով և հատկապես միջուկային գենքի հայտնագործման ու տարածման հանգամանքով: Տիրապետող էր դառնում այն գիտակցությունը, որ պատերազմն այլևս միջազգային հարցների լուծման միջոց լինել չի կարող: Առաջնակարգ նշանակություն ցեղոք քերեցին պետության շահերի պաշտպանության, դրանց համաշախնեցման այնպիսի տնտեսական, տեխնիկական միջոցները և արտաքին քաղաքական գործունեությունը, որոնք բապառում են ռազմական ուժի գործադրումը:

Հին, դասական գեոպոլիտիկայի հիմքում ընկած էր «աշխարհագրական միջավայր-արդարին քաղաքականություն» կապը, երբ աշխարհագրական դիրքի բարելավման և քնական ռեսուրսներով ապահովման հարցերը լուծվում էին ուժի դիրքերից:

Արդի գեղապէիտիկայի հիմքում ընկած է **եռանդամ «աշխարհագրական միջավայր-մարդ (ժողովուրդ)-արդարին քաղաքականություն»** շղան։ Դրա իմաստն այն է, որ մեծանում է մարդկային գործոնի դերը։ Դա նշանակում է, որ մասնավորապես միջազգային քաղաքականության մեջ, բացառելով պատերազմը և նոր տարածքային նվաճումները, տիրապետող է դառնում հարեսն պետությունների կենսական շահերի, ժողովրդի մենթալիտետի, քաղաքական կուլտուրայի, ազգային-պատմական ավանդույթների և նույնիսկ երկրի ղեկավարի հայացքների ու անշնչական հատկանիշների փոխադարձ հաշվառումը։ Այդպիսի աշխարհագրաքան մոտեցումն օգնում է ճիշտ հասկանալու արտաքին քաղաքական գործընթացի մասնակիցների հեռավոր և մերժավոր շահերն ու նպատակները, նրանց քաղաքականությունը և դրա հիման վրա մշակելու սեփական պետական քաղաքականություն, մշտապես հիշելով, որ «**քաղաքականությունը հնարայորի արվեստն է»»։**

Գիտությունների դասակարգման համակարգում աշխարհագ-

ղաքականության տեղի մասին տարբեր կարծիքներ կան: Տարբեր կարծիքներ կան նաև քաղաքական աշխարհագրության և աշխարհաքաղաքականության կապի մասին: Հետազոտողների մի մասը գտնում է, որ աշխարհաքաղաքականությունը քաղաքագիտության և պրակտիկ քաղաքականության ճուղին, մյուս մասը համարում է, որ աշխարհաքաղաքականությունը մտնում է քաղաքական աշխարհագրության մեջ կամ նույնիսկ հենց քաղաքական աշխարհագրությունն է: Օրինակ, աշխարհաքաղաքականության բնագավառի դասականներից Հառլիսոնքերից շնորհվում է «Քաղաքական աշխարհագրությունը քննարկում է պետությունը տարածության տեսանկյունից, իսկ աշխարհաքաղաքականությունը քննարկում է տարածությունը պետության տեսանկյունից»:

Ամփոփելով «Քաղաքական աշխարհագրություն» բաժինը, կարող ենք հետևյալ հետևողությունն անել. ինչպես քաղաքականությունը հարաբերվում է գլոբուսուրյան և հասարակական կյանքի մյուս բնագավառներին, նույնպես էլ քաղաքական աշխարհագրությունը հարաբերվում է հասարակական աշխարհագրության մյուս քաղադրիչներին:

Գիտության բնագավառում ևս անհրաժեշտ է զարգացման ներդաշնակություն: Անթույլատրելի է հետազոտության նույն օբյեկտն ունեցող գիտություններից որևէ մեկի թե՛ գերազնահատումը և թե՛ թերազնահատումը: Միայն այդ ներդաշնակության դեպքում կարելի է ստանալ հետազոտվող օբյեկտի, տվյալ դեպքում՝ մարդկային հասարակության ու մարդուրութիւն ստույգ գիտական պատկերը:

ՎԱՐՅԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Որո՞նք են հասարակական կյանքի քաղաքական ոլորտի քաղադրիչների հիմնական խմբերը:**
2. **Ի՞նչ է քաղաքականությունը: Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներն է այն ընդունում:**
3. **Ո՞րն է քաղաքական աշխարհագրության բնորոշումը:**
4. **Ինչպես և են փոխվում քաղաքական աշխարհագրության հետազոտության բովանդակությունն ու խնդիրները ուսումնասիրության մակրո, մեղու և միկրո մակարդակներում:**
5. **Ի՞նչ հարաբերության մեջ են գրնակում հասարակական կյանքի քաղաքական և գլոբուսական ոլորտները:**

- Հասարակությունը բնություն հարաբերությունները ինչո՞վ են հետաքրքրում քաղաքական աշխարհագործությանը:
- Ի՞նչ է աշխարհաքաղաքականությունը (գեղազոլիտիկան): Ե՞րբ և ի՞նչ դեսական հիմքի վրա է այն ձևավորվել:
- Արդի գեղազոլիտիկան ինչո՞վ է դարձերվում նախկին գեղազոլիտիկայից:
- Ի՞նչ է նշանակում «քաղաքականությունը հնարավորի արվեստ» շեակերպումը:
- ԱՌ է աշխարհաքաղաքականության (գեղազոլիտիկայի) դեմքը գիտություն-ների դասակարգման համակարգում:**

4.6. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակույթի աշխարհագրությունը հասարակական աշխարհագրության նոր ձևավորվող ու հեռանկարային ճյուղերից է: Գիտության նոր ճյուղի ձևավորումը, ինչպես արդեն ասվել է, տեղի է ունենում այն ժամանակ, երբ հասունացած են երկու անհրաժեշտ պայմաններ: Մեկը կյանքի, պրակտիկայի պահանջն է, այլ կերպ ասած՝ **սոցիալական պարզերի առկայությունը**: Մյուսը՝ **գիտության ինքնազարգացման դրամարանությունն է**, որի համապատասխան նոր ճյուղ կարող է ծնվել, երբ հասունացման որոշակի մակարդակի են հասել մայր գիտության մեթոդաբանությունն ու տեսությունը, հետազոտությունների մեթոդիկան:

Մշակույթի աշխարհագրության ճյուղի ձևավորման ու հասունացման համար առկա են թե՛ մեկ, թե՛ մյուս պայմաննը:

Նրա՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղի կայացման ներկա փուլում կարևոր խնդիր է համարվում **հետազողության օրյնկրի և առարկայի սահմանումը**:

Առաջին մոտեցմամբ կարելի է պնդել, որ մշակույթի աշխարհագրության հետազոտության օբյեկտը մշակույթն է: Բայց դա թիշ բան է ասում, որովհետև «մշակույթ» հասկացությունը չափական ընդհանուր է, ունի տարրեր մեկնաբանություններ և հնարավորություն չի տալիս որո-

շելու դրա հետազոտությամբ զբաղվող գիտության սահմանները և կոնկրետ խնդիրները:

Մշակույթ կամ կուլտուրա (լատ. *cultura* բառից, նշանակում է մշակել, դաստիարակել, կրթել) բառը շրջանառության մեջ է մտել 18-րդ դարի երկրորդ կեսին և սկզբնական շրջանում նշանակում էր մարդու նպատակային ներգործությունը բնության վրա, մասնավորապես հողի մշակումը այն նպատակով, որ օգուտ տա մարդուն (լատ. *agricultura*): Ավելի ուշ «կուլտուրան» ստանում է նաև մարդու դաստիարակության ու կրթության իմաստ:

Փոխարերական իմաստով «մշակույթը», «կուլտուրան» նշանակում է մարդու ֆիզիկական ու հոգևոր հակումների և ընդունակությունների զարգացում, բարելավում, ազնվացում:

Լայն իմաստով «կուլտուրան» որևէ ժողովրդի կամ ժողովուրդների իմարք կնճապչի, նվաճումների և սրբազնագործության դրսելումն է: Ըստ բովանդակության նա տրոհվում է տարբեր բնագավառների, օրինակ՝ բարքերի ու սովորությունների, լեզվի ու գրի, տարազի, բնակավայրերի, աշխատանքի, տնտեսության, հասարակական-քաղաքական կառուցկածքի, դաստիարակության բնույթի, գիտության, տեխնիկայի, արվեստի, կրոնի:

Ներկայում «մշակույթ» դերմինի անհագուրածված իմաստը մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակն է, որն արդահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևով ու փրակերով, նրանց վերաբերմունքով դեպի շրջակա միջավայրը և նյութական հոգևոր ու բարոյական արժեքները: Հենց այս իմաստն են արտահայտում, օրինակ, անտիկ մշակույթ, հելլենիստական մշակույթ, միջնադարյան մշակույթ, հնագիտական մշակույթ, քրիստոնեական մշակույթ, սլավոնական մշակույթ, արաբական մշակույթ, հայկական մշակույթ հասկացությունները:

Որոշ գիտնականներ «մշակույթը» լայն իմաստով նույնացնում են «քաղաքակրթություն» (սիվիլիզացիա¹) հասկացության հետ, դրա տակ հասկանալով որնէ ազգի կամ երկրի կուլտուրականության աստիճանը, որն արտահայտվում է գիտությունների, արվեստների, արտադրության զարգացման աստիճանով, այն բանով, թե հասարակարգը, պետական

1 Տիկիլիզացիա-լատ. *civis-քաղաքացի բառից:*

կառուցվածքը, քաղաքական հաստատությունները ինչքանով են «քանական» ու խելամիտ, որքանով են ապահովում մարդկանց ազատ, խաղաղ ու բարեկեցիկ կյանքն ու ներդաշնա՞կ են արդյոք նրանց բնական պահանջներին ու մղումներին:

Ովքեր սխալ են համարում այդ նույնացումը, ընդգծում են նրանց տարբերությունը, այն է՝ մշակույթը (կուլտուրան) ժողովրդի կամ անհատի կամքի ինքնորոշման ու ինքնահասպատճամ դրսելորումն ու արդյունքն է, մինչեւ քաղաքակրթությունը գեխմիկայի նվաճումն է և դրանով պայմանավորված՝ հարմարավելությունը (կոմֆորտը): Այդ դեպքում քաղաքակրթությունը հակադրվում է **բարրարուսության ու վայրագույրյանը**:

Ինչպես տեսնում ենք, մշակույթը մի քարդ համակարգ է, որի կազմում առանձնացվում են հետևյալ ենթահամակարգերը. կրոն, գիտություն, իրավունք, տնտեսություն, արվեստ, պետական կյանք, տեխնիկա:

Նեղ իմաստով «մշակույթը» վերագրում են միայն հոգևոր ոլորտին և այն նույնացնում են անհատի անձնական կատարելության, դաստիարակվածության ու կրթվածության հետ (կուլտուրական մարդ, կուլտուրական վարմունք և այլն):

Ընդունված է տարբերել նաև **մյուրական մշակույթ և հոգևոր մշակույթ ոլորտները**, որոնք համապատասխանում են հասարակական կյանքի երկու հիմնական ոլորտներին՝ նյութական ու հոգևոր:

Նյութական մշակույթն ընդգրկում է նյութական արտադրության ամբողջ ոլորտը և դրա գործունեության արդյունքները, այն է՝ աշխատանքի գործիքները, բնակարանները, տնային գործածության իրերը, հագուստը, տրանսպորտի ու կապի միջոցները, իհարկե նաև արտադրության բուն պրոցեսը, դրա կազմակերպման մակարդակը:

Հոգևոր մշակույթն ընդգրկում է մարդկանց հոգևոր գործունեության ոլորտը, մասնավորապես գիտելիքների արտադրությունն ու վերարտադրությունը, գաղափարախոսությունն ու եթիկան, կենսափիլիսոփայությունն ու բարոյականությունը, էսթետիկան ու գիտությունը, բանահյուսությունն ու կրոնը:

Նյութական մշակույթը և հոգևոր մշակույթը գտնվում են օրգանական միանության մեջ, փոխապայմանավորված են և զարգանում են համատեղ:

Ինչպես տեսանք նախորդ բաժիններում, իրական կյանքի ամեն

մի խոշոր բնագավառ ու համակարգ հետազոտության օբյեկտ է առանցին կոմպլեքս գիտության կամ, ավելի հաճախ, գիտությունների առանցին համակարգի համար (ժողովրդագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ռեսուրսագիտություն և այլն): Նույն չենք եւ մշակույթը, որպես համամարդկային երևույթ, հետազոտության օբյեկտ է նոր չենավորվող կոմպլեքսային գիտության՝ **մշակութաբանության** (կուլտուրոլոգիա) համար:

Մշակույթի աշխարհագրությունը նույնպես, ինչպես հասարակական աշխարհագրության մյուս բոլոր բաղադրիչները՝ ունի «Երկրադարձայինություն», տեղ գրավելով միաժամանակ մշակութաբանության և հասարակական աշխարհագրության կազմում: Մշակութաբանության հետ միասին նաև հետազոտում է **նույն օրյենկողը**, մինչդեռ աշխարհագրության կազմում հետազոտում է **այդ օրյենկողի գարածական ասպեկտը, որը և նրա հետազույթության առարկան է:**

Այսպես, ուրեմն, **մշակույթի աշխարհագրությունը** (երրենն օգրագործվում է առաջին մշակութային աշխարհագրություն) **հասարակական աշխարհագրական գիտություն** է **մշակույթի և նրա բազայինների** (ենթահամակարգների) գարածքային գործերական, դրանց և ընական պայմանների փոխազդեցուրյունների, գարածքային միավորների փոխառնությունների ու փոխադարձ կապերի մասին:

Մշակույթի աշխարհագրությունը ոչ աշխարհագրական գիտություններից, չհաշված մշակութաբանությունը, առավել սերտ կապի մեջ է ազգագրության, կրոնագիտության և պատմության հետ, իսկ աշխարհագրական գիտություններից՝ բնակչության աշխարհագրության, տնտեսական աշխարհագրության, սոցիալական աշխարհագրության և լանդշաֆտագիտության հետ:

ԴԱՐՁԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳ-ՄԱՐ

1. **Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ գիտության նոր ճյուղի ձևավորման համար:**
2. **Ո՞րն է մշակույթի աշխարհագրության հետազույթության օրյենկողը:**
3. **Ո՞րն է մշակույթի աշխարհագրության հետազույթության առարկան:**
4. **Ի՞նչ է մշակույթը, ի՞նչ է բաղարակորությունը:**

5. Որո՞նք են նյութական մշակույթի և հոգևոր մշակույթի ընդհանուր և գործերից:
6. Ո՞րն է մշակույթի աշխարհագրուրյան սահմանումը:
7. Մշակույթի աշխարհագրուրյանը աշխարհագրական և ոչ աշխարհագրական ո՞ր գիտուրյունների հետ է առավել սերդ համագործակցության մեջ:

4.7. ՌԵԳԻՈՆԱԼ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի սույն գլխում քննարկված հասարակական աշխարհագրության բաղադրիչները, ինչպես տեսանք, միմյանցից տարբերվում են առաջին հերթին իրենց հետապոտության օբյեկտներով (առարկաներով): Այդ օբյեկտը մի դեպքում բնակչությունն է, մյուս դեպքում՝ տնտեսությունը, երրորդ դեպքում՝ բնական ռեսուրսները (որպես տնտեսական կատեգորիա)... Դա նշանակում է, որ հասարակական կյանքի և մարդկային գործունեության ամեն մի ոլորտի և բնագավառի բաժինն է ընկնում գիտությունների մի ինքնուրույն ճյուղ ու ենթաճյուղ:

Այդպես է և բնական աշխարհագրության մեջ: Աշխարհագրական թաղանթի բնական ոլորտներից յուրաքանչյուրը հետապոտության օբյեկտ (առարկա) է բնական աշխարհագրության առանձին ճյուղի համար (գեոմորֆոլոգիա, կիմայագիտություն, ջրաբանություն, կենսաաշխարհագրություն և այլն):

Աշխարհագրական գիտության յեզ արդեն ծանոթ ճյուղերի ու ենթաճյուղերի հետապոտության օբյեկտները աշխարհագրական թաղանթի ոլորտային (կոմպոնենտային) կառուցվածքի միավորներն են (մթնոլորտ, կենսալորտ, գետեր, բնակչություն, տնտեսություն, քաղաքական ոլորտ և այլն):

Բայց աշխարհագրական թաղանթը ոլորտային կառուցվածքից բացի ունի նաև գարածքային կառուցվածք: Այդ կառուցվածքի միավորները նույնպես աշխարհագրական հետապոտության օբյեկտներ են: Այդպիսիք են՝ մայրցամաքը, ենթացամաքը, բնական գոտին ու ենթագո-

տին, պետությունը, մարզը, շրջանը և այդպես շարունակ, ընդհուպ մինչև առանցին քնակավայրը:

Աշխարհագրական թաղանթի տարածքային կառուցվածքի միավորների հետազոտությամբ զբաղվում է աշխարհագրական գիտությունների մի առանցին խումբ, որն ընդհանուր անոնով կոչվում է **ռեգիոնալ աշխարհագրություն**:

Հայտնի է, որ ռեգիոնալ հետազոտություններով զբաղվում են ոչ միայն աշխարհագրությունը և նրա առանցին բաղադրիչները, այլև շատ հարակից գիտություններ ևս, որոնց կազմում չենավորվել են հատուկ ճյուղեր ու ենթաճյուղեր, օրինակ՝ ռեգիոնալ երկրաբանություն, ռեգիոնալ էկոնոմիկա, ռեգիոնալ սոցիոլոգիա, ռեգիոնալ ազգագրություն: Թվարկած այս ճյուղերի համար, որոնք ռեգիոնը (շրջանը) դիտարկում են որպես հետազոտության օբյեկտ, **ընդհանուր են մերոդարանական մոդելցումներն ու մերոդական եղանակները**: Այդ ամենն այժմ միավորվում է **ռեգիոնալիստիկա** (շրջանագիտություն, ռեգիոնագիտություն) կոչվող գիտական ուղղության մեջ:

Շրջանը (ռեգիոնը) իր տիպարանական իմաստով, ինչպես արդեն ասվել է (տե՛ս գլուխ 3.4) աշխարհագրության առանցքային հասկացություններից մեկն է և միաժամանակ հետազոտության հիմնական օբյեկտ: Յուրաքանչյուր շրջան մի ինքնատիպ գոյացություն է, ունի ինքնուրույն հատկանիշներ: Այդ առումով նա առանձնանում է իր շրջապատից: **Անեն մի շրջան գեղահամակարգ է, որը զարգանում է յուրահակուկ պայմաններում և ներքին մեխանիզմներով**:

Ծեն հատուկ հետազոտությունների միջոցով աշխարհագրությունը կատարում է շրջանացում, այսինքն՝ բացահայտում է աշխարհագրական թաղանթի ու նրա առանցին ոլորտների ու բնագավառների տարածքային միավորները, ապա կա տարածքային բաղադրիչների մի կարգ, որի գոյուրյունն ակնհայտ է և **աշխարհագրական հակուկ ապացույցների կարիք չի գումակական առում առաջանական է** աշխարհագրական հակուկ ապացույցների կարիքը չի գումակական առում առաջանական է:

¹ Լաւր. regio-մարզ, շրջան բառից: Այդ նույն իմաստով օգտագործվում է նաև ֆր. rayon (բառացի՝ ճառագայթ, շառավիղ) բառը:

Տարբեր երկրների քնության, քնակշության, տնտեսության, մշակույթի առանցնահատկությունների ու «հրաշալիքների» մասին տեղեկություններ հանդիպում ենք դեռևս անտիկ աշխարհի ճանապարհորդական նկարագրություններում, աշխարհագիրների ու պատմագիրների երկերում: Բայց դրանք տեղեկություններ են առանցին ուղերթերի մասին, որով անցել է ճանապարհորդը, կամ առանցին վայրերի ու օբյեկտների մասին, որոնք անցամբ տեսել կամ լսել է ականատեսներից տվյալ աշխատության հեղինակը: Այդ «նկարագրություններ», իրոք, մեծ մասամբ ճանապարհորդի, աշխարհագրի ու պատմագրի մասնավոր, անցնական ճաշակով ընտրված փաստերի ու տեղեկությունների նկարագրություններն են, բայց ոչ համակարգված քնությագրություններ: Դրանցում բացակայում են երևույթների պատճառահետևանքային կապերի վերլուծությունն ու գիտական ընդհանրացումը: Այդ տիպի աշխատությունները տարածված են եղել ընդհուպ մինչև 19-րդ դարը: Նրանք նկարագրվող երկրի քնության, քնակշության, տնտեսության, մշակույթի, քաղաքական կառուցվածքի մասին հարուստ ու բազմակողմանի տեղեկություններ պարունակելով հանդերձ, *չեն պակել երկրի հավաքական գիրական պատկերը*:

Այդ նպատակին առավել չափով մոտեցել են նոր աշխարհագրական գերմանական և ֆրանսիական դպրոցի ներկայացուցիչները: Ավակական է թեկութ հիշել աշխարհի և նրա տարբեր մասերի բազմահատոր նկարագրությունները: Դրանք աշքի են ընկնում տարբեր երկրների քնության և դրանցում քնական ժողովուրդների բազմակողմանի ու հյութեղ, երբեմն գեղարվեստական կատարելության հասնող նկարագրություններով ու պատկերներով¹:

Այդ աշխատություններում ջիշ չեն քնության ու մարդկային գործունեության փոխադարձ կապերի գիտական վերլուծության հաջողված փորձերը: Այդուհանդերձ, դրանք ևս աշխարհագրական նկարագրության մակարդակից վեր չեն բարչրանում և ուսումնասիրվող երկրի *ընդհանրացված գիրական պատկերը* չեն տալիս:

1 Հայրնի են հարկապես Ամերիկային նվիրված Ալեքսանդր Հումբողի, Աֆրիկային և Ասիային նվիրված Կառլ Ռիգենի («Erdkunde»-«Երկրագիրություն») աշխատության 19 հատորները, Պոլ Վիդալի և նրա աշակերտների «Համընդհանուր աշխարհագրություն» մատենաշարը, նվիրված աշխարհի խոշոր շրջանների Ակադեմիային և Ակադեմիայի 19 համաշխարհային աշխարհագրություն: Աշխարհը և մարդիկ» 19 համարից բաղկացած աշխարհագրությունը:

Երկրների կոմպլեքսային աշխարհագրական ուսումնասիրության անհրաժեշտությունը ծագել է այն ժամանակ, երբ չևավորվել է համաշխարհային տնտեսությունը, զարգացման որոշակի մակարդակի է հասել աշխարհի սոցիալ-քաղաքական կազմակերպումը, իսկ այդ կազմակերպման կենտրոնական օբյեկտը դարձել է Երկիր-պետությունը:

Երկրագնդի երեսին մարդկային հասարակության տարածքային կազմակերպման և միջազգային հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ նախապայման դարձավ այն, որ Երկիր-պետությունները ճանաչեն իրար, ճանաչեն բազմակողմանիորեն ու խորությամբ: Դա կյանքի նոր իրամայականն էր, աշխարհագրությանը ներկայացվող նոր սոցիալական պատվերը:

Որպես պատասխան այդ պատվերի, **սկսեց չեավորվել երկրագրությունն իր այսօրվա բովանդակությամբ**, որն այժմ աշխարհագրական գիտությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում և հավակնում է դառնալ ճյուղային քաղադրիչները միավորող և աշխարհագրական սինթեզ կատարող գլխավոր ուղղություն¹:

«Географическая энциклопедическая словарь»-ի բնորոշման համացայն, «Երկրագրությունը աշխարհագրական դիսցիպլինն է, որն սրագում է Երկրների կոմպլեքսային ուսումնասիրությամբ, համակարգում և ընդհանուրացնում է դրանց բնության, բնակչության, տնտեսության, մշակույթի և սոցիալական կազմակերպման մասին տարաբնույթ տվյալները»:

Այս բնորոշման մեջ խտացված է այն տարբերությունը, որ առկա է Երկրների նախկին նկարագրությունների և ներկայիս Երկրագրության միջև: Ինչպես երևում է Երկրագրության բնորոշումից, շեշտոց դրվում է **օրյեկտի կոմպլեքսային ուսումնասիրության**, բնության, բնակչության, տնտեսության, մշակույթի և սոցիալական կազմակերպման մասին տվյալները տարաբնույթ են, վերաբերում են աշխարհագրական քաղանթի տարբեր ոլորտներին, իսկ մարդողորտի ներսում էլ՝ հասարակական կյանքի տարբեր բնագավառներին, դրանց համակարգումն ու ընդհանուրացնումը պահանջում է աշխարհագրական մոտեցման և աշխարհագրա-

¹ Ընդունված է աշխարհագրական երկրագրության կազմում առանձնացնել ֆիզիաշխարհագրական երկրագրությունը և հասարակական աշխարհագրական երկրագրությունը:

կան սինթեզի նոր, ավելի բարչը մակարդակ¹: Շամանակակից երկրագրությունն իր ուսումնասիրության գլխավոր օբյեկտը՝ երկիրը, դիտում է որպես աշխարհագրական համակարգ՝ դրան բնորոշ բոլոր հատկանիշներով հանդերձ, որոնք մանրամասնորեն բնութագրվել են դասագրքի 3.5. գլխում (տե՛ս էջ 136):

Երկրի կոմպլեքսային երկրագրական հետապոտություններն **իրենց ներքին բռվանդակությամբ բնապատմական, սոցիալ-վճարեական և պատմահասարակական բնույթ ունեն:** Անդ որում, ուսումնասիրվող երկրի բնությունը քննարկվում է ոչ թե որպես բնական աշխարհագրական օբյեկտ, այլ որպես մարդու կյանքի և աշխարհական ռեսուրսային հիմք և բնակության ու աշխարհանքային գործունեության միջավայր։ Այստեղից ել այն բացառիկ կարենությունը, որ տրվում է բովանդակությամբ ու զարգացման ներքին օրինաչափություններով խիստ տարբեր բնագավառների՝ բնական միջավայրի, բնակչության, տնտեսության, մշակույթի և սույնալական ու քաղաքական կազմակերպման ջների փոխադրեցությունների ու պատճառահետևանքային կապերի բացահայտմանը։

Ինչպես տեսնում ենք, երկրագրության առջև դրվող խնդիրները շափականց խրթին են և պահանջում են մեթոդաբանական նոր մոտեցումներ, հետազոտության նոր մեթոդներ, նոր տեսական նշդիհանրացումներ և, ի վերջո, աշխարհագրական սինթեզի ամբողջովին նոր մակարդակ, որը հնարավոր է ցեղը բերել **համակարգային մոդելներն և մարդկանագիտական մերուների ամենալայն կիրառման հիմքի վրա:**

Սեծ է արդիական երկրագրական հետապոտությունների թե՛ գիտանաշողական, թե՛ գործնական նշանակությունը։ Գիտական նշանակությունը որոշվում է առաջին հերթին նրանով, որ այն լայն հորիզոն է բացում աշխարհագրության մեջ համակարգային մոտեցում ներդնելու համար, բարչը բացում է նրա մեթոդաբանական մակարդակը և ամրապնդում մեթոդական բազան։

Ինչ վերաբերում է գործնական նշանակությանը, ապա դա կապվում է հասարակական կյանքում միջազգային հարաբերությունների աննախադեպ ակտիվացման և ուժգինության տնտեսական քաղաքականության նշանակության մեծացման հետ։ Միջազգային հարաբերություններում պետություն-երկիրն է գլխավոր սուբյեկտը, որի արտաքին քաղաքական

1 Shn' Я. Г. Машнц, Основы страноведения. Москва, «Прогресс», 1999г.

գործողությունները և վարժագիծը մեծապես պայմանավորված են նրա բնակչության, ժողովրդագրական, տնտեսական հնարավորություններով և ներքին իրադրությամբ:

Հայտնի է, որ առանձին երկրի ռեգիոնալ քաղաքականությունը, դրա ուղղությունն ու բովանդակությունը որոշվում են նրա շրջանների աշխարհագրական առանցնահատկություններով: Երկրները և նրանց ներսում ել շրջանները կոմպեքսային երկրագրության ուսումնասիրության գլխավոր օբյեկտներն են: Դրանց առանցնահատկությունների և վարգայման ներքին օրինաչափությունների գիտական ճանաչումը անհրաժեշտ նախադրյալ է թե՛ արտաքին և թե՛ ներքին քաղաքականություն վարելու համար:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ բոլոր վարգայած երկրներում մեծանում է առանձին պետությունների և նրանց խմբերի աշխարհագետ մասնագետների թիվը: Նրանց պահանջը մեծ է մարդկային գործունեության հատկապես այն ոլորտներում, որոնք կապված են արտաքին հարաբերությունների, ներքին ռեգիոնալ քաղաքականության, տարածքային պլանավորման և աշխարհագրական կանխատեսման հետ:

ՀԱՐՑԵՐ ԻՆՉՎԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Աշխարհագրական բազանքը կոմպռենդային բաղադրիչներից բացի, ուրիշ ինչ բազագրիչներից է կազմված:
2. Աշխարհագրական գիտության ինչ ճյուղեր գիտեք, որոնց համար հետազոտության օրիենտ և աշխարհագրական բազանքի կոմպռենդային բազագրիչները:
3. Ինչո՞ւ է ռեգիոնալ աշխարհագրությունը տարրերում կոմպռենդային (Եյուլային) աշխարհագրական գիտություններից:
4. Ի՞նչ է ռեգիոնալիզմիկան:
5. Ի՞նչ տարրերություն կա աշխարհագրության բացահայտած տարածքային միավորների (զոնա, շրջան, երկիր, ենթաշրջան և այլն) և վարչադրական տարածքային միավորների միջև:
6. Ո՞րն է երկրագրություն գիտության սահմանումը:
7. Որո՞նք են երկրագրության՝ որպես ինքնուրույն գիտական ճյուղի, չեավորման հայացքայինները:

- 8. Երկրագրությունն ինչպես և առնչվում «համակարգային մոդելում» հասկացության հետ:**
- 9. Ո՞րն է երկրագրության հետազոտությունների գիտական և կիրառական ճշանակությունը:**
- 10. Մարդկային գործունեության ո՞ր ոլորտներին են առաջին հերթին անհրաժեշտ երկրագիր-աշխարհագետ մասնագետները:**

4.8. ՏԵՍԱԿԱՆ ՎԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի «Ներքին ոեֆլեքսիայի հիմնախնդիրը» բաժնում քննարկեցինք մեր գիտության զարգացման մակարդակ-ները և դրանց համապատասխանող ոեֆլեքսիայի տիպերը՝ օնտոլոգիզմ, գնուտեղոգիզմ և մեթոդոլոգիզմ: Հիմնական հետևողությունն այն էր, որ հասարակական աշխարհագրությունը նույնպես վճռական շրջադարձ է կատարում եմպիրիզմից ու օնտոլոգիական ոեֆլեքսիայից դեպի հիմնարար գիտությունների համար այդքան բնորոշ գիտառեսական ընդհան-րացումները և մեթոդաբանական ոեֆլեքսիան:

Այդ շրջադարձի համար պայմանները նպաստավոր են այն առու-մով, որ աշխարհագրական գիտությունների ամբողջ համակարգի հա-մար զարգացման արդի փուլում բնորոշ է տեսական բնույթի հետազո-տությունների նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը: Առանց բացա-ռության աշխարհագրական բոլոր գիտությունները, անընդհատ կատա-րելագործելով հետազոտության եմպիրիկ մեթոդները (դիտարկումներ, չափումներ, տվյալների հավաքում ու համակարգում, դասակարգում և այլն), հատուկ ուշադրություն են դարձնում եմպիրիկ փաստերի տեսա-կան ընդհանրացմանը և ընդհանրապես տեսության զարգացմանը: Տեղի է ունենում մեթոդաբանական ոեֆլեքսիայի ակտիվ ներդրում:

Տեսական աշխարհագրության չնավորումը 20-րդ դարի երկ-րորդ կեսին տեղի էր ունենում տարբեր գիտական գաղափարների ան-հաշտ պայքարի պայմաններում: Գիտնականների մի խումբը, որը հետևում էր իր ժամանակին Ամերիկայում բացառիկ հեղինակություն

Վայելող աշխարհագետ Արշարդ Հարգչորմին, պաշտպանում էր այն տեսակետը, որ աշխարհագրության եռթյունը և Վերջնական նպատակը երկրագնդի մակերեսին գոյություն ունեցող անթիվ-անհամար օբյեկտների ու բարածքային միավորների (շրջանների և այլն) ճանաչումն է, դրանց մկարագորությունը և դասակարգումը: Ամեն մի շրջան խիստ անհատական է, չկրկնվող ամրողություն: Հետևապես, եկրակացնում էին այդ տեսակետի կողմնակիցները, բացառիկությամբ օժտված այդ շրջանների շնավորման ընդհանուր օրինաչափություններ լինել չեն կարող, իսկ աշխարհագրությունը չի կարող կանխատեսումներ և ընդհանրացումներ անել: Դա այլ, «ընդհանրացնող», ընդհանուր օրինաչափություններ բացահայտող գիտությունների գործն է, **մինչդեռ աշխարհագրությունը «անհապականացնող» և բացառիկություն ուսումնասիրող գիտություն է:** Այն կոչված է բացահայտելու, բնութագրելու և դասակարգելու տարածքային միավորները, բայց ոչ սահմանելու դրանց շնավորման ու զարգացման ընդհանուր օրենքներն ու օրինաչափությունները:

Ո. Հարտշորնի և նրա հետևորդների գաղափարներին հակադրվում էր այն տեսակետը, որ **աշխարհագրական բաղանքի բազմազանությունը և անհապականությամբ օժտված բարածքային միավորները զարգանում են ընդհանուր օրինաչափություններով**: Շատ մեծ ընդհանրություն կա դրանց տարածական կառուցվածքի, տարածության ու սահմանների շնաբանության, տարածական կապերի մեջ: Ըստ **աշխարհագրությունը բացառիկ հետավորություն ունի** քարտեզագրական և մաթեմատիկական մեթոդների օգնությամբ **բացահայտելու բնական և հասարակական երևոյթների բարածական փոխազդեցությունների էությունը և զարգացման օրենքները, կարգելու գիտադիսական ընդհանրացումներ**:

Աշխարհագրական գաղափարների այս երկրորդ ուղղությունը (20-րդ դարի կեսերին) համեմատաբար ակտիվորեն զարգանում էր ԱՄՆ-ում, Չվերիխայում, ԽՍՀՄ-ում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, այսինքն՝ այն երկրներում, որտեղ ավելի մեծ թվով գիտնականներ հակվում էին այն տեսակետին, որ աշխարհագրության զարգացման հեռանկարը կապված է աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բնական ու հասարակական երևոյթների տարածական օրինաչափությունների բացահայտման ու հետագոտման հետ:

Աշխարհագրական հետազոտությունների վարգայման այս միտումը հատկապես ուժեղապավ աշխարհագրության մեջ, այսպես կոչված, *բանական հեղափոխությունից հետո*, երբ 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած լայն տարածում գտան մաթեմատիկական մեթոդները և համակարգչային տեխնիկայի կիրառությունը: Չա լրացրույիշ խթան հանդիսացավ, որպեսզի սկսի ձևավորվել աշխարհագրական գիտությունների նոր ճյուղ՝ *գեսական աշխարհագրությունը*:

Տեսական աշխարհագրությունն իր վարգայման սկզբնական շրջանում տարբեր անվանումներ ուներ՝ *մաթեմատիկական աշխարհագրություն, կոնսպրոկտիվ աշխարհագրություն, կանխավետումային աշխարհագրություն, գեսական աշխարհագրություն: Ի վերջութեան վերջին անվանումը:*

Տեսական աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտական ճյուղի համընդհանուր ճանաչում գտած սահմանումը դեռևս չի գտնված: Համեմատաբար լայն տարածում ունի չեզ արդեն հայտնի «Գеографիческий энциклопедический словарь»-ի ընդունած սահմանումը, որը համառոտակի հանգում է հետևյալին. *գեսական աշխարհագրությունն ուսումնասիրում է ընդհանրացված, գլխավորապես վերացական, ֆորմալիզացված ձևով գեղամակարգերը, աշխարհագրական դրամածությունը, ցանկացած դիպի ու մակարդակի աշխարհագործական օրյեկտի աշխարհագրական դաշտը, քննարկելով դրանք իրենց դիմամիկայում և փոխկապակցության մեջ, այնուհետև՝ գեղամակարգերի մոդելավորման ուղիները, մոդելների հիմնական տեսակները և դրանց բնութագրերը: Հետազոտում է աշխարհագրության իմաստատերմինաբանական ապարատը և աշխարհագրական գիտություններում համագիտական մեթոդաբանության (համակարգային մոտեցման, մաթեմատիկական մեթոդաբանության (համակարգային մոտեցման, մաթեմատիկական մեթոդաբանության համակարգային մոտեցման) կիրառության տրամաբանական հիմունքները:*

Գոյություն ունեն այլ սահմանումներ ևս: Որոշակի տարբերություններով հանդերձ, գլխավոր հարցում այդ սահմանումները միասնական են: Չա այն է, որ *գեսական աշխարհագրության առանցքային հարցը երկույթների դրամածական կապերի և դրանց զարգացման օրենքների բացահայտումն է:*

Լրացրույիշ բացահայտության կարիք ունեն վերը բերված սահմանման մեջ հիշատակված «աշխարհագրական տարածություն» և «օրյեկտի աշխարհագրական դաշտ» հասկացությունները:

Աշխարհագրական դարածությունը երկրագնդի աշխարհագրական թաղանթում աշխարհագրական օբյեկտների ու երևույթների գոյության չնա՞ն է, միաժամանակ՝ կոնկրետ տարածքներում գտնվող և ժամանակի մեջ փոփոխվող աշխարհագրական օբյեկտների հարաբերությունների ամբողջությունը:

Աշխարհագրական տարածությունը ավելի լայն հասկացություն է, քան օբյեկտի **աշխարհագրական դաշտ** հասկացությունը: Ընդունված է աշխարհագրական դաշտ անվանել աշխարհագրական օբյեկտը պարուրող այն արեալը (տարածքը), որի սահմաններում դրսնորվում է դրա ազդեցությունը: Մինչդեռ **աշխարհագրական դաշտ** ընդունվում է **աշխարհագրական դաշտն իր օրյեկտի ու դրա զրադեցրած դարածության հետ մեկտեղ**:

Ինչ վերաբերում է **աշխարհագրական օրյեկտին**, ապա այդպիսին համարվում է աշխարհագրական թաղանթի սահմաններում գտնվող ամեն մի ամբողջական և հարաբերական ստացիոնար վիճակում գտնվող ընածին կամ մարդածին գոյացություն, որն ունի որոշակի աշխարհագրական դիրք, ինչպես նաև մասնակցում է գեղիամակարգի չևսավորմանը և գործառույթին:

Մինչև այժմ ասվածը վերաբերում է աշխարհագրական գիտությունների համակարգին առհասարակ, այսինքն՝ **ընդհանուր գեսական աշխարհագրությանը, որը հավասար չափով սպասարկում է համակարգի բոլոր բազադրիչներին**: Ընդհանուր տեսական աշխարհագրությունը նպաստում է մասնակոր աշխարհագրական գիտությունների միասնականը (ինտեգրացմանը) և աշխարհագրական գիտության ամբողջ համակարգի՝ որպես մեկ միասնության ամրապնդմանը:

Դրա հետ մեկտեղ ամեն մի մասնակոր աշխարհագրական գիտության հետագա դիֆերենցման և ներքին կառույցածքի չևսավորման ընթացքում սկսում է զարգանալ նաև այդ մասնակոր գիտության (նյուիդի) տեսական ընդհանրացումներով կրաղվող ենթաճյուղը:

Տեսական ուղղվածություն ունեցող հատուկ ենթաճյուղեր արդեն չևսավորվել են բնական աշխարհագրության, քարտեզագրության, հասարակական աշխարհագրության կազմում:

Այդ ենթաճյուղերի համար հատկանշական է «երկրադարացիությունը». Նրանք պատկանում են, մի կողմից, ընդհանուր տեսական աշխարհագրությանը, մյուս կողմից՝ համապատասխան նյուիդին՝ բնական

աշխարհագրությանը, քարտեզագրությանը կամ հասարակական աշխարհագրությանը¹:

Տեսական հասարակական աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտական ուղղության ձևավորման համար ևս վճռական նշանակություն ունեցավ կիբեռնետիկայի նվաճումների և մաթեմատիկական մեթոդների ներդրումը գիտական հետազոտությունների մեջ:

1962թ. ԱՄՆ-ում լույս տեսավ *Ուիլյամ Բունգեի «Տեսական աշխարհագրություն»* (Theoretical geography) գիրքը, որը թարգմանվես շատ լեզվուներով, այդ թվում՝ ռուսերեն², և լայն տարածում գտավ ամբողջ աշխարհում: Դա աշխարհագրության բնագավառում մինչ այդ կատարված տեսական մշակումներն ամփոփ շարադրելու և ընդհանրացնելու առաջին փորձն էր: Ջունգեին հաջողվեց հիմնավորել, որ *աշխարհագրության մեջ ևս գիտական ճանաչողության գրամարանուրյունը, ինչպես նաև պրակտիկայի պահանջը անխուսափելի են դարձնում գիտական աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտական ճյուղի ժնունը*: Ավելին, նա իր աշխատությամբ ցույց տվեց, որ այդ ճյուղն արդեն ձևավորվել և իր կայուն տեղն է զբաղեցնում աշխարհագրական գիտությունների համակարգում:

Հաջորդ տարիներին լույս տեսած այլ հեղինակների աշխատությունները ոչ միայն լրացրուիչ հիմնավորում են գիտության նոր ճյուղի անհրաժեշտությունն ու գոյությունը, այլև նոր թափ էին հաղորդում դրա պարզացմանն ու կատարելագործմանը:

Հարց է ծագում, թե ընդհանուր տեսական աշխարհագրության առկայության պայմաններում ո՞րն է ճյուղային տեսական աշխարհագրությունների իմաստը, ի՞նչ նոր խնդիրներ են նրանք լուծելու, որոնք չեն մտնում ընդհանուր տեսական աշխարհագրության իրավասության մեջ:

1 Չպետք է շիրել լրեական աշխարհագրությունը աշխարհագրության գիտության հետ: *Տեսական աշխարհագրությունը գիտության ինքնուրույն ճյուղ է, համակարգի բաղադրիչ, մինչդեռ աշխարհագրության գիտությունը բռնոր մասնավոր գիտությունների գումարն է: Այդպիսի մասնավոր գիտություններ են, օրինակ, «լանդշաֆտների մասին» գիտությունը բնական աշխարհագրության մեջ, կամ «կենցրունական վայրերի» (լողաբերի) գիտությունը հասարակական աշխարհագրության մեջ: Ավածից բխում է, որ լրեական աշխարհագրությունն իր բովանդակությամբ ավելի նեղ է, քան աշխարհագրության գիտությունը:*

2 В. Бунге, *Теоретическая география*, Москва, 1967г.

Հասարակական տեսական աշխարհագրության և ընդհանրապես բոլոր ճյուղային տեսական աշխարհագրությունների ինքնուրույն գոյությունը հիմնավորում է հետևյալ հանգամանքով:

Ծյուղային գիտությունների (քնական աշխարհագրության, հասարակական աշխարհագրության և այլն), հետևածես և դրանց կազմում չենավորվող ճյուղային տեսական աշխարհագրությունների **հետազոտության օբյեկտները (առարկաները) լրարեր են**: Եթե, օրինակ, ընագիտական (ֆիզիկական) աշխարհագրության հետազոտության օբյեկտը նեղ իմաստով (կամ նույնն է թե՝ հետազոտության առարկան) ընատարածքային համալիրները՝ բնական գեոհամակարգերն են, ապա ընագիտական (ֆիզիկական) տեսական աշխարհագրությունը կրաղվում է այդ գեոհամակարգերի ներքին ու արտաքին տարածական կապերի ընդհանուր օրինաչփությունների հետազոտությամբ:

Սույն չևով էլ, քանի որ հասարակական աշխարհագրության հետազոտության օբյեկտը (նեղ իմաստով) հասարակական տարածքային համակարգերը՝ հասարակական գեոհամակարգերն են, ապա նրա տեսական ենթաճյուղը պետք է կրաղվի այդ համակարգերի ներքին ու արտաքին տարածական կապերի ընդհանուր օրինաչփություններով: Այլ կերպ ասած՝ **դեսական հասարակական աշխարհագրությունը գրաղվում է այն բոլոր հարցերով, որոնք շարադրված են ընդհանուր դեսական աշխարհագրության վերը բերված սահմանման մեջ, բայց այն մասով միայն, ինչ մասով վերաբերում են հասարակական գեոհամակարգերին:**

ԴԱՐՅԵՐԻ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Էմպիրիկ գիտական հետազոտությունները (Էմպիրիկ մերուդները) իմշո՞վ են լրարերվում դեսական հետազոտություններից:
2. Որո՞նք են աշխարհագրության զարգացման հեռանկարների մասին 20-րդ դարի երկրորդ կեսին գարածում գտած գիտական գաղափարների երկու գլխավոր ուղղությունները, որոնց պայքարի պայմաններում դեղի էր ունենում դեսական աշխարհագրության զարգացումը:
3. Ի՞նչ է ուսումնակրում դեսական աշխարհագրությունը: Տվյալ սահմանումը:
4. Ինչո՞վ է գարագրվում դեսական հասարակական աշխարհագրությունը ընդհանուր դեսական աշխարհագրությունից:
5. Ինչպե՞ս է դրանք գարագրվում դեսական հասարակական աշխարհագրության «երկրադարձիությունը»:

ՏԱՄԱՐԱԿԱՎԱՐՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

5.1. ԳԻՏԱԿԱՆ ԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Դասագրքի նախորդ բաժիններում արծարծվել է գիտության գիտական գիտելիքների եռթյան հարցերը: Նշվել է, որ գիտական գիտելիքները, ի տարբերություն կենցաղային գիտելիքների, ոչ թե կուտակվում են նախորդ սերունդների և անցնական կենսափոքով, այլ մշակվում են որոշակի սկզբունքներով և համակարգված են: **Դրանք կարգավորվում են պեսական հիմքի վրա և իրենց ամրողության մեջ սկիզբում են աշխարհի գիտական պատկերը:**

Գիտական գիտելիքների արտադրությունը, կարգավորումը, պահպանումն ու օգտագործումը մարդկանց հոգևոր ստեղծագործական-հետազոտական գործունեության հատուկ ընագավառ է, որը հենց գիտությունն է: Իր գերնպատակին հասնելու՝ աշխարհը ճանաչելու, բացատրելու, նրա գիտական պատկերը կերտելու ճանապարհին նա օգտագործում է իր իսկ չնակերպած **հավուն գիտակի գիտելիքները՝ գիտական գետպուրյունը, գիտական վարկածը, օրենքը, օրինաչափությունը:** Դրանք գիտելիքների որոշակի մակարդակ են, որը կառուցվում է համապատասխան մեթոդաբանության, գիտական մոտեցումների, սկզբունքների, ապացույցների ու մտահանգումների վրա: Աշխարհագրության, մասնավորապես հասարակական աշխարհագրության օրինակով մենք տեսանք, որ գիտության ճյուղը լիարժեք կատարում է իր սույնալական դերը, հետ չի մնում իր պարզացման ընթացքում, եթե չի թերագնահատում մեթոդաբանության, գիտական տեսությունների, օրենքների ու օրինաչափությունների նշանակությունը (իհշե՛ք աշխարհագրության ներքին ուժինքը՝ սիայի տիպերը):

Այդ ամենով հանդերձ, անհրաժեշտ է նկատի ունենալ մի նշմար-

տություն ևս: Դա այն է, որ բոլոր գիտական գիտելիքները, տեսությունները, օրենքներն ու օրինաշափությունները, դրանց ապացույցներն ու հիմնավորումները կարող են հավասպի ու իրական լինել, եթե սրացվել են գիտական հավույք մերոդներով, միջոցներով ու եղանակներով։ Դրանց ամբողջությունը (համակարգը) ի մի վերցրած կազմում է գիտական հետազոտությունների մերոդիկան կամ նույն է թե՝ գիտական հետազոտությունների մերոդները։ Ամենաընդհանուր տեսքով «մեթոդ» (հունական methodos- հետազոտության ուղի, ճանապարհ) նպատակին հասնելու եղանակ, միջոց է: Դա հետազոտություն կատարելու տեխնիկան ու տեխնոլոգիան է¹:

Օժվար է գերազանահատել մեթոդիկայի, գիտական հետազոտությունների տեխնոլոգիայի դերը գիտության զարգացման գործում: Թագավորական այն դեպքերը, երբ հետազոտության մեթոդիկայի, տեխնոլոգիայի եական կատարելագործումը գիտության զարգացման համար հետազոտիչականացնող նշանակություն է ունեցել: Դեռևս ակադեմիկոս Հ.Պ.Պավլովն էր նշում, որ գիտության առաջնաթայի քայլերի մեծությունը որոշվում է մեթոդի զարգացմով:

Գիտության մեթոդաբանությունը և մեթոդիկան փոխայմանավորված են: Ամեն առաջնաթայի քայլ մեկ բնագավառում անպայմանորեն խթանում է մյուսի առաջնաթայի: Գիտության համար մեթոդի կարևորությունն ընդգծելու համար նույնիսկ թույլ է տրվում այնպիսի չափազանցություն, որ «մեթոդը՝ հենց գիտությունն է»:

Այսպես թե այսպես, ակնհայտ է, որ յուրաքանչյուր ոք, որ իրեն

1 Գոյություն ունի նաև այն կարծիքը, որ գիտության մերոդները (մերոդիկան) ամբողջովին գործեն են հետազոտության միջոցներից ու եղանակներից: Հիմնավորումն այն է, որ մերոդները այն գլխավոր ուղղութեան են, որով ընթանում է հետազոտությունը, մինչդեռ միջոցներն ու եղանակները գիտական հետազոտություն կարարելու կոնկրետ ձևն են, եղանակը: Մերոդները շատ քիչ են, իսկ միջոցներն ու եղանակները՝ մեծաքանչիք: (Տե՛ս Բ. Ս. Ժեկուլին, Վեճենու և գեոգրաֆիա. Խթառական Լեռնագրական ակադեմիայի աշխատանքները, 1989г.:)

Նման բաժանումը հիմնավորված չէ չափազանց պայմանական է և ընդհանրապես որևէ իմաստ չունի: Իրն անց բովանդակությամբ ու նպատակով գիտական հետազոտությունների մերոդները միջոցներն ու եղանակները այն աստիճանում շաղկապված են և անբարափակացնում են միմյանց մեջ, որ անհնար է գրնել այն սահմանը, որը կարողանա դրանք իրարից բաժանել: Ուստի ճիշդը է դրանք բոլորը ընդհանուր անոնուվ կոչել մերոդներ և ընարկել միասնարար:

Նվիրում է գիտությունների ուսումնասիրությանը, պետք է յուրացնի ինչպես մեթոդաբանությունը, այնպես էլ հետազոտության մեթոդները:

Գիտական հետազոտությունների մեթոդները բազմաթիվ են: Շատ են նաև դրանք խմբավորելու, դասակարգելու փորձերը, որոնք կատարվել են ամենատարբեր սկզբունքներով ու մոտեցումներով:

Դասակարգումներից մեկը տրված է արդեն հիշատակված «Географическая и энциклопедическая словарь»-ում: Այնտեղ առանձնացված են գիտական հետազոտությունների մեթոդների հետևյալ հինգ խմբերը:

1. **Համագիտական մեթոդներ**, որոնք կիրառելի են գիտության բոլոր ճյուղերի համար: Այսպիսին են, օրինակ, պատմական մեթոդը, մաթեմատիկական մեթոդները, մոդելավորման, համակարգային, քարտեզագրման մեթոդները:

2. **Կոնկրետ-գիտական մեթոդներ**, որոնք կիրառվում են գիտության կոնկրետ ճյուղերի կողմից: Օրինակ, ֆիզիկական աշխարհագրության համար այդպիսին են գեոֆիզիկական, գեորգիմիական, հնեաշխարհագրական և մի քանի ուրիշ մեթոդներ, հասարակական աշխարհագրության համար՝ սոցիալ-վիճակագրական, տեխնիկատնտեսագիտական, սոցիոլոգիական, հաշվեկշռային և այլ մեթոդներ:

3. **Ինֆորմացիայի ստացման մեթոդներ**, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս տվյալների հավաքման տեխնիկական միջոցների ու գործողությունների ձևով: Այդ խմբին են պատկանում, օրինակ, լաբորատոր, դիստանցիոն (հեռաշափական), դաշտային դիտարկումների, անկետային հարցումների մեթոդները:

4. **Ինֆորմացիայի էմպիրիկ և տեսական ընդհանրացումների մեթոդներ**: Այդպիսին են՝ ինդիկացիոն, դասակարգման, շրջանացման, քարտեզագրման, գնահատման, համեմատական (կամ նմանակների) մեթոդները և այլն:

5. **Ստացված ինֆորմացիայի մշակման մեթոդներ և տեխնիկական եղանակներ ու միջոցներ**: Այս խմբին է վերաբերում, օրինակ, էլեկտրոնային-հաշվիչ տեխնիկայի, պերֆորարտերի օգտագործումը:

Ինչպես տեսնում ենք, բոլոր թվարկված մեթոդները, բացառությամբ 2-րդ կետում նշվածներից, ունեն ունիվերսալ բնույթ և ավելի կամ պակաս շափով օգտագործվում են գիտության ամենատարբեր ճյուղերի, դրանց թվում և աշխարհագրության կողմից:

Այդուհանդերձ, գիտության ամեն մի նյուու ունի իր պահանջներին առավել բավարարող, իրեն առավել ընորոշ մեթոդների խումբ: Աշխարհագրությունը ևս ունի մի քանի մեթոդներ, առանց որոնց աշխարհագրությունը աշխարհագրություն չէր լինի: Պայմանականորեն դրանք կոչենք «աշխարհագրական» մեթոդներ:

Ընդունված է ըստ ծագման ժամանակաշրջանի տարբերել աշխարհագրական մեթոդների 3 խումբ՝ **ավանդական, նոր և նորագույն**:

Ավելի կարևոր է մեթոդների դասակարգումը ըստ եռթյան, բովանդակության: Այդպիսի մոտեցմամբ տարբերում են մեթոդների 2 խոշոր խումբ՝ եմպիրիկ և տեսական:

Եմպիրիկ մեթոդներից այժմ ել լայն տարածում ունի արշավախմբային (դաշտային) ավանդական մեթոդը, որը ծագել է աշխարհագրության հետ մեկտեղ և հարյուրամյակներ անընդմեջ աշխարհագրական գիտելիքների հայթայթման միակ աղբյուրն է եղել: Այս մեթոդի հիմնական բովանդակությունը անմիջական դիտարկումների և չափագրումների միջոցով հետազոտվող օբյեկտի մասին առաջնային տվյալներ ստանալ է:

Արշավախմբային (դաշտային) հետազոտությունը կարելի է իրականացնել երթուղիների, ստացիոնար և կիսաստացիոնար եղանակով:

Մեծ խումբ են կազմում **դեսական մեթոդները**, որոնց համար ընդհանուր է աշխարհագրական օբյեկտների ու երևույթների տարածքային կազմակերպման ու զարգացման օրինաչափությունների ճանաչումը **մարզոր դրամաքանական գործունեության միջոցով**: Այս խմբում առանձնանում են տրամաքանական մտահանգման երկու գլխավոր միջոցները՝ **ինդուկցիան և դեդուկցիան**, որոնք, ինչպես արդեն ասվել է, հատուկ տեղ են գրավել Ֆրենսիս Ուեկոնի և Ռենե Շեկարտի ստեղծագործական խոհանոցում (տե՛ս էջ 58-59): Ընդհանուր չենք հիշենք, որ եթե ինդուկցիոն դատողությունը ընթացք է մասնավորից դեպի ընդհանուրը, ապա դեղուկցիոնը՝ ընդհանուրից դեպի մասնավորը:

Տեսական մեթոդների խմբի մեջ առանձին ենթախումբ են կազմում այնպիսի քանակական մեթոդները, ինչպիսիք են՝ վիճակագրականը, մաթեմատիկականը և մոդելավորմանը:

ՎԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ի՞նչ է գիրուրյան մերոդիկան: Ո՞րն է նրա նշանակությունը:
2. Ո՞րն է գիրուրյան մերոդարանուրյան և մերոդիկայի տարրերուրյունը:
3. Գիրական հետազոտուրյունների մերոդները ի՞նչ հիմնական խմբերի են բաժանվում:
4. Որո՞նք են գիրական հետազոտուրյունների մերոդների բարձրականուրյան դարանջապվող խմբերը:
5. Ո՞րն է գիրական հետազոտուրյունների էմպիրիկ մերոդների բովանդակությունը:
6. Ո՞րն է գիրական հետազոտուրյունների գեսական մերոդների բովանդակությունը:

5.2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վատուկ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհագրական հետազոտության մերոդների բաժանումը համաշխարհագրականի (որոնք կիրառվում են բոլոր աշխարհագրական գիտությունների կողմից) և մասնավոր աշխարհագրականի (դրանք աշխարհագրության ամեն մի ճյուղի օգտագործած սպեցիֆիկ մեթոդներն են):

Ավելի մանրամասն քննարկենք համաշխարհագրական մեթոդներից մի քանիսը, որոնք հիմնարար նշանակություն ունեն աշխարհագրական գիտության բոլոր ճյուղերի, ի թիվս դրանց և հասարակական աշխարհագրության ու նրա բաղադրիչների համար:

5.2.1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆ

Վարագրական մեթոդը գիտական ճանաչողության մեթոդների շարքում հնագույնն է: Ամեն մի օրենքություն սկսվել է նկարագրությունից: Նույնը վերաբերում է նաև աշխարհագրական օրյեկտներին: Աշխարհագրության մեջ, ընդհուած մինչև նոր ժամանակական մեթոդը համարվում է աշխարհագրական մեթոդների առաջնային նշանակություն ունեցող մեթոդը:

կաշրջանի սկիզբը, տիրապետել է **Էմպիրիկ Ակադագրուրյունը**, որի հիմքում ընկած էր «ինչ տեսնում եմ, դրա մասին էլ գրում եմ», այսինքն՝ փաստագրական մոտեցումը:

Եմպիրիկ նկարագրությունը սկսեց փոխարինվել **գիտական Ակադագրուրյունը** 18-րդ դարի վերջերից միայն, երբ խոչոր ճանապարհորդություններն ու արշավանքները կատարվում էին որոշակի գիտական նպատակներով:

Գիտական նկարագրությունն իր կատարելությանը հասավ Ալեքսանդր Հումբոլդտի, Կառլ Ռիտերի, Էլիկ Ռեկլյուի, Վիդալ դե Ալաշի, Ռուսաստանում՝ Սեմյոնով Տյան-Ծանսկու, Պրժևալսկու, Միկլուխո-Մակլայի, Շոկուչասի, հայկական իրականության մեջ՝ Ղևոնդ Ալիշանի աշխատություններում, որտեղ փաստերի ու երևույթների գիտական մեկնարանությունն ու բացարձությունը ուղեկցվում էին հյութեղ ու պատկերավոր նկարագրություններով ու բնութագրումներով:

Մի տևական ժամանակ, կապված գիտության դիֆերենցման միակողմանի խորացման և, այսպես կոչված, «քանակական հեղափոխության» հետ, հետաքրքրությունը դեպի նկարագրական մեթոդը սկսեց թուլանալ: Սակայն այժմ շատ հետազոտողների կարծիքով այդ հետաքրքրությունը կրկին անում է: Դրա պատճառը համարում են միջազգային հաղորդակցության միջոցների և տուրիզմի աննախադեպ զարգացումը, որի շնորհիկ մեծանում է պահանջը աշխարհի երկրների ու շրջանների մասին աշխարհագրական տեղեկությունների նկատմամբ: Նվազագույնը պահանջը բավարարելու լավագույն միջոցը **այդ երկրների ու շրջանների գիտական ու պարկերավոր Ակադագրուրյունն է:**

Դա վկայում է այն մասին, որ անհիմն է նկարագրության և, այսպես կոչված, «պրոբլեմային մոտեցման» հակադրությունը: Ն. Զարանսկու պատկերավոր արտահայտությամբ, դրանք պետք է գոյություն ունենան ոչ թե «մեկը մյուսի փոխարեն, այլ մեկը մյուսի կողքին»: Նթե նկարագրությունը գիտական է և ոչ թե Էմպիրիկ, չի կարող «պրոբլեմների» կողքից անընել: Նվազանջը, եթե հետազոտությունը պրոբլեմային ուղղվածություն ունի, ապա դրա հիմքում պետք է լինի հետազոտվող օբյեկտի և դրա հետ առնչվող պրոբլեմի գիտական նկարագրությունը:

ԴԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. Ո՞րն է գիտական հետազոտության համաշխարհագրական և մասնավոր աշխարհագրական մերողների փարբերությունը:
2. Ո՞րն է աշխարհագրության նկարագրական մերողի էությունը և նշանակությունը:
3. Գիտական նկարագրությունը ինչո՞վ է փարբերվում էմպիրիկ նկարագրությունից:
4. Ո՞ր գիտնականներն են առավել հաջողությամբ օգրվել գիտական հետազոտության նկարագրական մերողից:
5. Աշխարհագրության մեջ ինչպես և են հարաբերվում գիտական նկարագրությունը և «պղորինմային մոդելում»:

5.2.2. ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Ուալ իրականությունը ճանաչելու քարտեզագրական մեթոդը այնքան հին է, ինչքան հին են մարդու շրջակա միջավայրը և նկալելու առաջին փորձերը: Մարդը տեղանքի պարզունակ գծագրերը և քարտեզագրական նկարները ավելի վաղ է կիրառել, քան հայտնագործել է գիրը: Դեռևս նախնադարյան մարդը ժայռերի վրա փորագրած պարզունակ գծագրերով փորձել է կողմնորոշվել տեղանքում, արտացոլել գետերի, որսատեղերի, արոտավայրերի, արահետների փոխադարձ դիրքադրությունը:

Գիտական մտքի պարզացմանը կուգընթաց կատարելագործվում է նաև քարտեզագրական մեթոդը և 18-19-րդ դարերում արդեն այն գիտնականների համար դառնում է **աշխարհի մասին գիտելիքների համակազման, գիտական օրենքների ու օրինաչափությունների հայտնագործման և պարկերացումների զարգացման հզոր միջոց:**

Հատկանշական է, որ քարտեզագրական մեթոդը ոչ միայն հանդես է գալիս որպես աշխարհաճանաչողության ինքնուրույն մեթոդ, այլև թափանցելով մյուս մեթոդների մեջ՝ քազմապատկում է նրանց հնարավորությունները: Օրինակ՝ բոլորովին նոր որակ են ցեղը քերում համեմատական-աշխարհագրական և արդեն չեզ հայտնի նկարագրության մե-

թողները, երբ զուգորդվում են քարտեզագրական մեթոդների հետ, երբ տեքստային նկարագրությունը և աշխարհագրական համեմատությունը ամրապնդվում է քարտեզագրական նյութով:

Ընդունված է ասել, որ քարտեզը հետապոտվող օբյեկտի գրաֆիկական-տարածական մոդելն է: Ինչպես ամեն մի մոդել, քարտեզագրական մոդելը նույնպես հետապոտողին մի շարք լրացրուցիչ հնարավորություններ է ընձեռում: Ամենագլխավորն այն է, որ քարտեզագրական մոդելը հնարավորություն է տալիս մի հայացքով ընդգրկել ընդարձակ աշխարհագրական տարածքները, ընդհուած մինչև ամբողջ Երկրագունդը, և դիտարկել քնական և հասարակական ամենատարբեր երևույթների տեղաբաշխումը, վիճակը և տարածական կապերը:

Մյուս կարևոր առավելությունն այն է, որ քարտեզի օգնությամբ կատարվող հետապոտությունը շատ դեպքերում կարելի է կատարել առանց օբյեկտի անմիջական դիտարկումների քնական պայմաններում, քավարարվելով «կարինետային» աշխատանքով: Իսկ դա նշանակում է, որ հետապոտությունը կարելի է կատարել նվազագույն ուժերի կիրառումով և ավելի կարճ ժամկետում:

Մի կարևոր առավելություն ևս: Իրականության քարտեզագրական մոդելի օգնությամբ է, որ հաճախ բացահայտվում է աշխարհագրական թաղանթի և նրա առանցին մասերի այնպիսի օրինաչափություններ, որոնք քնության մեջ անմիջական դիտարկումների միջոցով հայտնագործելն անհնար է:

Հետապոտողներն այն միահամար կարծիքին են, որ գլխավորապես քարտեզագրական մեթոդի շնորհիվ է, որ հայտնագործել է աշխարհագրական գոնայականության հիմնարար օրենքը: Ալեքսանդր Հումբոլդտը 1817թ., յանկանալով պարզել Երկրագնդի վրա շերմության բաշխումը, առաջին անգամ կազմեց իշխութեամբ քարտեզը և դրա միջոցով բացահայտեց կլիմայական գոնաները: Ավելի ուշ, դարյալ քարտեզների օգնությամբ, նա «տեսավ» և նկարագրեց բուսական ծածկի գոնայականությունը: Դարյալ քարտեզագրական վերլուծության միջոցով էր, որ Ռոկուչակին հաջողվեց ապացուցել ամբողջությամբ վերցրած աշխարհագրական միջավայրի գոնայականությունը:

Երկրի և մարդկային հասարակության մասին գիտությունների ամենատարբեր քնագավառներում քարտեզագրական մեթոդի օգնությամբ օրենքների ու օրինաչափությունների հայտնագործման օրինակները կարելի են անընդհատ շարունակել:

Դասագրքի նախորդ բաժիններում տարբեր առիթներով նշվել է քարտեզագրական մեթոդի կարևորությունը տնտեսական-հասարակական երևոյթների ուսումնասիրության բնագավառում և խորհրդային աշխարհագրության ականավոր ներկայացուցիչ Ն. Զարանսկու՝ քարտեզագրությանը տված բարձր գնահատականը: Ասվածին ավելացնենք միայն այն, որ տնտեսական քարտեզներում «միս ու արյուն» են ստանում այնպիսի տնտեսական երևոյթներ, որոնք իրական կյանքում հնարավոր չեն տեսնել ու շոշափել, բայց հնարավոր է որակապես ու քանակապես արտահայտել Վիճակագրական տվյալներով, թվերի լեզվով: Այդպիսի երևոյթներ են, օրինակ, արտադրության տեխնիկատնտեսական ցուցանիշները (արդյունաբերական արտադրության ծավալը, աշխատանքի արտադրողականությունը, բնակչության կրաղվածության կամ կրթական մակարդակը, գյուղատնտեսական բույսերի բերքատվությունը, տրանսպորտային ուղիների թողունակությունը, արտաքին առևտորի ծավալն ու կառուցվածքը և այլն, և այլն): Սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշներն իրենց «նյութականացված» արտացոլումը գտնելով թեմատիկ քարտեզներում, հնարավորություն են տալիս կատարել քարտեզագրական վերլուծություն և բացահայտել այնպիսի օրինաշափություններ, որոնք առանց քարտեզի կմնան աննկատ: Վկայակոչենք Ն. Զարանսկու մի միտք ևս: Նրա գնահատմամբ «...Տնտեսական քարտեզագրության վարգայումը նպաստում է տնտեսական աշխարհագրության մեջ աշխարհագրական տարրերի ուժեղացմանը և միաժամանակ ունի խոշոր մեթոդաբանական նշանակություն: Զարտեզը... բնական պայմանների, բնակչության և տնտեսության տեղաբաշխումը ֆիքսում է այնպիսի լրիվությամբ, ճշգրտությամբ ու մանրամասնությամբ, որը մատչելի չեն տեքստային նկարագրությանը:...Դա ստիպում է տնտեսաշխարհագետներին գլխավոր շեշտը տեղաբաշխման սոսկ հավաստումից տեղափոխել նրա բացատրության վրա»¹:

Ինչպես բնական աշխարհագրության, այնպես էլ հասարակական աշխարհագրության բոլոր նյութերում քարտեզագրական մեթոդի կիրառումն անընդհատ ընդլանվում է, թափանցելով գիտական հետազոտությունների բոլոր մակարդակները, ինչպես նաև ապատրաստական ու վերլուծական, այնպես էլ ընդհանրացման ու կանխատեսման: Կատարելագործվում են թե՛ բոլն քարտեզների ստեղծման և թե՛ պատրաստի քար-

տեսների օգտագործման եղանակները: Ավելի ու ավելի լայն կիրառություն են գտնում աերո և տիեզերական նկարահանումների հիման վրա և համակարգչային տեխնիկայի օգնությամբ կազմված քարտեզները: Իսկ պատրաստի քարտեզների օգտագործման բնագավառում նոր հնարավորություններ են բացում քարտեզաշափությունը:

Ավելի է ամրապնդվում ոռու ականավոր աշխարհագետ և օվկիանոսագետ Յու. Ս. Շոկալսկու այն գնահատականը, որ «**Ջարտեզը աշխարհագետի ամենազվարական գործիքն է: Ջարտեզի օգնությամբ նա նախապատրաստում է իր հետազոտությունները, դրա վրա տեղադրում է իր արդյունքները, որոնք իրենց հերթին հետագա առաջընթացի հիմք են ծառայում: Ջարտեզը երկրագունդը ուսումնասիրելու միակ, զարմանալի գործիքն է, որը կարող է կանխատեսման չիրք շնորհել մարդուն»¹:**

ԴԱՐՁԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ո՞րն է քարտեզագրական մերողի ռովանդակությունը և նշանակությունը:**
2. **Քարտեզագրական մերողի հետազույցի համար ի՞նչ նոր հնարավորություններ է բացում:**
3. **Աշխարհագրական ի՞նչ հայտնի օրենքներ ու օրինաչափություններ են հայտնագործվել քարտեզագրական մերողի միջոցով:**
4. **Սոցիալ-գնացեական և ժողովրդագրական ո՞ր ցուցանիշներն են, որ առավել հաջողությամբ են իրենց «Այուրականացված» արդացույունը գրնում քննադիր քարտեզներում:**
5. **Յու Շոկալսկին և Ն. Բարանսկին ինչպես են գնահատել քարտեզագրական մերողի (քարտեզի) դերը աշխարհագրական հետազույցություններում:**

5.2.3. ԴԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Դամեմատական-աշխարհագրական մեթոդի առանցնահատուկ նշանակությունը պայմանավորված է աշխարհագրության գլխավոր և ամենաշնորհիանուր նպատակով՝ ճանաչել երկրի աշխարհագրական

¹ Մեծքերումը կարարված է բարդ A. M. Берлянт. *Образ пространства: карта и информация*. Москва. «Мысль». 1986. с. 5.

թաղանթը, բայց այսպիսի նրա վարգայման օրինաչափությունները և տարրածական տարրերությունները: Արդեն ասվել է, որ այդ օրինաչափությունների մեջ կարևոր տեղ է գրավում **հառուցվածքայնուրյունը** (հիարկե հիշում եք, որ մյուս առանձնահատկություններն են՝ ամրողականությունը, ընթացող երևությունների ցույցը և այլն):

Աշխարհագրական օբյեկտի՝ ամբողջ աշխարհագրական թաղանթի և նրա բոլոր ոլորտների ու կոմպոնենտների կառուցվածքի տարրածքային բաղադրամասերը, այսինքն՝ գոտիները, զոնաները, մարզերը, շրջանները, ենթաշրջանները և այլն, տարրերվում են իրարից մեկ կամ մի քանի հատկանիշներով: Նվազագույնը՝ նվազագույնը՝ այդ տարրածքային միավորների տարրերությունների բայց այսպիսի մեջ կամ մի քանի հատկանիշներով:

Կուրք չի ասված, որ «ամեն ինչ ճանաչվում է համեմատության մեջ»: Այս ճշմարտությունը մարդկանց առաջնորդում է նրանց առօրյա կյանքում՝ սկսած միջանցնային հարաբերություններից մինչև կենցաղի կազմակերպման սովորական հարցերը:

Սակայն դրա՝ որպես հետազոտության գիտական մեթոդի կիրառումը պահանջում է որոշակի սկզբունքների օգտագործում: **Այսպիսի ուժեմնագույնը հետազողությունը օրյեկտների նմանության և դարրերության բացահայտումն է:**

Առաջին սկզբունքն այն է, որ կարելի է համեմատել այնպիսի օբյեկտները, որոնք ունեն ընդհանուրություն, իրենց եռությամբ ու բովանդակությամբ միատեսակ են, հետևապես՝ **համեմապելիք:** Օրինակ, կարելի է համեմատել քաղաքը քաղաքի, պետությունը պետության, լանդշաֆտը լանդշաֆտի, շրջանը շրջանի հետ: Բայց անհեթեթություն է, եթե փորձում են, օրինակ, քաղաքը համեմատել լին կամ պետությունը լեռնաշղթայի հետ:

Երկրորդ սկզբունքը հանգում է նրան, որ պետք է համեմատվեն օրյեկտների առավել եական հատկանիշները: Օրինակ, պետությունների՝ որպես հետազոտության աշխարհագրական օբյեկտների համար եական հատկանիշներ են տարրածքի մեծությունը, ազգաբնակչության թիվը, աշխարհագրական դիրքը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, ներկրության ու արտահանման ծավալն ու կառուցվածքը և այլն:

Համեմատական մեթոդը հնարավորություն է տալիս լուծել այն-

պիսի կարևոր գիտական խնդիր, ինչպիսին աշխարհագրական օբյեկտների տիպերի առանցնապումը (տիպականացումը) և դասակարգումն է: **Տիպականացում ասելով պես է հասկանալ էական հարկանիշների նմանություն ունեցող օբյեկտների միավորումը մեկ խմբի մեջ:** Այդ խումը կարող է լինել տիպ, ենթատիպ, դաս, ենթադաս և այլն՝ կախված հետազոտության խորությունից ու մանրամասնության աստիճանից:

Համեմատական-աշխարհագրական մեթոդի օգնությամբ է, որ կատարվել է, օրինակ, պետությունների դասակարգումը՝ տիպականացումը, և առանցնացվել են բարձր զարգացած, թույլ զարգացած և զարգացման միջին մակարդակ ունեցող երկրները, կամ տնտեսական շրջանների տիպականացումն ըստ մասնագիտացման (մետարոգիական, մեթենաշինական, քիմիական, անասնապահական, ցիտրուսային բուսաբուծության, հացահատիկային և այլն):

Համեմատական-աշխարհագրական մեթոդի չևափոխված տարրերակը տնտեսական շրջանացումն է, որը մանրամասնորեն քննարկվել է դասագրի գլուխ Յ-ում (տե՛ս էջ 130-135):

Զննարկելով համեմատական-աշխարհագրական մեթոդի բովանդակությունն ու նշանակությունը, կարևոր է նշել մի կարևոր հանգամանք ևս: Աշխարհագրության զարգացմանը զուգընթաց կատարելագործվել ու բարդացվել է նաև այս մեթոդը: Ծվ դա կապված է առաջին հերթին **աշխարհագրական դիլարկումների դեխնոլոգիայի** կատարելագործման հետ:

Աշխարհագրական դիտարկում է համարվում երևույթների, հետազոտվող օբյեկտի առանցին կողմերի կամ ամբողջ օբյեկտի նպատակային **անմիջական կամ մրովի ընկալումը, որի հիման վրա կարպում է նկարագրությունը:** Սթենախմիկին ունենալում այդ նաև կալումը եղել է անզեն աշքով, անմիջականորեն տեսնելու միջոցով, ապա այժմ դրա համար օգտագործվում են տարբեր նշանակության ու բարդության չափիչ սարքեր ու գործիքներ, սովորական հեռադիտակից, ջերմաչափից ու բարյորաչափից սկսած մինչև ստացիոնար ինքնագիր սարքերը և տիեզերական թռոչող ապարատներն ու ավտոմատ կայանները: Դրանց միջոցով այժմ բազմապիսի օբյեկտիվ տվյալներ են ստացվում և կումպյուտերների միջոցով մշակվում աշխարհագրական թաղանթի վիճակի, այնտեղ ընթացող երևույթների (օրինակ՝ ցիկլունների հվորության, շարժման ուղղության ու արագության, անտառային հրդեհների, գյուղատնտեսական մշակաբույ-

սերի սպասվող բերքի, օվկիանոսն աղտոտող նավթի շերտի տարածման, քաղաքների օդային ավազանի մաքրության և շատ ու շատ այլ երևույթների) մասին:

Հասարակական երևույթների ուսումնասիրության բնագավառում դիտարկումները կատարվում են վիճակագրական տվյալների հավաքման, անկետային հարցումների, անշնական գրույցների և նման բնույթի այլ մեթոդներով:

Մի կարևոր հանգամանք ևս: Դիտարկումների արդյունքում ստացված փաստական ինֆորմացիան տարբեր հետազոտողների մոտ կարող է տարբեր արժեք ու ընկալման տարբեր խորություն ունենալ՝ կախված հետազոտողի տեսական պատրաստվածությունից, հետաքրքրության ուղղությունից, կենսափորչից, կողմնորոշումից: Այդ երևույթը, որ հոգեբանության մեջ հայտնի է **ապակեցեպցիայի երևոյթ (օրենքը)** անունով, մեծագույն ազդեցություն է ունենում դիտարկումների գիտական արդյունքի՝ ստացված փաստերի մեկնաբանության, տեսական ընդհանրացումների, մտահանգումների վրա, ինչպես նաև կանխորոշում է այն հատկանիշների տեսականին ու ծավալը, որոնց միջոցով համեմատվում են հետազոտվող օբյեկտները:

ՀԱՐՑԵՐ ԻՆ-ՁՆԱՎԱՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ո՞րն է համեմադրական-աշխարհագրական մերոդի էությունը և նշանակությունը:**
2. **Ինչո՞վ (աշխարհագրական բազանքի ո՞ր օրինաչափությամբ) է պայմանավորված համեմադրական-աշխարհագրական մերոդի բացառիկ նշանակությունը աշխարհագրական հետազույցունների համար:**
3. **Որո՞նք են այն սկզբունքները, որոնք անհրաժեշտ են համեմադրական-աշխարհագրական մերոդի կիրառման համար:**
4. **Համեմադրական-աշխարհագրական մերոդը ինչպէ՞ս է օգնում օրյեկտների դիպականացման (խմբավորման ու դասակարգման) կարևոր խնդրի լուծմանը:**
5. **Աշխարհագրական դիպարկումների գեխնույոգիայի և հավաքված դպյակների մշակման միջոցների կագարելագործումը ինչպէ՞ս կարող է նպաստել համեմադրական աշխարհագրական մերոդի զարգացմանը:**

5.2.4. ՔՄԱԿԱՎԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դրանք աշխարհագրության մեջ կիրառվել են հնագույն ժամանակներից սկսած և առաջին հերթին կապված են քարտեզաշափության հետ:

Զարտեզի վրա պատկերված աշխարհագրական օբյեկտներն ու երևոյթները քարտեզաշափության միջոցով ստանում են իրենց քանակական բնութագրերը և «քարգմանվում են» թվերի ու տեքստային լեզվի:

Պատրաստի քարտեզների վրա կատարվող չափումների միջոցով որոշում են օբյեկտների աշխարհագրական կոորդինատները, քարյությունները, խորությունները, երկարությունը, հեռավորությունները, մակերեսները, ուղղությունները, ծավալները, հորիզոնական և ուղղաչիգ անկյունները և քավմաթիվ այլ քանակական չույսանիշներ: Չստ եռթյան, քանակական մեթոդի կիրառում է, երբ դեռևս Զ. ա., 3-րդ դարում Երատոսթենեսը քարտեզագրության միջոցով որոշեց Երկրագնդի չափերը:

Հետազայում քարտեզագրության բուռն զարգացումը մեծապես խթանեց քարտեզաշափական մեթոդի կատարելագործմանն ու տարածմանը: Սկզբում այն կիրառվում էր միայն տեղագրական քարտեզներում, իսկ վերջին տասնամյակներում լայն տարածում գտավ նաև թեմատիկ քարտեզագրության մեջ:

Հետազոտության քանակական մեթոդների խմբում կենտրոնական տեղը պատկանում է **վիճակագրական մերողներին:** Մեթոդների այս խմբի համար, որը լայնորեն կիրառվում է գիտության ամենատարբեր ճյուղերում, ընդհանուրը **սկզբնական քանակական ելակեցության գոյացների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է:** Հատկանշական է, որ տնտեսական աշխարհագրության ծագումն ու զարգացումը նաև հենակել է 18-րդ դարում լայն տարածում գտած կամերալ վիճակագրություն կոչվող գիտական ուղղության վրա, որի եռթյունը հենց սոցիալ-տնտեսական փաստերի հավաքումը, մշակումն ու վերլուծությունն էր: Գիտական այդ ուղղությունը հետագայում տարրալուծվեց տնտեսական աշխարհագրության, ժողովրդագրության և տնտեսագիտության մեջ:

Վիճակագրական մեթոդները, կախված հետազոտության նպատակից, կարող են լինել **սոցիալ-տնտեսական վիճակագրական կամ մարդաբանական վիճակագրական:** Վերջին ժամանակներս ավելի

արագ զարգանում են մաթեմատիկական վիճակագրական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս գնահատել սահմանափակ վիճակագրական նյութի հիման վրա կատարված հետապոտությունների հուսալիությունն ու ճշգրտությունը: Դրանք թափանցում են նաև ավանդական սովորական-տնտեսական վիճակագրական մեթոդների մեջ: Այդ երկու խումբ մեթոդների սահմանագլխին չնավորվել է մի նոր ուղղություն, որն ստացել է **մաթեմատիկական-վիճակագրական մերոդ** անունը և լայն տարածում գտել աշխարհագրության տարբեր ճյուղերում:

ՎԱՐՅԵՐ ԻՆՔՍԱՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Աշխարհագրական հետազոտությունների ո՞ր մերոդներն են կոչվում քանակական մերոդներ:**
2. **Հետազոտության քանակական մերոդներն ինչպես և են առնչվում քարտեզագրության (քարտեզաչափության) հետ:**
3. **Հետազոտության քանակական մերոդների մեջ ի՞նչ գործ են գրավում վիճակագրական մերոդները:**
4. **Ո՞րն է վիճակագրական մերոդի էությունը:**
5. **Որքն են վիճակագրական մերոդի գլխավոր ճյուղերը: Ո՞ր բնագավառներում են դրանք կիրառվում:**

5.2.5. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Պանակական մեթոդների զարգացումը գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում, կիրեունետիկայի նվաճումների, մաթեմատիկական ապարատի և էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի կիրառումը հանգեցրին աշխարհագրության և հարակից գիտությունների հետազոտության մեթոդների այնպիսի որակական փոփոխությունների, որոնք հայտնի դարձան «քանակական հեղափոխություն» անունով: Դա աշխարհագրական մաթեմատայնացման նոր մակարդակ էր, որի հիմքում ընկած էր համընդհանուր զգտումը հասնելու «...մտածողության ավելի մեծ հստակության, ավելի հստակ ու մտագաստ մեթոդաբանության, իրականության վերացարկված ու պարզեցված արտապուման տրամաբանա-

մաթեմատիկական բանացներով՝ պուգորդված համակարգային մոտեցման հետ»¹:

Սաբեմատիկական մեթոդների լայն կիրառումը մեզանում 1950-ական թվականներին սկսվել է տնտեսագիտությունից, այնուհետև ներդրվել է երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, սույնուգիայի, փիլիսոփայության, հոգեբանության, լեզվաբանության մեջ:

Աշխարհագրության մաթեմատայնացումը իր բարձրակետին հասավ 60-70-ական թվականներին: Արտասահմանում լույս տեսան մի շարք հիմնարար հետազոտություններ, որոնց մի մասը թարգմանվեց ոռուսերեն (Ենցե, Խաւետ, Խարեմ-տե՛ս գրականության չափը): Այդ տարիներին Խորհրդային Սիությունում (մասամբ նաև Հայաստանում) կտրուկ աճեց այն գիտնականների թիվը, որոնք իրենց նվիրեցին մաթեմատիկական մեթոդների հետազոտությանը: Մի շարք համալսարանների աշխարհագրական ֆակուլտետների ուսումնական պլաններում հայտնվեցին մաթեմատիկական մեթոդների կիրառման հատուկ դասընթացներ:

«Համատարած մաթեմատայնացման» պայմաններում առանցին հետազոտողներ թույլ էին տալիս ծայրահեղություններ: Սաբեմատիկական մեթոդները հակադրում էին աշխարհագրական հետազոտությունների մյուս մեթոդներին, գերազնահատում էին դրանց հնարավորությունները, համարելով, որ միայն մաթեմատիկայի օգնությամբ կարելի է լուծել աշխարհագրական գիտության առաջ ծառացած հիմնախնդիրները:

Ավելի հավասարակշռված մոտեցման կողմնակիցները գգուշացնում էին մաթեմատիկական մեթոդների գերազնահատման հնարավոր վնասներից: Նշվում էր այն հանգամանքը, որ աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բոլոր չափական բարդ երևույթների ֆորմալիզացիան հաճախ խեղաթյուրում է իրականությունը, իսկ աշխարհագրական տեսությունները մղում է դեպի արստրակցիայի բացարձականացում՝ արստրակցիոնիկմ, որը իրականությունը ճիշտ չի արտապուրում:

Աժմ համընդհանուր ճանաչում գտած կարծիքն այն է, որ մաթեմատիկական մեթոդը աշխարհագրական հետազոտության կարևորագույն մեթոդներից մեկն է միայն: Փոխարինելով մյուս մեթոդներին՝ նա լրացնում է դրանց այն հարցերում, որոնց լուծումը մյուս մեթոդներով անկարելի է գտնել: Իսկ այդպիսի հարցերն ու բնագավառներն այսօր արդեն մեծաթիվ են և գնալով ավելանում են:

1 В. И. Максаковский, Географическая культура, Москва, Изд-во «Владос», 1998, № 213.

Մաթեմատիկական մեթոդները լայնորեն կիրառվում են աշխարհագրական հետազոտությունների բոլոր մակարդակներում՝ տվյալների հավաքման ու նախնական մշակման, դրանց դասակարգման ու գեներալիզացիայի, վերլուծության և հետազոտվող օբյեկտի ստատիկ և դինամիկ վիճակների կանխատեսման:

Մաթեմատիկական մեթոդների օգտագործման արդյունավետությունը հատկապես բարձր է տարածքի դիֆերենցման ու շրջանացման, տարածական կապերի ու համամասնությունների վերլուծության կատարելագործման ու օպտիմալացման, գեներամակարգերի մոդելավորման և մի շարք այլ բնագավառներում:

Մաթեմատիկական մեթոդները բազմազան են, և տարբեր աշխարհագրական գիտություններում դրանց տարբեր կոմբինացիաներ են պահանջվում: Օրինակ, հասարակական աշխարհագրության մեջ առավել հաճախ կիրառվում են՝ մաթեմատիկական տրամաբանությունը, բազմությունների տեսությունը, հավանականությունների տեսությունը, մաթեմատիկական ծրագրավորումը, գրաֆների տեսությունը, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Ըոլոր այն դեպքերում, եթե անհրաժեշտ է լինում հաշվի առնել երևույթի դինամիկան, կիրառվում են մաթեմատիկական անալիկի մեթոդները, հատկապես դիֆերենցիալ հավասարումները, որոնք հնարավորություն են տալիս նկարագրել և գնահատել գեներամակարգերի ուղիղ և հակադարձ կապերը:

Տարբեր տեսակի դասակարգումների և շրջանացման խնդիրների լուծման, ինչպես նաև տարբեր տարածական ընդգրկման գեներամակարգերի առանձնացման, շրջանների սահմանագծման, տարտնների առանձնացման ու համակարգման և ընդհանրապես աշխարհագրական օբյեկտների տիպաբանության հետ առնչվող խնդիրների լուծման համար օգտագործվում են մաթեմատիկական վիճակագրության, բազմությունների տեսության, տարրական և վերլուծական երկրաչափության, գծային հանրահաշվի մի շարք մեթոդներ:

Լայն կիրառություն ունեն գծային ծրագրավորման մեթոդները (Վերջին ժամանակներս լրացվում են ոչ գծային ծրագրավորման մեթոդներով), ինչպես նաև դինամիկ ծրագրավորման մեթոդները:

Աշխարհագրական հետազոտությունների տարբեր ուղրտներում, մասնավորապես բնօգտագործման (Եկոլոգիա-էկոնոմիկա հակասության) և աշխարհաքաղաքական բնույթի կոնֆլիկտների լուծման համար օգտագործվում են խաղերի տեսության մեթոդները:

Բնակչության աշխարհագրության մեջ լայն կիրառություն ունեն բնակչության վերաբարության մոդելները, որոնք հենվում են ծնունդի, մահացության, ամուսնությունների ու ապահարզանների վիճակագրական ցուցանիշների վրա: Այս տիպի մոդելների օգնությամբ կատարվում են բնակչության դինամիկայի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ: Վերջին ժամանակներս որոշակի հաջողություններ է արցանագրում բնակչության միգրացիայի և տարաբնակեցման համակարգերի մոդելավորումը:

Տնտեսական աշխարհագրության մեջ ավելի մեծ տարածում են գտել համակարգային մոդելները, որտեղ զուգորդվում են մաթեմատիկական մեթոդները և համակարգային մոտեցումը: Դրանց միջոցով հնարավոր է լինում լուծել ինչպես ճյուղային ու միջնյուղային, այնպես էլ ռեգիոնալ համային հարցեր: Այդ տիպի մոդելների մեծ արդյունավետությունը ապացուցված է հատկապես տարածքային-արտադրական համալիրների (ՏԱՀ), արդյունաբերական հանգույցների, տրանսպորտային ու էներգետիկ համակարգերի և շրջանային հատակագծման տարածքային միավորների մոդելավորման օրինակներով:

ԴԱՐՅԵՐ ԻՆՔՍԱՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ո՞րն է աշխարհագրության համար մաքնմարիկական մերողի հշանակությունը:**
2. **Ի՞նչ ժայրակեղություններ են բույլ դրվել մաքնմարիկական մերողի գնահատման հարցում:**
3. **Մարեմարիկական մերողները կարո՞ղ են արդյոք փոխարինել աշխարհագրական հետազոտությունների ավանդական մերողներին:**
4. **Աշխարհագրական հետազոտության ո՞ր բնագավառներում է, որ մաքնմարիկական մերողների կիրառումը հաղկապես արդյունավել է:**
5. **Հասարակական աշխարհագրության մեջ մաքնմարիկական ո՞ր մերողներն են ավելի հաճախ օգտագործվում:**
6. **Մաքնմարիկական վիճակագրության, բազմությունների գիտության, մաքնմարիկական անալիզի, գծային ծրագրավորման մերողները աշխարհագրական ո՞ր խնդիրների լուծման համար են հաջողությամբ կիրառվում:**

5.2.6. ԱԵՐՈՏԻԵԶԵՐԱԿԱՆ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ, ՌԵՌԱՉԱՓԱԿԱՆ) ՄԵԹՈԴՆԵՐ

Աերոտիեզերական մեթոդները այժմ արդեն լայն տարածում գտած և արագ զարգացող մեթոդներից են: Սրանք իրենց բովանդակությամբ նման են դիտարկումների մեթոդին, բայց որպակապես տարբերվում են եղանակով, տեխնոլոգիայով:

Աերոդիեզերական (դիտանցիոն) անունն է կրում այն մեթոդների ամբողջությունը, որոնք հնարավորություն են գովային բռչող սարքերի միջոցով մեծ հեռավորությունից դիտարկել, հետազոտել, նկարել և քարտեզագրել աշխարհագրական օբյեկտները, սկսած Երկիր մոլորակից, վերջապահ աշխարհագրական գոնաներով ու շրջաններով, բնական ու սոցիալ-տնտեսական ավելի փոքր օբյեկտներով և տարաքնույթ երևույթներով:

Այս մեթոդներին են վերաբերում Երկրի մակերեսի նկարահանումները, պատկերների ֆոտոգրամետրական մշակումը և վերծանումը: Ընդհանուր խմբի մեջ առանձնանում են մասնավոր մեթոդներ՝ լուսանկարչական, ելեկտրոնային, գեոֆիզիկական և վիզուալ:

Աերոտիեզերական մեթոդներն ընդունված են քածանել երկու խոշոր խմբի՝ աերոմեթոդներ և տիեզերական մեթոդներ:

Աերոմեթոդներով հետազոտությունները կատարում են տարբեր բարյորության վրա թռչող ինքնաշխիոներից և ուղղաթիոներից: Կատարվում են լուսանկարային հանույթ, որն օգտագործվում է գլխավորապես տարբեր մասշտարի տեղագրական քարտեզների համար, և անմիջական վիզուալ դիտարկումներ:

Տիեզերական մեթոդները նույնպես անմիջական վիզուալ դիտարկումների լայն հնարավորություն են ընձեռում: Տիեզերագնաց հետևում է մթնոլորտի վիճակին, երկրի վրա կատարվող տեղաշարժերին, ֆիքսում բնական ու սոցիալ-տնտեսական տարբեր մեծության ու նշանակության օբյեկտները, գյուղատնտեսական դաշտերի վիճակը, բնական աղետները: Ավելի ուշ վիզուալ դիտարկումներին ավելացնալու հետեւ ականական լուսանկարահանումները և հեռուստանկարահանումները, որոնք հետագայում կատարելագործվեցին և հարստացան ավելի նորը,

ճշգրիտ ու բարդ մեթոդներով (սպեկտրոմետրիա, ռադիոմետրիա, ռադիոլոկացիա, ջերմային և այլն):

Հետազոտության տիեզերական մեթոդների բուն զարգացումը խթանեց աշխարհագրական նոր գիտական ճյուղի՝ **դիեզերական երկրագիտուրյան** ձևակորմանը: Այդ ճյուղի հետաքրքրությունների ոլորտում են աշխարհագրական միջավայրը և առանձին վերցրած ոլորտները, բայց ավելի շատ՝ դրանց փոխազդեցության արդյունքում ծագող կոմպլեքսային հիմնախնդիրները:

Մասնավորապես հասարակական աշխարհագրության շրջանակներում տիեզերական մեթոդների կիրառումը լավագույն արդյունք է տալիս այնպիսի խնդիրների ուսումնասիրության ժամանակ, ինչպիսիք են՝ հողահանդակների կառուցվածքը, գյուղատնտեսական դաշտերի և տարբեր բույսերի ցանքատարածությունների վիճակը և սպասվող բերքատվությունը, դաշտերի վնասվածությունը տարբեր հիվանդություններով ու վնասատուներով:

Այդ մեթոդներն օգնում են նաև տարածնակեցման, քաղաքների ու շրջանների հատակագծման, շինարարական հողօգտագործման, արդյունաբերության (հատկապես լեռնահանքային ճյուղի) տեղաբաշխման, հանգստի գոտիների կազմակերպման, տրանսպորտային հոսքերի կարգավորման և քաղաքացիկ այլ հարցերի ուսումնասիրմանը:

ԴԱՐՅԵՐ ԻՆՔԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

- 1. Ի՞նչ են աերոդիեզերական (դիստանցիոն) մեթոդները:**
- 2. Աերոդիեզերական մեթոդները ինչո՞վ են նման դիտարկումների մեթոդին և ինչո՞վ են գործերվում դրանից:**
- 3. Որո՞նք են աերոդիեզերական մեթոդների հիմնական խարերը:**

1 Այս մեթոդների լայն օգտագործումն այսօր հնարավորություն է գրավի սպամալ ոչ միայն հարուստ գիտական նյութ աշխարհագրական քաղաքների ու նրա քաղադիչների մասին, այլև կուրակել բազմաբնույթ հետախուզական գրվածներ հեռու և մուդիկ հարեւանների, ուազմական օրինակների, զորքի կուրակումների ու գեղաշարժների մասին: Աշխարհի գործերը մասնաւում վերջին գարիներին գեղի ունեցած բոլոր ուազմական զործողությունների ժամանակ Ծրաք, Զուվեյր, Աֆրանավան, Թեզնիա, Հարավավավիա և այլն) աեր և դիեզերական մեթոդները աննալայն կիրառություն են ունեցել:

- 4. Տիեզերական մերոդենքը ի՞նչ եռու հնարավորություններ և ընձեռություններ գիտության համար ընդհանրապես և հասարակական աշխարհագրության համար մասնավորապես:**

5.2.7. ԳԵՂԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ (ԱՇԽԱՐՀԱՑԵՂԵԿԱՑՎԱԿԱԲՆ) ՄԵԹՈԴՆԵՐ

Դայտնի է, թե վերջին տասնամյակներում ինչպիսի բարձր տեմպերով է զարգանում ինֆորմատիկան և ինչպիսի առաջավոր դիրքեր է նվաճում ժամանակակից հասարակական կյանքում: Նույնիսկ հասարակական զարգացման «հետինդուստրիալ փուլ» կամ «հետինդուստրիալ հասարակություն» տերմինների փոխարեն հաճախ օգտագործում են «ինֆորմացիոն փուլ» և «ինֆորմացիոն հասարակություն» տերմինները:

Ինֆորմացիկան ներկա պատկերացմամբ մի միջնորդային գիտական ոլորտ է, որն զբաղվում է գիտական ինֆորմացիայի կառուցվածքի և ընդհանուր հատկանիշների ուսումնասիրությամբ, ինչպես նաև՝ դրա արտադրությամբ, պահպանությամբ, վերափոխմամբ, օգտագործմամբ և տարածմամբ:

Իսկ ի՞նչ է **ինֆորմացիան**: Ինֆորմացիան (լատ. *informationis* բառից, որ նշանակում է տեղեկանալ, տեղեկացնել, տեղեկություն հաղորդել, պարզաբանել) բավականին լայն հասկացություն է և օգտագործվում է մի քանի հիմաստներով.

ա) ինչ- որ տեղեկության, լուրի հաղորդում,

բ) տեղեկություն, որը պահպանման, մշակման, վերափոխման և հաղորդման օբյեկտ է,

գ) մաթեմատիկայում և կիրեննետիկայում՝ անորոշության (Ենտրոպիայի) վերացման քանակական չափ և համակարգի կազմակերպման չափ: Կիրեննետիկայի բաժիններից մեկը՝ ինֆորմացիայի տեսությունը, զբաղվում է ինֆորմացիայի քանակի չափման և նրա հաղորդման (տարածման) մաթեմատիկական մեթոդներով:

Դժվար է գերազնահատել ինֆորմացիայի դերը արդի հասարակական կյանքում: Էլեկտրոնային հաշվիչ մեթենաների, ինֆորմացիայի պահպանման, օգտագործման և հաղորդման մագնիտային, լազերային և

օպտիկական միջոցների, էլեկտրոնային կապի, հնտերնետի և տեխնիկական այլ միջոցների զանգվածային օգտագործման շնորհիվ այն թափանցել է հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ու քնազավառները, սկսած գիտությունից, քաղաքականությունից, տնտեսությունից ու կառավարումից մինչև առօրյա կյանքն ու կենցաղը:

Այդպիսի պայմաններում հատուկ նշանակություն է ստանում **գեղինֆորմատիկան և հետազոտության գեղինֆորմացիոն մերուժների** կիրառումը աշխարհագրության և ընդհանրապես բնության ու հասարակության մասին գիտությունների մեջ:

Գեղինֆորմատիկան, որպես գիտության ճյուղ, գրաղվում է աշխարհագրական ինֆորմացիայի սրացման, պահպանման, վերափոխման, օգտագործման և հաղորդման սկզբունքների, մերուժների և գեղանորոգիաների մշակումով ու ներդրումով:

Գեղինֆորմատիկայի զարգացումը վերջին մեկ-երկու տասնամյակում հանգեցրեց տարբեր ընդգրկման ու թեմատիկայի համամոլորակային, տարածաշրջանային, տեղական, ծովային (ջրային ռեսուրսների, հողօգտագործման, ուեկթեազիոն և այլն) աշխարհագրական ինֆորմացիոն համակարգերի (գեղինֆորմացիոն համակարգերի՝ **ԳԻՀ**)¹ ստեղծմանը:

ԳԻՀ- ը տարբեր բնույթի տվյալների ստացման, պահպանման, մշակման և աշխարհագրական ինֆորմացիայի հաղորդման փոխկապակցված միջոցների մի կոմպլեքս է: Նա հենվում է ինֆորմացիայի պահպանման ու հաղորդման թվային, տեքստային, գրաֆիկական ու քարտեզագրական ձևերի օգտագործման վրա: Լայն կիրառություն ունեն մասնավորապես էլեկտրոնային փոստը, էլեկտրոնային քարտեզներն ու ատլասները:

ԳԻՀ- ի զանգվածային ներդրումը աշխարհագրության մեջ նոր միայն սկսվում է, քայլ որոշ ճյուղերում արդեն հանգեցրել է իսկական հեղափոխության: Դա վերաբերում է առաջին հերթին քարտեզագրությանը: Եվ դա հատկապես ուշագրավ է այն պատճառով, որ նա գիտական հետազոտության բազմաթիվ մասնավոր հարցեր լուծելու և ճյուղային գիտությունների զարգացմանը նպաստելու հետ միասին մեծապես խթանում է աշխարհագրական գիտությունների ինտեգրացմանը և գի-

¹ **ԳԻՀ-ի միջազգային լրարածում սրացած հոմանիշը GIS-ն է, անգլերեն *Geoinformation system*-ի հապալումը:**

տատեխնիկական հեղափոխության արդի փուլի աշքի ընկնող նվաճումների հետ միասնացման:

Գեղինֆորմացիոն մեթոդներն իրենց բնույթով, երևոյթների եռության մեջ թափանցելու անսահման հնարավորություններով և աշխարհագրական գիտությունների ամբողջ համակարգի համար ունեցած նշանակությամբ լրացնում են մաթեմատիկական, քարտեզագրական և դիստանցիոն մեթոդների շարքը:

ՏԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՄԱՐ

1. **Ի՞նչ է ինֆորմացիան, ո՞րն է նրա նշանակությունը արդի հասարակական կյանքում:**
2. **Ի՞նչ իմաստներով է օգտագործվում ինֆորմացիա հասկացությունը:**
3. **Ի՞նչ են ինֆորմատիկան, գեղինֆորմատիկան:**
4. **Ո՞րն է գեղինֆորմացիոն համակարգի (ԳԻՀ) բովանդակությունը:**
5. **ԳԻՀ-ի ներդրումը ի՞նչ նշանակություն ունի աշխարհագրական գիտությունների համար:**

Գ Լ Ո Ւ Խ 6

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՂՆԽԱՏԵՍՈՎԻՄԸ ԴԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Qրքի նախորդ բաժիններում դուք տեսաք, որ աշխարհագրությունը, դրա կազմում էլ հասարակական աշխարհագրությունը, անընելով զարգացման երկարատև ուղի և հասնելով ներկա մակարդակին, ձեռք է բերել **կոնսպրուկտիվ** կառուցողական գիտության հատկանիշներ:

Վաղուց արդեն աշխարհագրությունը չի սահմանափակվում տարածքների և դրանցում ընթացող բնական ու հասարակական երևույթների մասին փաստեր հավաքելով, նկարագրելով ու դասակարգելով: Նա չի բավարարվում նաև այդ երևույթները մեկնարանելով ու գնահատելով, դրանց պատճառահետևանքային կապերը բացահայտելով ու վերլուծելով:

Այսօր աշխարհագրությունն ի վիճակի է կատարել նոր, ավելի բարդ ու պատասխանատու սոցիալական պատվեր, այն է՝ **կանխափեսել աշխարհագրական բաղանքում ընթացող բարդ երևույթների զարգացումը և ուղիներ մշակել դրանց արդյունավելի կառավարման համար:**

Դա արդեն գործունեության նոր ոլորտ է, որը պահանջում է նոր մոտեցում, հետազոտության նոր մեթոդներ ու եղանակներ, գիտատեսական մշակումների ավելի բարձր մակարդակ:

Ամեն մի գիտության համար ամենապարգայած՝ կանխատեսման փուլը նրա զարգացման նախորդ փուլերի խտացած արդյունքն է, որը չեղք է բերում ամբողջովին նոր՝ **երևույթների զարգացումը միշտ գուշակելու, կոռահելու, նախադեսելու, կանխափեսելու, կառավարելու հարկությունը:**

Ընդհանրապես կանխատեսումը գիտական կոռահման, նախատեսման¹ տեսակներից է: (Հասարակական գիտությունների բնագավառում նախատեսման մյուս տեսակներն են ծրագրավորումը և պլանավորումը, որոնք արդեն ուղղակիորեն են կապվում կառավարման հետ):

Ընդունված է ասել, որ կանխատեսումը գիտական հետազոտումն է այն երևույթների, որոնք **ներկայումս բացակայում են, բայց կարող են ի հայտ գալ երևույթների զարգացման ներքին դրամարանուրյամբ և որոշակի արդարին գործոնների ազդեցությամբ:**

Գիտական յուրաքանչյուր նյուիդի ներսում կանխատեսումը այդ նյուիդի զարգացման բարձրագույն մակարդակն է և կատարելագործվում է դրա հետ մեկտեղ: Նա այն գլխավոր օղակն է, որը գիտական տեսությունը կապում է պիտիկայի հետ: **Կանխադեսման հմարավորությամբ ու հավասփորթյամբ է զնահարվում գիտության ճյուղի կռնադրուկիվ՝ կառուցղական ներուժը, իսկ վերջինիս միջոցով էլ՝ նրա սոցիալական դերը և հասարակական հեղինակությունը:**

¹ Գիտական կոռահումը, նախադեսումը (հայուսությունը) իրականության առաջանցիկ նկարագրությունն է, հավանական վիճակի վերլուծությունը:

Հարկ է միաժամանակ նշել, որ կանխատեսումը լայն իմաստով գիտահետազոտական գործունեության առանցին բնագավառ է: Ավելին՝ գիտությունների դասակարգման արդի համակարգում այն ճանաչվում է որպես **գիտության ինքնուրույն ճյուղ կանխադրեագիտություն՝ պրոգնոսդիկա անունով:**

Աշխարհագրական կանխադրեումը աշխարհագրական միջավայրի ապագա վիճակի և զարգացման հնարավոր ուղղությունների մասին գիտականորեն հիմնավորված դադողուրյունների և հաշվարկների մշակումն է, որն անհրաժեշտ է կառավարման վճիռներ ընդունելու համար:

Ինչպես երևում է սահմանումից աշխարհագրական կանխատեսումը պետք է բավարարի երեք պայմանի:

Առաջին. պետք է վերաբերի օբյեկտի (երևույթի ապագա վիճակին):

Երկրորդ. ապագա վիճակի մասին դատողություններն ու հաշվարկները պետք է հիմնավորվեն գիտականորեն:

Երրորդ. այդ դատողությունների ու հաշվարկների հիման վրա պետք է հանգի օբյեկտի (երևույթի) կառավարման վճիռների ընդունմանը:

Արդեն ասվել է, որ աշխարհագրական գիտությունների կառուցվածքը արտապուում է աշխարհագրական միջավայրի կառուցվածքը դրա ուսումնասիրվածության տվյալ աստիճանի համար: Աշխարհագրական միջավայրի կառուցվածքի և այն արտապուող գիտությունների համակարգի կառուցվածքին համապատասխան էլ աշխարհագրական կանխատեսումն ունի իր տարատեսակները: Դրանք են՝ համաշխարհագրական, համալիր ֆիզիկաշխարհագրական-լանդշաֆտային, կլիմայական, եղանակային, ջրաբանական, էկոլոգաշխարհագրական, աշխարհագրական միջավայրի մրու բաղադրիչների, իհարկե, նաև սոցիալ-տնտեսական կանխատեսումը:

Կանխադրեագիտությունը գիտություն է կանխատեսման օրենքների ու միջոցների մասին, այլ կերպ ասած՝ տարբեր գիտությունների գծով կատարվող կանխատեսումների մի ընդհանուրական մետատեսություն է (հուն. *meta-hետո*, հետտեսություն, գերտեսություն):

Ձեն կանխատեսումը հատուկ է եղել գիտական ճանաչողությանը դրա չեավորման վաղ ժամանակներից, բայց կանխատեսագիտությունը, որպես գիտության ինքնուրույն բնագավառ, չեավորվել է 20-րդ դա-

րի կեսերին, իսկ կանխատեսագիտություն (պրոգնոսատիկա) տերմինը տարածում է գտել 20-րդ դարի 60-ական թվականներից միայն, երբ երևան եկան սոցիալական երևույթների կոնկրետ կանխատեսման տեսական պրոբլեմներին նվիրված առաջին ուսումնասիրությունները:

Ինչ վերաբերում է առաջին գիտական կանխատեսումներին ընդհանրապես, ապա դրանք կատարվել են նախ և առաջ օդերևութաբանության բնագավառում և սպասարկել են գյուղատնտեսությանը և ծովագնայությանը: Դրանք անցյալ դարի կեսերից միայն սկսել են կիրառվել հասարակական երևույթների բնագավառում:

Տարբերում են **ընդհանուր (կամ դիեսական)** կանխատեսագիտություն և **մասնավոր (կամ կիրառական)** կանխատեսագիտություն: Մասնավոր կանխատեսագիտությունը, լինելով ընդհանուրի մի մասը, միաժամանակ մտնում է համապատասխան գիտական ճյուղի՝ աշխարհագրության, տնտեսագիտության, երկրաբանության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության մեջ և այլն:

Ասվածը նույնությամբ վերաբերում է հասարակական աշխարհագրական կանխատեսմանը (որպես մասնավոր կանխատեսման տարատեսակ): Այն պատկանում է միաժամանակ հասարակական աշխարհագրությանը և ընդհանուր (տեսական) կանխատեսագիտությանը:

Աշխարհագրական կանխատեսման յուրաքանչյուր տեսակ հիմք ընդունելով ուսումնասիրության իր սեփական օբյեկտի վարգայման օրենքներն ու օրինաշափությունները, հաշվի առնելով դրանց փոխներգործությունը, միաժամանակ հենվում է այն օրենքների և օրինաշափությունների վրա, որոնք հատուկ են աշխարհագրական միջավայրին ընդհանրապես: Այլ կերպ ասած՝ աշխարհագրական միջավայրի առանձին կոմպոնենտների, օրինակ՝ կլիմայի, հողաբուսական ծածկի, տարաբնակեցման և այլն, կանխատեսումը սերտ կապի մեջ պետք է լինի համաշխարհագրական կանխատեսման հետ, որն զբաղվում է ոչ թե առանձին կոմպոնենտներով, այլ գեղիամակարգերով, աշխարհագրական միջավայրով ամբողջությամբ վերցրած:

Հատկանշական է, որ կանխատեսումով զբաղվող հետազոտողների ճնշող մեծամասնությունը, դրանց թվում և բնաշխարհագրական ուղղությունների ներկայացուցիչները, առանձնահատուկ նշանակություն են տալիս հասարակական երևույթներին, մասնավորապես գիտատեխնիկական առաջադիմությանը, բնօգտագործման տեխնիկական և տեխ-

Նոլոգիական մակարդակին, այն սոցիալ-քաղաքական իրադրությանը, որտեղ կատարվում է բնական միջավայրի վրա մարդածին ազդեցությունը: Օրինակ, ականավոր գեոմորֆոլոգ, ակադեմիկոս Կ. Մարկովը համարում է, որ **համաշխարհագրական կանխափեսումը պեղը է ելակեդը ունենաւ քաղաքա-և գնդիսաաշխարհագրական իրադրության կանխափեսումը:**

Գրեթե նոյն կարծիքն է հայտնում ճանաչված ֆիզիկաաշխարհագետ, պրոֆ. Ա. Ռյաբչիկովը: Ըստական միջավայրի կանխատեսման և գեոհամակարգերի պահպանության պրոբլեմը նա համարում է ոչ միայն տեխնոլոգիական ու տնտեսական, այլև սոցիալական և քաղաքական պրոբլեմ: Այստեղից էլ քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների այն առաջնային նշանակությունը, որ նա տալիս է աշխարհագրական կանխատեսման ժամանակ:

Այժմ մասնագետների շրջանում տարայայնություն չի առաջանում այն հարցը, որ

ա) համաշխարհագրական կանխատեսման օբյեկտը աշխարհագրական միջավայրն է, զանազան տիպի ու մասշտաբի գեոհամակարգերը (բնական, արտադրական, բնատնտեսական):

բ) Աշխարհագրական միջավայրի և գեոհամակարգերի կանխատեսումը կապված է մեծագույն բարդությունների հետ, որը պայմանավորված է կանխատեսման ենթակա օբյեկտների ներքին բարդությամբ, ինչպես նաև դրանց վրա ազդող գործոնների բավմապանությամբ:

գ) Համաշխարհագրական կանխատեսման գլխավոր ոլորտը բնություն-հասարակություն փոխարաբերությունն է, դրանց ուղիղ ու հակադարձ, ուղղակի և միջնորդված բազմաբնույթ կապերը, որոնք դրսերփում են տարածական տարբեր մասշտաբայնության պայմաններում:

Կանխատեսման համար սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ **կանխափեսման օբյեկտի զարգացումը պեղի է ունենում ինքնազարգացման ներքին պատճառներով (էվոլյուցիոն զարգացում) և արդարին գործոնների ազդեցության դրական գործությունը և արագությունը կարելի է հաշվարկել ու կանխատեսել գրեթե միանշանակ չենով, ապա արտաքին գործոնները կարելի է հաշվարկել ու քննարկել միայն տարբերակային մոտեցմամբ: Այդ դեպքում հաշվի են առնվում արտաքին գործոնների և՝ ուղղության, և՝ ուժգության հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև գեոհամակարգի**

փոփոխության սոցիալական պատվերը (թե ինչ կոնկրետ խնդիրներ են պահանջվում լուծել):

Սուարկության չի հանդիպում այն տեսակետու, որ աշխարհագրական միջավայրի՝ որպես մեկ ամբողջության վրա ազդող առաջատար և առավել կայուն գործոնների կանխատեսումը առանձին-առանձին համեմատաբար դյուրին է: Դրանք են Երկրի կենսի, կլիմայական, ջրագրական, հողային ու բուական ծածկի առանձնահատկություններով պայմանավորված գործոնները: Ծատ ավելի բարդ ու դժվարին է միմյանց վրա այդ գործոնների ազդեցության և դրանց ու մարդածին գործոնների փոխազդեցության հաշվառումը և հետևանքների կանխատեսումը:

Արդեն ասվել է, որ հասարակական աշխարհագրությունը, որպես գիտության ճյուղ, ուսումնասիրում է հասարակության տարածքային կազմակերպումը տարբեր երկրներում, շրջաններում ու վայրերում: Դրա ուսումնասիրության օբյեկտն են Երկրի աշխարհագրական թաղանթի ընակեցված, յուրացված կամ որևէ այլ չենով հասարակության գործունեության ոլորտի մեջ ներգրաված հատվածները՝ իրենց տնտեսության տարածքային կառուցվածքով և հասարակական կյանքի կազմակերպման չենով, այլ կերպ ասած՝ **հասարակական գեղամակարգերն իրենց ամրոցության մեջ:**

Զայս հասարակական աշխարհագրությունն իր ճյուղերի ու ենթաճյուղերի միջոցով ուսումնասիրում է այդ համակարգերի առանձին բաղադրիչները նույնպես՝ ընակչությունը, տնտեսությունն իր ճյուղերով, ընական ռեսուրսները և այլն:

Հասարակական աշխարհագրական կանխատեսումը կոչված է բացահայտելու այդ օբյեկտների ապագայի գլխավոր հատկանիշները, զարգացման գլխավոր ուղղություններն ու միտումներն, ունենալով **ընդհանուր նպագրակ՝ դրանց համապատասխանեցնել պետական նպագրակային ծրագրերն ու հեռանկարային պլանները:** Միաժամանակ, սոցիալական ու տնտեսական անհրաժեշտությունից ելնելով, փորձել ներգործել այդ ուղղությունների ու միտումների վրա, կարգավորել դրանք:

Սկզբունքային նշանակություն ունի այն հարցը, թե **ինչ պետք է հասկանալ օրյեկտիվ երևույթների կարգավորում, կառավարում ասելով**, չե որ այդ երևույթներն ընթանում են ինքնազարգացման ու ինքնակարգավորման օրենքով, մեր արտաքին միջամտությունն արդյո՞ք չի խեղաթյուրի այդ երևույթը և արդյո՞ք կտա յանկալի արդյունք:

Նախկինում, մեր երկրում հասարակության կառավարման տուտալիտար, վարչականացական համակարգի տիրապետության ժամանակաշրջանում միշտ չէր, որ հաշվի էին նստում երևույթների վարդապահան օրենքների ու օրինաչափությունների հետ: Ընդունում էին հեռանկարին վերաբերող վճիռներ, ծրագրեր ու պլաններ, որոնք չէին բխում գիտական կանխատեսումից: Արդյունքում ծրագրերն ու պլանները շատ հաճախ լինում էին ոչ թե իրատեսական, այլ ուտոպիստական, անիրականալի: Ժուլի Էր տրվում այն սկզբունքային սխալը, որ «ապագան կարելի է կառուցել»: Իրականում ընության և հասարակության ինքնապարզացման ու ինքնակարգավորման օրենքներն ու օրինաչափությունները այնքան հզոր ու կայուն են, որ մարդը ի վիճակի չէ, անտեսելով դրանք, «կառուցել ապագա»: Ինչպես դիպուկ նկատում է Ռ. Ռոդոմանը, «ապագան» կարելի է **ընդամենը «անհենի»**՝ ինչպես անեցնում են մշակաբուժերը, երեխաներին, բյուրեղները՝ հաշվի առնելով դրանց ինքնապարզացման ու ինքնակարգավորման օրինաչափությունները:

Ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում ընդունելի է համարվում թե՝ ընդհանրական և թե՝ մասնավոր-ուղագիտական կանխատեսումների գոյությունը: Այժմ առավել տարածում ունեն կանխատեսման հետևյալ տեսակները.

1. որոշակի տարածքի (առանցին պետության, վարչական մարզի, շրջանի և այլն) արտադրողական ուժերի վարդապահությունը և տեղաբաշխման կանխատեսում,
2. տարածքային-արտադրական համալիրի (ՏԱՀ) կանխատեսում,
3. միջնյուղային համալիրի կանխատեսում,
4. արդյունաբերական շրջանի, արդյունաբերական հանգույցի կանխատեսում,
5. տարաբերակեցման մակարդակի կանխատեսում,
6. քաղաքի կանխատեսում,
7. ագրոարտադրական համալիրի կանխատեսում,
8. արտադրական և սոցիալական ենթակառույցվածքի (որպես հասարակական-տարածքային համակարգի) կանխատեսումներ:

Այս բոլորը, ինչպես տեսնում ենք, վերաբերում են ժողովրդական տնտեսության առանցին տարածքային մասերին և ոլորտներին, դրանցից յուրաքանչյուրում չեավորվող տարածքային համակարգերին: Դրանք

մասնավոր-ռեգիոնալ կանխատեսումներ են, որոնք միավորվում են ընդհանրական՝ հասարակական կյանքի ամբողջությունն ընդգրկող կանխատեսման մեջ: Բայց դա տեղի է ունենում ոչ թե դրանց մեխանիկական միացման կամ թվաբանական գումարման միջոցով, այլ օրգանական միացուկման, ինպեզրացման միջոցով:

Գլխավորապես կանխատեսումային հետազոտություններն են, որ գիտությանը, ինչպես արդեն ասվել է, հաղորդում են կոնստրուկտիվ բնույթ և բարձրացնում են այն ամենաժամանակակից մակարդակի: Դրանց շնորհիվ է, որ հասարակական աշխարհագրուրյունը, ընդհանուր մշակուրային, ճանաչողական ու հանրակրթական նշանակուրյունից բացի, չեղար է բերում նաև գործնական, կիրառական նշանակուրյուն:

ԴԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՎԱՄԱՐ

1. Ո՞րն է աշխարհագրուրյանը ներկայացվող արդի սոցիալական պարզերը:
2. Ի՞նչ է կանխագրեաւումը ընդհանրապես:
3. Ի՞նչ է կանխագրեագրուրյունը: Որո՞նք են դրա գործադրությունները:
4. Ի՞նչ է աշխարհագրական կանխագրեաւումը: Ի՞նչ պայմանների այն պես է բավարարի:
5. Որո՞նք են աշխարհագրական կանխագրեաման գործադրությունները:
6. Աշխարհագրական կանխագրեաման մեջ ինչպես և գնահատվում գիտարկեխ նիկական առաջադիմուրյան և սոցիալ-գննդեական ու քաղաքական իրադրուրյան դերը:
7. Ինչո՞ւ աշխարհագրական միջավայրի և գեղեամակարգերի կանխագրեաւումը համարվում է կանխագրեաման շատ բարդ գործադրություն:
8. Որո՞նք են հասարակական աշխարհագրական կանխագրեաման օրյեկտները:
9. Գիտական կանխագրեաւումն ու կառավարումը ինչպես և են հարաբերվում կանխագրեավող օրյեկտի ինքնազարգացմանն ու ինքնակարգավորմանը:
10. Հասարակական աշխարհագրուրյունը կանխագրեաման շնորհիվ ի՞նչ նոր նշանակուրյուն է չեղար բերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱԿ

ՀԻՄԱԿԱՆ

- 1. Հափրոյն Թ. Խ.** Աշխարհագրության համառոտ պատմություն, Երևան, 1976,
«Էլուս» իրատարակություն, Բաժին VI

2. Агаев Э.Б. Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь, «Мысль», Москва, 1983г.

3. Баранский И.И. Экономическая география. Экономическая картография. «Географика», Москва, 1960г., Раздел «Экономическая география»

4. Географический энциклопедический словарь. Понятия и термины «Советская энциклопедия», Москва, 1988г.

5. Гемпнер А. География, ее история, сущность и методы, Ленинград-Москва, 1930г., Часть вторая

6. Джеймс Н., Мартин Дж. Все возможные миры. История географических идей, «Прогресс», Москва, 1988, Главы 1,6, 18

7. Максаковский В. Н. Географическая культура, «Владос», Москва, 1998г., Главы 1, 2, 3, 8, 9, 10

8. Саушкин Ю. Г. Экономическая география: история, теория, методы, практика, «Мысль», М., 1973., Главы 1, 6, 7, 13

9. Хаззетт Н. География: синтез современных знаний, «Прогресс», Москва, 1979г.

10. Харвей Д. Научное объяснение в географии, «Прогресс», Москва, 1974., Предисловие к русскому изданию, Главы 1, 2, 3, 5

ՕԺՄՆՑ

1. Սալոշին Յլ. Գ. Տեսական աշխարհագրության ներածություն, Երևան, 1974,
Երևանի պետական համալսարանի իրատարակություն,
Գրիգի առաջին

2. Буянов В. Теоретическая география, «Прогресс», Москва, 1967., Предисловие, Глава 1

3. География в системе наук, Ленинград, «Наука», 1987г.

4. Иванович К. Социально-экономическая география, «Прогресс», Москва, 1987г., Главы 1, 2

5. Основы конструктивной географии. Под ред. И. Н. Герасимова и В. С. Преображенского, «Прогресс», Москва, 1986г., Часть 2

6. Покшинцевский В.В. Население и география, «Мысль», Москва, 1978г., Глава 2

7. Преображенский В. С. Поиск в географии, «Прогресс», Москва, 1986г.
Главы 1,5

8. Саушкин Ю. Г. История и методология географической науки (Курс лекций),
Изд-во МГУ, Москва, 1976г., Лекции 4, 14, 16

9. Семёновский Б. Н. Теоретическая экономгеография, «Наука», Ленинград, 1981,
Главы 1, 2

10. Теоретические и общий вопросы географии. Том 4. География в системе наук о Земле, ВНИИТИ, Москва, 1985г., Главы 1, 6, 7

11. Экономическая география в СССР. История и современное развитие,
«Прогресс», Москва, 1987г.

12. Rediscovering Geography New relevance for science and society, National Academy Press,
Washington, D. C., 1977

ԹՈՎՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ	9
1.1. Գիտուրյան հասարակական դերը: Գիտուրյունների դասակարգումը-----	9
1.2. Աշխարհագրուրյան լրեղը գիտուրյունների դասակարգման համակարգում: Աշխարհագրուրյան կառուցվածքը-----	18
1.3. Աշխարհագրական բաղանքը՝ աշխարհագրուրյան հետազոտուրյան օրյեկտ: Գիտավոր առանձնահատկուրյունները-----	23
1.4. Բնական աշխարհագրուրյունը աշխարհագրական գիտուրյունների համակարգում: Կապը հասարակական աշխարհագրուրյան հետ-----	30
ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ	36
2.1. Զեկավորման պարմական նախադրյալները: Մարդու և հասարակուրյան մասին գիտելիքների անդրադարձը աշխարհագրուրյան մեջ-----	36
2.1.1. Անդիկ ժամանակաշրջան-----	36
2.1.2. Միջին դարեր-----	48
2.1.3. Վերածննդի և Աշխարհագրական մեծ հայրենագործուրյունների ժամանակաշրջան-----	53
2.1.4. Նոր ժամանակաշրջան-----	57
2.1.5. Հասարակական աշխարհագրուրյան՝ որպես ինքնուրույն գիտուրյան ձևավորումը-----	76
2.2. Հասարակական աշխարհագրուրյան լրեղը գիտուրյունների դասակարգման համակարգում-----	81
2.3. Հասարակական աշխարհագրուրյան կառուցվածքը-----	83
2.4. Հասարակական աշխարհագրուրյան արդի խնդիրները -----	90

ԳԼՈՒԽ 3. ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ	
ՎՄԾԱՐՁՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	103
3.1. Աշխարհանքի աշխարհագրական (դարածքային) բաժանում (ԱԱԲ)-----	104
3.2. Աշխարհագրական դիրք (ԱԴ)-----	112
3.3. Հասարակության դարածքային կազմակերպում: Տարածքային կառուցվածք-----	123
3.4. Շրջան շրջանագոյացում, շրջանացում-----	127
3.5. Աշխարհագրական համակարգ: Աշխարհագրական մոդելում-----	136
3.6. Աշխարհագրությունը աշխարհագրության մասին ներքին ռեֆլեքսիայի հիմնախնդիրը-----	142
ԳԼՈՒԽ 4. ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՏԱՄԱԿԱՐԳԸ: ԴԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱՆՐԻՉՆԵՐԸ	146
4.1. Բնակչության աշխարհագրություն-----	147
4.2. Տնտեսական աշխարհագրություն-----	152
4.3. Բնական ռեսուրսների աշխարհագրություն-----	157
4.4. Սոցիալական աշխարհագրություն-----	163
4.5. Քաղաքական աշխարհագրություն-----	169
4.6. Մշակույթի աշխարհագրություն-----	177
4.7. Ռեգունալ աշխարհագրություն-----	181
4.8. Տեսական-հասարակական աշխարհագրություն-----	187
ԳԼՈՒԽ 5. ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ	
ԴԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	193
5. 1. Գիրական հելտազուրկության մերողների դասակարգում-----	193
5.2. Աշխարհագրական հելտազուրկության մերողներ-----	197
5.2.1. Նկարագրական մերող-----	197
5.2.2. Քարտեզագրական մերող-----	199
5.2.3. Համեմարտական-աշխարհագրական մերող-----	202
5.2.4. Քանակական մերողներ-----	206
5.2.5. Մարեմարթիկական մերողներ-----	207
5.2.6. Աերովիճակներական (դիմանցիռն, հեռաչափական) մերողներ-----	211
5.2.7. Գնոհնաֆորմացիռն (աշխարհական հեղեկական) մերողներ-----	213
ԳԼՈՒԽ 6. ԳԻՏԱԿԱՆ ԿԱՆԱՌԵՆՍՈՒՄԸ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ	
ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ	215
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԿ	223

СОДЕРЖАНИЕ

ВВЕДЕНИЕ.....	3
ГЛАВА 1. Система географических наук.....	9
1.1. Общественная роль науки. Классификация наук.....	9
1.2. Место географии в системе классификации наук.	
Структура географии.....	18
1.3. Географическая оболочка-объект исследования географии.	
Главные ее особенности.....	23
1.4. Физическая география в системе географических наук. Связь с общественной географией.....	30
ГЛАВА 2. Общественная география.....	36
2.1. Исторические предпосылки формирования. Отражение знаний об обществе в географии.....	36
2.1.1. Античный период.....	36
2.1.2. Средние века.....	48
2.1.3. Период Возрождения и Великих географических открытий.....	53
2.1.4. Новый период.....	57
2.1.5. Формирование общественной географии в самостоятельную науку.....	76
2.2. Место общественной географии в системе классификации наук	81
2.3. Структура общественной географии.....	83
2.4. Современные задачи общественной географии.....	90
ГЛАВА 3. Фундаментальные понятия общественной географии.....	103
3.1. Географическое (территориальное) разделение труда.....	104
3.2. Географическое положение.....	112
3.3. Территориальная организация общества.	
Территориальная структура.....	123
3.4. Район, районообразование, районирование.....	127
3.5. Географическая система. Географический подголос.....	136
3.6. География о географии. Внутренняя рефлексия географии.....	142

ГЛАВА 4. Система общественных географических наук. Составные части системы.....	146
4.1. География населения	147
4.2. Экономическая география	152
4.3. География природных ресурсов.....	157
4.4. Социальная география.....	163
4.5. Политическая география.....	169
4.6. География культуры.....	177
4.7. Региональная география (страноведение).....	181
4.8. Теоретическая общественная география.....	187
ГЛАВА 5. Методы исследования общественной географии.....	193
5.1. Классификация методов научных исследований.....	193
5.2. Методы географических исследований.....	197
5.2.1. Описательный метод.....	197
5.2.2. Картографический метод.....	199
5.2.3. Сравнительно-географический метод.....	202
5.2.4. Количественные методы.....	206
5.2.5. Математические методы.....	207
5.2.6. Аэрокосмические (дистанционные) методы.....	211
5.2.7. Геоинформационные методы.....	213
ГЛАВА 6. Научный прогноз в общественной географии.....	215
Список литературы.....	223

ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՐ,
(սոցիալ-դեմքրատական)
ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Դասագիրք
բուհերի աշխարհագրական և տնտեսագիրական
մասնագիրությունների համար**

Հրատ. խմբագիր՝	Ա. Ավետիսյան
Գեղ. խմբագիր՝	Գ. Գյուղամիրյան
Տեխն. խմբագիր՝	Ա. Ախիրյան
Վերաբուհող սրբագրիչ՝	Ա. Գոնչեգույան
Համակարգչային շարվածքը՝	Ե. Սավայանի

Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Պայմ. 13, 25 մամ.: Հրատ. 12, 62 մամ.: Տպաքանակը՝ 1000: Պատվեր՝ 5:
«Լուս հրատարակություն» ՓԲԸ, Երևան-9, Խսահակյան 28: